

M

L

2337

NO 1027 B

MC 1037

PORT SAID
IN TRANSIT

B / 1 / 10

II
7824

84

ԱԿ

Հեղինակ
Ա.Ղ.ԲՍԱՆԴԻ ՏԻՒՄԱ

ԺՕՁԷՖ ՊԱԼՍԱՄՈ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Հրատարակիչ
ՍՈՎԻԵՏ ՍԱՐԲԱՑԵԱՆ



ԳԱՀԻՐԷ
Տպագրութիւն «Նիք Բարժէր»
1915

ԺՕԶԷՖ ՊԱԼՍԱՍՕ

ԺԹ.

ԺԻՂԵՐԻ ՍԿՈՒՏԸ



ԷՍ ժամ սրընթաց վաղելէ կաքը, ժիլպէր ուրախութեան ճիչ մը արձակեց. քառորդ փարտախի չափ հեռուն իր առջեւ կը տեսնէր սեպուճին կառքը որ կամաց կամաց բլրակէ մը վեր կ'ելլէր :

Այն ատեն ժիլպէր հպարտութեան ճշմարիտ զգացումով մը համակուեցաւ, և մտածեց թէ միմիայն իր եւրիտասարդութեան, առուզութեան և խնայականութեան չնորճիւ պիտի հաւասարէր հարստութեան, զօրութեան և ազնուապետութեան առաւելութիւններուն :

Հիմայ իրաւամբ Պ. ար թավէրնէյ կրնար փիլիսոփայ կոչել ժիլպէրը՝ զայն ճամբուն վրայ տեսնելով գաւազանը ձեռքը, իր թեթեւ բեռը օղակին անցուցած, արագ քայլերով և աւելի ճամբայ առնելու համար բլրակէ բլրակ ցատկելով ու ամէն մէկ բլրակին զազաթը կեփօզ. Պալս., քիւ 7—18, Բ.հր.Ն.Ք.

ԱՔ



11-7829 աե

նալով՝ գոգցես արճամարճանօք ձիերուն ըսելու համար .
— Եթէ ինձ հարցնէք՝ բաւական շուտ չէք երթար,
և ես ստիպուած պիտի ըլլամ ձեզ սպասելու :

Փիլիսոփայ՝, ո՛հ, այո՛, ստուգիւ փիլիսոփայ էր ան-
նոյն միջոցին, եթէ փիլիսոփայութիւն կրնայ կոչուիլ
ամէն վայելքէ և դիւրութիւններէ հրաժարիլը : Ստու-
գիւ, մեղկ ու թոյլ կենցաղավարութեան մը վարժուած
էր ան, բայց սէրը զո՛վ գլխէ չհաներ :

Պէտք է ըսել թէ շատ զեղեցիկ տեսարան մը, արա-
բածոց գօրաւոր և իմաստուն հօր՝ Աստուծոյ արժանի
տեսարան մըն էր այս տղուն յոտից ցլուլու փոշիով
ծածկուած մէկ երկու ժամ վազելը, վերջապէս մինչև
կառքին հասնիլը և հանգչելու համար հրճուանօք նստիլը
երբ ա՛լ ձիերուն վրայ յառաջ երթալու ոյժ չէր մնա-
ցած :

Աչքով և մտքով ժիլպէրին հետեւողը զարմանքով
պիտի դիտէր զայն, և ո՛վ գիտէ թէ հպարտ Անտրէն
իսկ անոր չարքաշութիւնը տեսնելով չարգահտոեր և
ժիլպէրի ծուլութեան մասին յայտնած անտարբերութիւ-
նը յարգանքի չփոխուէր :

Առաջին օրը այսպէս անցաւ :

Սեպուհը Պարլը-Տիւզ մնաց, որով ժիլպէր ժամա-
նակ ունեցաւ ոչ միայն անոր հասնելու՝ այլև զայն
անցնելու : Ժիլպէր քաղաքը պտրտեցաւ, որովհետեւ
կառքը ոսկրչի մը խանութին առջև կեցնել տալու
հրամանը ըսած էր : յետոյ երբ կառքին ճամբայ ելնիլը
տեսաւ՝ թաւուտի մը մէջ նետուեցաւ և կառքը անցնե-
լէն վերջ սկսաւ անոր ետեւէն երթալ առաջուան պէս :

Իրիկուան գէմ սեպուհը իշխանուհիին կառքերուն
հասաւ Պրիցիօնի գիւղակին առջև, որուն բնակիչները
ըլրակին վրայ հաւաքուած՝ ուրախութեան աղաղակներ
կ'արձակէին և երջանութիւն կը մտալթէին :

Ժիլպէր թավէրնէյէն առած քիչ մը հացը կերեր էր
բոլոր օրը, բայց ասոր փոխարէն առատ ջուր խմեր էր
ճամբուն վրայէն անցնող սիրուն զետակէ մը որուն
ընթացքը այնչափ յառակ և վճիտ էր որ Անտրէն եւս
կառքը կեցնել տալով վար իջեր և ջուր խմեր էր հոնկէ
իշխանուհիին ոսկիէ գաւաթովը, զոր սեպուհը պահած
էր իր աղջկան աղաչանքին վրայ :

Ժիլպէր ճամբուն վրայի կնճնիներէն մէկուն ետեւը
պահուըտելով այս ամէնքը տեսած էր :

Ուստի, երբ ճամբորդները հեռացան, ժիլպէր ճիշտ
միեւնոյն տեղը եկաւ, ոտքը միեւնոյն ըլրակին վրայ
դրաւ ուր Անտրէն ելնիլը տեսած էր, և Դիոզինէսին
պէս ձեռքովը խմեց այն ջուրէն որմէ ծարաւը անցու-
ցած էր օրիորդ աը թավէրնէյ :
Յետոյ, լաւ մը զովանալէ վերջ ճամբան շարունա-

կեց :

Բանէ մը միայն անհանգիստ կ'ըլլար ժիլպէր, ան ալ
աս էր թէ արդեօք իշխանուհիին ճամբան տեղ մը պիտի
պառկէ՞ր : Եթէ իշխանուհիին ճամբան տեղ մը պառկիլ
ուզէր, բան մը որ հաւանական էր, ժիլպէրի գործը ե-
ղած էր : Անշուշտ այդ պարագային Սէն-Տիդիէի մէջ
կանգ պիտի առնէին : Ժիլպէր շտեմարանի մը մէջ եր-
կու ժամ քնանալով պիտի բաւականանար ոյժ տալու
համար իր սրունքներուն՝ որոնք կը սկսէին փայտ կըտ-
րիլ : յետոյ, երկու ժամ քնանալէ վերջ ճամբայ պիտի
ելնէր և գիշերը ծանր ծանր քալելով՝ առանց դժուարու-
թեան անոնցմէ հինգ վեց փարսախա առաջ պիտի անցնէր :
Մայիս ամսուան մէջ տասնը ութը տարեկան երիտասարդ
մը շատ աղէկ կը քալէ :

Իրիկունը վրայ հասաւ յաջորդական ստուերներով
հորիզոնը պատելով, մինչև որ այդ ստուերները ժիլ-
պէրին վազած ճամբան ալ ծածկեցին : Պահ մը վերջը

կառքին ձախակողմեան լսարանը տեսնուեցաւ, որմէ արձակուած ցոլքը կը նմանէր ճերմակ ուրուականի մը որ սարտախաւար ճամբուն կզերքէն խոյս կուտայ :

Ժիլպէր իրաւամբ կարծեց թէ երկինք իրեն նպաստաւոր դոյն մը կը ստանար : Անորէի ձայնը լսելու համար կառքին մօտեցաւ : Կառքը կեցեր էր . Ժիլպէր մեծ դրան մը շրջանակին մէջ պահուրտեցաւ : Զահերուն լոյսովը Անարէն տեսաւ, լսեց որ ժամը քանին ըլլալը կը հարցնէր : Զայն մը պատասխանեց « Տասըմէկ » : Այս միջոցին Ժիլպէր բնաւ յոգնած չէր, և եթէ իրեն կառք հեծնել ստաջարկուէր՝ պիտի մերժէր :

Իր բորբոքած երեւակայութեան առջեւ կուզար ոսկիզօծ և շողչողուն վէրսայլը, ազնուականներու և թագաւորներու այդ պերճաւուք քաղաքը : Յետոյ, վէրսայլէն վերջ Բարիզը, աղօտ, մթին, անոնն Բարիզը, ժողովրդեան քաղաքը :

Եւ իր մաքին վերափին ծնունդ սուող այս երազները՝ Ժիլպէր՝ Բերուի հանքերէն ելնող բոլոր ոսկիին հետ չէր ուզեր փոխանակել :

Երկու բանով սթափեցաւ իր մտաւոր յախշտակութենէն :

Մէկ կողմէն կառքերը ճամբայ ելած ըլլալով՝ ճամբուն վրայ մտոցուած արօրի մը զարնուեցան և աղմկեցին, միւս կողմէն իր ստամոքան ալ սկսաւ « անօթի եմ » պոռալ :

— Բարեբաղբարար ստակ ունիմ, հարուստ եմ, կ'ըսէր Ժիլպէր իւրովի :

Գիտենք որ Ժիլպէր սիրու մը ունէր :

Մինչեւ կէս գիշեր կառքերը կանք չտուին :

Կէս գիշերին Սէն-Տիդիէ հասան : Ժիլպէր կը յուսար որ հոն պիտի պառկէին :

Ժիլպէր տաներկու ժամուան մէջ տանըլեց փար-

տախ ճամբայ քալած էր :

Երամի մը եզերքը նստաւ :

Սակայն Սէն-Տիդիէի մէջ միայն ձիերը փոխեցին : Ժիլպէր բոժոժներուն ձայները լսելով հասկցաւ որ նորէն կը հեռանային : Ականաւոր ճամբորդները ջահերուն և ծաղիկներուն մէջ պահ մը հանգիստ առեր էին միայն :

Ժիլպէր իր բոլոր արիութեանը պէտք ունեցաւ ծունկերուն վրայ կենալու համար :

— Լա'ւ, մեկնեցէ՛ք, մեկնեցէ՛ք, Ես ալ հիմայ Սէն-Տիդիէ պիտի հասնիմ, հաց և քիչ մը խոզի ճարպ պիտի գնեն և գաւաթ մը զինի պիտի խմեմ . հինգ սու պիտի վասնեմ՝ սակայն իմ հինգ սուովս մեկն աղաներէ աւելի ոյժ պիտի առնեմ :

Ժիլպէր իր սովորական սեթևեթեալ ձեւով արաստանած էր այս մեկն աղա բառը, և ահա այս պատճառազայն ստորագծեցինք :

Ժիլպէր Սէն-Տիդիէ մտաւ, ուր տուններուն փեղկերն ու դռները կը սխէին գոցուիլ :

Կառքերն ու ձիաւորները մեկնած էին :

Մեր փիլիսոփան լաւ երևույթով պանդոկ մը տեսաւ, ուր պճնազարդ սպասուհիներ, նոր զգեստներ հագած և օղակնուն ծաղիկներ անցուցած սպասուորներ կային՝ հակառակ տակաւին սուսօտեան ժամը մէկը ըլլալուն :

Ծաղկանկար յախճապակեայ մեծ պնակներու վրայ տեսաւ հաւու միտեր՝ զորս բաւական փեթեթած էին մեծապատիւ անօթիները :

Առաջին պանդոկը մտաւ առանց վարանումի . միայն մէկ փեղկ մը բաց մնացեր էր . ծուկով խոհանոց մտաւ :

Պանդոկապետուհին, աչքը չորս բացած, կեցեր ստացած դրամները կը համբէր :

— Ներեցէք, տիկին, քիչ մը հաց և խոզի ապուխտ սուէք, եթէ կը հաճիք, ըսաւ Ժիլպէր :

— Խոզի սպուխտ չկայ, բարեկամս, պատասխանեց պանդոկապետուհին : Վառեակ կ'ուզե՞ս :

— Ո՛չ, խոզապուխտ կ'ուզեմ, հաւու ձաղը չեմ սիրեր :

— Անկէ ուրիշ բան մը չունենալուս վրայ կը դատարարեմ, փոքրիկ պարոնս : Բայց իրաւ որ վառեակը խոզապուխտէն աւելի սուղի չպիտի նստի քեզի, ամբողջ վառեակ մը տասը սուրի կ'ըլլայ քեզի համար, այսպէսով վաղուան ուտելիքդ ալ ապահոված կ'ըլլաս, յարեց պանդոկապետուհին ժպտելով : Մենք կը կարծէինք որ նորին արքայական Բարձրութիւնը Պ. դատաւորին տունը պիտի իջեաւնէր և մենք ալ մեր պատրաստած ուտեստիչէնները անոր պատաստորներուն պիտի ծախէինք, բայց իշխանուհին առանց կենալու անցաւ գնաց, և ահա մեր ուտեստիչէններն ալ իրենց տեղերը մնացին :

Այսպիսի յարմար առիթ մը և այսքան բարեսիրտ պանդոկապետուհի մը գտնելով թերեւս կարծուի թէ ժիւլպէր լաւ ճաշ մը ընելու առիթը չպիտի ուզէր ձեռքէ փախցնել, սակայն այսպէս դատելը ժիւլպէրին բնաւորութիւնը բնաւ չճանչնալ պիտի նշանակէր :

— Շնորհակալ եմ, ես քիչով գո՞ կ'ըլլամ, ես ոչ իշխան եմ և ոչ ալ պալատական մը, ըսաւ ժիւլպէր :

— Ուրեմն ձրի կուտամ, փոքրիկ պարոնս, պատասխանեց բարեսիրտ կինը :

— Մուրացկան ալ չեմ, բարի տիկին, ըսաւ ժիւլպէր նուազապէս մը զգալով : Կը գնեմ ու գնածիս գրամը կը վճարեմ :

Եւ ժիւլպէր՝ գործը խօսքին միացնելու համար ձեռքը մինչեւ արմուկը տախտին գրպանը խօթեց վիհափառութեամբ :

Բայց, տեղուհի, ի դուր չորս կողմը խուզարկելէ վերջ, միայն դուրս քաշեց այն թուղթը որուն մէջ պա-

հած էր վեց լիւրնոց սկուտը : Ծրարուած գրամը իր պատեանը մաշեցուցեր, տախտին մէջ սահեր և հոնկէ ալ քակուած ծնրակապերէն դուրս ինկեր էր :

Ժիւլպէր ծնրակապերը քակեր էր ծունկերուն աւելի առածգական շարժունութիւն մը տալու համար :

Սկուտը ճամբուն վրայ հաւանականաբար այն գետակին եզերքը ինկած ըլլալու էր՝ որուն դըչուն ալիքները ժիւլպէրին սիրտը յանձնուս գրաւեր էին :

Խեղճ տղան ափ մը ջուրը վեց ֆրանքի խմած էր : Դիողնէն փայտէ սկուտիչներուն վրայ խմատափրած միջոցին՝ գոնէ ո՛չ գրպան ունէր ծակելիք և ո՛չ ալ վեց ֆրանք կորսնցնելիք :

Բարեսիրտ կինը ժիւլպէրի տեղունիլն ու ամօթէն յատաջ եկած դողը տեսնելով յուզուեցաւ : Ուրիշներ հպարտի մը պատժուիլը տեսնելով յաղթական ժպտով մը արտայայտուէին դուցէ, սակայն այս կինը ի՛նքն ալ ժիւլպէրի խռովայոյզ դէմքին վրայ նկարուած վիշտովը համակուեցաւ :

— Օ՛ն, ինզճ տղայ, ընթրէ և գիշերը հոս պտակէ, և եթէ անպատճառ մեկնիլ կ'ուզես, վաղը ճամբադ կը շարունակես, ըսաւ պանդոկապետուհին :

— Ո՛ն, այո՛, այո՛, պիտի մեկնիմ, ոչ թէ վաղը այլ հիմակուընէ իսկ պիտի մեկնիմ, պատասխանեց ժիւլպէր :

Եւ խօսակցութիւնը չերկարելու ու ըսուելիք խօսքերը չլսելու համար՝ իր ծրարը առնելով տունէն դուրս խոյացաւ՝ ամօթն ու վիշտը մութին մէջ ծածկելու մտօք :

Փեղկը դողուեցաւ : Աւանին մէջ վերջին լոյսն ալ մարեցաւ : Շուներն իսկ, ամբողջ օրը յոգնած, հաչելէ դադարեցան :

Ժիւլպէր առանձին մնաց, աշխարհիս մէջ ըտլորովին առանձին, որովհետեւ տիեզերքին վրայ այն մարդէն

աւելի առանձին մէկը չկայ՝ որ իր վերջին սկուտէն կր զատուի, երբ մանաւանդ այդ սկուտը եղած ըլլայ իր բոլոր հարստութիւնն ու խնայութիւնը ցայնսամ ապրած կեանքին մէջ :

Աստար գիշեր մըն էր . ի՞նչ պիտի ընէր խեղճ տղան Տատամեցաւ մնաց : Սկուտը փնտուելու համար ետ գտնալը ապարդիւն խուզարկութեան մը ձեռք զարնել էր . սակէ զատ այս խուզարկութիւնը ընդմիջտ կամ երկար ատեն պիտի բաժնէր զինքը այն կառքերէն՝ որոնց կը նետուէր և որոնցմէ բաւական նուրի կը գտնուէր արդէն :

Որոշեց իր գնացքը շարունակել և ճամբայ ինկաւ . բայց հազիւ թէ փարսախ մը ստամ՝ անօթութիւնը ըսկըսաւ : Քաղցը՝ պահ մը տատապանքէն յազխուած կամ զօրաւոր կամքին հպատակութենէն ընկճուած՝ ատաջուրնէ շատ աւելի ստատիկ կերպով զգալի գարծաւ, երբ սըրարչաւ վազք մը սկսաւ թշուառ ալուն արիւնը շրջանի մէջ գնել :

Այս անօթութեան ընկերը՝ յոգնութիւնը սկսաւ ժիւպէրի անդամները թմբեցնել : Վաղե՛ց : Անուր ճիգով մը անգամ մըն ալ կառքերուն հասաւ : Կառքերը միայն ձիերը փոխելու համար կը կենային և ձիերն ալ այնքան շուտ կը փոխուէին որ՝ ատաջին հանգոյցին ճեղճամբորդը հինգ վայրկեան խակ յոգնութիւն չկրցաւ առնել :

Սակայն վերստին ճամբայ ելաւ :

Արշալոյսը հորիզոնին վրայ ճեղք մը բացաւ : Արեւ զակը կուտակուած մթին ամպերուն վրայ իշխողական բացարձակ պայծառութեամբն ու վեհախառութեամբը երեւիլ սկսաւ . յայտնի էր թէ այն օրը անտանելի սաք մը պիտի ընէր : Ժիւպէր ի՞նչպէս դէմ պիտի գնէր կէսօրուան հեղձուցիչ տաքին :

Ժիւպէր պահ մը անձնատիրութենէ մղուած՝ սա փոփիչ գաղտօտին ունեցաւ թէ ձիերը, մարդիկ և նոյն խակ Ատուած իրեն դէմ միարանած էին : Բայց Աժաքսին նման բուռնցքը երկինքին ցուցուք, և եթէ անոր պէս « Հակառակ շատուածներուն պիտի պրծիմ » չըսաւ, պատճառը այն էր որ ինքը իր Ընկերային Գաւիճը աւելի բաւ կը ճանչնար քան թէ Աժաքս իր Օսիսէն :

Ժիւպէրի գուշակածին համեմատ եկաւ վայրկեան մը ուր իր զօրութեան անբաւականութիւնը և իր կացութեան անտանելիութիւնը զգաց : Սոսկալի եղաւ այն վայրկեանը ուր հպարտութիւնը անկարողութեան հետ մաքտեցաւ . պահ մը ժիւպէրի կարողութիւնը իր յոսանատութեան զօրութեամբը կրկնապատկուեցաւ : Վերջին ճիգով մը կառքերուն մօտեցաւ՝ զոր աչքէ կտրուեցուցեր էր, և զանոնք վերստին տեսաւ փուշի ամպի մը մէջ, որուն ցնորական գոյն մը կուտար աչքերուն մէջ հոտոզ արիւնը . կառքերու անխնորուն ճանչիւնը շնչերակներուն բարսխանին խառնուելով ականջին մէջ կը թնդար : Բերանարաց, ակնայնա, մագերը քրտինքէն ճակտին փակած՝ գրեթէ մարդկային շարժումներ ընող ճարտարարուեստական ինքնաշարժ մեքենայի մը կը նմանէր, սա տարբերութեամբ որ մեքենայէ մը աւելի արագ և հաստատ կերպով կը շարժէր : Նախընթաց օրու ընէ ի վեր քսան քսաներկու փարսախ տեղ քարած էր . վերջապէս այնպիսի վայրկեան մը հասաւ՝ ուր յոգնարեկ սրունքները ա՛լ չկրցան վերցնել զինքը, աչքերը այլևս չէին տեսներ . իրեն անանկ կը թուէր թէ երկրը կը շարժի և իր վրայ կը դառնայ . վերստորեակի մը դողդոջուն քայլերն ունէր . պոռալ ուղեց սակայն ձայնը չկաւ . զգալով որ պիտի իյնար՝ ինքզինքը բռնել ուղեց և յիմարի մը պէս ձեռքերը օդին մէջ շարժեց :

Վերջապէս ձայնը կոկորդին մէջ ճամբայ բացաւ կա-

տաղի աղաղակներով, և, դէպի Բարիդ դառնալով, կամ
 աւելի ճիշդը դէպի այն ուղղութիւնը՝ ուր կը կարծէր
 որ Բարիդ կը գտնուէր, իր քաջութիւնն ու սյծը յաղ-
 թողներուն դէմ ստակալի անէծքներու շարք մը տեղա-
 ցուց ուռտագին: Ապա ձեռքերովը մազերը քաշելով մէկ
 երկու քայլ առաւ ինքն իր վրայ և մեծ ճամբուն վրայ
 գետին տապալեցաւ ուշակորոյս՝ այլ նախնի դիւցազունի
 մը պէս մինչև յետին վայրկեանը մաքատած ըլլալուն
 համար խիզճը հանդարտ ու սիւսուս:

Ինքն իր վրայ կքելով ինկաւ, աչքերը տակաւին
 սպառնականորէն բաց, այլ բուռնցքները դոց:

Յետոյ աչքերն ալ դոցուեցան ու գնդերները թուլ-
 ցան:

Ժիլպէր մարեր էր:

— Օ՛ն, ի բա՛ց, ի բա՛ց, յիմա՛ր, գոչեց խարազանի
 շաչիւններու միացած խապոտ ձայն մը՝ խեղճ տղուն
 վար իյնալէն անմիջապէս վերջ:

Ժիլպէր չլսեց:

— Բայց օ՛ն, և՛ ա քաշուէ, ապա թէ ոչ ոսկորներդ
 պիտի ջախջախեմ, չարա՛ճճի:

Ձիերը գրգռելու ձեւով խարազանի ուժգին հարուած
 մը միացաւ այս աղաղակին:

Խարազանի դիւրակոր նուրբ փոկը ժիլպէրի մէջքին
 վրայ իջաւ և զայն ցաւցուց:

Բայց ժիլպէր ա՛լ բան մը չէր զգար. հէզ տղան
 թիէպլլոմօնի և վօքլէրի մէջտեղ գտնուող և զլխաւոր
 ճամբուն միացող կողմնակի ճամբայէ մը եկող կառքի
 մը ձիերուն տակ մնացեր էր:

Ժիլպէր, ուշակորոյս, կառքը չէր տեսած:

Փոթորիկէ քշուած փետուրի մը պէս սուբադող կառ-
 քին ներքնակողմէն ստակալի ճիշ մը լսուեցաւ:

Կառապանը գերմարդկային ճիզ մը ըրաւ, բայց չի

կրցաւ կեցնել առջևի ձին որ հտուի չորս ձիերը կ'ա-
 ռաջնորդէր: Առաջնորդ ձին մէկ ոտուամով ժիլպէրի
 վրայէն ցատկեց: Սակայն կառապանը կրցաւ կեցնել
 միւս երկուքը՝ որոնք առջև-ինէն աւելի մօտ էին իրեն:

Կառքին բազմարանէն կին մը կիսովին դուրս ծոն-
 ցաւ և անձկութեամբ գոչեց:

— Ո՛հ, Ատուա՛ճ լո՛ւ, արդեօք խեղճ տղան ճգմուե-
 ցա՛ւ:

— Անանկ ըլլալու է, տիկին, ըստ կառապանը ձիե-
 րուն հանած փոշիին մէջ բան մը նշմարել ջանալով:

— Խե՛ղճ յիմար, խե՛ղճ տղայ: Քայլ մը իսկ չառ-
 նես: Կեցո՛ւր, կեցո՛ւր:

Եւ ուղեւորունին դռնակը բանալով կառքէն դուրս
 խոյացաւ:

Կառապանը արդէն իր ձիէն իջեր՝ անխնեթուն տա-
 կէն ժիլպէրի մարմինը կը քաշէր՝ արխնլուայ դիակ մը
 դուրս բերելու անկուլթեամբը սարսափահար:

Ուղեւորունին ջերմ թափով մը կ'օգնէր կառապանին:

— Տես ի՛նչ բազդ, ո՛չ մէկ տեղը կեղեքուած է և

ո՛չ ալ կից մը կերած, գոչեց կառապանը ուրախութեամբ:

— Բայց մարած է:

— Անշուշտ, վախէն: Խրամին վրայ գետեղնք գայն,
 և քանի որ տիկինը կ'աճապարէ, ճամբանիս շարունա-
 կենք:

— Անկարելի է, չեմ կրնար այս տղան այսպիսի վի-
 ճակի մը մէջ հոս թողուլ:

— Բա՛հ, բան մըն ալ չունի: Ինքնիրենը խելքը
 գլուխը կուգայ:

— Ո՛հ, ո՛հ, չըլար: Որչա՛փ ալ գետահաս է, խե՛ղճ
 տղայ: Կ'երևի թէ դպրոցէն փախած և իր կարողութե-

նէն վեր ուղեւորութեան մը ձեռնարկած է : Տես որքա՛ն սովորոյն է, պիտի մեռնի խեղճ ազան : Ո՛չ, ո՛չ, հաս չպիտի թողում զայն : Կառքին մէջ, առջեւի նստարանին վրայ դիր զայն :

Կառապանը հնազանդեցաւ : Կինը արդէն կառքը ելիք էր : Ժիլպէր, կողմնակի, հանգստաւէտ բարձի մը վրայ դրուեցաւ, գլուխը կառքին բամբակապատ որմերուն կռթնած :

— Այժմ, շարայարեց մանկամարդ կինը, տասը վայրկեանի կորուստ մը ունեցանք. ուրեմն այս տասը վայրկեաններուն համար սո՛սա տասը ֆրանք :

Կառապանը խարազանը շահեցուց գլխուն վրայ և այս սպասնական լեզուէն հասկցող ձիերը քառամբակ արշաւել սկսան :



ի.

ՈՒՐ ԺԻՂՂԷՐ ԿԸ ՍԿՍԻ ԱՅՆԵՒՍ ՉՅԱԻՒՒ ԻՐ ՍԿՈՒՏԻՆ
ԿՈՐՍՏԵԱՆԸ ՎՂՍՅ

Երբոր ժիլպէրի խելքը գլուխը եկաւ քանի մը կեանէն, քիչ չզարմացաւ տեսնելով որ դեռառի գրեթէ ոտքերուն վրայ երկայնութեամբ փռ ^{դիւն նայի-}
Այս կինը ուշի ուշով իրեն կը նայէր : ^{սուխ, բարի-}

Գորշագոյն աչքերով, ամփոփ քիթով արեւէն թխացած այտերով քանրչոր տարեկան դեռառի կին մըն էր այս ուղե տագեղ և քնքոյշ փոքրիկ բերան մը չիմութեան դրոշմը կուտար անոր դէմքին : Չքնաղազեղ բազուկներ ճարմանդներու միջոցաւ մանիշակաւ ^{նր հեազնեմէ զարմա-}
ներու մէջ կը կազապարուէին : ^{Սուղուցած ըլլալը նըշ-}
Ժաղկանկար շրջազգեստին ծիփն ^{ան վարուելուն վրայ}
կառքը կը գրաւէին :

Ժիլպէր քիչ չզարմացաւ նստ ^{որ ես մեծ ճամբաներէ}
հանդի հինգ ձիերէ արշաւակի ^{չարայարեց կինը :}
կը գտնուէր :

Եւ երովհետեւ այս կնոջ դէմ,

Handwritten text and a stamp at the bottom right of page 15.

ալ հոգապարութիւնն ցոյց կուտար, ժիւղէր սկսաւ անոր նայիլ՝ մինչև որ համոզուեցաւ թէ տեսածը երազ մը չէր :

— Լաւ ուրեմն, աղաս, ըսաւ կինը վայրկեան մը լր-
սեցէ վերջ, լաւ ես, այնպէս չէ՞ :

— Ո՞ւր կը գտնուիմ, հարցուց ժիւղէր ճիշդ ժամա-
կին յիշելով իր կարդացած վիպասանութեանց այս պար-
բերութիւնը :

— Ապահովութեան մէջ ես, իմ սիրուն պարոնիկս,
չպատասխանեց կինը հարաւացիի արտասանութեամբ :

Վաղց քիչ մը առաջ կտոքիս անխնեբուն տակ փշրուելու
կանդին մէջ կը գտնուէիր : Ըսէ նայինք, ի՞նչ պատա-
սաք սպասելի որ այդպէս ճամբուն ճիշդ մէջտեղը ինկար :

Ապահովութիւն մը զգացի, տիկին :

Եւ ո՞ւրկէ վրադ եկաւ
Պիւնը :

Մենց քարկէն :

Ի վեր ճամբայ ելեր ես :

Կուան ժամը չորսէն ի վեր :

Քրտէն ի վեր քարեցի՞ր :

Մասնըվեցէն տասնը ութը փարսափ

Բուան մէջ :

Պիւնը :

Պիւնը :

Պիւնը :

Պիւնը :

Պիւնը :

Պիւնը :

Պիւնը :

Ը-Տիւղի մէջտեղը զգեակ մըն է :

— Բայց կերակուր ուտելու ժամանակ անգամ ունե-
ցած ըլլալու չես :

— Ոչ միայն ժամանակ չունեցայ, այլև ուտելու
միջոց ալ չունեցայ, տիկին :

— Ի՞նչպէս :

— Ճամբան դրամս կորսնցուցի :

— Ըսել է երէկուէնէ ի վեր բան մը չե՞ս կերած :

— Բացի պատառ մը հացէ զոր հետս առած էի :

— Խնդճ՝ աղայ, բայց ինչո՞ւ ուտելիք չուզեցիր տեղէ
մը :

Ժիւղէր արհամարհանօք ժպտեցաւ :

— Հպարտ ըլլալուս համար, տիկին :

— Հպարտ, ի՞նչ լաւ բան է եղեր հպարտ ըլլալը,
սակայն երբ մարդ անօթի կը մեռնի . . .

— Լա՛ւ է մեռնիլ քան թէ անպատուուիլ :

Կինը զարմացմամբ իր առակախօս խօսակցին նայե-
ցաւ :

— Բայց ո՞վ ես դուն որ այդպէս կը խօսիս, բարե-
կամս :

— Որը մըն եմ :

— Անուշդ ի՞նչ է :

— Ժիւղէր :

— Ժիւղէր ինչեա՞ն :

— Ոչինչեան :

— Օ՛հ, օ՛հ, ըսաւ գեռատի կինը հետզհետէ զարմա-
նալով :

Ժիւղէր սոպաւորութիւն մը թողուցած ըլլալը նըշ-
մարեց, և ժան ժար Ռուսօի նման վարուելուն վրայ
չատ ուրխացաւ :

— Դուն տակաւին շատ փոքր ես մեծ ճամբաներէ
ճամբորդելու համար, բարեկամս, շարայարեց կինը :

Փօզ. Պալա., թիւ 7—19, Բ.հր.Ն.Ք.

11-7824/և/և



— Տէրերէ լքուած և ստանձին մնացի հին գլխակի մը մէջ : Մենձ աղաները մեկնեցան հոնկէ : Ես ալ ահոնց նման ըրի, ե՛ս ալ մեկնեցայ :

— Առա՞նց նպատակի :

— Կ'ըսեն թէ երկիրս մեծ է և արեւուն տակ ամենուն համար տեղ կայ :

— Լա՛ւ, մրմնջեց կինը քիթին տակէն, իր տիրոջ ամառանոցէն փախած գիւղացի տղեկ մը ըլլալու է :

Յետոյ բարձրաձայն աւելցուց .

— Եւ կ'ըսես թէ քսակը կորսնցուցի՞ր :

— Այո՛ :

— Շատ լեցո՞ւն էր :

— Միայն վեց լիւրնոց սկուտ մը ունէի՝ բայց ինծի կը բաւէր, պատասխանեց ժիւղէր՝ մէկ կողմէն իր աղքատութիւնը խոստովանելու ամչնալով, միւս կողմէն ալ մեծ հարատւութիւն մը յայտնելու վախնալով, որպէս զի մի գուցէ յոռի կերպով վատսկուած ենթազրուի այդ գումարը :

— Վեց լիւրնոց սկուտ մը այսպիսի երկայն ուղեւորութեան մը համար . բայց հագիւ երկու օրուան հաց առնելու կը բաւէր : Եւ ճամբա՞ն, Ատուած իմ, ի՛նչ ալ ճամբայ, Պարլը-Տիւզէն Բարլը ըսիր :

— Այո՛ :

— Վաթսունէն վաթսունըհինգ փարսախ է կարծեմ, այնպէս չէ՞ :

— Փարսախները չհամբեցի, տիկին : Պէտք է որ հասնիմ ըսի, ահա այսչափ :

— Եւ այս ըսելով ճամբա՞յ ելար, խեղճ յիմար :

— Ո՛հ, զօրաւոր սրունքներ ունիմ :

— Որչափ զօրաւոր ալ ըլլան քու սրունքներդ, հո-

րէն կը յոգնին, ինչպէս որ փորձով ալ տեսար :

— Ո՛հ, սրունքներս յանցանք չունին, ե՛ս յոյս կտրեցի :

— Իրաւ, քեզ չափազանց յուսահատ գտայ :

Ժիւղէր դառնութեամբ ժպտեցաւ :

— Ի՞նչ կ'անցնէր ուրեմն մտքէդ . ձեռքերդ զլիտուղ կը զարնէիր, մաղերդ կը քաշէիր :

— Կը կարծէ՞ք, տիկին, հարցուց, ժիւղէր բաւական չփոթած :

— Ո՛հ, ապահով եմ, միշտեւ խկ յուսահատութենէդ կառքին ձայնը ստամ ըլլալու չես :

Ժիւղէր մտածեց թէ զէջ չպիտի ըլլար բուն ճշմարտութիւնը պատմելով աւելի մեծնալ : Բնազգը իրեն կ'ըսէր թէ, մանաւանդ կնոջ մը համար, իր վիճակը կարեւորութենէ զուրկ չէր :

— Իրա՛ւ յուսահատած էի :

— Եւ ի՞նչ բանէ, հարցուց կինը :

— Չկրնալով այլեւս հետեւիլ կառքի մը՝ զոր կը հետապնդէի :

— Իրա՞ւ, ըսաւ մանկամաղդ կինը ժպտելով : Բայց արկածախնդրական բան մը կայ ուրեմն ստոր մէջ : Չըլլա՞յ որ խնդրին մէջ սէր գտնուի :

Ժիւղէր՝ տակաւին իր անձին տէրը չըլլալուն՝ կարմըրեցաւ :

— Եւ սրուն կառքն էր արեւիկայ, նայինք, իմ փոքրիկ կատունա :

— Տիկին արքայադատեր հետեւող կառքերէն մին :

— Ինպէ՞ս, ի՞նչ ըսիր, գոչեց գեռատի կինը . իշխանուհին մեղմէ ստա՞ջ կը գտնուի :

— Անչո՛ւշտ :

— Մեր հասեւը, Նանսիի մէջ կը կարծէի զայն :
 Ճամբուն վրայ պէտք եղած պատիւները չնն ընեի իրեն :
 — Կ'ընեն, տիկին, բայց կ'երեւի թէ Նորին Բարձրութիւնը կ'աճապարէ :

— Իշխանունին կ'աճապարէ՞, ո՞վ ըսաւ քեզ ատիկայ :
 — Այնպէս կը կարծեմ :
 — Այնպէ՞ս կը կարծես :
 — Այո :
 — Եւ ո՞ւրիկէ ծնունդ կ'առնէ այդ կարծիքը :
 — Իշխանունին նախ ըսաւ թէ երեք ժամ թավէրնէ-
 յի դընակը պիտի հանդչի :
 — Կա՛ւ ուրեմն, ե՞տքը :
 — Բայց հազիւ քատորդ ժամ մը մնաց հոն :
 — Արդեօք Բարիդէն նամակ մը ստացա՞ւ, լուր ու-
 նի՞ս այս մասին :

— Նկարակիտուած զգեստով պարոն մը տեսայ որ
 ձեռքը նամակ մը բռնած ներս մտաւ :

— Այդ պարոնին անունը տուի՞ն քու քովդ :
 — Ո՛չ, միայն թէ գիտեմ որ Սթրազպուրկի կառա-
 վարիչն է :
 — Պ. տը Սթէնպիլը, Պ. տը Շուազէօլի քեռայրը :
 Բէդէ՛ր, աւելի՛ շուտ, կառա՛պան, աւելի՛ շուտ :

Խարազանի ուժգին հարուած մը պատասխանեց այս
 պատուէրին, և ժիլպէր զգաց որ սուբայող կառքը այս
 անգամ հովի պէս կը թռչէր :

— Ըսել է իշխանունին մեզմէ առաջ կը գտնուի :
 — Այո՛, տիկին :
 — Բայց նախաճաշելու համար կանգ պիտի առնէ
 հարկաւ, ըսաւ կինը գողցեա ինքնիրեն խօսելով, և այն
 ատեն մենք զանիկայ պիտի անցնինք, միայն թէ այս

զիշեր . . . : Այս զիշեր տեղ մը կանգ առա՞ւ :

— Այո՛, Սէն-Տիգիէի մէջ :
 — Ժամը քանիի՞ն :
 — Ժամը տասնըմէկին ատենները :
 — Ընթրելու համար ըլլալու է : Լաւ, հարկաւ պիտի
 նախաճաշէ : Կառա՛պան, մեր ճամբուն վրայ գտնուող
 առաջին քաղաքը ո՞րն է :
 — Վիգրի, տիկին :
 — Ո՞րչափ հեռի ենք Վիգրիէն :
 — Երեք փարսախ :
 — Ո՞ւր պիտի փոխենք ձիերը :
 — Վօքլէրի մէջ :
 — Լաւ : Բիչէ՛, և եթէ ճամբուն վրայ կառքերու
 չարք մը տեսնես, իմաց տուր ինձ :

Կառքին մէջի կնոջ և կառապանին միջեւ տեղի ու-
 նեցած այս խօսակցութեան միջոցին ժիլպէր գրեթէ
 սկարութեան մէջ ինկեր էր վերստին : Ուղեւորունին՝
 հասելու ատենը՝ սժողոյն և աչքերը դոց տեսաւ զայն :

— Ին՛ դճ տղայ, ահա դարձեալ պիտի աւրուի, գոչեց
 Յանցանքը խմս է որ անոր փոխանակ ուտելիք և խոհե-
 լիք տալու՝ խօսեցնել կուտամ զայն, մինչդեռ խեղճը
 անթութեանէն պիտի մեռնի :

Եւ սխալը ուղղելու մտօք՝ կառքին մէկ անկիւնէն
 քանդակուած շիշ մը հանեց՝ որուն փողէն ոսկի շղթայով
 ոսկեզօծ արծաթէ սկահակ մը կախուած էր :

— Նախ կաթիլ մը այս գօթական ջուրէն խմէ, ը-
 սաւ գաւաթը լեցնելով և ժիլպէրի ներկայացնելով :
 Ժիլպէր աղաչել չտուաւ այս անգամ : Սկահակը ներ-
 կայացնող գեղանի ձեռքին ազդեցութենէն էր, թէ Սէն-
 Տիգիէի մէջ գտնուածէն աւելի ստիպողական պէտքի մը

մէջ գտնուելուն համար՝ մէկ ումպով պարպից գաւաթը՝

— Առայժմ ասիկայ կը բաւէ, ըսաւ կիւնը, հիմայ պակսիմատ մըն ալ կեր, մէկ երկու ժամէն աւելի առատ նախաճաշ մը կուտամ քեզի :

— Շնորհակալ եմ, արիկին, ըսելով ժիւլպէր պակսի- մատը կերաւ՝ ինչպէս որ խմած էր գինին :

— Լա՛ւ, հիմայ որ քիչ մը ուժ առիր, կրկնեց կի- նը, եթէ զիս խորհրդակից ընդունիս, ըսէ ինձ թէ ի՞նչ շահ ունէիր իշխանուէրին հետեւող կառքը հետապնդելու մէջ :

— Երկու խօսքով ճշմարտութիւնը ձեզի կրնամ ըսել, արիկին, ըսաւ ժիւլպէր : Ես Պ. աը թավէրնէյ սեպուէին տունն էի երբ Նորին Բարձրութիւնը հոն եկաւ : Իշխա- նուէին Պ. աը թավէրնէյի պատուիրեց իր ետեւէն Բա- ըիզ գալ : Սեպուէն հնազանդեցաւ : Որը ըլլալուս համար ոչ ոք խորհեցաւ իմ վրաս, և ստանց ատակի ու ատանց պաշարի ձգեցին զիս : Եւ որովհետեւ ամէն ոք ազնիւ ձիերով և շքեղ կառքերով վէրսայլ կ'երթար, ես ալ երգում ըրի վէրսայլ երթալ, բայց հետիտոն, տասնը- ութը տարեկան սրունքներովս, և վատահ էի որ, հակա- ոակ իրենց ձիերուն ու կառքերուն, անոնցմէ առաջ պիտի ժամանէի : Դժբաղդաբար ոյժս հատաւ, կամ աւելի ձիւյը ձայտողութիւնը ինձի գէմ զինուեցաւ : Եթէ գրամս չկորսնցնէի և այս գիշեր կերակուր կերած ըլլայի՝ այս առաւօտ ձիերուն կրնայի հասնիլ :

— Կեցցե՛ս, քաջութիւն է ըրածդ, գոչեց կիւնը, և ես քեզ կը շնորհաւորեմ ատոր համար, բայց կարծեմ ըստ մը կայ զոր կ'անգիտանաս . . .

— Ի՞նչ :

— Սա թէ վէրսայլի մէջ քաջութեամբ չապրուիր :

— Բարի՛ց կ'երթամ :

— Այս մասին Բարիզն ալ վէրսայլէն վար չմար :

— Եթէ քաջութեամբ չապրուիր, աշխատութեամբ կ'ապրուի, արիկին :

— Աղէկ պատասխանեցիր, զուակս, ի՞նչ է արհաստք Զեռքերդ գործաւորի կամ բեռնակրի մը ձեռքերուն չնն նմանիր :

— Պիտի ուսանիմ, արիկին :

— Արդէն շատ գիտուն կ'երեւիս ինձ :

— Այո՛, որովհետեւ գիտեմ թէ բան մը չեմ գիտեր, պատասխանեց ժիւլպէր ատակախօսի մը պէս և Սոկրատի ըսածը յիշելով :

— Առանց անպատշաճութիւն մը ըրած ըլլալու կըր- նամ քեզի հարցնել թէ ո՛ր ուսմունքը աւելի նախա- մեծար կը համարես ուսանիլ, փոքրիկ բարեկամս :

— Տիկին ըսաւ ժիւլպէր, գիտութեանց ամենէն բա- ւազոյնն այն է կարծեմ որով մարդ իր նմաններուն օգտակար կ'ըլլայ : Ապա, մարդս տարբեր առումով գրե- թէ չնչին բան մը ըլլալով, պէտք է իր սկարութեան գաղնիքը սորվի, իր գորութեան գաղանիքն ալ սորվե- լու համար : Օր մը գիտնալ կ'ուզեմ թէ ինչո՞ւ այս առաւ ստամոքս սրունքներս արգիլեց մարմինս վեր բռնելու . մէկ խօսքով կ'ուզեմ գիտնալ թէ նոյն ստա- մոքսի սկարութիւնը չէ՞ր որ ուղեղիս մէջ մտցուց զիս գետնահարող բարկութիւնը, բորբոքումը և մշուշածե- թանձրութիւնը :

— Ո՛հ, բայց դուն սքանչելի բժիշկ մը պիտի ըլլաս, և կարծեմ թէ արդէն զարմանք պատճառելու չափ բժը- կութեան վրայ կը խօսիս : Տաը տարիէն քեզ յաճախորդ ըլլալ կը խոստանամ :

— Պիտի ջանամ այդ պատիւին արժանանալ, տիկին, ըսաւ ժիւլպէր :

Կառքը կանգ առաւ : Կայարան հասած էին առանց կառք մը տեանելու :

Գեոտաթի կինը տեղեկութիւն առաւ : Իշխանուհին քառորդ ժամ առաջ անցած էր, վիդերի կանգ պիտի առնէր ձիերը փոխելու և նախաճաշելու համար :

Կառապանը փոխուեցաւ :

Գեոտաթի ուղեւորուհին թոյլ տուաւ որ կառքը սովորական գնացքովը դուրս ելնէ գիւղէն, ապա՝ երբ ամենէն ծայրի տունէն բաւական հեռացան՝ ըսաւ .

— Կատարան, իշխանուհիին կառքերուն հասնելու խօսք կուտան :

— Անշո՛ւշտ :

— Վիդերի չհասած :

— Չա՛ր սատանայ, բաւական շո՛ւտ կերթային կոր :

— Բայց կարծեմ թէ քառամբակ երթալով . . .

Կառապանը անոր նայեցաւ :

— Վճարումը եռապատիկ պիտի ըլլայ, ըսաւ կինը :

— Եթէ քիչ մը առաջ ըսած ըլլայիք առ բանը, մինչև հիմայ քառորդ փարսախ մը առած կ'ըլլայինք, ըսաւ կառապանը :

— Ահա վեց լիւրնոց սկուտ մը առճաշու, կորսուած ժամանակը լեցնենք :

Կառապանը դէպի ետև և կինն ալ դէպի առջև ծըրելով ձեռքերը իրար միացան և սկուտը ուղեւորուհիին ձեռքէն կառապանին ձեռքը անցաւ :

Չիերը մտրակուեցան : Կառքը սուրաց :

Չիերը փոխուելու առեն ժիւլպէր վար իջնր և երեան ու ձեռքերը աղբերակէ մը լուացեր էր : Ասով դէմքն

ու ձեռքերը ներկայանալի գոյն մը ստացեր էին . յետոյ մագերը վայելուչ կերպով յարզարեր էր :

— Արդարեւ, ըսաւ դեռատի կինը իւրովի, ապագայ բժիշկ մը ըլլալու համար այնքան տղեղ չէ :

Եւ ժիւլպէրի նայելով ժպտեցաւ :

Ժիւլպէր կարմրեցաւ, զուցէ իրեն ուղեկցող տիկնոջ ժպտելուն պատճառը հասկնալուն համար :

Ուղեւորուհին կառապանին հետ խօսակցութիւնը աւարտելով ժիւլպէրին դարձաւ՝ որուն նորանշան, տմարդի և առակի նմանող խօսքերը շատ կը զուարճացնէին զինքը :

Այս կինը մերթ ընդ մերթ խօսակցութիւնը ընդմիջելով քրքիջ մը կ'արձակէր փիլիսոփայութիւն բուրոզ խօսք մը լսելով ժիւլպէրէն և ճամբուն կ'ուղղէր աչքերը :

Գեղանի ուղեւորուհին կը զուարճանար ապագայ բժիշկին այտերուն կարմրութեան անոր խոնարհած աչքերուն հետ կազմած հակապատկերը տեսնելով՝ կըր ձեռքը ժիւլպէրի ճակտին կը դպէր, կամ դիրք ծունկը ակամայօրէն իր ուղեկցին կողը կը սեղմէր :

Այսպէս, գրեթէ փարսախ մը յառաջացան : Յանկարծ դեռատի կինը ուրախութեան ճիչ մը արձակեց և անզգուշութեամբ կառքին յառաջակողմեան նստարանին վրայ նետուելով մարմնովը ժիւլպէրը ամբողջապէս ծածկեց :

Ուղեւորներու վերջին կառքերը տեսած էր, որոնք ընդարձակ դառիլերէ մը կը մագլցէին գծուարաւ : Այս գառիլերին վրայ կը նշմարուէին քան կառքեր որոնց ճամբորդները վար իջած էին :

Ժիւլպէր ուղեւորուհիին ծաղկանկար չըջազգեստին ծաղքերուն տակէն դուրս ելաւ, գլուխը անոր անութին

տակէն անցուց և յառաջակրօմեան նստորանին վրայ ծունր դնելով՝ բոլոր այս բարձրացող թզուկներուն մէջ հրաբորբօք աչքերով օրիորդ թափէրնէյը փնտռեց :

Նիգօլը իր գգակէն ճանչցաւ :

— Տեսէք, տիկին, ըսաւ կառապանը, ի՞նչ պիտի ընենք հիմայ :

— Ամէնքն ալ պիտի անցնինք :

— Ամէնքն ալ պիտի անցնինք . ի՞նչ կ'ըսէք, տիկին, թագաւորին ձեռքը անցնի՞ր, թիարա՞ն զրկել կ'ուզէք զիս :

— Զիս մտիկ ըրէ, բարեկամ, ի՞նչ որ կ'ուզես ըրէ, պէտք է որ զանոնք անցնիս :

— Բայց դուք իշխանուհիին չէ՞ք հետեւիր, հարցուց ժիլպէր՝ որ մինչեւ այն ատեն դեռատի կ'նսջ կառքը, իշխանուհիին հետեւորդներուն կառքերէն մին կարծած էր և ուղեւորուհիին անսպարուժը՝ երթալ իր շարքը մանկու անհամբուրեթիւն մը :

— Ամէն բանի մասին տեղեկութիւն ստանալու փափաքը ազէկ բան է, բայց անգաղտնապահութիւնը արժէք մը չունի, պատասխանեց դեռատի կինը :

— Ներեցէք, տիկին, ըսաւ ժիլպէր կարմրելով :

— Լա՛ւ ուրեմն, ի՞նչ պիտի ընենք, հարցուց ուղեւորուհին կառապանին դառնալով :

— Է՛ն, մինչեւ վիզրի կառքերուն ետեւէն կ'երթանք : Եթէ Նորին Բարձրութիւնը հոն կանգ առնէ՝ կառքերը անցնելու հրաման կը խնդրենք :

— Այո՛, բայց այն ատեն ո՛վ ըլլալս պիտի հարցընեն և պիտի գիտնան թէ . . . : Ո՛չ, ո՛չ, ասիկայ գործիս չիգար, ուրիշ միջոց մը փնտռենք :

— Տիկին, ըսաւ ժիլպէր, պիտի համարձակէի ձեզի

խորհուրդ մը տալ եթէ . . .

— Խօսէ՛, բարեկամ, խօսէ՛, և եթէ տալիք խորհուրդդ խելքի մօտ բան է, կը հետեւինք :

— Պիտի ըսէի որ վիզրի շուրջը դարձող կողմնակի ճամբայ մը բռնենք, այսպէսով կրնանք իշխանուհին անցնիլ առանց յարգանքի պակասութիւն մը ըրած ըլլալու :

— Տղուն ըսածը ճշմարիտ է, գոչեց դեռատի կինը : Կառապան, կողմնակի ճամբայ մը չկա՞յ :

— Ո՛ւր երթալու համար :

— Ո՛ւր կ'ուզէ թող ըլլայ, կը բաւէ որ իշխանուհին ետ մնայ :

— Ազէկ միտքս ինկաւ, հոս աջ կողմը Մարօլի ճամբան կայ որ վիզրի շուրջը կը գառնայ և Շօսէի մէջ մեծ ճամբուն կը միանայ :

— Լա՛ւ, այնպէս թող ըլլայ, շարայարեց մանկամարդուհին :

— Բայց տիկինը գիտէ՞ թէ ճամբէն շեղելով ուղեղինը կը կրկնապատկուի, գիտե՛լ տուաւ կառապանը :

— Բեզի երկու լուի կայ եթէ իշխանուհիէն առաջ Շօսէ հասնիս :

— Տիկինը չի՞ վախնար կառքին խորտակուելէն :

— Բանէ մըն ալ չեմ վախնար : Եթէ կառքը խորտակուի, ձի հեծնելով ճամբաս կը շարունակեմ :

Եւ կառքը աջ կողմէն դառնալով մեծ ճանրէն գատուեցաւ, կողմնակի ճամբայ մը մտաւ՝ ուր կառքի անխներու խորունկ հեռքեր կային, և դեղնորակ ջուրերով գետակի մը երկայնութեանը յառաջացաւ՝ որ Շօսէի և Միւզինի մէջտեղէն սահելով կ'երթայ Մարն գետը կը թափի :

կառապանը խօսքը բռնեց . կառքը խորտակելու հա-
մար ի՛նչ որ մարդու մը ձեռքէն կուգար ըրաւ :

Քսան անդամ ժիւղէր իր ընկերուհիին վրայ խակ
այս վերջինը ժիւղէրի գիրկը ինկաւ :

Ժիւղէր նեղութիւն չպատճառելու համար ամէն քա-
ղաքաւարութիւն ի գործ դրաւ : Կրցաւ իր ժպիտը զըս-
պել երբ իր աչքերը կ'ուզէին ըսել դեռատի կնկան թէ
չափազանց գեղեցիկ էր :

Կառքի ցնցումներէ և մենութենէ անմիջական մտեր-
մութիւն մը կը ծնի :

Երկու ժամ միասին կառքին մէջ մնացած էին, ժիւ-
ղէր կը կարծէր որ իր ընկերուհին տասը տարիէ ի վեր
կը ճանչնար, խակ դեռատի կիներն ալ կրնար երգնուլ թէ
Ժիւղէրը ծնած օրէն կը ճանչնար :

Ժամը տասնըմէկին մօտ՝ վիզրիէն Շալօն տանող
ճամբան հասան : Սուրհանդակ մը հարցումի մը պա-
տասխանելով իմացուց թէ իշխանուհին ոչ միայն վիզ-
րիի մէջ պիտի ճաչէր, այլև շատ յոգնած ըլլալուն
համար երկու ժամ հանգիստ պիտի առնէր հոն :

Աւելցուց նաև թէ մերձակայ կայարանը իմաց տըր-
ուած էր որ կէսօրէն ետք ժամը երեքին չորսին ատենը
ձիապանները պատրաստ գտնուին :

Ուղևորուհին այս լուրը առնելով ուրախութեամբ
լցուեցաւ :

Խոտոացած երկու լուին կառապանին տուաւ և ժիւ-
ղէրին դառնալով ըսաւ .

— Ի՛նչ, իրա՛ւ որ մենք ալ մերձակայ կայարանը
հասնելով պիտի կրնանք ճաչել :

Բայց ժիւղէր մերձակայ կայարանին մէջ ալ չպիտի
կրնար ճաչել : Այսպէս սահմանուած էր :



ԻԱ.

ՈՒՐ ՆՈՐ ԱՆՁԻ ՄԸ ՀԵՏ ԿԸ ԾԱՆՌԹԱՆԱՆՔ

Այն զառիվայրին վերևը ուրկէ անցնելու վրայ էր
սուրհանդակի կառքը, կը նշմարուէր Շօտէ գիւղը՝ ուր
ձիերը պիտի փոխուէին :

Մացառներով և ցանկապատներով ծածկուած գեղատեսիլ
անակներու ցիր ու ցան շարք մըն էր այս գիւղը, ուր
հիւղակները բնակչաց ճաչակին համեմատ կա՛մ ճամբուն
մէջտեղը, կա՛մ սաղարթախիտ անտառի մը անկիւնը և
կամ աղբիւրի մը մօտ կառուցուած էին, որոնք, զրե-
թէ միշտ գետակին զառիթափին հետեւելով, կամուրջ-
ներ ունէին իրենց առջև, զատ զատ :

Բայց նոյն ժամուն, այս գեղատեսիլ գիւղակին մէջ
ամենէն նշանաւոր բանը մարդ մըն էր՝ որ գետակին
վարի կողմը, ճամբուն մէջտեղը անկուած, կարծես թէ
գերագոյն իշխանութենէ մը մասնաւոր պատուէր մը
ստացած ըլլար, երբեմն աչքը մեծ ճամբուն վրայ կը
տնկէր, երբեմն մեծ բաշերով մոխրագոյն գեղեցիկ ձի-
մը կը քննէր աչքովը . կենդանին հիւղակի մը պատու-
հանի փեղկին կապուած՝ տախտակները կը շարժէր գլու-
խը ցնցելով . իր ցեղին ամենէն աշխոյժն ու առօրը,
անհամբուրութիւն կը ցուցնէր՝ որ կրնար մեղադրելի
չըլլալ կռնակի թամբին նայելով, որմէ յայտնի կ'ըլլար
թէ տիրոջը կը սպասէր :

Օտարականը ընդունայն ճամբան դիտելէ յոգնած, մերթ ընդ մերթ ձիուն քովը կուզար և զայն կը քննէր արուեստագետի աչքով, երբեմն անոր գաւակը շոյելով իր վարժ ձեռքովը, կամ մատներուն ծայրովը նուրբ ու երկայն սրունքները կամ թթիկով : Յետոյ, երբ ամէն անգամ որ այս տեսակ փորձ մը ընելով անհամբեր ձիուն արծակած կիցէն կը պոճէր, իր դիտարանը կը վերագառնար և միշտ ամայի մնացած ուղին կը գննէր :

Վերջապէս բանի մը գալը չտեսնելով՝ հիւզակին պատահանին փեղկին զարկաւ :

- Է՛, հող մէկը չկա՛յ, գոչեց :
- Ո՞վ է զարնողը, հարցուց այրական ձայն մը :
- Եւ փեղկը բացուեցաւ :
- Պարոն, եթէ ձեր ձին ծախու է՝ գնորդ մը ելաւ անոր, ըսաւ օտարականը :

— Չէ՞ք տեսներ որ սրչին վրայ յարդի խուրձ չկայ, ըսաւ շինական մը՝ բացած փեղկը գոցելով :

Օտարականը այս պատասխանը գոհացուցիչ չգտնելով անգամ մըն ալ զարկաւ փեղկին :

Բարձրահասակ և հուժկու, կարմիր այտերով և թխագոյն մօրուքով, ժաննակէ լայն թեւոցներով շրջանակուած թեւերով շուրջ քառանյութեայ մարդ մըն էր այս օտարականը : Գաւառացի պաշտօնակալներու նորածնութեան ոճովը ժապաւինաւոր ծուռ զլխարկ մը դրած էր զլուխը, այն գաւառացի պաշտօնակալներուն պէս որոնք կ'ուզեն Բարիզցիները կատղեցնել :

Երբորդ անգամ մըն ալ զարկաւ : Յետոյ, համբերութիւնը հասնելով՝ ըսաւ .

— Բայց անքաղաքաւարութեան չափը կ'անցնէք, սիբելիս, եթէ փեղկը անմիջապէս չբանաք, զայն պիտի խորտակեմ :

Այս սպառնալիքին վրայ փեղկը բացուեցաւ և

նոյն դէմքը վերստին երեւցաւ :

— Բայց ձեզի կ'ըսեմ թէ ձին ծախու չէ, պատասխանեց գիւղացին երկրորդ անգամ : Ի՞նչ լսել է, այսչափ խօսքը չի՞ բաւեր ձեզի :

— Ես ալ ձեզի կ'ըսեմ թէ սրընթաց ձիու մը պէտք ունիմ :

— Եթէ սրընթաց ձիու մը պէտք ունիք, գացէք սուրճանդակին իջեւանէն հատ մը առէք : Հոն վախտուն ձի կայ՝ որոնք Նորին վեհափառութեան ախոռէն ելած են, անոնց մէջէն ուզածնիդ կրնաք ընտրել : Բայց թողէք այն մարդուն ձին որ միայն մէկ հատ ունի :

— Իսկ ես ձեզի կը կրկնեմ որ այս ձին կ'ուզեմ :

— Աւելորդ ձանձրութիւն մըն է ձեր ըրածը, արաբական երիվար մը ծախու առնելու փախաք շատ սուղի պիտի նստի ձեզի :

— Չայն գնել ուղելուս բուն պատճառը սրընթաց ձիու մը անհրաժեշտութիւն պէտք ունենալս է :

— Ատիկայ կարելի է, բայց, դժբաղդարար ձին ծախու չէ :

— Բայց որո՞ւնն է ուրեմն :

— Շատ հետաքրքիր էք :

— Դուք ալ շատ խորհրդասպահ էք :

— Լաւ ուրեմն, տունս օթեւանոց անձի մը կը վերաբերի այս կենդանին՝ զոր զաւկին պէս կը սիրէ :

— Այդ անձին հետ խօսիլ կ'ուզեմ :

— Այս միջոցին կը քնանայ :

— Ա՛յք է թէ կին :

— Կին է :

— Լաւ ուրեմն, ըսէ տա կնոջը որ եթէ հինգ հարիւր բիւթօլի պէտք ունի, այս ձիուն փոխարէն պիտի համբուի իրեն :

— Օ՛, օ՛, ըսաւ գիւղացին աչքերը բանալով, հինգ հարիւր բիւթօլ, կլորիկ գուժար մըն է ատիկայ :

— Եթէ կ'ուզես՝ աւելցո՛ւր ալ թէ այդ կենդանին գնել ուզողը թագաւորն է :

— Թագաւո՞րը :

— Նոյն ինքը :

— Օ՛ն, ըէք նայինք, չըլլա՞յ որ թագաւորը դուք ըլլաք :

— Ո՛չ, բայց անոր ներկայացուցիչն եմ :

— Թագաւորին ներկայացուցի՞չն էք, ըսաւ գիւղացին գլխարկը հանելով :

— Շո՛ւտ ըրէ, բարեկամ, թագաւորը բնաւ սպասելու ժամանակ չունի :

Եւ հէրքիւլէսը հետազօտիչ ակնարկ մը արձակեց ճամբուն վրայ :

— Լաւ ուրեմն, երբ տիկինը արթննայ, երկու խօսքով գործը իրեն կը հասկցնեմ, հանգիստ եղէք, ըսաւ գիւղացին :

— Այո՛, բայց անոր արթննալուն չեմ կրնար սպասել ես :

— Ի՞նչ ընելու է ուրեմն :

— Բա՛ն, ստ ալ մտածելիք բա՞ն է, արթնցո՛ւր :

— Ես ձեմ համարձակիր :

— Լաւ ուրեմն, հիմայ ես զայն կ'արթնցնեմ, կեցի՛ր, կեցի՛ր :

Եւ այն անձը որ կը պնդէր թէ Նորին վեհափառութեան ներկայացուցիչն էր՝ արծաթէ կոթով երկայն խօսքան մը բռնած ձեռքը՝ յառաջ անցաւ վերի փեղկին զարնելու համար :

— Ո՛ն, ի՛նչ կ'ընէք, պարոն, ստ բանը չըլլար :

Բայց յանկարծ ձեռքը վար տաւ առանց փեղկին զպցնելու, որովհետեւ ճիշդ նոյն միջոցին սուրճանդակի կառք մը տեսած էր որ սրարչաւ՝ բայց վատտակարեկ հինգ ձիերէ քաշուելով գէպի իր կողմը կը յառաջանար :

Օտարականը իր վարժ աչքովը կառքին երեսները ճանչցաւ և գէպի այն կողմը վազեց :

Այս կառքը ժիլպէրի պահապան հրչտակը բերող սուրճանդակն էր :

Կառապանը իրեն նշաններ ընող մարդը տեսնելով՝ մեծ ուրախութեամբ կեցուց կառքը, որովհետեւ վատահէր թէ ձիերը պիտի կարենային մ'ինչեւ կայարան երթալ :

— Շո՛ն, սիրելի Շո՛նս, դո՞ւն ես վերջապէս, գոչեց օտարականը : Բարի լո՛յս, բարի լո՛յս :

— Այո՛, ե՛ս եմ, ժան, ի՞նչ կ'ընես հող, պատասխանեց այս տարօրինակ անունով ուղեւորուհին :

— Օ՛, ի՛նչ աղուոր հարցում, քեզի կը սպասեմ :

Եւ հէրքիւլէսը քայլարկին վրայ ցատկեց ու կառադրան պատուհանէն իր երկայն բազուկները դեռատի կնոջ վիզը փաթթելով՝ համբոյրներով ծածկեց անոր բոտորագոյն այտերը :

Յանկած ժիլպէրը նշմարեց՝ որ, տեսարան ելած այս երկու անձնաւորութեանց յարաբերութիւններուն բոլորովին անտեղեակ, խոժոռ գէմք մը շինած էր այն շունին նման՝ որուն ոսկորը իրմէն կը խլուի :

— Ի՞նչ է սա գտածդ :

— Ամենապուշտարձալի փոքրիկ փիլիսոփայ մը, պատասխանեց օրիորդ Շոն առանց հող ընելու որ իր պաշտպանեալը կը վերաւորէր կամ կը շողոքորթէր :

— Ո՞ւրիչ գտար զայն :

— Ճամբուն վրայէն : Բայց խնդիրը հող չէ :

— Ճշմարիտ է, պատասխանեց ժան կոչուողը : Լաւ ուրեմն, ի՞նչ եղաւ մեր պատաւ տը Պէտրն կոմսուհին խնդիրը :

- Լմնցաւ :
- Ի՞նչ, ըմնցա՞ւ :
- Այո՛, պիտի գայ :
- Պիտի գա՞յ :
- Այո՛, այո՛, այո՛, կրկնեց Շօն գլուխը թօթվե-
լով :

Այս տեսարանը կառքին քայլարկին և բարձին վրայ տեղի կ'ունենար :

- Ի՞նչ պատմեցիր անոր ուրեմն, հարցուց ժան :
- Ըսի թէ իր փաստարանին՝ Ֆլաթօն աղջիկն էի, թէ վէրտէօնէն կ'անցնէի և թէ հայրս յանձնարարած էր ինձ իրեն իմացնել թէ իր դատը ցանկին մէջ մտած էր :
- Ամէնքը ա՛յոջափ :

— Անշուշտ : Միայն աւելցուցի թէ դատը ցանկին մէջ մտած ըլլալուն՝ իր Բարիզ գտնուելը անհրաժեշտ էր :

- Ի՞նչ պատասխանեց :
- Փոքրիկ մոխրագոյն աչքերը բացաւ, քթախտոր քաշեց, պնդեց թէ մէթըը Ֆլաթօն աշխարհիս լուսագոյն մարդն է և մեկնելու համար հրամաններ տուաւ :

— Այս բանը սքանչելի է, Շօն : Քեզ իմ արտաքոյ կարգի դեպքանս պիտի ընեմ : Հիմայ պիտի նախաճաշե՞նք :

— Անշուշտ, որովհետեւ այս հէզ պատանին անթուրթնէ կը մեռնի . բայց թեթեւ նախաճաշ մը պիտի ընենք, այնպէս չէ՞ :

- Ինչո՞ւ :
- Որովհետեւ կարելի է կը հասնին :
- Պատաւ դատախա՞ղը : Բա՛հ, կը բաւէ որ անկէ երկու ժամ առաջ հասնինք, այսինքն Պ. տը Մօրըուի

հետ խօսելու միջոցը ունենանք :

- Ո՛չ, իշխանուհին :
- Բա՛հ, իշխանուհի՞ն, տակաւին Նանտի ըլլալու է ան :

- Վիդրի հասած է :
- Հոսկէ երեք փարսախ հեռո՞ւ :
- Ո՛չ աւելի, ո՛չ պակաս :
- Նգովի՛ց արմատ, խնդիրը տարբեր կերպարանք մը կը ստանայ ասով : Օ՛ն, կառա՛պան, առա՛ջ քշէ :

- Ո՞ւր, պարոն :
- Կայարան :
- Պարոնը կա՞ռք պիտի նստի թէ իջնէ :
- Եղած տեղս պիտի մնամ, ո՛ն, յառա՛ջ :

Կառքը մեկնեցաւ ճամբորդը քայլարկին վրայ տանելով . հինգ վայրկեան ետքը կայարանին առջեւը կեցած էր :

— Շո՛ւտ, շո՛ւտ, գոչեց Շօն, ոչխարի կողիկներ, վառեակ մը, քանի մը հատ հաւկիթ, շիշ մը Պուրկօնեի գինի և քիչ մըն ալ թան բերել տուէք . ստիպուած ենք անմիջապէս մեկնիլ :

— Ներեցէք, տիկին, ըսաւ կայարանապետը դրան սեմին վրայ կանգ առնելով, եթէ անմիջապէս պիտի մեկնիք՝ ձեր ձիերովը միայն պիտի կրնայ ըլլալ ատիկայ :

- Ի՞նչ, մեր ձիերո՞վը, ըսաւ ժան քայլարկէն յամբօրէն վար իջնելով :
- Այո՛, տարակոյս չիկայ որ ձեզ հոս բերող ձիերով :

— Ո՛չ, ո՛չ, ըսաւ կառապանը բողոքելով, արդէն երկու ուղեւանագոյց քալեցին . տես ի՛նչ վիճակի մէջ են

առ խեղճ կենդանիները :

— Ո՛հ, այո՛, ճշմարիտ է, անկարելի է որ աւելի առաջ երթան, ըսաւ Շօն :

— Բայց ո՞վ կարգիլէ քեզ ինձ չյոզնած ձիեր տալէ :

— Պատճառն այն է որ չունիմ :

— Է՛հ, պէտք է որ ունենաս . . . : Կանոն մը կայ այդ մասին, ի՞նչ ըսել է :

— Պարոն, ըստ կանոնադրութեան պարտաւոր եմ տասնըճինգ ձի ունենալ ախոռներուս մէջ :

— Լա՛ւ ուրեմն :

— Տասնըութը հատ ունիմ :

— Ատիկայ ուղածէս շատ աւելի է, որովհետեւ միայն երեք հատի պէտք ունիմ :

— Տարակոյս չունիմ, բայց անոնք ալ դուրսն են :

— Տասնըութն ալ :

— Տասնըութն ալ :

— Տասնըութն անգամ խերդ անիծեմ, գոչեց ճամբորդը :

— Դերկո՛մս, դերկո՛մս, ընդմիջեց մանկամարդ կինը :

— Այո՛, այո՛, Շօն, ըսաւ մեծխօսիկ պարոնը, հող մի՛ ընել, պիտի չափաւորուի . է՛ ն՞րբ պիտի վերադառնան քու գրասաներդ, աւելցուց դերկոմսը կայաւրանապետին դառնալով :

— Ի՛նչ գիտնամ, պարոն քաղաքացի, կառապաններէն կախեալ է ատիկայ, թերեւս ժամէ մը կամ երկու ժամէն :

— Գիտե՞ս, վարպետ, ըսաւ ժան դերկոմսը զլխարկը ձախ ականջին վրայ իջեցնելով և աջ սրունքը կորացընելով, գիտե՞ս, կամ, չգիտե՞ս որ ես բնաւ կատակ չեմ

վերցնել :

— Ի՛նչ ընելիքս ես ալ չեմ գիտեր, բայց աւելի լաւի՛ ըլլար եթէ կատակը սերէիք :

— Օ՛հ, շո՛ւտ, հի՛մայ պէտք է որ կառքս լծէք, ապա թէ ոչ կը սրբողիմ հա՛, սպառնաց ժան :

— Հետո ախոռ եկէք, պարոն, և եթէ մէկ ձի մը գտնէք՝ զայն գրաւեցէք :

— Կեղծաւո՛ր, եթէ վաթսո՛ւն հատ գտնեմ :

— Հատ մը չգտնելն ու այդ վաթսուն հատը գտնելը միեւնոյն բանն է, պարոն, որովհետեւ այդ վաթսուն ձիերը Նորին Վեհափառութեան կը վերաբերին :

— Լա՛ւ, ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Ըսել կ'ուզեմ թէ անոնք վարձու չեն :

— Ուրեմն ինչո՞ւ հոս կը մնան :

— Տիկին իշխանուհիին կառքերուն համար :

— Ի՛նչ, վաթսուն ձի գտնուի ախոռին մէջ և հատ մը միայն ինձ չարուի՛ :

— Ի՛նչ գիտնամ, հարկաւ կը հասկնաք :

— Ես միայն բան մը կը հասկնամ, այսինքն թէ սպասելու ժամանակ չունիմ :

— Ցաւալի է :

— Եւ որովհետեւ տիկին իշխանուհին երեկոյէն առաջ հոս չպիտի կրնայ հասնիլ . . .

— Ինչ ըսի՞ք . . . , բացազանչեց կայարանապետը անարեւակած :

— Կ'ըսեմ թէ ձիերը վերադարձած պիտի ըլլան իշխանուհիին հոս հասնելէն առաջ :

— Ի՞նչ, պարոն, ի՞նչ, գոչեց խեղճ մարդը, կը պնդէք որ . . .

— Վերջապէս նպատակդ զիս նեղացնել է կարծեմ,

ըստ դերկոմսը կառակայանին տակը մտնելով :

— Բայց, պարոն . . .

— Երեք հաս միայն : Ութը ձի չեմ ուզեր արքայական բարձրութեանց նման, թէպէտեւ խնամի ըլլալովս իրաւունք ունիմ . ո՛չ, երեք հաս կը բաւէ ինձ :

— Բայց հաս մըն ալ չպիտի առնէք, գոչեց կայարանապետը ձիերուն և օտարականին մէջտեղը նետուելով :

— Անամօթ, գլտե՞ս ո՛վ եմ ես, գոչեց դերկոմսը բարկութենէն աժգունած :

— Դերկոմս, դերկոմս, յանուն երկնից, գայթակղութեան տեղի մի՛ տար, կը գոչէր Շօն անդադար :

— Իրաւունք ունիս, իմ բարեխրտ Շօնչօնս, իրաւունք ունիս :

Յետոյ պահ մը մտածելէ վերջ շարունակեց .

— Խօսքը մէկդի թողունք և գործի նայինք . . . :

Եւ քաղցր դէմքով մը պանդոկապետին նայելով աւելցուց .

— Սիրելի բարեկամս, հիմայ քեզ պատասխանատուութենէ պիտի ազատեմ :

— Տեսնենք թէ ի՞նչպէս, հարցուց պանդոկապետը տակաւին ըստ մը չհամոզուած, հակառակ իր խօսակցին ցոյց տուած քաղցրութեան :

— Գործը ես իմ ձեռքովս կը կատարեմ : Ահա երեք ձի որոնց հասակը կատարելապէս իրարու հաւասար է : Զանոնք կ'առնեմ :

— Ի՞նչ, զանոնք կ'առնէ՞ք :

— Այո՛ :

— Եւ ասով զիս պատասխանատուութենէ ազատած կ'ըլլաք :

— Անշո՛ւշտ, ինչու որ դուն տուած չես ըլլար, այլ քենէ առած կ'ըլլան :

— Բայց ձեզի ըսի որ անկարելի է :

— Օ՛ն, ըսէ տեսնենք, հոս ո՛ւր կը դնեն ձիերու սանձոյքը :

— Տեղերնո՛ւր չարժիք, գոչեց կայարանապետը ձիապաններուն՝ որոնք գաւիթին մէջ և կառակայաններուն տակ ծալլապատիկ նստեր էին :

— Ա՛հ, ստահակնե՛ր :

— Ժա՛ն, սիրելի՛ ժանս, գոչեց Շօն մեծ դրան պատահանէն՝ ուրկէ բոլոր անցածը կը տեսնէր ու կը լսէր : Գէշ գործ մը չտեսնենք, բարեկամս . պաշտօն մը յանձն առնողը պէտք է համբերել զիտնայ :

— Բացի ուշանալէ՝ ամէն բանի կարելի է համբերել, պատասխանեց ժան իր ամենազիզիկ անտարբերութեամբը, և քանի որ ճամբէս պիտի մնամ սպասելով որ այս ատամբակները ինձ օդնեն գործը լմնցնելու համար, ստիպուած եմ ես իմ ձեռքովս կարգադրել ամէն բան :

Եւ ժան՝ գործը սպանալիքին միացնելով, ետեւ ետեւ երեք համեա քակեց պատէն և զանոնք ձիերուն կռնակը անցուց :

— Գթութի՛ւն, ժան, գոչեց Շօն ձեռքերը իրար միացնելով, գթութի՛ւն :

— Հասնիլ կ'ուզե՞ս թէ ոչ, ըստ դերկոմսը ակաւները կճրտելով :

— Անշո՛ւշտ : Ամէն բան կորսուած է եթէ չհասնինք :

— Լա՛ւ, ուրեմն թո՛ղ զիս որ ուզածս ընեմ :

Եւ դերկոմսը իր ընտրած երեք ձիերը միւսներէն գատեց և զանոնք ետեւէն քաշելով դէպի կառքը քալեց :

— Խորհեցէք ըրածնուդ վրայ, պարոն, խորհեցէք ըրածնուդ վրայ, կը գոչէր կայարանապետը ժանի հետեւելով, այս ձիերը յախտակելը քրէական յանցանք մըն է :

— Զանոնք չեմ յախտակեր, անմիտ, այլ փոխ

կ'առնեմ : Գալիցէ՛ք, սեւուկներո, քալիցէ՛ք :

Կայարանապետը երասանակի փոկերուն վրայ նետուեցաւ, բայց զեռ ձեռքը անոնց վրայ չզրած, օտարականը զայն ուժգնակի ետ մղեց :

— Եզրա՛յր խմ, ի՛նչ կ'ընէք, եզրա՛յր խմ, զոչեց օրիորդ Շօն :

— Վա՛յ, եզրա՛յրն է եզեր, մօլտաց ժիւլպէր կառքին խորէն՝ աւելի ազատ չունչ մը առնելով :

Այս միջոցին ճամբուն միւս կողմէն, պանդոկին դրանը ճիշդ զխմացէն պատուհան մը բացուեցաւ և բաժ ազմուկէն բոլորովին ահաբեկ կնկան հրաշագեղ զլուխ մը տեսնուեցաւ :

— Վա՛յ, դո՞ւք էք, տիկին, ըսաւ ժան խօսքը փոխելով :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, ըսաւ մանկամարդ կինը յոռի գաղիերէնով մը :

— Արթնցն՞ք էք, աւելի ազէկ : Կ'ուզէ՞ք ծախել ինձ ձեր ձին :

— Իմ ձի՞ս :

— Այո՛, մոխրագոյն ձին, պատուհանին փեղկին կապուած արարական կենդանին : Գիտէ՞ք որ հինգ հարիւր բիտղօլ կուտամ անոր :

— Ձիս ծախու չէ, պարոն, ըսաւ մանկամարդ կինը պատուհանը գոցելով :

— Օ՛ն, այսօր բաղդ չունիմ, ըսաւ ժան, ո՛չ ծախել կ'ուզեն և ո՛չ ալ վարձել : Նղովից արմատ, արարը բունութեամբ պիտի առնեմ՝ եթէ ինձ ծախել չուզեն զայն և մէքէմպուրկցիները պիտի ճաթեցնեմ՝ եթէ ինձ վարձու չխտան զանոնք : Հո՛ւս եկուր, Բաղրիս :

Ճամբորդին սպասաւորը կառքին բարձրադիր աթոռակէն գետին ցատկեց :

— Լծէ՛, հրամայեց ժան սպասաւորին :

— Օղնութեա՛ն հասէք, ձիապաններ, օղնութեա՛ն հասէք, զոչեց պանդոկապետը :

Ձիապաններէն երկուքը վազեցին :

— Ժա՛ն, զերկո՛մս, կը գոչէր օրիորդ Շօն կառքին մէջէն յուզեալ և զողողուն ձայնով մը, խե՞նթ ես, ամենքնուս զլուխն ալ կոտրել պիտի տաս :

— Կոտրե՛լ : Վատահ եմ որ մենք անոնց զլուխը պիտի կոտրենք : Երեքի դէմ երեք հողի ենք : Օ՛ն, փիլիսոփայի՛ ձագուկ, զոչեց ժան բոլոր թոքերովը ժիւլպէրը կանչելով՝ որ՝ ապշած՝ արձանացեր կեցեր էր : Օ՛ն, վա՛ր իջիր, վա՛ր իջիր, և բանով մը կուռինք, ըլլայ դաւազանով, ըլլայ քարերով, ըլլայ կուռիով : Իջի՛ր նայինք, նղովից արմատ, գաճէ չինուած սուրբի մը կը նմանիս :

Ժիւլպէր՝ վրդովալի և միանգամայն աղերարկունայուածքով մը իր պաշտպանուէրին նայեցաւ, այս վերջինը անոր թեւէն ամուր մը բռնեց :

Կայարանապետին կոկորդը կը պատռէր պոռալէն, ի՛նքն ալ կը քաշէր ձիերը՝ զոր ժան միւս կողմէն կը քաշէր :

Վերջապէս այս վէճը վախճան մը ունենալու էր : Ժան զերկոմսը յոգնած և համբերութիւնը հատած՝ այնպիսի կուռի մը իջեցուց ձիերը պաշտպանողին որ՝ այս վերջինը գնաց ճահիճի մը մէջ թաւալեցաւ, ահաբեկ բազերու և սազերու քով :

— Օղնութի՛ւն, մարդասպա՛նը, ոճրագործը բռնեցէ՛ք, զոչեց կայարանապետը ազատ ջուրին մէջ սաւ պըլտկելով :

Այս միջոցին զերկոմսը, որ կ'երեւի թէ զիտէր ժամանակին յարզը, աճապարանօք ձիերը կը լծէր :

— Հասէ՛ք, բռնեցէ՛ք մարդասպանը, ոճրագործը՝ հասէ՛ք, յանուն թաղաւորին, աղաղակիլ սկսաւ պանդո-

կապետը երկու սարսափածար ձիադանները իրեն միացընելու ջանալով :

— Ո՞վ օգնութիւն կը ինդրէ յանուն թագաւորին, գոչեց յանկարծ սասկա մը՝ որ սրարչաւ կայարանին դաւիթը մտած և գրեթէ սեսարանին դերակատարներուն վրայ կեցուցած էր իր փրփրերախ ձին :

— Պ. Փիլիպ տը թավէրնէ՛յն է, մրմնջեց Փիլպէր կառքին խորէն և չնչմարուելու համար կծկանցաւ :

Շօն՝ որ աչքէն ու ականջէն բան մը չէր վախցնէր՝ Փիլպէրի մրմնջիւնը լսեց :



ԽԲ.

ԺԱՆ ԴԵՐԿՈՄՍԸ

Իշխանուհիին թիկնապահ զօրքերուն երխտասարդ տեղակալը ձիէն վար ցատկեց այս տարօրինակ միջադէպը տեսնելով՝ որուն համար Շօնէի զիւզին բոլոր կիներն ու սղաքը կայարան կը խուժէին գունդագունդ :

Կայարանապետը Փիլիպը տեսնելով՝ գնաց գրեթէ ծունկերուն փարեցաւ այս անակնկալ պաշտպանին՝ զոր նախախնամութիւնը կ'առաքէր գողցես :

— Պարո՛ն պաշտօնակալ, գիտէ՞ք եղածները, գոչեց կայարանապետը :

— Ո՛չ, ըսյց պատմեցէք տեսննք, պատասխանեց Փիլիպ ցրտօրէն :

— Լա՛ւ ուրեմն, Նորին արքայական Բարձրութիւն աիկին արքայադատեր ձիերը բռնի առնել կ'ուզեն :

Փիլիպ ականջը անկեց այնպիսի մէկու մը պէս որուն անհաւատալի բան մը կ'իմացնեն :

— Եւ ո՞վ է ձիերը առնել ուզողը :

— Պարո՛նը, ըսաւ կայարանապետը և մատովը ժան գերկոմսը ցոյց տուաւ :

— Պարո՞նը, կրկնեց Փիլիպ :

— Է՛ն, ի՞նչ պիտի ըլլայ, այո՛, ես, ըսաւ ժան :

— Կը սխալիք, ըսաւ թափէրնէյ գլուխը թօթվելով, անկարելի է, կամ պարոնը յիմար է և կամ ազնուական չէ :

— Դո՛ւք կը սխալիք այս երկու կէտերուն վրայ, սիրելի տեղակալս, դիտել տուաւ դերկոմսը, խեղքերնիս գլուխնիս է և Նորին վեհափառութեան կառքերէն կ'իջնանք ուր հիմայ վերատին պիտի նստինք :

— Ի՞նչ, խեղքերնիդ գլուխնիդ է և Նորին վեհափառութեան կառքերէն կ'իջնէք, կը համարձակի՞ք ուրեմն իշխանուհիին ձիերուն ձեռք երկնցնել :

— Նախ՝ վաթսուէն ձի կայ : Նորին արքայական Բարձրութեան համար միայն ութը հատ պէտք է . մեծ ցաւ է ինձ ըստ դիպաց երեք ձիու պէտք ունեցած ասանս ճիշդ տիկին արքայադատեր ձիերուն հանդիպիլս :

— Վաթսուէն ձի գտնուելը ճշմարիտ է, ըսաւ երիտասարդը, ճշմարիտ է նաև թէ Նորին արքայական Բարձրութեան համար ութը հատ միայն պէտք է, բայց բոլոր այս ձիերը՝ առաջինէն սկսելով մինչև վաթսուներորդը Նորին արքայական Բարձրութեան կը վերաբերին, և դուք իշխանուհիին ձիերուն մէջ չէք կրնար խորութիւն գնել :

— Սակայն կը տեսնէք որ խորութիւն գնող կայ, քանի որ ես միմիայն այս ձիերը կը յօժարիմ առնել : Հետիո՞տն երթամ՝ երբ պալատական գատարկապորտ դրանիկներ չորս ձիով կը ճամբորդեն : Նզովի՞ց արմատ, անո՞նք ալ թող ինձ պէս ընեն, այն ատեն փոխնորդ ձի ալ պիտի ունենան :

— Պալատականները չորս ձիով ճամբորդելով թագաւորին հրամանը կը կատարեն, պարոն, ըսաւ Փիլիպ ձեռքը դերկոմսին երկնցնելով որպէս զի բռնած ճամ-

բուն մէջ չյամառի : Ուստի հաճեցէք հրամայել ձեր սպասաւորին որ ձիերը առած տեղը տանի :

Այս խօսքերը որքան քաղաքավարութեամբ նո՛յնքան ալ հաստատակամութեամբ արտասանուած էին : Մարդ թշուառական մը ըլլալու էր այս խօսքերուն անքաղաքավար կերպով պատասխանելու համար :

— Գուցէ իրաւունք ունենայիք այսպէս խօսելու, սիրելի տեղակալս, եթէ ձեզ յանձնուած ըլլար այս ձիերուն վրայ հակելու պաշտօնը, բայց արդեօք իշխանուհիին թիկնասպահ զօրքերը ձիապանական աստիճանի՞ն բարձրացան . գոցեցէք ուրեմն աչքերնիդ, ձեր մարդոցն ալ ըսէք որ այնպէս ընեն և ճամբանիդ շարունակեցէք, բարի՛ ճանապարհ, սիրուն տեղակալս :

— Կը սխալիք, պարոն, ստանց ձիապանի աստիճանին բարձրանալու՝ այս միջոցին իմ պարտականութիւնս կը կատարեմ, որովհետև իշխանուհիին կողմէ կանխաւ զրկուած եմ փոխուելիք ձիերուն վրայ հակելու համար :

— Ատոր ըսելիք չունիմ, ըսաւ Ժան, բայց ներեցէք ինձ ձեզի ըսել թէ տխուր պաշտօն մը ստանձնած էք, տեղակալս, և եթէ տա դեռաստի կինը այսպէ՛ս կը սկսի վարուել զինուորականին հետ . . .

— Որո՞ւ վրայ կը խօսիք այդ ոճով, ընդմիջեց Փիլիպ :

— Է՛հ, որո՞ւն վրայ պիտի ըլլայ, Աւստրուհիին վրայ :

Երիտասարդը իր փողկապին նման դեղնեցաւ :

— Պարոն, կը համարձակի՞ք այդպիսի բաներ ըսելու, գոչեց Փիլիպ :

— Ոչ միայն ըսելու կը համարձակիմ՝ այլև ընելու, չարայարեց Ժան : Օ՛ն, Բադրիս, լծն՛ք, բարեկամս և

չտասկենք, սպասելու ժամանակ չունիմ :

Փիլիպ առաջին ձիուն սանձէն բռնեց :

— Պարոն, ըսաւ Փիլիպ ար թալէրնէյ իր հանդարտ ձայնովը, ձեր ո՛վ ըլլալը ինձ բսելու հաճոյքը պիտի ընէք, աշնպէս չէ :

— Պէ՞տք է ըսել :

— Պէ՛տք է :

— Լա՛ւ ուրեմն, ժան Տիւպարի գերկոմսն եմ ես :

— Ի՞նչ, դուք անոր եղբա՞յրն էք . . .

— Որ ձեզի Պասթիլլի մէջ պիտի փոսեցնէ եթէ ըստ մը եւս աւելցնէք պաշտօնակալս :

Եւ գերկոմսը կառքին մօտեցաւ :

Փիլիպ կառադրան մօտենալով ըսաւ .

— Պարոն գերկոմս ժան տիւպարի, վար իջնելու պատիւը պիտի ընէք ինձ, աշնպէս չէ՞ :

— Վա՛յ, իրա՛ւ, կեցէք տեսնենք, ըսաւ գերկոմսը բաղուած դուռը իրեն քաշել փորձելով :

— Եթէ բոպէ մը վարանիք, պարոն, աւելցուց Փիլիպ դրան գոցուելը ձախ ձեռքովը արդիւելով, պատուոյս վրայ կ'երզնում որ սուրովս երկուքի պիտի բաժնեմ ձեզ :

Եւ աջ ձեռքովը սուրը քաշեց :

— Ո՛հ, ի՞նչ է ատիկայ, գոչեց Շօն, մարդասպանութիւն մըն է այդ : Թո՛ղ տա ձիերը, ժան, թո՛ղ :

— Վա՞յ, կը սպառնա՞ք ինձ, մոռտաց գերկոմսը վերջին աստիճան անհամբերութեամբ և ինքն ալ իր կարգին սուրը առնելով՝ զոր կառքին յառաջակողմեան քազմոցին վրայ ձգած էր :

— Եւ արդիւնքը սպառնալիքին պիտի հետեւի, եթէ բոպէ մը իսկ ուշանաք, միայն մէկ բոպէ, կը լսէ՞ք :

լսաւ երխտասարդը սուրը չչեցնելով :

— Եզած տեղերնուս մազի չափ չպիտի կրնանք շարժիլ եթէ քաղցրութեամբ չվարուիս այս պաշտօնակալին հետ, փսիսաց Շօն՝ ժանի ականջն ի վար :

— Ո՛չ քաղցրութիւնը և ո՛չ ալ սաստկութիւնը զիս պարտականութիւնս խղճի մտօք կատարելէ կրնայ ետ կեցնել, ըսաւ Փիլիպ քաղաքավարութեամբ խոնարհելով՝ որովհետեւ մանկամարդ կ'տը ըսածը լսած էր . իսկ դուք, օրիորդ, խրատ տուէք պարոնին որ հնազանդի, անրա թէ ոչ, յանուս թաղաւորին զոր կը ներկայացնեմ՝ պիտի ստիպուիմ զայն սպաննել եթէ մենամարտելու հաճի, կամ ձերբակալել տալ՝ եթէ մերժէ :

— Ես ալ ձեզի կ'ըսեմ որ՝ հակառակ ձեր կամքին՝ պիտի մեկնիմ, ոռնաց գերկոմսը կառքէն դուրս խոյանալով և միեւնոյն շարժմամբ սուրը քաշելով :

— Պիտի տեսնենք, պարոն, ըսաւ Փիլիպ ետ քաշուելով և սուրը ձօճելով, պատրաստ էք :

— Պարոն տեղակալ, ըսաւ տասնապետ մը որ Փիլիպի հրամանատարութեան ներքեւ վեց հոգիի կը հրամայէր, պարոն տեղակալ, հա՞րկ է որ . . .

— Տեղերնուդ մի՛ շարժիք, ըսաւ տեղակալը, անձնական գործ մըն է ասիկայ : Օ՛ն, պարոն գերկոմս, ձեր հրամանին կը սպասեմ :

Օրիորդ Շօն սուր ազատակներ կ'արձակէր : Ժիւպէր կը փախաքէր որ կառքին ներքնակողմը հորի մը պէս խորունկ ըլլայ՝ որպէս զի լաւ մը ծածկուի :

Ժան յարձակումի սկսաւ : Հազուադիւս ճարպիկութիւն մը ունէր այս տեսակ զինավարժութեանց մէջ՝ որ ֆիզիքական ճարտարութենէ աւելի հաշիւ կը պահանջէ :

Բայց գերկոմսը զայրոյթէն իր կարողութեան մէկ

մասը զգալի կերպով կորսնցուցած էր : Փիլիպ ընդհակառակը՝ կարծես թէ իր սուրը բուժ սուրի մը պէս կը շարժէր և զինասարահի մը մէջ վարժութիւն կ'ընէր :

Դերկոմսը յանկարծ կը ծռէր, կը յտաջանար, դէպի աջ և դէպի ձախ կը ցատկէր և զօրագունդերու վարժապետներուն նման խոյանալով ազազակներ կ'արձակէր :

Փիլիպ, ընդհակառակը, ակունքերը սեղմած, ակնաշուշան, արձանի մը պէս հաստատուն և անշարժ ամէն բան կը տեսնէր, ամէն բան կը նախազգար :

Ամէն ոք, ինչպէս նաև Շօն, լուս կեցեր երկու մարտիկները կը գիտէին :

Կուրը քանի մը վայրկեան տեւեց առանց ժանի կեղծու պատիր ազազակներէն, զգուշութիւններէն և յարձակումներէն ո եւ է արդիւնք մը երեւան գալու : Այս միջոցին Փիլիպ՝ որ անշուշտ ակոյտանին ձեւարանութիւնները կը գիտէր՝ յարձակում մը գործեց :

Յանկարծ ժան դերկոմսը ձիւ մը արձակելով ևս ցատկեց :

Դերկոմսին թեւնոցը արիւնով ներկուեցաւ և արագանս կաթիլներ մատներն ի վար սկսան վազել :

Փիլիպ հակահարուածով մը իր ակոյտանին բազուկին մխեր էր սուրը :

— Վիրաւորուեցաք, պարոն, ըսաւ Փիլիպ :

— Կը զգամ, նզովի՛ց արմատ, գոչեց ժան սո՞ղունելով և սուրը ձեռքէն ինկաւ :

Փիլիպ զայն գետնէն վերցուց և դերկոմսին տուաւ :

— Գացէ՛ք, պարոն, ըսաւ տեղակալը, և անգամ մըն ալ այսպիսի անմտութիւններ մի՛ գործէք :

— Աւա՛ղ, երբոր ընեմ՝ կը հատուցանեմ, գոռաց դերկոմսը : Եկո՛ւր, շո՛ւտ, հէզ Շօնչօնս, ևկո՛ւր, յարեց

քրոջը դառնալով՝ որ կառքէն վար կը ցատկէր և եղբորը օգնութեանը կը փութար :

— Գուք ինձ իրաւունք պիտի տաք խոստովանելով որ յանցանքը իմն չէ, Թիլիւն, ըսաւ Փիլիպ : Մեծ ցաւ կը զգամ կնոջ մը առջեւ սուր քաշել ստիպուելուս համար :

Եւ խոնարհելով մէկը ի քաշուեցաւ :

— Հանէ՛ տա ձիւրը, բարեկամ և իրենց տե՛ղը դարձուր, ըսաւ Փիլիպ կայարանապետին :

Ժան կուտիւր ցոյց տուաւ Փիլիպին, իսկ այս վերջինը ուսերը թօթիկեց :

— Ա՛ն, ահա երեք ձիւր կը վերագտնան գոչեց կայարանապետը : Գուրդէ՛ն, Գուրդէ՛ն, շուտ դանոնք ագնուականին կառքին լծէ :

— Բայց, տէ՛ր իմ . . .

— Պատասխան չեմ ուզեր, ընդմիջեց կայարանապետը, պարոնը սպասելու ժամանակ չունի :

Ժան հայտնաբերու տեղատարափ մը կը տեղացնէր :

— Միբեղի, պարոնս, մի՛ վշտանաք, ձիւրը ևկան, գոչեց կայարանապետը :

— Լա՛ւ, բայց տա ձիւրդ եթէ կէս ժամ առաջ հասնէին՝ աւելի աղէկ պիտի ըլլար, գոռաց Տիւպարի :

Եւ սուրը գետնը զարնելով աչքերը բազուկին ուղղեց՝ որ մէկ կողմէն մինչև միւսը վիրաւորեալ էր և զոր Շօն իր թաշկինակովը կը պատէր :

Այս միջոցին Փիլիպ վերատին իր ձին հեծնելով հրամաններ կուտար, կարծես թէ բան մը պատահած չըլլար :

— Մեկնինք, եղբայր, մեկնինք, ըսաւ Շօն դէպի կառքը քաշելով Տիւպարին :

— Բայց արարական ձի՞ն, ըսաւ Տիւպարի : Ա՛խ,

ժօզ. Պալս., թիւ 8—21, Բ.հր.Ն.Ք.

իրաւ որ, սատանին բերանը թող երթայ, ձախորդ օր մըն է ինձ համար այսօր :

Եւ կառքը մտաւ :

— Ա՛ռ քեզի ուրիշ մըն ալ, ըսաւ ժիւղէրը տեսնելով, հիմայ ալ ոտքերս չեմ կրնար երկնցնել :

— Պարոն, շատ կը ցաւիմ ձեզի ձանձրութիւն պատճառելուս համար, պատասխանեց պատանին :

— Օ՛ն, օ՛ն, ժան, ինձի ձգէ լիմ փոքրիկ փիլիսոփաս, ըսաւ օրիորդ Շօն :

— Է՛ն, թող աթոռակին վրայ ելնէ :

Ժիւղէր կարմրելով պատասխանեց .

— Ես սպասուօր չեմ որ աթոռակին վրայ ելնեմ :

— Կը տեսնե՞ս, ըսաւ ժան :

— Թոյլ տուէ՛ք որ վար իջնեմ կառքէն, պարոն :

— Է՛ն, կորի՛ր, գոչեց Տիւպարի :

— Բայց օ՛չ, օ՛չ, դիմացը նստէ, ըսաւ Շօն պատանիին թեւէն բռնելով, այդ կերպով եղբայրս անհանդիստ չեա ընէր :

Եւ գերկոմսին ականջին ծռելով աւելցուց .

— Քեզ վիրաւորող մարդը կը ձանչնայ :

Ուրախութեան փայլակ մը անցաւ գերկոմսին աչքերուն մէջէն :

— Շա՛տ բաւ, ուրեմն թող մնայ : Ի՞նչ է տա պարոնին անունը, պզտիկ :

— Փիլիպ տը թափէրնէյ :

Այս միջոցին գեոատի պաշտօնակալը կառքին քովէն կ'անցնէր :

— Վա՛յ, գո՞ւք էք, փոքրիկ զինուորս, գոչեց ժան, հիմակուհիմայ շատ հպարտ կ'երևիք, բայց ամէն մարդ իր կարգը ունի :

— Տեսնե՛նք, երբոր պարոնը յարմար դատէ, պատասխանեց փիլիպ անտարբերութեամբ :

— Այո՛, այո՛, տեսնե՛նք, պարոն փիլիպ տը թափէրնէյ, գոչեց ժան ջանալով տեսնել այն սպաւորութիւնը որ երկտասարդին վրայ պիտի թողուր անոր անունը այսպէս յանկարծուս արտասանելովը :

Արդարեւ, փիլիպ զարմացմամբ և թեթեւ վրդովումով մը զլուխը վերցուց, բայց անմիջապէս ինքզինքը դանկտով շնորհալի խոնարհութիւն մը ընելով ըսաւ .

— Բարի ձանապա՛րճ, պարոն ժան Տիւպարի :

Կառքը սուրալ սկսաւ :

— Սատանա՛ն տանի սա վէրքը, գոչեց գերկոմսը դէմքը թթուեցնելով, գիտե՞ս որ սոսկալի կերպով կը ցաւի, փոքրիկ Շօնա :

— Առաջին կայարանը հասած ատեննիս բժիշկ մը կ'ուզենք մի՛նչու որ սա տղեկը նախաձայէ, պատասխանեց Շօն :

— Ո՛ն, իրաւ, տակաւին չնախաձայեցինք, ըսաւ ժան : Իսկ ես ցաւէս ախորժակս կորսնցուցի, միայն թէ ծարաւ եմ :

— Գօթական ջուրէն դաւաթ մը կը խմե՞ս :

— Այո՛, հաա մը տուր,

— Պարոն, ըսաւ ժիւղէր, եթէ համարձակէի դիտութիւն մը ընել ձեզ . . .

— Է՛ն, ըսէ տեսնե՛նք, ի՞նչ է եղեր :

— Պիտի ըսէի թէ ըմպելիքը շատ վնասակար է ձեր գտնուած վիճակին մէջ :

— Վա՛յ, իրաւ կ'ըսես :

Յետոյ Շօնի դատնալով հարցուց .

— Բժի՞շկ է ուրեմն քու փիլիսոփայ :

— Ո՛հ, պարոն, բժիշկ չեմ, բայց օր մը պիտի ըլլամ եթէ Աստուած կամենայ, պատասխանեց ժիւլպէր : Ի պէտս զօրականաց գրուած գործի մը մէջ կարգացի թէ վերաւորեալի մը ըլլալիք նախնական արգելքը պէտք է ըլլայ ըմպելիքներու, գինիի և սուրճի գործածութիւնը :

— Վա՛յ, կարգացե՞ր ևս ատիկայ : Լաւ ուրեմն, ա՛լ ասոր վրայ չխօսինք :

— Միայն թէ, եթէ պարոն զերկոմսը հաճէր իր թաշկինակը ինձ տալ, կ'երթայի աղբիւրէն կը թրջէի զայն և այդ թաց կտաւով իր թեւը կը սպաէր, ասով ցաւը քիչ մը կը մեղմանայ :

— Օ՛ն, բարեկամս, ա՛ն սա թաշկինակը ըսաւ Շօն : Կառապա՛ն, կեցո՛ւր :

Կառապանը կտաքը կեցուց, ժիւլպէր գնաց գետակին մէջ թրջեց թաշկինակը :

— Այս մանչուն ներկայութիւնը շատ պիտի նեղէ մեզ, չպիտի կրնանք արձակ համարձակ խօսիլ, գիտե՞լ տուաւ Տիւպարի :

— Գաղանի բարբառով կը խօսինք, ըսաւ Շօն :

— Շատ կը փախաքիմ կառապանին մեկնելու հրաժան տալով սա սատանի ձազը տըտեղը թողուլ թաշկինակիս հետ :

— Կը սխալիս, կրնայ մեզի օգտակար ըլլալ :

— Ի՞նչ բանի մէջ :

— Բաւական կարեւոր լուրեր տուաւ ինձ արդէն :

— Ի՞նչ բանի մասին :

— Իշխանուհիին մասին, և տակաւին քիչ մը առաջ տեսար որ ախոյեանիդ անունը մեզ ըսաւ :

— Լաւ ուրեմն, թող մնայ :

Այս միջոցին ժիւլպէր կը վերադառնար պաղ ջուրին :

մէջ թրջած թաշկինակովը :

Կառւը զերկոմսին թեւին փաթթուելով մեծ օգուտ ունեցաւ, ինչպէս որ ժիւլպէր նախատեսած էր :

— Իբաւ որ իրաւունք ունի եղեր սա տղեկը, աւելի լաւ կը զգամ այժմ ինքզինքս, խօսակցինք ուրեմն :

Ժիւլպէր թէպէտ աչքերը գոցելով ականջները բացաւ, բայց իր յոյսը ի դերեւ ելաւ : Շօն սկսաւ իր եզրօրը հետ խօսիլ այն գաղնի բարբառով՝ որովէ Բարիզեան աւանջները կը յուսահատին և անոր մէջ ուրիշ բան չեն տեսներ եթէ ոչ երաժշտական խաղերու վրայ թաւալող թանձր բաղաձայններու խորհում մը :

Ժիւլպէր թէպէտ իր անձին տէրը, բայց չկրցաւ ինքզինքը զսպել զայրոյթի շարժում մը ընելէ, զոր օրիորդ Շօն տեսաւ և զայն մխիթարելու համար շնորհալի ժպտիտ մը ուղղեց անոր :

Այս ժպտին ժիւլպէր հասկցաւ որ իրեն կը խնայեն : Ինքը՝ երկրին որդը, թագաւորին շնորհներովը պարտաւորած զերկոմս մը հարկադրեր էր բան մը ընելու :

Եթէ Անտրէ անգամ մը այս զեղեցիկ կառքին մէջ տեսնէ՞ր զինքը :

Ատոր վրայ մտածելով հպարտութենէն փքացաւ :

Իսկ Նիգօլի վրայ ամենեւին չմտածեց :

Եզրայր ու քոյր իրենց խօսակցութիւնը վերսկսան գաղանի բարբառով :

— Լա՛ւ, գոչեց յանկարծ զերկոմսը գլուխը կառքին դռնէն դուրս հանելով և հաին նայելով :

— Ի՞նչ կայ, հարցուց Շօն :

— Արաբական ձին մեզի կը հետեւի :

— Ո՞ր արարական ձին :

— Կայարանին մէջ գնել ուղածս :

— Տե՛ս, ըստ Շօն, կին մը հեծեր է վրան : Ո՛հ, ի՛նչ հրաշագեղ արարած :

— Որո՞ւն համար կ'ըսես, կնո՞ջ թէ ձիուն :

— Կնոջ :

— Կանչէ զայն, Շօն, գուցէ քննէ այնչափ չլախնայ որչափ ինէ : Հազար փխթօլ կուտամ ձիուն :

— Հազար կնո՞ջը, հարցուց Շօն խնդալով :

— Կնոջը համար բոլոր սոսացուածքս . . . : Բայց կանչէ զայն :

— Տիկի՛ն, աիկի՛ն, գոչեց Շօն :

Բայց սեւաչուի մանկամարդ կինը, իր ճերմակ վերարկուին սլլուած և զլուխը երկայն փետուրներով պարզ գլխարկ մը գրած՝ ճամբուն եղերքէն նետի մը սկէս սըացաւ՝

— Յառա՛ջ, ձիբի՛տ, յառա՛ջ, գոչելով :

— Իտալուհի մըն է, ըստ զերկումսը, նոզվի՛ց արմատ, որքա՛ն զեղեցիկ էր սակայն : Եթէ վէրքս այսչափ սաստիկ չցաւէր՝ կառքէն վար ցատկելով ետեւէն կը վազէի :

— Կը ճանչնամ զայն, ըստ ժիլլպէր խօսակցութեան խառնուելով :

— Ի՛նչ է այս, բայց սա սղախիլը հոտոնդի գաւառացո՞յցն է, ի՛նչ է : Չճանչցած մարդը չմնաց :

— Ի՞նչ է անունը, հարցուց Շօն :

— Լօրէնցա :

— Ո՞վ է :

— Կախարդին կինը :

— Ո՞ր կախարդին :

— Ժօզէֆ Պալամօ սեպուհին :

Եղբայր ու քոյր իրարու նայեցան :

Քոյրը կարծես ըսկ կ'ուզէր .

— Աղէկ չբբի՞ զայն վար գնելովս :

— Իրա՛ւ որ շատ աղէկ ըրիր, կը պատասխանէր կարծես թէ եղբայրը :

ԻԳ.

ՏԻԳՊԱՐԻ ԿՈՄՍՈՒՂԻՒՆ ԱՌԱՒՅՈՒՆ ԱՆԿՈՂԻՆԷՆ ԵՆՆԵԼԸ

Արդ, մեր ընթերցողները թող մեզ ներեն թողուլ օրիորդ Շօնն ու ժան զերկումսը Շալօնի ճամբուն վրայ թղթատարի կառքով, և մեզի հետ թող առաջնորդուին նոյն ընտանիքին ուրիշ մէկ անդամին քովը :

Վէրսայլի պալատին այն մասին մէջ, ուր առեմաք Լուի Ժեի աղջիկը՝ աիկին Ատէրախ կը բնակէր, այս իշխանը զրեթէ տարիէ մը ի վեր իր տարփունին՝ աիկին Տիւպարի կոմսունին սեղաւորած էր, որ ի սկզբան արքունիքին մէջ գոյանալիք պետական հարուածը կը զիտէր հեռուանց :

Այս կինը իր անփութութեամբը, ազատ կերպերովը, զուարթ բնաւորութեամբը, անսպասելի զուարթամտու-

թեամբը, աղմկալից հաճոյքներովը՝ լռին դղեակը խոս-
վաջոյց միջալալբի մը փոխած էր, որուն իւրաքանչիւր
բնակիչը պարտաւոր էր միշտ շարժման մէջ ըլլալ և
կրցածին չափ ալ զուարթ :

Այս անձուկ բնակարանէն, անշուշտ եթէ մէկը հոն
բնակողին զօրութիւնը գիտէր, պիտի տեսնէր որ ամէն
վայրկեան հանդէսի մը հրամանը կամ խրախճանութեան
մը նշանը կը տրուէր :

Սակայն պալատին այս զեղաչէն սանգուխներուն
վրայ, արդարեւ, ամենէն աւելի տարօրինակ երևցող
բանը այցելուներուն անհաստատալի բազմութիւնն էր,
այն այցելուները որոնք առաւօտուն, ժամը իննին ա-
տենները, զարգարուած ու շքախաչլ, վեր կ'ելլէին խո-
նարհարար սպասելու նախասենեակի մը մէջ՝ ուր հե-
տաքրքրութեան արժանի նիւթեր կային, բայց ոչ այն-
չափ հետաքրքրական՝ որչափ այն կուռքը գոր սրբալալ-
բին մէջ պաշտելու հրաւիրուած էին ընտրեալները :

Այն օրուան երկրորդ օրը, ուր մեր պատմած եղե-
լութիւնը Շօսէի մէջ տեղի կ'ունենար, առաւօտեան ժա-
մը իննին տատենները, այսինքն նուիրական ժամուն,
ժանն տը վօպէրնիէ նկարակիտեալ ջանջիլէ վերաբիւ-
մը հազած էր՝ որուն նրբաճիւս ժանեակներուն ներ-
քուէն իր բոլորչի սրունքներն ու կճեայ թեւերը կը
բնորոշուէին :

Ի ծննդնէ ժանն տը վօպէրնիէ, որ յետոյ օրիորդ
Լանթ և ի փերջոյ իր վաղեմի պաշտպանին՝ Պ. ժան
Տիւպարիի շնորհիւր կոմսուհի Տիւպարի եղաւ, անկող-
նէն կ'ելլէր, ո՛չ թէ Աստղեան նման՝ այլև Աստղիկէն
աւելի գեղեցիկ ամէն անոնց համար որոնք ճշմարտու-
թիւնը կեղծիքէ մը նախապատիւ կը համարեն :

Շագանակագոյն խարտեաչ զեղաբանգուր մաղեր,
կապտորակ երակներով ճերմակ սնուռաի նման մորթ մը,
աչքերը մերթ նուազուն, մերթ կորովի և մերթ բոցա-
վառ, բոտրագոյն չրթունքներով փոքրիկ բերան մը՝
որ բացուած ատենը մարդարիտներու կրկնաշարք մը
ցոյց կուտայ : Ամէն կողմ փոսիկներ ունէր, աչտերուն
վրայ, թուշին վրայ, մատներուն վրայ : Միւրի Ասա-
ղիկին վրայ կաշապարուած պարանոց մը, օձի կակղու-
թիւն մը, բարեձև գիրութիւն մը, աճա՛ ինչ որ փիկին
Տիւպարի թոյլ պիտի տար տեսնել առաւօտեան բնորեալ-
ներուն և աճա՛ ինչ որ Նորին վեճախառութիւնը Լուի
ժե՛ գիշերուան ընտրեալը՝ առաւօտուն ալ կուզար միւս-
ներուն պէս գիտելու, օգուտ քաղելով այն առակէն՝ որ
ճերերուն խրատ կուտայ կեանքի սեղանէն իյնող փըշ-
րանքները չկորսնցնել :

Արդէն բաւական ատենէ ի վեր սիրունին (Փալօրիթ)
արթնցեր էր : Ժամը ութին զանգակը զարկեր էր որ-
պէս զի թոյլ արուէր լոյսին՝ իր առաջին պաշտականին՝
տակաւ առ տակաւ սենեակը մտնել, նախ թանձր, ապա՝
նուազ թանձր վարագոյրներէ : Այն օրուան ճաճանչագիզ
արփին ներս թախանցած էր և իր գիցարանական յաջո-
ղութիւնները յիշելով զգուհու եկած էր այս յաւերժա-
հարսը՝ որ՝ գից սիրոյն, Տափնէի նման փոխանակ խոյս
տալու, մինչև անգամ մտնականացուներու սիրոյն խո-
նարճելով՝ կը մարգանար :

Այլևս ո՛չ ուռեցք և ո՛չ ալ վարանում կոր իր կարկե-
հանի նման փայլուն աչքերուն մէջ, որոնք մարդարտա-
կուռ ոսկի շրջանակով ձեռքի փոքրիկ հայելիի մը մէջ
կը նայէին ժպտազին : Իսկ այն փոսիուկ մարմինը ու-
րուն վրայ գաղափար մը տալ ջանացինք, ինքզինքը

թոյլ տուաւ որ սոճի անկողնէն մինչև ձերմակ աքիտ
օթոցին վրայ՝ ուր ստքերը երկու ձեռքեր գտան զոյգ
մը հողաթափով, որուն մէկ հատը միայն եթէ գտնէր
ժաննի հայրենակից փայտահարներէն մին, պիտի կրնար
հարստանալ :

Հրապուրիչ արձանը քանի կը կանգնէր, հետզհետէ
կենդանութիւն կը ստանար, Մալինի ժաննակէ շքեղ
այգազգեստ մը կը ձգէին ուսերուն, յետոյ, պահ մը
չղուականներէն դուրս մնացած զիրզ ոտքերուն՝ վարդա-
գոյն մետաքսէ գուլպաներ կ'անցընէին, որոնք այնքան
նրբահիւս էին որ իր մորթէն չէին տարբերը :

— Եօնէն լուր մը չկա՞յ, հարցուց նախ և առաջ իր
սենեկապանուհիին :

— Ո՛չ, տիկին, պատասխանեց այս վերջինը :

— Եւ ոչ ալ ժանն գերկումսէ՞ն :

— Ո՛չ ալ անկէ :

— Արդեօք Պիշի լուր առե՞ր է :

— Այս առաու տիկինին քրոջը սենեակը հանդիպե-
ցան :

— Նամակ չկա՞յ :

— Ո՛չ, տիկին :

— Օ՛ֆ, ո՛րչափ կը ձանձրանայ մարդ այսպէս սպա-
սելով, ըսաւ կոմսուհին հրապուրելի ահաճութեամբ մը -
արդեօք ե՞րբ պիտի հնարուի հարիւր փարափ սեղէ մէկ
վայրկեանի մէջ թղթակցելու միջոցը : Ո՛հ, իրաւ որ,
այս սուսուտ ձեռքս իննողներուն վրայ կը ցաւիմ : Ի՞նչ-
պէս, նախասենեակին մէջ շատ մարդ կա՞յ :

— Տիկին կոմսուհին կը կաակածի՞ ատոր վրայ :

— Հապա՛, զի՛ս մտիկ ըրէ, Տօրէ՛, արքայազուստրը
կը մօտենայ, հետեւաբար տա արեւուն համար զիս թու-

ղուէնին զարմանալի չէ : Ես ազօտ աստղիկ մըն եմ
պայծառափայլ արեւուն քով : Ո՞վ կայ դուքսը, տեսնե՞ք :

— Պ. ա՛լէկիյօն, Պ. տը Սուպիզ իշխանը, Պ. տը
Սարթինը, Պ. տը Մօրբու գիւանապետը :

— Պ. տը Ռիչլիէօ գո՞ւքսը :

— Տակաւին չերեցաւ :

— Ո՛չ այսօր, ո՛չ ալ երէկ : Քեզի չէի՞ ըսեր որ ան
կը վախնայ ինքզինքը վտանգի ենթարկելէ, Տօրէ :
Սուրհանդակս Հանովրի ապարանքը զրկէ հասկնալու հա-
մար թէ դուքսը հիւանդ է :

— Եստ լաւ, տիկին կոմսուհի : Տիկին կոմսուհին
այցելուներուն ամէնքը միասին պիտի ընդունի՞ թէ
առանձին ունկնդրութիւն պիտի տայ :

— Առանձին ունկնդրութիւն : Պէտք է որ նախ Պ.
տը Սարթինի հետ խօսիմ, զայն առանձին ներս մտցուր :

Հազիւ թէ հրամանը կոմսուհիին սենեկապանուհոյն
միջոցաւ հաղորդուած էր զլիաւոր դրանիկի մը՝ որ նա-
խասնեակներէն կոմսուհիին սենեակը առաջնորդող նըր-
բանցքին մէջ կեցեր էր՝ խալոյն ոտտիկանութեան տեղա-
կալը սեւ զգեստներով երեւցաւ, մոխրագոյն աչքերուն
խառութիւնը և նուրբ շրթունքներուն կարկամութիւնը
բարեզուշակ ժպիտով մը չափաւորուած :

— Բարի լո՛յս, թշնամիս, ըսաւ կոմսուհին առանց
անոր նայելու՝ զայն իր հայելիին մէջէն տեսնելով :

— Ձեր թշնամի՛ն, ե՛ս, տիկին :

— Անշո՛ւշա, դուք : Ըստ իս, աշխարհ երկու կարգ
անձերու կը բաժնուի, բարեկամ և թշնամի : Անտար-
բերները չեմ ընդունիր, կամ, զանո՛նք ալ թշնամի՛նե-
րուս կարգը կը դասեմ :

— Իրաւունք ունիք, տիկին : Բայց ըսէք ինձ թէ

հակառակ իմ քաջածանօթ անձնուիրութեանս, ի՞նչպէս
այս երկու կարգերէն միոյն մէջ դասուելու արժանի
նկատուեր եմ :

— Թոյլ տալով որ սպուռի, բաժնուռի, ծախուռի և
թագաւորին տրուի խել մը մանր ռոտանաւորներ, տետ-
րակներ և ինծի դէմ ուղղուած թշնամական գրութիւն-
ներ : Վա՛ս, յոռի՛ և անպիտան բան մըն է առիկայ :

— Բայց՝ մէկ խօսքով՝ ես պատասխանատու չեմ,
տիկին . . .

— Այո՛, պարօն, պատասխանատու էք, որովհետեւ
գիտէք թէ ո՛վ է ըլլոր այս բաները ընողը :

— Տիկին, եթէ միայն մէկ հեղինակ ըլլար՝ հարկ
անգամ չէր մնար զայն Պատթիլի մէջ ճաթիցնելու, ու-
րովհետեւ այդ մարդուկը իր հեղինակութեանց ծանրու-
թեան տակ պիտի ճաթէր արդէն :

— Գիտէ՞ք որ շատ հաճելի են ձեր այդ խօսքերը :

— Եթէ ձեր թշնամին ըլլայի, այսպէս չպիտի խօ-
սէի, տիկին :

— Օ՛ն, ճշմարիտ է, ա՛լ ասոր վրայ չխօսինք : Ա՛լ
հիմայ իրարու հետ աղէկցանք, որոշուեցաւ, ուրախ եմ-
բայց և այնպէս բան մը զիս կը վրդովէ տակաւին :

— Ո՞ր բանը, տիկին :

— Շուաղէօլներու հետ ձեր աղէկ ըլլալը :

— Տիկին, Պ. տը Շուաղէօլ նախարարապետ է, հրա-
մաններ կուտայ և ես սարտաւոր եմ զանոնք գործա-
դրել :

— Ուստի, եթէ Պ. տը Շուաղէօլ ձեզի հրաման տայ
որ թոյլ տրուի զիս հալածել, անհանգիստ ընել, վշտով
մեռցնել, թոյլ պիտի տաք որ զիս հալածե՞ն, անհան-
գի՞ստ ընեն, մեռցնե՞ն : Շնորհակալ եմ :

— Խնդիրը լուսաբանենք, բայց Պ. տը Սարթին հա-
մարձակօրէն նստելով առանց տհաճութիւն պատճառելու
կամսուհիին . երեք օր ատաջ ի՞նչ ըրի ձեզի՝ երբ ամէն
բան Գաղիոյ ամենահմուտ անձին կը շնորհուէր :

— Ինձ իմացուցիք որ Շանգլուէն սուրհանդակ մը
կը մեկնէր իշխանուհիին գալուստը փութացնելու համար :

— Թշնամիի՞ գործ է ուրեմն ասիկայ :

— Բայց բոլոր այս ներկայացման գործին մէջ, ուր՝
ինչպէս որ գիտէք՝ բոլոր արժանապատուութիւնա ու-
կորովս կը գնեմ, ի՞նչպէս վարուեցաք ինձ հանդէպ :

— Ձեռքէս եկածին չափ լուս կերպով :

— Պ. տը Սարթին, բացարձակ համարձակութեամբ
չէք խօսիր :

— Ո՛հ, տիկին, զիս կ'անպատուէք :

— Ո՞վ գտաւ ձեզ քարայրի մը խորը ասկէ երկու
ժամ ատաջ :

— Ժան դերկոմսը՝ որուն պէտք ունէիք չեմ գիտեր
ո՛ւր, կամ աւելի ճիշդը գիտեմ թէ ո՛ւր զրկելու համար :

— Լա՛ւ, աւելի աղէկ չէի՞ք ըներ միթէ զայն վը-
ռընտելով, թո՛ղ երթայ կորուռի, բայց տիկին Տիւպա-
րի խնդարով : Գաղիոյ թագաւորական ընտանեաց կու-
սակիցներէն մին է :

— Մէկ խօսքով, տիկին, բոլոր ատոնք ծառայու-
թիւններ են :

— Այո՛, ատոնք երեք օր ատաջ կատարուածներն
են . երէկ չէ ատջի օրուանները : Հապա երէ՞կ, բան մը
ըրի՞ք ինձ համար երէկ :

— Երէ՞կ, տիկին :

— Ո՛հ, ի զուր պիտի փնտոէք : Երէկ ուրիշներու
հաճելի ըլլալու օրն էր :

- Բնաւ չեմ հասկնար ձեր ըսածը, տիկին :
- Ո՛հ, ես իմ ըսածս կը հասկնամ : Պատասխանեցէք տեսնենք, պարոն, երէկ ի՞նչ ըրիք :
- Առաւօտուն թէ երեկոյին :
- Առտունէ սկսինք :
- Առաւօտուն ըստ սովորութեան աշխատեցայ, տիկին :
- Մինչև ժամը քանի՞ն աշխատեցաք :
- Մինչև տասը :
- Յետո՞յ . . .
- Յետոյ Լիօնցի բարեկամներէս միոյն, որ գրաւ դրած էր Բարիզ դալ առանց իմ գիտութեանս և որուն կը սպասէր մարդոցմէս մին, լուր ղրկեցի խնդրելու որ գայ ինձ հետ ճաշէ :
- Ճաշէ՞ն վերջը :
- Նորին վեհախառութիւն Աւստրիոյ կայսեր ոտականութեան տեղակալին ղրկեցի գողի մը հասցէն՝ զոր չէր կրցած գտնել :
- Ո՞ւր էր գողը :
- Վիէննայի մէջ :
- Ուրեմն ոչ միայն Բարիզի ոստիկանութիւնը կը վարէք՝ այլ նաեւ օտար արքունեացն ալ :
- Այո՛, պարսպ ժամերուս մէջ, տիկին :
- Լաւ, ասիկայ տեղ մը պիտի նշանակեմ : Իսկ այդ սուրճանդակը ղրկելէ ետք ի՞նչ ըրիք :
- Օրէրա գացի :
- Փոքրիկ կիմա՞րը տեսնելու համար : Հէ՛ղ Սուպիզ :
- Ո՛հ, նշանաւոր քսակահատ մը ձերբակալելու համար, զոր՝ վերնատան մէջ բնակող վարձակալներուն դիմած ըլլալուն համար՝ հանդարտ թողած էի ժամանակէ մը ի վեր, բայց վերջերս յանդգնութիւնն ունեցիր էր մէկ երկու աւազանիներու դիմելու :

- Կարծեմ թէ լաւ պիտի ընէիք « վրիպանք մը տեղի ունեցիր է » ըսելով, պարոն տեղակալ : Իսկ Օրէրայէ՞ն ետքը :
- Օրէրայէն ե՞տքը :
- Այո, շատ անպատեհ է հարցումս, այնպէս չէ՞ :
- Ո՛հ : Օրէրայէ՞ն ետքը . . . : Կեցէք որ միաքաբերեմ :
- Ո՛հ, կ'երեւի թէ ճիշդ այդ կէտին վրայ է որ ձեր յիշողութիւնը կը մ'թաղնի :
- Ո՛հ : Օրէրայէն ետքը . . . հա՛, գտայ :
- Լաւ :
- Խաղարան մը վարող տիկնոջ մը տունը գացի և զայն Զօր-Լիւիզ տարի անձամբ :
- Ի՞ր կառքովը :
- Ո՛հ, սովորական կառքով մը :
- Ե՞տքը :
- Ի՞նչ, ետքը : Ամէնքը ա՛ս է :
- Ո՛հ, ամէնքը աս չէ՛ :
- Կառքս հեծայ :
- Եւ ո՞վ գտաք կառքին մէջ :
- Պ. ար Սարթին կարմրեցաւ :
- Ո՛հ, ուրեմն պատիւը ունեցայ ոստիկանութեան տեղակալ մը կարմրեցնելու, զոչեց կոմսուհին երկու փոքրիկ ձեռքերը իրարու զարնելով :
- Տիկին . . . , կակաղեց Պ. ար Սարթին :
- Լաւ ուրեմն, հիմայ ձեզի պիտի ըսեմ թէ կառքին մէջ ո՞վ կար, շարայարեց կոմսուհին. կրամօն դքսուհին :
- Կրամօն դքսուհին, զոչեց ոստիկանութեան տեղակալը :
- Այո՛, կրամօն դքսուհին՝ որ կուգար ձեռն աղաչելու որպէս զի. զի՞նքը թաղաւորին բնակարանէն ներս ասեցնէք :
- Իրա՛ւ որ իմ պաշտօնս ձեզ կը յանձնեմ, տիկին,

գոչեց Պ. աը Սարթին յուզուելով : Ոտտիկանութիւնն ընտղը այլեւս ես չեմ՝ այլ դուք :

— Արդարեւ, Պ. աը Սարթին, ինչպէս որ կը տեսնէք, ես ալ իմ ոտտիկանութիւնս ունիմ, ուստի, զգուշացէ՛ք . . . : Այո՛, այո՛, կրամօն դքսուհին կառքի մը մէջ, կէս գիշերին պարոն տեղակալին հետ, և այն ալ դանդաղաքայլ կառքի մը մէջ . . . : Գիտէ՞ք անմիջապէս ինչ ընել տուի ես :

— Ո՛հ, բայց ստակալի կերպով վտանալ կը սկսիմ : Բարերազգարար ժամանակը շատ ուշ էր :

— Լաւ, ատկէ բան մը չելար . վրիժառութեան ժամը գիշերն է :

— Բայց ի՞նչ ըրիք, տեսնենք :

— Գաղանի ոտտիկանութեանս նման, գրական մարգիկա ալ ունիմ, ստակալի մատենագիրներ, գրազէտներ, ցնցոտիներու, քուրջներու նման ազատ ու զազիր և աքիաներու նման սովալուկ մարդիկ :

— Գէ՛շ կը սնուցանէք ուրեմն զանոնք :

— Չանոնք զրեթէ անօթի կը պահեմ : Եթէ պարատանան՝ Պ. աը Սուպիդի նման անատուն կը դառնան . պարարտութիւնը խնոր կ'ոչնչացնէ . ստիկայ ընդհանրաջամ բան մըն է :

— Շարունակեցէք, զիս զողացնել կը սկսիք :

— Ուստի մտածեցի այն ամէն դաւադրութեանց վրայ՝ զորս Շուաղէօնները ինձ գէ՛մ կը նիւթեն ձեր թոյլտուութեամբը : Այս պարագան զիս վշտացուց, և ես իմ Ապոզոններու հետեւեալ բանածեւները տուի .

« Առաջին՝

« Պ. աը Սարթին, ծպտեալ իբրև գործակալ, այցելութիւն կուտայ Արալը-Սէզ փողոցին մէջ չորրորդ դատիկոնը բնակող դեռատի անմեղուհի մը, որուն՝ ամէն ամսոյ 30ին՝ երեք հարիւր ֆրանքի զարչելի գումար մը համբուլու չամչնար » :

— Տիկին, առաքինի գործ մըն է ստիկայ զոր խեղաթիււրելով նսեմացնել կ'ուզէք :

— Միայն սասնկ գործերը կրնան նսեմանալ :

« Անցնինք երկրորդին՝

« Պ. աը Սարթին, ծպտեալ իբրև վերապատուելի քարոզիչ հայր, Սէնթ-Անթուան փողոցի կարմեղանց վանքը կը մանէ » :

— Տիկին, արեւելքէն լուր կը տանէի այդ առաքինի քոյրերուն :

— Մե՞ծ թէ փոքր :

« Երրորդով վերջացնենք՝

« Պ. աը Սարթին, ծպտեալ իբրև ոտտիկանութեան տեղակալ, կէս գիշերին փողոցները կը պտըտկի և կառքի մը մէջ կրամօն դքսուհին հետ առանձին կը մնայ » :

— Ո՛հ, տիկին, բացազանչեց Պ. աը Սարթին, այդ ստտիճան արհամարհելի՞ երեւցնել կ'ուզէք վարչութիւնս :

— Է՛հ, դուք ալ իմօ այդպէս կ'ընէք, ըսաւ կոմսուհին խնդալով : Բայց սպասեցէք :

— Անհամբեր :

— Չարածհիններս գործի սկսեր և զպրոցին մէջ ըրածնուն պէս նկարագրութիւններ, թարգմանութիւններ և ընդլայնումներ ըրեր են, որով այս առտու բանաստեղծութիւն մը, երգ մը և գուսաներգութիւն մը ստացայ :

— Ո՛հ, Այտոււած իմ :

— Երեքն ալ ստակալի բաներ : Անոնցմով խնջոյք մը պիտի տամ թագաւորին այս առտու, նոյնպէս ինձի դէմ յօրինուած նոր « Հայր Մեր » ով՝ զոր թոյլ տուիք որ ամէն կողմ սարածեն, կը յիշէ՞ք սա աղբը :

« Հայր մեր որ վէրասլին ես, նշաւակիալ ըլլայ ա՛՛ ժօզ. Պալս., թիւ 9—22, Բ.հր.Ն.Ք.

նունդ, ինչպէս որ արժանի է . սասանած է քու արքայութիւնդ . քու կամքդ ա՛լ երկրիս վրայ չկատարուիր, ինչպէս երկնից մէջ . տուր մեզ մեր հանապազօրեայ հացը՝ զոր սիրելիներդ մենէ խլեցին . ներէ քու ժողովուրդներուդ որ քու շահերդ կը պաշտպանեն, որպէս և մենք կը ներենք քու պաշտօնէիցդ որ զանոնք վաճառեցին : Մ'իյնար Տիւպարիի փորձութեանը մէջ, այլ փրկէ զմեզ քու չարագործ գիւանապետէդ : Ամէն » :

— Ատիկայ ո՛ւրկէ գտաք, հարցուց Պ. աը Սարթին հառաչանքով մը ձեռքերը իրար մ'իացնելով :

— Է՛հ, Աստուած իմ, գոնալու պէտք չունիմ, ա՛մէն օր ինձ զրկելու մեծագործութիւնը կ'ընեն բոլոր այն հրատարակութիւններէն որոնք լաւագոյնը կը թուին իրենց տեսակին մէջ : Ասիէ գատ, կը կարծէի թէ այդ հանապազօրեայ առարումները ձեր կողմէ կը զրկուին :

— Ո՛հ, սիկին . . .

— Ուստի, փոխարարձարար, վաղը պիտի ընդունիք ըսած բանատեղծութիւնս, երգս և զուսաներգութիւնս : Պարտական մնալ չեմ ուզեր, կը հասկնաք անշուշտ :

— Բայց ինչո՞ւ վաղը և ոչ թէ հիմայ :

— Որովհետեւ բաժնելու համար ժամանակ պէտք է : Նաեւ սովորութիւն եղած չէ՞ որ ստոիկանութիւնը ամէն բան ըլլալէն վերջը իմանայ : Ո՛հ, իրա՛ւ որ շատ պիտի զուարճանաք անոնցմով : Ես այս առտու երեք քառորդ ժամ խնդացի անոնց վրայ : Իսկ գալով թագաւորին՝ փայծաղի հիւանդութիւն մը ունենալուն՝ ուշ մնաց և տակաւին իմացած չէ :

— Կորսուեցա՛յ, գոչեց Պ. աը Սարթին երկու ձեռքերը կեղծամին զարնելով :

— Ո՛չ, չկորսուեցա՛ք, այլ ձեզ պիտի երզեն, դրուա՛-

տեն . ա՛նա՛ եղածը այս է : Ես մեռա՞յ Գեղանի Պուրպօնուհիին համար : Ո՛չ : Կը կատարիմ, ա՛նա՛ եղածը, որով իմ կարգս եկած ատեն՝ ես ալ ուրիշները կը կատարեցնեմ : Ո՛հ, որքա՛ն լաւ կերտուած ստանաւորներ : Այնչափ գո՛հ եղայ որ՝ ձերմակ զինի տալ տուի իմ զրական կարիճնաբուս, և այս վայրկեանին քիթերնին չտեսնելու աստիճան զինով ըլլալու են անոնք :

— Ա՛խ, կոմսուհի՛, կոմսուհի՛ :

— Նախ բանատեղծութիւնէն սկսիմ :

— Ծնո՛րճ :

— « Գաղիս, քու ճակատագիրդ

« Կնոջ հնազանդիլ է . . . »

— Է՛հ, ո՛չ, սխալեցայ, ատիկայ այն հրատարակութիւնն է զոր դուք թոյլ տուիք որ ինձ գէ՛մ տարածեն : Այնչափ շատ կայ որ կը չփոթիմ : Կեցէք, կեցէք, գտայ՝

« Բարեկամներ, տեսա՞՞՞ք

Այն ծաղրաշարժ ծանուցումը,

Զոր հոտալաճառներուն համար շինած է

Սուրբ Ղուկասի պատկերահաններէն մին .

Դեղահատի մեծութեամբ շիջ մը դրած է հոն,

Պօյնէս, Մօրբու, Թէրէյ իրենց բուն գոյներով .

Մէջը Սարթին ալ կը խառնէ,

Եւ անունը կը դնէ՝

Չորս գողերուն քացախը » :

— Ո՛հ, անգութ, զիս վազրի մը կը փոխէք :

— Հիմայ երզին անցնինք : Տիկին աը կրամօնն է

խօսողը .

Ոստիկանաց տեղակալ,
 Մորթա փայլուն չէ՞ միթէ,
 Շնորհ ըրէ իմաց տալ,
 Թագաւորը չգիտէ :

— Տիկի՛ն, աիկի՛ն, գոչեց Պ. ար Սարթին մոլեղին :
 — Ո՛հ, հանդարտեցէք, ըսաւ կոմսուհին, տակաւին տասը հազար օրինակ միայն տպագրուեցաւ : Բայց զուսաներգութիւնը լսելու արժանի բան է :

— Մամո՞ւլ ունիք ուրեմն :
 — Ի՛նչ աղուոր հարցում : Միթէ Պ. ար Շուաղէօլն ալ չունի՞ :

— Թող ձեր տպագրիչը զգուշանա՛յ :
 — Վա՛յ, է՛հ, փորձեցէք, արտօնագիրը իմ անուանա է :
 — Գարշելի բան մըն է այդ : Եւ թագաւորը բոլոր այդ վասութեանց վրայ կը խնդա՞յ :

— Ի՛նչ ըսել է . երբ բանահիւաներուս տագրը հասնին՝ ա՛ն կը հայթայթէ անոնց :
 — Ո՛հ, գիտնալով հանդերձ որ ձեզի կը ծառայիմ՝ հետս այսպէ՞ս կը վարուիք :

— Գիտեմ որ զիս կը մտանէք : Դքսուհի Շուաղէօլն է որ իմ անկումս տեսնել կը բաղձայ :

— Տիկին, կ'երգնում որ յանպատրաստից բոնեց զիս :
 — Կը խտատովանի՞ք ուրեմն :

— Ի հարկէ ասիպեալ :
 — Ինչո՞ւ ստաջուց չլիմացուցիք ինձ :

— Ասոր համար եկայ :
 — Կը բաւէ . ատոնց և ոչ մէկուն կը հաւատամ :

— Պատուոյս վրայ կ'երգնում :
 — Ես կըրկինը գրաւ կը դնեմ :

— Շնորհ, ըսաւ ոստիկանութեան տեղակալը ծուներգնելով :

— Շատ աղէկ կ'ընէք :
 — Հաշտուինք, կոմսուհի, յանուն երկնից :

— Ի՞նչ, հինգ փարայի արժէք չունեցող յոռի ոտահասարէ մը կը վախնա՞ք, դուք որ այր մը և պաշտօնեայ մըն էք :

— Ա՛խ, եթէ վախս միայն ասկէ ըլլար . . .
 — Եւ դուք բնաւ չխորհեցա՞ք թէ երգ մը քանի՛ քանի յոռի ժամեր կրնար անցընել տալ ինձ որ կին մըն եմ :

— Դուք թագուհի մըն էք :
 — Այո՛, թագուհի մը որ ներկայացուած չէ :

— Կ'երգնում որ բնաւ չարիք հասցուցած չեմ ձեզ, տիկին :

— Գիտեմ, բայց թոյլ տուած էք որ ուրիշներ ինձի չարիք հասցընեն :

— Կարելի եղածին չափ քիչ :
 — Օ՛հ, այդպէս թող ըլլայ :

— Հաւատացէ՛ք :
 — Հիմայ խնդիրը չարին հակառակը ընելուն վրայ կը կայանայ, այսինքն բարիք ընել :

— Օգնեցէք ինձ և ես անշուշտ կը յաջողիմ :
 — Իմ կողմէ՞ս էք, այո՛ կամ ո՛չ :

— Այո՛ :
 — Իմ ներկայացումս պաշտպանելու չափ անձնուէք պիտի ըլլա՞ք :

— Անձնուիրութեանս սահմանը որոշել ձեզ կը թողում :

— Լա՛ւ խորհեցէք, տպարանս կազմ և պատրաստ է :

գիշեր ցերեկ կը գործէ, մատենագիրներս պիտի անօթենան, և երբ անօթենան՝ կը խածնեն, զխոցած ըլլաք:

- Խոնամութեամբ պիտի վարուիմ: Ի՞նչ կը բաղձաք:
- Ի՛նչ փորձ որ ընեմ պէտք չէ որ մէկը խմանայ:
- Ո՛հ, եթէ ինծի մնայ, խօսք կուտամ:
- Ահա՛ երկրորդի խօսք մը որ յոյն կամ գարթիփեցի կը հօտի, մէկ խօսքով փիւնիկեցւոց հաւատարմութեան կը նմանի, ըսաւ կոմսուհին ոտքերը գետինը զարնելով:
- Կոմսուհի՛ . . .

— Հետեւաբար չեմ կրնար ընդունիլ, ատիկայ փախուստի միջոց մըն է: Դուք բան մը չընել պիտի ձեւացնէք, իսկ Պ. ար Շուազէօլ պիտի գործէ: Այսպէս չպիտի ըլլայ, կը հասկնա՞ք: Ամէ՛ն բան կամ ոչինչ ինձ յանձնեցէք Շուազէօլները կապուած, անկարողութեան մատնուած և կործանուած, ապա թէ ոչ ձեզ կը ջնջեմ, ձեզ կը կապեմ, ձեզ կը կործանեմ: Եւ, զգուշացէք, երգը իմ միակ զէնքս չէ, կանխաւ կ'իմացնեմ:

— Մի՛ սպառնաք, տիկին, որովհետեւ ներկայացման խնդիրը անխմանալի դժուարութիւն մը ստացած է, ըսաւ Պ. ար Սարթին մտախորհութեան մէջ իշխալով:

— Ստացած, այո՛, է՛ն յարմար բառն է, որովհետեւ խոչընդոտներ հանած են անոր դէմ:

- Աւա՛ղ:
- Կրնա՞ք զանոնք բառնալ:
- Առանձին չեմ կրնար, հարիւր հօգի պէտք է մեզի:
- Պիտի ունենանք:
- Միլիոն մը:
- Ատիկայ թէրէյին գործն է:
- Թագաւորին հաւանութիւնը . . .

- Կը ստանամ:
- Չի տար:
- Ես կ'առնեմ:
- Եւ այս ամէնքէն վերջը՝ տակաւին կնքամայրի մըն ալ պէտք ունիք:
- Կը փնտռուի:
- Ի զուր, ձեզի դէմ դաշնակցած են:
- Վէրոսյլի՞ մէջ:
- Այո՛, բոլոր կիները մերփեցին կնքամայր ըլլալ, այսպէսով իրենց անհամութիւնն ու յարգանքը յայտնելու համար Պ. ար Շուազէօլի, տիկին կրամօնի և իշխանուհիին, մէկ խօսքով պարկեշտ դասակարգին:
- Նախ պարկեշտ դասակարգը պէտք է իր անունը փոխէ՛ եթէ տիկին ար կրամօն անոնց մէջն է: Հարուած մըն ալ այս է:
- Ի զուր կը յամտուիք, հաւատացէ՛ք ինձ:
- Նպատակաւ պիտի հասնիմ:
- Ատո՞ր համար ձեր քոյրը Վէրաէօն զրկեցիք:
- Վա՛յ, գիտէ՞ք ուրեմն զայս, ըսաւ կոմսուհին դժգոհութեամբ:
- Է՛հ, ես ալ իմ ոտտիկանութիւնս ունիմ, պաւտասխանեց Պ. ար Սարթին խնդալով:
- Լրտեսանե՞ր ալ ունիք:
- Այո՛, լրտեսանե՛ր ալ:
- Տա՞նս մէջ:
- Ձեր տա՛ն մէջ:
- Ախոռներո՞ւն թէ խոհանոցներուն մէջ:
- Ձեր նախասենեակներուն մէջ, ձեր դահլիճին մէջ, ներքնասենեակին մէջ, ննջարանին մէջ, բարձին տակը:
- Լաւ ուրեմն, իբրև միութեան հաւատարմ այդ

լրտեսներուն անունները տուէք ինձ :

— Ո՛հ, չեմ ուզեր որ ձեր բարեկամներուն հետ աւրուիք, կոմսուհի :

— Ուրեմն պատերազմ կը հռչակեմ ձեզի դէմ :

— Պատերա՛զմ, որքա՛ն անվախութիւն :

— Զօրաւորը չվախնար : Ելէք գացէք, ա՛լ ձեզ տեսնել չեմ ուզեր :

— Ա՛հ, ա՛լ այս անգամ ձեզ վկայ կը կոչեմ : Կրնա՞մ երեւան հանել պետական . . . գաղտնիք մը :

— Ննջարանի՞ գաղտնիք մը :

— Ատ ըսել կ'ուզէի : Պետութիւնը այսօր հոն կը գտնուի :

— Լրտես կ'ուզեմ :

— Ի՞նչ պիտի ընէք զայն :

— Պիտի վռնամ :

— Ուրեմն ձեր բոլոր ծառաները ճամբեցէք :

— Գիտէ՞ք որ սոսկալի բան մըն է ձեր բրածը :

— Մանաւանդ ճշմարիտ : Է՛հ, Աստուած իմ, առանց ասոր կառավարելու միջոց չէր գտնուեր . դուք որ ընտիր քաղաքազէտ մըն էք, աղէկ գիտէք զայս :

Տիկին Տիւպարի արմուկը ջնարակուած սեղանի մը կռթնցուց :

— Իրաւունք ունիք, կնքե՞նք ուրեմն այդ դաշնաւորութեան պայմանները :

— Դո՛ւք ըսէք, դուք է յաղթողը :

— Շամիրամին նման մեծանձն եմ : Ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Թագաւորին բնաւ չպիտի խօսիք ալիւրներու մասին տրուած խնդրագիրներուն վրայ, խնդրագիրներ որոնց դաւաճանօրէն նեցուկ ըլլալ խստացած էք :

— Լաւ, առէք տարէք ուրեմն այդ մասին 'ստացած բոլոր ազերագիրներս, սա արկղիկին մէջն են :

— Դուք ալ առոնց փոխարէն ընդունեցէք տէրութեան ատենակալներուն կողմէ ներկայացման համար գրուած երկերը :

— Այդ երկերը Նորին վեհափառութեան յանձնելու պաշտօնն ունէիք :

— Անչո՛ւտ :

— Իրբև թէ դո՛ւք պատրաստել տուած ըլլայիք զանոնք :

— Այո՛ :

— Լաւ, բայց ի՞նչ պիտի պատասխանէք անոնց :

— Պիտի ըսեմ թէ տուի : Ասով ժամանակ կը շահինք, և դուք առիթէն օգուտ քաղելու մէջ շատ ճարտար մարտազէտ մըն էք :

Այս միջոցին դրան երկու թեւերը բացուեցան և բարապան մը ներս մտնելով գոչեց .

— Թագաւո՛րը :

Երկու դաշնակիցներէն իւրաքանչիւրը փութացին պահել իրենց դաշնակցութեան հաւատիքը և դարձան ողջունելու Նորին վեհափառութիւն Լուի տասնընկուորորը :



ի՛ի.

ԼՈՒԻ ԺԵ ԹԱԳԱՒՈՐԸ

Լուի ժե ներս մտաւ բարձրագլուխ, գուարթ և ժըպիտը չըթուենքին :

Իր անցած ճամբուն վրայ, բաց ձգուած դռնէն, պալատականներու ծոած գլուխներուն կրկին շարքը կը տեսնուէր, որոնք կը բաղձային ներս մտնել՝ տեսնելով որ Նորին վեհափառութեան զալստեամբը առիթը պիտի ունենային երկու իշխանութեանց միաժամանակ մատուցանել իրենց յարգանքը :

Դռները վերտաին գոցուեցան : Թագաւորը իրեն հետեւելու համար մէկու մը նշան ըրած չըլլալով՝ առանձին մնաց կոմսուէրին և Պ. աը Սարթինի հետ :

Խօսքերնիս մտերիմ սենեկապանուէրի մը և փոքրիկ սեւամորթի մը համար չէ, որոնք իբրև մարդ հաշուի առնուած չէին :

— Բարի լո՛յս, կոմսուէրի, ըսաւ Թագաւորը տիկին Տիւպարիի ձեռքը համբուրելով : Փա՛ռք Աստուծոյ, որքան զով է այս առաւօտ : Բարի լո՛յս, Սարթին : Հո՛ս կ'աշխատիք : Տէ՛ր ողորմեա, այս ո՛րչափ թուղթ է, ինէ՞ կը պահէք, հէ՞ : Ո՛հ, որքա՛ն վայելաչաէն աղբիւր է սա, կոմսուէրի :

Եւ իր զիւրափօփօխ հետաքրքրութեամբը, Լուի ժե աչքերը սեւեռեց հոյակապ արձանի մը որ տակաւին առջի օրուընէ ի վեր կոմսուէրին ննջասենեակին անկիւններէն մին կը զարգարէր :

— Տէր արքայ, ինչպէս որ Ձեր վեհափառութիւնը կը տեսնէ՝ չինական աղբիւր մըն է, պատասխանեց տիկին Տիւպարի : Ձուրերը հտուի ծորակէն ժայթքելով յախճապակեայ թուշունները կը խօսեցնեն ու բիւրեղեայ ձուկերը կը լողացնեն : յետոյ մեհեանին դուռը բացուելով Ձինաստանի նախարարաց գրո՛ն մը երեւան կուղայ :

— Խխտ ճարտարութեամբ շինուած է, կոմսուէրի :

Այս միջոցին փոքր սեւամորթը անցաւ իր քմածին սարաղովը զոր այն ատեն Օթէլլօնները կը հազնէին : Ուղղաձիգ փետուրներով ապարօշ մը ունէր ականջին վրայ, ոսկիճամուկ մետաքսեայ բաճկոնակ մը հագած էր՝ որմէ կ'երեւէր իր երկնոսագոյն բազուկները, նկարակիտեալ ձերմակ հոգմուտոյց տախտ մը որ մինչև ծունկերը կ'իջնէր և փայլիլուն գօտի մը որ տախտը նկարուն բաճկոնի մը կը միացնէր : գօտիէն ալ ակա՛նակուռ գաշոյն մը անցուցած էր :

— Բա՛հ, գոչեց Թագաւորը, ո՛րքան շքեղօրէն հագուած է այսօր Ձամօր :

Սեւամորթ տղեկը առաւել պզրասիրութեամբ և նուազ քծինքով կանգ առաւ հայկիի մը առջև :

— Տէր արքայ, Ձեր վեհափառութիւնէն շնորհ մը պիտի խնդրէ Ձամօր :

— Տիկին, Ձամօր չափազանց երջանիկ կ'երեւի ինձ, ըսաւ Լուի ժե կարելի եղածին չափ շնորհալի կերպով մը :

— Ինչո՞ւ համար, տէր արքայ :

— Որովհետեւ արդէն ամենամեծ շնորհ մը ըրած էք իրեն :

— Ո՞րն է :

— Ինչ որ ինձ ըրած էք :

— Ձեմ հասկնար, տէր արքայ :

— Ձեր գերին ըրած էք զայն :

Պ. տը Սարթին ժպտելով և միեւնոյն ատեն չըթուենքները խածնելով խոնարհեցաւ :

— Ո՛հ, սիրտս կը յափշտակէք, տէր արքայ, ըստ կոմսուհին :

Ապա թագաւորին ականջն ի վար ցած ձայնով ըսաւ .

— Գաղիա, կը պաշտեմ դքեզ :

Լուի եւս ժպտեցաւ :

— Լաւ ուրեմն, ի՞նչ կը խնդրէք Չամօրի համար :

— Իր երկարատեւ և բազմադիմի ծառայութեանց փոխարէն վարձատրութիւն մը :

— Տակաւին տասներկու տարեկան է :

— Ապագայ երկարատեւ և բազմադիմի ծառայութեանց փոխարէն :

— Ա՛հ, ա՛հ :

— Արդարեւ, տէր արքայ, կարծեմ թէ բաւական տեսնէ ի վեր է որ անցեալ ծառայութիւնները կը վարձատրուին և ա՛լ ժամանակն է որ ապագայ ծառայութիւնները վարձատրուին . ասով զոնէ մարդ ապահովուած կ'ըլլայ ապերախտութեամբ չփոխարինուելու :

— Տե՛ս, ա՛յս ալ կարծիք մըն է, ըստ թագաւորը, այս մասին գո՛ւր ինչ կը խորհիք, պարոն տը Սարթին :

— Կը խորհիմ թէ բոլոր անձնուէրները պիտի օգտուին, հետեւաբար համամիտ եմ, տէր արքայ :

— Մէկ խօսքով ըսէք, կոմսուհի, ի՞նչ կը խնդրէք Չամօրի համար :

— Տէր արքայ, Լիւսիէնի դղեակս գիտէ՞ք :

— Այսինքն անոր վրայ խօսուիլը միայն լսած եմ :

— Յանցանքը ձերն է, հարիւր անգամ ձեզ հոն հրաւիրեցի :

— Արքունիքին սովորութիւնները գիտէք, սիրելի կոմսուհի . թագաւորը ուրիշ տեղ չկրնար պատկիլ՝ եթէ ոչ արքունի դղեակներու մէջ : Ուղեւորութեան պարագային միայն բացառութիւն մը կրնայ տեղի ունենալ :

— Ահա ճիշդ իմ խնդրած շնորհս ալ այդ է : Լիւսիէնը արքունի դղեակ կը հռչակենք և Չամօրը անոր կառավարիչը կ'անուանենք :

— Եւղիտատակութեամբ խառն բանատեղծութիւն մը կ'ըլլայ ատիկայ, կոմսուհի :

— Գիտէք որ այդ սեռի զրականութիւնը կը պաշտեմ, տէր արքայ :

— Բայց ասով միւս կառավարիչները ձայն պիտի բարձրացնեն :

— Չա՞յն պիտի բարձրացնեն :

— Եւ այս անգամ իրաւամբ :

— Աւելի՛ լաւ, քանի՛ քանի անգամներ յանիրաւի ձայներնին բարձրացուցած են : Չամօ՛ր, ծո՛ւնը դիր և շնորհակալ եղիր Նորին վեհափառութիւնէն :

— Ի՞նչ բանի համար, հարցուց Լուի ժե՛ :

Սեւամօրթ պատանին ծուներ դրաւ :

— Այն վարձատրութեան համար զոր քեզ կ'ընէ հանդերձիա քղանցքը վերցնելուց և ասով արքունիքին կեղծ համեմատաբայլներն ու փորձառուները կառղեցնելուց համար :

— Յիրաւի, սորափեյլի կերպարանք մը ունի, ըստ Լուի ժե՛ :

Եւ սկսաւ բարձրածայն խնդալ :

— Ոտքի ել, Զամօր, պաշտօնդ ստացար, ըսաւ կոմսուհին :

— Բայց ստուգիւ, տիկին . . .

— Ես յանձն կ'առնեմ նամակները, արտօնագիրները եւ հրովարտակները ուղարկելու պաշտօնը, ատիկայ խմ գործս է : Իսկ ձեր գործն ալ, տէր արքայ, ուղղակի լիւսիէն գալը պիտի ըլլայ : Այսօրու ընէ արքունի դըղ-հակ մը աւելի պիտի ունենաք, արքայդ խմ :

— Ասոր բան մը մերժելու միջոցը գիտե՞ս, Սարթին :

— Գուցէ կայ, բայց տակաւին գտնուած չէ :

— Եւ եթէ գտնուի, տէր արքայ, կը հաւատասեմ ձեզ թէ Պ. աը Սարթինը պիտի ընէ այդ գեղեցիկ գիւտը :

— Ի՞նչպէս տիկին, հարցուց ոստիկանութեան տեղա-կալը սարտալով :

— Երեւակայեցէք, տէր արքայ, երեք ամիսէ ի վեր Պ. աը Սարթինէ բան մը կը խնդրեմ, բայց ի դուր :

— Եւ ի՞նչ է ձեր խնդրածը, հարցուց թագաւորը :

— Ո՛հ, ինքը լաւ գիտէ :

— Ե՞ս, տիկին : Կ'երզնում ձեզ . . .

— Իր վարչութեան օրովը, հարցուց թագաւորը :

— Թէ՛ իր թէ իր նախորդին օրովը :

— Տիկին, ստուգիւ զիս կը վրդովէք, գոչեց Պ. աը Սարթին :

— Ի՞նչ կը խնդրէք իրմէ :

— Կախարդ մը գտնալ ինձ :

Պ. աը Սարթին շունչ առաւ :

— Այրելո՞ւ համար, ըսաւ թագաւորը : Ո՛հ, օդը շատ տաք է հիմայ, ձմեռուան սպասեցէք :

— Ո՛հ, տէր արքայ, անոր ոսկեղէն գաւազան մը սալու համար :

— Այդ կախարդը արգեօք ո եւ է դժբաղութի՞ւն մը գուշակեց եւ այդ գուշակութիւնը միթէ անկատար մնաց, կոմսուհի :

— Ընդհակառակը, տէր արքայ, երջանկութիւն մը գուշակեց ինձ համար եւ կատարուեցաւ :

— Կէտ առ կէտ կատարուեցա՞ւ :

— Գրեթէ :

— Պատմեցէք ինձ այդ բանը, կոմսուհի, ըսաւ Լուի Ժե թիկնաթոռի մը մէջ տարածուելով եւ այնպիսի եւ զանակաւ մը որ տարակոյս կը յայտնէր իր զուարճա-նալուն կամ ձանձրանալուն վրայ, բայց որ ձանձրանա-լու վտանգը յանձն կ'առնէր :

— Կը պատմեմ, տէր արքայ, բայց վարձատրու-թեան կէսն ալ դուք պէտք է ընէք :

— Ամբողջը, եթէ հարկ ըլլայ :

— Հիանալի՛ է, ահա թագաւորական խօսք մը :

— Ձեզ մտիկ կ'ընեմ :

— Կը սկսիմ : Ատենով . . .

— Առասպելի մը պէս կը սկսիք :

— Գրեթէ առասպել մըն է, տէր արքայ :

— Ո՛հ, աւելի լաւ, ես կախարդները շատ կը սիրեմ :

— Դուք ոսկերիչ էք, պարոն Ժօս : Ատենով զեռա-տի աղջիկ մը կար որ ո՛չ ծառայ, ո՛չ կառք, ո՛չ զերի, ո՛չ թութակ եւ ո՛չ ալ կապիկ ունէր :

— Ո՛չ ալ թագաւոր, աւելցուցէք, ըսաւ Լուի Ժե :

— Ո՛հ, տէր արքայ :

— Եւ ի՞նչ կ'ընէր այդ զեռատի աղջիկը :

— Կը վազվզէր :

— Ի՞նչ, կը վազվզէ՞ր :

— Այո՛, տէր արքայ, պարզ մահկանացուի մը պէս

հետիոտն, Բարիզի փողոցներուն մէջ : Միայն թէ շատ կը վազվզէր, որովհետեւ կը պնդէին թէ խիստ զեղեցիկ էր, հետեւաբար կը վախնար որ այդ զեղեցիկութիւնը զլսուէն փորձանք մը չբերէ որ մը :

— Ուրեմն այդ դեռառի աղջիկը Լուքրէցիա՞ մըն էր :

— Ձեր վեհափառութիւնը լաւ գիտէ թէ Հոովմի հիմնարկութեան . . . չեմ գիտեր որ թուականէն ի վեր ա՛լ Լուքրէցիա չկայ :

— Ո՛հ, Աստուած իմ, չըլլա՞յ որ գիտնական ըլլաք, կոմսուհի :

— Ո՛չ, եթէ գիտնական ըլլայի՝ առանց վարանելու սխալ մխալ թուական մը կ'ըսէի :

— Ճշմարիտ է, ըսաւ թաղաւորը, շարունակեցէք :

— Կը վազվզէր ուրեմն, կը վազվզէր, կը վազվզէր թիւյլերիէն անցնելով, երբ յանկարծ տեսաւ որ մէկը իրեն կը հետեւի :

— Ա՛հ, չա՛ր սատանայ, ըսաւ թաղաւորը . այն տանն կա՞նոց առաւ աղջիկը :

— Ա՛հ, տէ՛ր ողորմիս, որչա՛փ սխալ գաղափար մը կաղմած էք կանանց մտաին, տէր արքայ : Ասով յայտնի կ'ըլլայ թէ գուք ճանչցած էք միայն մարքիզուհիներ, գրքուհիներ և . . .

— Եւ իշխանուհիներ, այնպէս չէ :

— Նորին վեհափառութեան ընդդիմախօսելու անքաւ դաքսվարութիւնը չեմ կրնար գործել : Իայց աղջկան ա. մէն բանէ աւելի վախցածը երկինքէն իջնող մատախուզն էր որ բոպէ առ բոպէ կը թանձրանար :

— Սարթի՛ն, գիտէ՞ք մատախուզը ինչէն յառաջ կուգայ :

— Իբրաւ որ ո՛չ, տէր արքայ :

— Լա՛ւ ուրեմն, ե՛ս ալ չեմ գիտեր, ըսաւ Լուի Ժե : Շարունակեցէ՛ք, սիրելի կոմսուհի :

— Ուստի աղջիկը սկսաւ արագօրէն վազել : Վանդա- կապտոններէն անցեր և հասեր էր այն հրապարակը որ պատիւը ունի Ձեր վեհափառութեան անունը կրելու, երբ յանկարծ իրեն հետեւող անձանթը, որմէ ազատած ըլլալ կը կարծէր ինքզինքը, դէմը ելաւ : Աղջիկը ճիչ մը արձակեց :

— Կ'երևի թէ շատ տղիզ էր այդ մարդը :

— Ընդհակառակը, տէր արքայ, քսանըվեցէն քսանը ութը տարեկան զեղեցիկ երիտասարդ մըն էր թխադէմ, քաղցրահայեաց աչքերով և քաղցրահնչիւն ձայնով :

— Եւ դիւցազնուհին կը վախնա՞ր, կոմսուհի : Է՛հ, կ'երևի թէ շատ անաբեկած էր :

— Աղջկան վախը նուազեցաւ, տէր արքայ, երբ եւրիտասարդը լաւ մը դիտեց : Սակայն ազատով վիճակի մը մէջ չէր գտնուեր . մատախուզին մէջ՝ եթէ այս անձանթը գէշ դիտաւորութիւն մը ունենար՝ օգնութիւն յուսալու ամենեւին միջոց չկար . ուստի ձեռքերը իրար միացնելով .

« — Ո՛հ, սպարոն, ըսաւ դեռառի աղջիկը, կ'աղաչեմ որ ինձ չարիք մը չհասցնէք :

« Օտարականը յանկուցիչ ժպիտով մը դուրսը թօթվեց և ըսաւ .

« — Աստուած վկայ այդպիսի դիտաւորութիւն մը չունիմ :

« — Ուրեմն ի՞նչ կ'ուզէք ինէ :

« — Խոստում մը :

« — Ի՞նչ կրնամ խոստանալ ձեզ :

« — Շնորհել ինձ ի՞նչ որ խնդրեմ երբ . . .

« — Շարունակեցէք, սպարոն, յարեց դեռառի աղջիկը հետաքրքրութեամբ :

« — Երբ թագուհի ըլլաք : »

— Եւ ի՞նչ պատասխանեց դեռառի աղջիկը, հարցուց Լուի Ժե :

ժող. Պալս., բիւ 9—23, Բ.հր.Ն.Ք.

— Տէր արքայ, աղջիկը կարծելով թէ ոչինչ կը խոսանար, երկնասարդին խնդիրքը չմերժեց :

— Իսկ կախարդը :

— Աներեւութացաւ :

— Եւ այժմ Պ. տը Սարթին կը մերժէ՞ կախարդը գտնել : Իրաւունք չունի :

— Տէր արքայ, չէ թէ կը մերժեմ՝ այլ կարող չեմ :

— Ո՛հ, պարտն տեղակալ, ահա բառ մը որ պէտք չէր գտնուիլ սաստիկանութեան բառգիրքին մէջ, ըսաւ կոմսուհին :

— Բայց տիկին, հետքը գտնուած է :

— Այո՛, միշտ այսպիսի պարագաներու մէջ գործածուած յանկերգ մը :

— Ո՛չ, ճշմարտութիւնը այս է : Բայց զիտէ՞ք որ ձեր տուած տեղեկութիւնները անբաւական են :

— Ինչպէ՞ս. գեղեցիկ, թխադոյն, սեւ մազերով, գեղապարոյր աչքերով և քաղցրահնչիւն ձայնով անձ մը :

— Է՛հ, որքա՛ն եռանդով կը խօսիք անոր վրայ, կոմսուհի : Սարթի՛ն, հրաման չունիմ որ տա թեթեւաւ միտ կախարդը գտնէք :

— Իրաւունք չունիք, տէր արքայ, որովհետեւ պարզ տեղեկութիւն մը պիտի խնդրեմ իրմէ :

— Խնդիրը ձե՞ր վրայ է ուրեմն :

— Անշուշտ :

— Լաւ ուրեմն, ուրիշ ի՞նչ պիտի հարցնէք անոր քանի որ գուշակութիւնը կատարուած է :

— Կը կարծէ՞ք :

— Անշուշտ : Թաղուհի էք :

— Գրեթէ :

— Ուրեմն ա՛լ ըսելիք մը չկրնար ունենալ ձեզ :

— Ունի : Ինձ պէտք է ըսէ թէ թաղուհին ե՞րբ պիտի ներկայանայ : Միայն գիշերը թաղաւորելով չըլլար,

տէր արքայ, հարկ է նսեւ քիչ մըն ալ ցերեկը թաղաւորել :

— Ատիկայ կախարդին զիտնալու բանը չէ, ըսաւ Լուի Ժե շրթունքները երկնցնելով այնպիսի մարդու մը պէս որ խօսակցութեան ձախող նիւթի մը անցնիլը կը տեսնէ :

— Որմէ՞ կախում ունի ուրեմն :

— Չենէ :

— Ինէ՞ :

— Անշուշտ : Կնքամայր մը գտէք :

— Արքունիքին լիբը կանա՞նց մէջէն : Չեր վեհափառութիւնը ըստ զիտէ թէ անկարելի է. անոնց աւմէնքն ալ Շուաղէօլներուն և Բրասլէններուն ձախուած են :

— Օ՛հ, կարծեմ որչա՞ծ էինք այս երկուքին վրայ ալ չխօսիլ :

— Ես այդպիսի բան մը չխոստացայ, տէր արքայ :

— Լա՛ւ ուրեմն, բան մը պիտի խնդրեմ ձեռնէ :

— Ի՞նչ :

— Չանտնք իրենց եղած տեղը թողուլ և դուք ալ ձեր եղած տեղը մնալ : Հաւատացէք ինձ, ըսաւ զոյն տեղը ձերն է :

— Խե՛ղճ արտաքին գործեր, խե՛ղճ նաւատորմ :

— Կոմսուհի, յանուն երկնից, քաղաքականութեան վրայ չխօսինք միասին :

— Լաւ, բայց հարկաւ չպիտի արդիլէք որ առանձին խօսիմ :

— Ո՛հ, ստանձին ո՛րչափ որ կ'ուզէք խօսեցէք :

Կոմսուհին միբերով լեցուն կողովի մը երկնցուց ձեռքը, երկու հարինջ առաւ հոնկէ և սկսաւ զանոնք իր

ձեռքերուն մէջ փոխն ի փոխ վեր նետել :

— Յատկէ՛ Բրապէն, ցատկէ՛ Շուազէօլ, ցատկէ՛ Բրապէն, ցատկէ՛ Շուազէօլ :

— Լաւ ուրեմն, ի՞նչ կ'ընէք, ըսաւ թագաւորը :

— Նորին վեհափառութեան ինձ տուած թոյլտուութիւնը կը գործադրեմ, տէր արքայ, պաշտօնեաները կը ցատկեցնեմ :

Այս միջոցին Տօրէ ներս մտաւ և տիրուհիին տկան ջէն բաներ մը փախաց :

— Վա՞յ, իրա՞ւ, գոչեց կոմսուհին :

— Ի՞նչ կայ, հարցուց թագաւորը :

— Շօն ուղեւորութենէ կը վերադառնայ, տէր արքայ, և կը խնդրէ Ձեր վեհափառութեան մատուցանել իր խորին յարգանաց հաւատարմքը :

— Թող գայ, թող գայ : Արդարեւ չորս հինգ օրէ ի վեր կը զգայի որ բան մը պակաս էր ինչ առանց ինչ ըլլալը գիտնալու :

— Շնորհակալ եմ, տէր արքայ, ըսաւ Շօն ներս մտնելով :

Ապա կոմսուհիին մօտենալով տկանջն ի վար փախաց :

— Լինցաւ :

Կոմսուհին չկրցաւ ինքզինքը զսպել և ուրախութեան տկար ճիչ մը արձակեց :

— Լաւ ուրեմն, ի՞նչ կայ, հարցուց Լուի Ժե :

— Ոչինչ, տէր արքայ, զայն անսնելով երջանիկ եմ, աճա այս է :

— Նոյնպէս և ես : Բարի լոյս, փոքր Շօն, բարի լոյս :

— Ձեր վեհափառութիւնը թոյլ կուտայ քլոջս հետքանի մը բաւ փոխանակել, հարցուց Շօն :

— Խօսէ, աղջիկս, խօսէ : Սարթինէն կրնամ հասկնալ ուրկէ գարդ :

— Տէր արքայ, մէջ բերաւ Պ. տը Սարթին՝ որ կ'ուզէր խոյս տալ այս հարցումէն, Ձեր վեհափառութիւնը կը բարեհաճի՞ վայրկեան մը շնորհել ինձ :

— Ի՞նչ բանի համար :

— Խիստ կարեւոր խնդիրներու վրայ խօսելու համար, տէր արքայ :

— Ո՛հ, ժամանակս շատ սուղ է, պարոն Սարթին, ըսաւ Լուի Ժե կանխաւ յօրանջնելով :

— Տէր արքայ, միայն երկու խօսք :

— Ինչի՞ վրայ . . .

— Սա գուշակներուն, երազահաններուն և հրաշագործներուն վրայ :

— Ո՛հ, այդ խարբրաներո՞ւն վրայ : Ձեռնածուի վկայագիր տուէք անոնց և ա՛լ վախնալու բան չմնար :

— Տէր արքայ, կը համարձակիմ Ձեր վեհափառութեան ըսել թէ իրերու վիճակը կարծուածէն աւելի ծանր է : Ամէն վայրկեան մատնական նոր օթևակներ կը բացուին : Լաւ ուրեմն, տէր արքայ, ընկերութիւն մը ըլլալէ զադրած և ազանդ մը զարձած է ան, ազանդ մը որուն սկսած են յարիլ միտափոռութեան բոլոր թշնամիները, զազախարականները, համալսարանականները, մատենագիրներն ու փիլիսոփաները : Քիչ ատենէն Պ. տը Վօլթէրն ալ պիտի ընդունին իրենց մէջ մեծ չքով :

— Բայց վօլթէր մահամեծ է :

— Ո՛հ, տէր արքայ, այնչափ պարզամիտ չէ ան :

— Խոստովանեցաւ սակայն :

— Խորամանկութիւն մըն է ատիկայ :

— Կղերակա՞ն սքեմով :

— Ամբարշտութիւն մըն է ըրածը, տէր արքայ :
Ամէնքն ալ գործի վրայ են, կը գրեն, կը խօսին, իւրաքանչիւրին բաժինը կը սահմանեն, կը թղթակցին, դաւադրութիւններ կը նխութեն, կը սպառնան : Անխորհրդապահ եղբայրներու բերնէն սպրդած քանի մը խօսքերէն կ'ամացուի որ զլիաւորի մը կը սպասեն :

— Լա՛ւ ուրեմն, Սարթին, երբոր այդ զլիաւորը դայ, դայն կը բռնէք Պասթիւլը կը դնէք, ասով ամէն բան կը վերջանայ :

— Տէր արքայ, այդ մարդիկը իրարու օգնելու անհամար միջոցներ ունին :

— Դուք անոնցմէ նուա՞զ միջոցներ ունիք, պարոն, դուք որ պետութեան մը ստիկանութեան տեղակալն էք :

— Տէր արքայ, յիսուսեաններու (ժէզուիթ) արտաքստամբ խնդրեցին Ձեր վեհախառութիւնէն և կատարուեցաւ, խնդրարկուները սխալ ըրին, փիլիսոփաներո՛ւ արտաքստամբ պէտք էր որ խնդրէին :

— Օ՛ն, զա՞րծեալ այդ գրիչ կարողներուն հետ էք :

— Տէր արքայ, թամիչնցի զմեկիւմը կտրուած գրիչները վտանգաւոր կ'ըլլան :

Լուի Ժե տմզունեցաւ :

— Այն փիլիսոփաները զորս դուք արձամարհանօք բանի տեղ չէք դնել, տէր արքայ . . . , շարայարեց Պաը Սարթին :

— Է՛ն, ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Ըսել կ'ուզեմ թէ անոնք միապետութիւնը պիտի կործանեն :

— Այդ գործը ո՞րչափ ատենէն կրնան կատարել պարոն :

Ոստիկանութեան տեղակալը Լուի Ժեի նայեցաւ զարմացմամբ :

— Բայց ատիկայ կրնամ զիտնալ, տէր արքայ : Գուցէ տասնընից, քսան կամ երեսուն տարիէն :

— Լա՛ւ ուրեմն, տասնընից տարիէն ես չկամ, գուցէք յաջորդիս խօսեցէք այս խնդրին վրայ, սիրելի բարեկամս, ըսաւ Լուի Ժե :

Եւ տիկին Տիւպարիի կողմը դարձաւ :

Այս վերջինը որ այս վճռական վայրկեանին կը սպասէր, խորունկ հառաչանք մը արձակելով գոչեց .

— Ո՛ն, Աստուած իմ, ի՞նչ կ'ըսես, Շօն :

— Այո՛, ի՞նչ կ'ըսէ Շօն, երկուքնիդ ալ տխուր կը տեսնեմ, ըսաւ թագաւորը :

— Ո՛ն, տէր արքայ, տխուր ըլլալու իրաւունք ունինք, պատասխանեց կոմսուհին :

— Խօսեցէք տեսնենք, ի՞նչ է պատահածը :

— Խեղճ եղբայր :

— Խեղճ Ժան :

— Կը կարծե՞ս որ հարկ ըլլայ կտրել :

— Կը յուսամ թէ ոչ :

— Անոր ի՞նչը կտրել, հարցուց Լուի Ժե :

— Թեւը, տէր արքայ :

— Դերկոմսին թեւը կտրել, և ինչո՞ւ համար :

— Որովհետեւ ծանր կերպով վիրաւորուել է :

— Ի՞նչ կ'ըսէք, դերկոմսի՞ն թեւը :

— Ո՛ն, այո՛, տէր արքայ :

— Կու՛ր թէ խաղարանի մը մէջ . . . :

— Ո՛ն, տէր արքայ, ճամբուն վրայ :

— Բայց ի՞նչ պատահել է որ :

— Վատութեամբ սպաննել ուզելը ե՛ն զինքը, անա

պատահածը նա է :

— Ո՛հ, խնճ գերկոմս, գոչեց Լուի Ժե, որ մարդոց վրայ գրեթէ չէր ցաւեր՝ սակայն ցաւի կեղծելու գերը սքանչելիօրէն կը կատարէր : Վերաւորեալ, բայց այդ բանը կատակ չվերցնէր : Ի՞նչ է այս, Սարթին :

Պ. տը Սարթին արտաքուստ թագաւորէն նուազ՝ բայց ի ներքուստ շատ աւելի յուզուած ըլլալով՝ երկու քոյրերուն մօտեցաւ :

— Կարելի՞ է որ այդպիսի աղէտ մը պատահած ըլլայ, տիկիներ, հարցուց ոտիկանապետը անձկութեամբ :

— Դժբաղդարար, այո՛, պարոն, ըսաւ Շօն արտասուաթոր աչօք :

— Վերաւորուեցա՛ւ . . . : Եւ ի՞նչպէս :

— Նենգամտութեամբ :

— Նենգամտութեամբ . . . : Ի՞նչ կ'ըսէք, բայց Սարթին, կարծեմ ստիկայ ձեզի վերաբերեալ գործ մըն է, ըսաւ թագաւորը :

— Եղելութիւնը պատմեցէք, տիկին, ըսաւ Պ. տը Սարթին : Բայց կ'աղաչեմ, չըլլայ որ ձեր իրաւացի զայրոյթովը չափազանցութիւն դնէք բուն խնդրոյն մէջ : Արդարութեամբ վարուելով աւելի անաչառ պիտի ըլլանք . մօտէն ու պաղարխնութեամբ դիտուած դէպքերը յաճախ իրենց ծանրութիւնը կը կորսնցնեն :

— Ո՛հ, ամէն բան աչքովս տեսայ, գոչեց Շօն :

— Լա՛ւ ուրեմն, ի՞նչ տեսար, Շօն, հարցուց թագաւորը :

— Տեսայ որ մարդ մը եզրօրս վրայ յարձակեցաւ, սուր քաշելու ստիպեց զայն և ծանր կերպով վերաւորեց :

— Այդ մարդը առանձի՞ն էր, հարցուց Պ. տը Սարթին :

— Ո՛չ, ուրիշ վեց հոգի ալ կային հետը :

— Խնճ գերկոմս, ըսաւ թագաւորը միշտ կոմսուհիին նայելով՝ որպէս զի անոր վշտին ճիշդ ատոմանը դատելով իրն ալ անորինին յարմարցնէ : Խնճ գերկոմս, մենամարտիլ ստիպուեալ է :

Կոմսուհին լուրջ դէմք մը ստացաւ :

— Վերաւորուե՛ր ալ է, շարայարեց թագաւորը չինծու գթարտութեամբ մը :

— Բայց ո՞ւրիչ ծնունդ արաւ այդ կոխը, հարցուց ոտիկանութեան տեղակալը ջանալով ճշմարտութիւնը տեսնել այն ամէն դարձուածքներուն մէջ՝ զորս ի գործ կը դնէր Շօն իրականութիւնը ծածկելու համար :

— Ամենամտի պատճառէ մը, պարոն, սուրհանգակի ձիերու համար զոր գերկոմսին ձեռքէն առնել կ'ուզէին . գերկոմսը կը փութար զիս ժամ առաջ քրոջս բերել՝ որուն խոտացած էի վերադառնալ այս առաւօտ :

— Բայց ասոր վրէժը առնելու է, ըսաւ թագաւորը, այնպէս չէ՞, Սարթին :

— Անշո՛ւշտ, տէր արքայ, հիմայ անմիջապէս տեղեկութիւններ պիտի հաւաքեմ, պատասխանեց ոտիկանապետը : Տիկին, կրնա՞ք ըսել այդ նախայարձակին անունը, պաշտօնը և դիրքը :

— Դի՛րքը : Զինուորական մըն էր, կարծեմ արքայադատի թիկնապահ զօրաց տեղակալներէն մին, իսկ անունը Պավէրնէյ, Ֆավէրնէյ, Թավէրնէյ, այո՛, այո՛, Թավէրնէյ է :

— Տիկին, վաղը դիշեր Պասթիլլի մէջ պիտի պատկի ան, ըսաւ Պ. տը Սարթին :

— Ո՛հ, ո՛չ, բացազանչեց կոմսուհին որ մինչև և այն ատեն զվանաղխտական լուրթիւն մը պահած էր :

— Ո՞չ, ի՞նչ ըսել է ատրիկայ, բայց կ'աղաչեմ, ըսէք, ինչո՞ւ համար տա ստամբակը բանտ չբերուի: Գիտէք որ գորակահմնները ինձ համար անտանելի են, ըսաւ Լուի ժե:

— Եւ ես, տէր արքայ, կ'ըսեմ թէ Պ. Տիւպարին վիրաւորող մարդուն պէտք չէ դուչել, ըսաւ կոմսուհին միեւնոյն համարձակութեամբ:

— Ի՞նչ կ'ըսէք, կոմսուհի, պատասխանեց Լուի ժե, ահա տարօրինակ բան մը: Խնդրեմ, բացատրեցէք ատրիկայ:

— Դիւրին է: Մէկը կայ որ դայն պիտի պաշտպանէ:

— Ո՞վ է այդ մէկը:

— Այն՝ որուն թեղադրութեամբը գործած է միւսը:

— Այդ մէկը պիտի պաշտպանէ միւսը մեր դէմ: Օ՛հ, օ՛հ, սոսկալի բան է ձեր ըսածը, կոմսուհի:

— Տիկի՛ն... կակաղեց Պ. տը Սարթին՝ որ հարուածին մօտենալը կը տեսնէր և ի դուր կը ջանար անկէ խոյս տալ:

— Ձե՛զ դէմ, այո՛, ձեզ դէմ պիտի պաշտպանէ դայն, հառաչելու բան չկայ ասոր մէջ: Տէրը դո՞ւք էք, դո՞ւք...:

Թագաւորը զգաց հարուածը՝ որուն իջնելը տեսած էր Պ. տը Սարթին՝ և զրահաւորուեցաւ:

— Լաւ, չնչին մենամարտի մը համար պետական հարցի՞ր պիտի քրքրենք և անդի յաշարհէն պատրուակնն՞որ մէջ պիտի բերենք:

— Ո՛հ, ահաւասիկ շուտ մը դիւ կը լքէք և պահ մը առաջուան ոճիրը մենամարտ մը կ'ըլլայ հիմայ՝ երբ կը դուշակէք թակարդին որու կողմէ լարուած ըլլալը:

— Լա՛ւ, դարձեալ հոն վերադարձանք, ըսաւ Լուի ժե ազբիւրին ծորակը բանալով, ուրկէ ջուրը ժայթքե-

լով սկսաւ թռչունները խօսեցնել, ձուկերը լողացնել և չինական նախարարները երեւան բերել:

— Ձէ՞ք գիտեր հարուածին ուրկէ գալը, հարցուց կոմսուհին Չամօրի ականջները ճմլելով՝ որ իր սոքերուն տակ պտուկած էր:

— Իրա՛ւ որ չեմ գիտեր, պատասխանեց Լուի ժե:

— Մէկէ մը չէ՞ք կատկածիր:

— Կ'երդնում: Իսկ դո՞ւք, կոմսուհի:

— Լաւ ուրինն, ես գիտեմ և հիմայ ձեզի պիտի ըսեմ, բայց ձեր լսելիքը նոր բան մը չէ, այդ մասին ապահով եմ:

— Կոմսուհի՛, կոմսուհի՛, գիտէ՞ք որ թագաւորը սուտ կը հանէք, ըսաւ Լուի ժե իր կորսուած արժանապատուութիւնը վերստին ձեռք անցընել ջանալով:

— Տէր արքայ, գուցէ քիչ մը բուռն կերպով կը վարուիմ, ճշմարիտ է, բայց մի՛ կարծէք որ Պ. տը Շուաղէօլը ազատ պիտի թողում որ եղբայրս պահանջէ:

— Լա՛ւ, Պ. տը Շուաղէօ՞լն է եղեր, ըսաւ թագաւորը այնպիտի բարձր ձայնով մը որ գոզցես երբէք չէր յուսար ըսել այս անունը՝ զոր տասը վայրկանէ ի վեր խօսակցութեան մէջ տեսնելէ կը վախնար:

— Է՛հ, եթէ կը յամառիք անոր իմ ռիսերիմ թշնամիս ըլլալը տեսնելու՝ ես կը տեսնեմ և բացօրոջ կերպով կը տեսնեմ, որովհետեւ ինձի դէմ ունեցած ատելութիւնը ծածկելու երբէք ջանք չընէր:

— Մարդիկը ատելու և վիրաւորելու մէջ մեծ հեռաւորութիւն կայ, սիրելի կոմսուհի:

— Շուաղէօլներու համար ամէն բան իրարու կը մօտենայ:

— Ա՛, սիրելի բարեկամուհի, դարձեալ պետական

խնդիրներու մէջ մտանք :

— Աստուած իմ, ի՛նչ չարչարանք է ասիկայ, պարոն տը Սարթին :

— Բայց ո՛չ, եթէ կը կարծէք որ . . .

— Իմ կարծածս սա է որ զիս չէք պաշտպաներ, մինչև իսկ կրնամ ըսել թէ վտտահ եմ զիս լքելնուդ վրայ, գոչեց կոմսուհին բուռն կերպով :

— Ո՛հ, մի՛ բարկանաք, կոմսուհի, ըսաւ Լուի Ժե : Դուք չչքուելէ զստ պիտի պաշտպանուիք ալ և այնպէս պիտի . . .

— Խնդրեմ, տէր արքայ, շարունակեցէք :

— Այնպէս պիտի պաշտպանուիք որ՝ շատ սուղի պիտի նստի խեղճ Ժանին վրայ յարձակողին :

— Այո՛, գիտեմ, գործիքը պիտի ջանջախեն և ձեռքը սիրով պիտի սեղմեն :

— Արդար չէ՞ որ հարուածը տուողէն՝ Պ. տը Թա վէրնէյէն պահանջուի վրէժը :

— Անշուշտ արդար է, բայց արդար ըլլալէ աւելի բան մը չէ . ինձ համար ըրածնիդ պիտի ընէիք Սէնթ-Օնորէ փողոցին ո եւ է վաճառականներէն միոյն՝ երբ այս վերջինը թատրոնին մէջ զինուորականէ մը զանա- կոծուէր : Կանխաւ կ'իմացնեմ ձեզ, չեմ ուզեր որ ուրիշներու նման վարուին հետս : Եթէ ինչ որ պիտի ընէիք անտարբերներուն՝ նոյնը պիտի ընէք նաեւ ձեզ սիրող անձերուն, ինձ համար աւելի նախապատիւ պիտի ըլլար առաջիններուն մենակեաց ու քաջուած կեանքը . այսպէսով գէթ անոնք զիրենք սպաննող թշնամիներ չպիտի ունենային :

— Կոմսուհի՛, կոմսուհի՛, բացազանչեց Լուի Ժե տիրութեամբ, ես որ զիպուածով այնչափ զուարթ, եր-

ջանիկ և գոհ ելայ անկողնէս, որքա՛ն կը դառնացնես իմ գեղածիճաղ առաւօտս :

— Ի՛նչ պաշտելի բան, իրա՞ւ կ'ըսէք, ուրեմն գեղեցի՞կ է իմ առաւօտս, իմ՝ որուն ընտանիքը կը ջարդեն :

Թագաւորը, հակառակ իր շուրջը գոռացող մարիկէն-զգացած երկիւղին, չկրցաւ ժպտը զսպել այս « կը ջարդեն » բառը լսելով :

Կոմսուհին ոտքի ելաւ մոլորին :

— Ա՛հ, այսպէ՞ս կը ցաւիք իմ վրայ :

— Է՛հ, կեցէք, մի՛ բարկանաք :

— Ո՛չ, պիտի բարկանամ :

— Իրաւունք չունիք, երբ կը ժպտիք՝ հրաշալի գեղեցկութիւն մը կը ստանաք, մինչդեռ բարկութիւնը ձեզ կը ազդեցնէ :

— Ինչո՞ւս պէտք, գեղեցիկ ըլլալու ի՛նչ պէտք ունիմ քանի որ այդ առաւելութիւնը բանի մը չձառայեր, զիս չարգիլեր նենգամտութեանց և խարդաւանանց խաղալիք ըլլալէ :

— Պիտի տեսնենք, կոմսուհի :

— Ո՛չ, մեր երկուքէն մին ընտրեցէք . ե՛ս կամ Շուազէօլ :

— Սիրելիս, անկարելի է ձեր վրայ ընտրութիւն կատարել . երկուքնիդ ալ պէտք էք ինձի :

— Ուրեմն ես կը հեռանամ :

— Դո՞ւք :

— Այո՛, թշնամիներուս կը թողում ստպարէզը : Ո՛հ, ցաւէս պիտի մեռնիմ, բայց Պ. տը Շուազէօլ գոհ պիտի ըլլայ, որով դուք ալ պիտի միտիթարուիք :

— Լաւ ուրեմն, ես կ'երդնում որ ձեզի գէմ առելու-

թիւն չունի ան, կոմսուհի, և ձեր համակիրներէն է : Ասկէ զատ, բարի անձ մըն է, յարեց թագաւորը ջանալով որ Պ. ար Սարթին լաւ լսէ այս խօսքերը :

— Բարի անձ մը : Համբերութիւնս կը հատցնէք, տէր արքայ : Բարի անձ մը որ մարդիկ սպաննել կուտայ :

— Օ՛հ, ասկաւին յայտնի չէ ատիկայ, բացազանչեց թագաւորը :

— Ասկէ զատ, մեր գինուորները շատ գիւրազրգիւ են, որով իրարու միջև շուտով կոխ կընայ ծագած ըլլալ, մէջ բերաւ ոստիկանապետը :

— Ա՛հ, ա՛հ, դո՛ւք ալ, պարոն ար Սարթին, պատասխանեց կոմսուհին :

Ոստիկանապետը այս « գուք ալ » ին նշանակութիւնը հասկցաւ և կոմսուհիին բարկութեան ամջու ընկրկեցաւ :

Պահ մը խուլ և սպառնալից լուծիւն մը ատրեց :

— Կը տեսնե՞ս, Շօն, ըսաւ թագաւորը այս ընդհանուր թախծութեան մէջ, կը տեսնե՞ս ինչ որ ըրիր :

Շօն կեղծ արամութեամբ մը աչքերը խոնարհեցուց :

— Թագաւորը թող ներէ, որովհետեւ քրոջ մը ցաւը հպատակուհիի մը կամքի զօրութեան յաղթեց, պատասխանեց Շօն :

— Հիանալի՛ թատերախաղ մը, մըմնջեց թագաւորը : Օ՛հ, կոմսուհի, քէն մի՛ ընէր . . . :

— Ո՛հ, ո՛չ տէր արքայ, բնաւ քէն չեմ ընէր . . . :

Միայն թէ Լիւսիէն պիտի երթամ և Լիւսիէնէն ալ Պուլօններ :

— Ծովով, հարցուց թագաւորը :

— Այո՛, տէր արքայ, պիտի հեռանամ քաղաքէ մը ուր թագաւորը իր պաշտօնեաներէն կը վախնայ :

— Տիկի՛ն, ըսաւ Լուի Ժե այս նախատինքը լսելով :

— Լաւ ուրեմն, տէր արքայ, թոյլ տուէք ինձ որ մեկնիմ որպէս զի աւելի չթերանամ Ձեր վեհախառութեան հանդէպ սնուցած յարգանքիս մէջ :

Կոմսուհին ոտքի ելաւ՝ աչքին ծայրովը իր ըրած շարժման տպաւորութիւնը գիտելով :

Լուի Ժե հառաչանք մը արձակեց, հառաչանք մը որ կը նշանակէր .

— Շատ կը ճանճրանամ հոս :

Շօն այս հառաչանքին իմաստը գուշակելով հասկցաւ որ վտանգաւոր պիտի ըլլար իր քրոջը համար վէճը առաջ տանիլ :

Քրոջը շրջազգեստէն բռնեց և թագաւորին մօտենալով ըսաւ .

— Տէր արքայ, քրոջս բուռն կերպով վարուելուն պատճառը չէ՞զ դերկոմսին հանդէպ սնուցած սէրն է . . . : Յանդանքը ես գործեցի, հետեւաբար ինձ կ'իյնայ դարմանել զայն . . . : Նորին վեհախառութեան ամենախոնարհ հպատակուհիին կարգը կ'անցնիմ և եղբորս համար արդարութիւն կը խնդրեմ իրմէ . ոչ գոք կ'ամբաստանեմ . թագաւորին իմաստութիւնը պիտի գիտնայ յանցաւորը որոշել :

— Է՛հ, իմ ուղածս ալ ատ է՝ արդարութիւնը, այո՛, բայց արդարութիւնը անաչատ կերպով պէտք է գործադրուի : Եթէ մէկը յանցանք մը գործած չէ՝ պէտք չէ չգործած յանցանքը անոր վրայ բեռցնել, իսկ եթէ գործած է՝ պէտք է զայն պատժել :

Լուի Ժե կոմսուհիին կը նայէր այս խօսքերը ըսած միջոցին, որպէս զի՝ եթէ կարելի է՝ ձեռք անցընէ այն գեղազուարթ առաւօտեան մնացորդները զոր կը յուսար, բայց որ այնչափ տխուր կերպով կը վերջանար :

կոմսուէին շատ բարեխիրտ էր : Գլխարտութեամբ վերարեբուեցաւ թագաւորին հանդէսը, որովհետեւ Նորին վեհախառութիւնը միշտ կը տխրէր ու կը ձանձրանար հոն ուր որ կոմսուէին կը բացակայէր :

Կոմսուէին գէպի գուռը քանի մը քայլ հազիւ ստած՝ կիսովին ետին դարձաւ և չնորհալի համամտութեամբ մը ըսաւ .

— Միթէ իմ խնդրածս ուրի՞շ բան մըն է : Այսու հանդերձ պէտք չէ որ իմ կտակածներս մերժուին :

— Ձեր կտակածները ինձ համար նուիրական են ; կոմսուէի, գոչեց թագաւորը . երբ քիչ մը ստուգութեան փոխուին անոնք, այն ատեն կը տեսնէք : Բայց շատ պարզ միջոց մը ինկաւ միտքս :

— Ո՞րն է, տէր արքայ :

— Պ. աը Շուազէօլը հոս կանչել տանք :

— Ո՞հ, Ձեր վեհախառութիւնը լաւ գիտէ թէ ան երբէք հոս չիգար : Թագաւորին բարեկամութիւնն ընտանեացի մտնել կը զժկամակի : Իսկ քոյրը անոր չնամանիր, քոյրը անոր բոլորովին ներհակն է :

Թագաւորը խնդալ սկսաւ :

— Պ. աը Շուազէօլ բարձրագատիւ արքայորդիին կը հետեւի գոզցես, շարայարեց կոմսուէին քաջաբերուելով : Երկուքն ալ ինքզինքնին վտանգի ենթարկել կը խուստիին :

— Բարձրագատիւ արքայորդին կղերական մըն է, կոմսուէի :

— Իսկ Պ. աը Շուազէօլ կեղծ բարեպաշտ մը, տէր արքայ :

— Ձեզի կ'ըսեմ որ գայն հոս տեսնելու պատիւը պիտի ունենաք, որովհետեւ չիմայ կանչել պիտի ստամ, սիրելի բարեկամուէի : Պետական գործի համար է, պէտք է որ անպատճառ գայ, և ի ներկայութեան Շօնի՝ որ ամէն

բան տեսած է՝ իրմէ բացատրութիւն կը պահանջենք : Կ'երեւոյրենք, ինչպէս որ կ'ըսեն պալատին մէջ, այնպէս չէ՞, Սարթին : Թող ի՞նձ կանչեն Պ. աը Շուազէօլը :

— Եւ կապիկս ալ թող ինձ բերեն, Տօրէ՛, կապի՛կս, կապի՛կս, գոչեց կոմսուէին :

Այս խօսքերը, Պ. աը Շուազէօլին դրկուելիք բարապանին դռնէն գուրս ելած ատենը՝ զարդասնեակին փուշիները առնող սնեկապանուէի մը ուղղուած ըլլալով՝ նախասնեակէն լսուեցան, որուն խեղդուկ և թոթովազին ձայն մը պատասխանեց .

— Տիկին կոմսուէիին կապիկը ես ըլլալու եմ, հոս եմ, կը վազեմ, ահաասիկ եկայ :

Եւ շքեղօրէն հագուած կարճահասակ սապատողի մը կամացուկ մը ներս մտնելը տեսնուեցաւ :

— Տը թրէզօմ դո՛ւքսը, գոչեց կոմսուէին անհամբեր, բայց ձեզ կանչել չտուի, դո՛ւքս :

— Ձեր կապիկը ուզեցիք, աիկին, ըսաւ դուքսը թագաւորը, դքսուէին և Պ. աը Սարթինը միաժամանակ ողջունելով : Եւ որովհետեւ ամբողջ պալատականաց մէջ ինէ աւելի տղեղ կապիկ մը չտեսայ՝ վագեցի եկայ :

Եւ դուքսը իր խոշոր ակունները ցոյց տալով այնպէս մը խնդաց որ, կոմսուէին իսկ չկրցաւ իր խնդուքը զսպել :

— Հոս կ'ընամ մնալ, հարցուց դուքսը բոլոր կենացը մէջ չնորձ մը վայելած ըլլալու բաղձանքովը :

— Թագաւորին հարցուցէք, հոս տէրը ինքն է, պարոն դուքս :

Դուքսը աղերսալի դէմքով մը թագաւորին դարձաւ .

— Կեցէ՛ք, դուքս, կեցէ՛ք, ըսաւ թագաւորը իր շուրջը գրօտանքը շատցնելուն վրայ տարապայման ու ժօզ. Պալա., թիւ 10—24, Բ.հր.Ն.Ք.

բախտութիւն մը զգալով :

Այս միջոցին բարապանը դուռը բացաւ :

— Շուաղէօ՞լն է, ըսաւ թագաւորը ձանձրոյթի թեթեւ ու աննշմարելի արտայայտութեամբ մը, ի՞նչպէս եղաւ որ ասանկ շուտ եկաւ :

— Ո՛հ, տէր արքայ, բարձրապատիւ արքայորդին կ'ուզէ Ձեր վեհափառութեան հետ խօսիլ, պատասխանեց բարապանը :

Կոմսուհին ուրախութեանէն ոտուժ մը ըրաւ կարծելով որ արքայորդին իրեն կը մօտենար, բայց Շօն որ ամէն բանի վրայ կը խորհէր՝ յօնքերը պոստեց :

— Լաւ ուրեմն, ո՞ւր է բարձրապատիւ արքայորդին, հարցուց թագաւորը անհամբերութիւն ցոյց տալով :

— Նորին վեհափառութեան սենեակը կը սպասէ մինչեւ որ Նորին վեհափառութիւնը հոն վերադառնայ :

— Ուրեմն ես վայրկեան մը իսկ հանդիստ չի՞ պիտի առնեմ, գոռաց թագաւորը :

Ապա, նկատելով որ արքայորդին խնդրած ունկնդրութեամբը գոնէ քանի մը վայրկեանի համար Պ. տը Շուաղէօլի հետ տեսակցելու ձանձրոյթէն ազատ պիտի մնար, յանկարծ միտքը փոխեց :

— Հիմայ կուգամ : Մնաք բարով, կոմսուհի : Տեսէք ս'ըբան գժբաղդ եմ, տեսէք զիս ի՞նչպէս կը քաշքշին :

— Ճիշդ այն վայրկեանին որ Պ. տը Շուաղէօլ պիտի գայ, Ձեր վեհափառութիւնը կը մեկնի՞, գոչեց կոմսուհին :

— Ի՞նչ ընելու է, առաջին գերին թագաւորն է : Ա՛խ, եթէ Պ. փիլիսոփաները գիտնային թէ ի՞նչ ըսել է թագաւոր, մանաւանդ Գաղիոյ թագաւոր ըլլալը :

— Բայց, տէր արքայ, մի՛ մեկնիք :

— Ո՛հ, արքայորդին չեմ կրնար սպասցնել : Արդէն զրոյց կը չըջի թէ աղջիկներս միայն կը սիրեմ :

— Բայց վերջապէս ի՞նչ ըսեմ Պ. տը Շուաղէօլին :

— Լաւ ուրեմն, ըսէք որ գայ զիս իմ սենեակս տեսնէ, կոմսուհի :

Եւ ո եւ է զխողովեան տեղի չխտալու համար, թագաւորը համբուրեց կոմսուհիին ձեռքը՝ որ զայրոյթէն կը դողար՝ և վազելով աներևութացաւ, ինչպէս սովորութիւնն էր ընել ամէն անգամ որ կը վախնար յաղթանակին պտուղը կորսնցնել իր յապաղմամբն ու զիւսանազիտական խորամանկութեամբը :

— Ո՛հ, այս անգամ ալ ձեռքերնուս պրծեցաւ, գոչեց կոմսուհին բարկութեամբ ձեռքերը իրար զարնելով :

Բայց թագաւորը չլսեց այս բացազանչութիւնը : Դուռը իր ետեւէն գոցուեւր էր արդէն և ինք այժմ նախասենեակէն կ'անցնէր ըսելով .

— Մտէք, պարոններ, մտէք : կոմսուհին չպիտի մերժէ ձեզ ընդունիլ : Միայն թէ խեղճ ժանին զլիտն եկած ձախորդութեան հետեւանօք շատ տխուր պիտի գտնէք զինքը :

Պալատականները զարմանօք իրարու նայեցան : Չէին գիտեր թէ ի՞նչ ձախորդութիւն եկած կրնար ըլլալ զերկոմսին զլիտն :

Ոմանք կը կարծէին թէ մեռած էր :

Ուստի դէմքերնին պարագային համեմատ փոփոխութեան ենթարկեցին : Ամենէն զուարթները ամենէն տխուրները ձեւացան և ներս մտան :

ԻՊ.

ԺԱՄԱՅՈՅՅՆԵՐՈՒՆ ՍՐԱՀԸ

Վերսայլի պալատին ընդարձակ սրահներէն միոյն մէջ՝ որ ժամացոյցներու Սրահը կը կոչուի՝ վարդագոյն այտերով քաղցրահայեաց երիտասարդ մը կը շրջէր, քաւուածքը քիչ մը գեհնիկ, թեւերը կախած և գլուխը խոնարհած :

Կուրծքին վրայ, զգեստին մանիշակագոյն թաւիշին մէջտեղօքը, աղամանդեայ պատուանշան մը կը ցլար, մինչդեռ կապոյտ ժապաւէն մը մինչեւ մէջքը կ'իջնէր՝ որուն կապուած խոշ մը արծաթով նկարակիտեալ ճերմակ մետաքսէ բաճկոնակը կ'ընդգրկէր :

Սմէն ո՞ք պիտի կրնար մէկ նայուածքով ճանչնալ այս խիտո՞ այլ միանգամայն բարի, վեհափառ և զուարթ կիտաղէմքը որ Պուրպօնեան առաջին սերունդին յայտարար տիպարը կը կազմէր . միայն թէ այս ազնուական գէմքին այլասերեալ տոնձը տեսնելով, Լուի տասնը չորրորդէն և Աւստրիոյ տան Աննայէն սկսեալ, կրնար կարծուիլ թէ ան որուն վրայ կը խօսինք, իր զիմազիծները չպիտի կարենար հաղորդել ժառանգորդի մը՝ առանց նախնական տիպարը փոփոխութիւն կրելու, առանց այս տիպարին ընդոծին գեղեցկութիւնը՝ որուն վերջին փաստն էր ինքը՝ բազմակնճիռ զիծերով գէմքի

մը փոխուելու և վերջապէս պատկերը ծաղրանկար մը ըլլալու :

Արդարեւ, Լուի-Օկիւսթ, դուքս Պէրիի, Գաղիոյ գահաժառանգը, որ ապա Լուի Ժ.Ջ թագաւորը եղաւ, իր սերունդին սովորականէն աւելի երկայն և կոր Պուրպօնեան քիթ մը ունէր : Թեթեւակի ճնշեալ ճակատը Լուի Ժեի ճակատէն աւելի խուսափուն էր և հաւէն ժառանգ մնացած կզակը այնչափ աչքի կը զարնէր անոր վրայ որ գէմքին մէկ երրորդ մասը կը գրաւէր :

Քալուածքը ծանր և չփոթ էր, հասակը բարեձեւ, սակայն սրունքներն ու ուսերը շարժելու ատեն կարծես թէ նեղութիւն կը զգար : Միայն իր բազուկները, մանաւանդ մատները զիմազրական ճկունութիւն մը ունէին :

Գահաժառանգը, լսին ու մտախոհ, ժամացոյցներու Սրահին մէջ մեծաքայլ կը շրջէր, այն սրահին մէջ ուր ութը տարի առաջ Լուի Ժե տիկին Բօնբատուրի յանձնած էր ծողովին այն դատաւճիռը որով յիսուսեանք տէրութենէն կ'արտաքսուէին :

Սակայն վերջապէս ճանճրացաւ սպասելով, կամ աւելի ճիշդը՝ զինքը զբաղեցնող նիւթին վրայ խորհելով, և փոխն ի փոխ սրահը զարդարող ժամացոյցներուն նայելով՝ Շարլ-Բիւրիի նման բերկբանք մը զգաց դիտելով այն անյազմելի տարբերութիւնները զոր ամենականոնաւոր ժամացոյցներն անգամ ունէին իրարու միջև : Հոն տեսաւ տարօրինակ այլ զիւրմբունի յայտարարութիւն մը մարդկային ձեռքով կանոնաւորուած կամ անկանոն առարկաներու անհաւասարութեան վրայ և գուցէ արգահասեցաւ :

Իսկոյն կանգ առաւ մեծ ժամացոյցին զիմացը, որ այն ատեն ալ սրահին խորը, ճիշդ այսօրուան դասուած

տեղը գրուած էր և գմայելի համագլխութեամբ մը կը նշանակէր օրերը, ամիսները, տարիները, լուսնին երեւոյթները, մոլորակներուն ընթացքը և վերջապէս ինչ որ կարեւոր է տա միւս հիանալի մեքենային համար, որ մարդ կը կոչուի, կեանքէն դէպի մահ գլորուող դանդաղ այլ անդուլ խոյանքին մէջ :

Արքայորդին, իրբեւ սիրահար, հիացմամբ կը դիտէր այս ժամացոյցը, և մերթ աջ, մերթ ձախ կողմը կը ծռէր այս կամ այն անխուրդ դիտելու համար՝ որոնց ասեղանման ատամները նրբին զտզանակներ կը խածնէին : Յետոյ, ժամացոյցին այդ կողմը դիտելէ ետքը, կ'ըսէր դիմացէն նայիլ և հետեւիլ բողբոջներուն վրայէն սահող սրաքլին ընթացքին՝ որ ճահիճներուն և առուններուն վրայ իրենց երկայն թաթիկներովը թավրացող ջրային ճանճերուն նման, վճիտ հեղուկը առանց իսկ պղտորելու անդադրում կը շարժակին կամ մարախանման օտտոմներով կը ցատկատեն :

Այս մտասեւեռումէն դէիպ անցեալի վերջուշումը մեծ հետաւորութիւն մը չիկար :

Գահաժառանգը յիշեց որ շատ մը բողբոջներ է Վեր կը սպասէր, թէպէտեւ իրականութեան մէջ, բաւական ժամանակ անցուցած էր թաղաւորին իմաց տալ համարձակելու համար որ իրեն կը սպասէր :

Յանկարծ, սրաքը, որուն վրայ դեռատի իշխանը աչքերը յառած էր, կանգ առաւ : Միեւնոյն վայրկեանին, գոգցեա հմայքով մը, պղինձէ անխները դաղբեցուցին իրենց հաւատարակչիո հարովը, պողպատէ առանցնքները իրենց ազոյցքին մէջ անշարժացան և խորին լուծիւն մը տիրեց այս մեքենային մէջ՝ ուր երբեմն սղմուկ և շարժում կար : Ալ ո՛չ ցնցում մնաց, ո՛չ ճօճում, ո՛չ

սկահի թրթուում, ո՛չ սրաքի և ո՛չ ալ անխներու ընթացք :

Մեքենան կանգ առած և ժամացոյցը մեռած էր :

Անխներէն միոյն ակռային մէջ մանր ու բարակ աւաղի հատիկ մը ինկած էր արդիօք՝ թէ պարզապէս այս հրաշալի մեքենային ողին էր որ մշտնջենական շարժումէն խոնջած՝ կը հանգչէր :

Արքայորդին այս յանկարծական մահը, այս շանթահար կաթուածը տեսնելով՝ մոռցաւ ինչու համար եկած ըլլալն ու որչափ ատենէ ի վեր սպասելը . մոռցաւ թէ ժամանակը յաւիտենութեան մէջ հնչական ճօճանակի մը ցնցումներովը չէ որ կը գործէ, կամ դարերու զտիվայրին վրայ չէ որ կանգ կ'առնէ մետաղի շարժման մը ստժամարար կենալովը, այլ ճշգրտապէս կը ցուցնէ ամենակարողին յաւիտենական և անսխալութեան մատը այն մշտնջենական ժամացոյցին վրայ՝ որ աշխարհներէն առաջ կար և անոնցմէ վերջն ալ պիտի մնայ :

Ուստի նախ մեքենանին ընդերդեպ դուռը բացաւ ուր ողին կը ննջէր, և զլուխը ժամացոյցին մէջ խօթեց աւելի մօտէն տեսնելու համար :

Բայց մեծ ճօճանակը արգելք կ'ըլլար ամէն բան լուծելու տեսնելու :

Այն ատեն իր ճարտար մասները ներս սահեցուց պղնձեայ ծակէն և ճօճանակը տեղէն հանց :

Բայց ասիկայ բաւական չեղաւ, արքայորդին ի դուր չորս կողմը աչքէ անցուց, մահուան քունին պտոճառը անտեսանելի ու անհասկնալի մնաց իրեն :

Իշխանը կարծեց թէ դրակին ժամագործը մոռցած էր ժամացոյցը լարել, որու հետեւանօք կեցած էր : Ուստի ժամացոյցին պատուանդանին վրայ կախուած բա-

նալին առաւ և սկսաւ զսպանակները լարել վարժ մարդու մը հմտութեամբը : Բայց բանալին երեք անգամ դարձնելէ վերջ հարկ եղաւ կենալ, որով կ'իմացուէր թէ մեքենային մէջ արտակարգ բան մը պատահեր էր : Զսպանակը լարուած ըլլալով հանդերձ չբանեցաւ :

Արքայորդին պոզպատէ բերնով խեղիէ փոքրիկ քերիչ մը հանեց զրպանէն և երկաթին ծայրովը անխնեւէն մին առաջ մղեց : Անխնեւերը կէս բողբէ ձայն հանեցին, յետոյ կանոց առին :

Այն ատեն, լուռի, քերիչին ծայրովը սկսաւ ժամացոյցին զանազան մասերը քակել, որոնց պտուտակները մէկ կողմէն սեղանի մը վրայ կը շարէր :

Յետոյ ետանդը աւելնալով, աւրուած մեքենան քակելը սկսաւ և անոր ամենագաղտնի և խորհրդաւոր խորչերը մանրադնին կերպով քննեց :

Յանկարծ ուրախութեան ճիչ մը արձակեց . տեսեր էր որ ճնշող պտուտակ մը տեղէն ելնելով զսպանակ մը թուլցուցած և շարժիչ անիւը կեցուցած էր :

Հետեւաբար սկսաւ նոյն պտուտակը պնդել :

Յետոյ, ձախ ձեռքովը անիւ մը և աջ ձեռքովն ալ քերիչը բռնած, զլուխը նորէն պնծեաց բացուածքին մէջ խօթեց :

Գործին այս կէտին հասած և ուշն ու ուրուշը մեքենաներուն վրայ կեդրոնացուցած էր, երբ դուռը բացուեցաւ և ձայն մը գոչեց .

— Թագաւորը :

Բայց լուռի ուրիշ բան չլսեց այլ միայն իր ձեռքերուն տակ արտփող կանոնաւոր թիբթաքը որպէս սրտի մը բարախիւնը որուն կեանք կուտայ ճարտար բժիշկ մը :

Թագաւորը չորս դին նայեցաւ առանց նշմարելու արքայորդին՝ որուն անջատ սրունքները միայն կը տեսնուէին, մարմինը ժամացոյցէն ծածկուած և զլուխը ծակին մէջ անհետացած ըլլալուն :

Թագաւորը վերջապէս տեսնելով զայն, ժպտելով մօտեցաւ և թոռանը ուսին դրաւ ձեռքը :

— Ի՞նչ կ'ընես հոգ :

Լուռի արտօրնօք այլ զգուշութեամբ ետ քաշուեցաւ, որպէս զի այս գեղեցիկ կարտաին՝ որուն վերանորոգմանը ձեռնարկած էր՝ չ'իմասուի :

— Ձեր վեհախառութիւնը կը տեսնէ ըրածս, տէր արքայ, ըսաւ երխտասարդը՝ իր այս զբաղման միջոցին մարդ վրայ դալուն համար կարմրելով . ձեր զալուն սպասած ատենս կը զբօսնէի :

— Այո՛, ժամացոյցս կտոր կտոր ընելով : Ի՞նչ աղօ ուր զբօսանք :

— Ընդհակառակը, տէր արքայ, զայն կը շինէի : Գլխաւոր անիւը չէր դառնար, Ձեր վեհախառութեան հոն տեսած պտուտակէն կը նեղուէր : Պտուտակը պնդեցի, որով հիմայ կը բանի :

— Բայց ատոր մէջ նայելով պիտի կուբանաս : Աշխարհիս բոյր ոսկին ալ եթէ ինձ տային՝ զլուխս այդ պիտի ծակի մը մէջ չէի խօթեր :

— Ո՛հ, ո՛չ, տէր արքայ : Ես ծանօթներ ունիմ այդ ծակին մէջ . կը քակեմ, կը լարեմ և կը մաքրեմ սու վորաբար այն հիանալի ժամացոյցը՝ զոր Ձեր վեհախառութիւնը ինձ տուաւ ճննդեանս տասնըչորրորդ տարեկարծին օրը :

— Լա՛ւ, բայց առայժմ այդ մեքենաները թող : Ինձի հետ խօսի՛ր կ'ուզես :

— Ե՞ս, տէր արքայ, ըստ երխտասարգը կարմընելով:

— Անշո՛ւշտ, քանի որ խմաց տուեր եւ թէ ինձ կը սպասես:

— Ճշմարտ է, տէր արքայ, պատասխանեց գահաժառանգը աչքերը խոնարհեցնելով:

— Լաւ ուրեմն, ի՞նչ կ'ուզես ինէ: Պատասխանէ՛: Եթէ ըսելիք մը չունիս՝ եւ Մարլի պիտի երթամ:

Եւ Լուի ԺԵ, սովորականին համեմատ, կը ջանար խոյս տալ:

Արքայորդին քերիչն ու անիւները թիկնաթոսի մը վրայ դրաւ, սրմէ կը հետեւցուէր թէ կարեւոր ըսելիք մը ունէր թագաւորին:

— Դրամի՞ պէտք ունիս, հարցուց թագաւորը աշխուժիւ: Եթէ ատ է, սպասէ, հիմայ կը գրկեմ:

Եւ Լուի ԺԵ քայլ մըն ալ առաւ գէպի դուռը:

— Ո՛հ, ո՛չ, տէր արքայ, պատասխանեց զեռասի Լուին, տակաւին հազար սկրուտ ունիմ այս ամսուան թոշակէս:

— Որքա՞ն խնայասէր ես, գոչեց թագաւորը, որքան լաւ կրթութիւն մը տուեր է քեզ Պ. սը Լալօկիւ՝ յոն: Արդարեւ, կը տեսնեմ որ ճիշդ խճուենեցամ առաքինութիւններս ունիս:

Երխտասարգը բուռն ճիգ մը ըրաւ:

— Տէր արքայ, արդեօք իշխանուէին տակաւին շատ հեռօ՞ւ կը գտնուի:

— Բայց այդ մասին ես ալ քեանէ աւելի բան չեմ գիտեր:

— Ինէ աւելի բան չէ՞ք գիտեր, երկրորդեց գահաժառանգը չիթած:

— Տարակոյս չկայ: Ուղեւորութեան յայտագիրը եւ

ըէկ կարգացուեցաւ մեզի. իշխանուէին անցեալ երկուշաբթի Նանսիէն պիտի անցնէր. այժմ Բարիզէն գրեթէ քառասունըճինդ փարսախ հետու ըլլալու է:

— Տէր արքայ, Ձեր վեհախառութիւնը չի՞ կարծեր որ իշխանուէին շատ ծանր կը յառաջանայ, շարայարեց գահաժառանգը:

— Բայց ո՛չ, ո՛չ, ըստ Լուի ԺԵ, ընդհակառակը շատ արագ կուգայ կարծեմ՝ եթէ նկատի ունենանք կին մը ըլլալը եւ բոլոր այն հանգէսներն ու ընդունելութիւնները որոնք տեղի կ'ունենան ճամբուն վրայ: Միջին հաշուով երկու օրուան մէջ աւնուազն տասը փարսախ ճամբայ կ'առնէ:

— Շատ քիչ է, տէր արքայ, ըստ գահաժառանգը երկչոտութեամբ:

Լուի ԺԵ այս անամբերութիւնը գարմացմամբ դիտեց եւ հեղձական ժպիտով մը ըսաւ:

— Բա՛հ, ուրեմն այդչափ կը շտապե՞ս:

Այս անգամ գահաժառանգը առաջուանէն աւելի կարմըրեցաւ:

— Ձեզ կը հաւատտեմ թէ շտապելուս պատճառը Ձեր վեհախառութեան ենթադրածը չէ, տէր արքայ, կտկուցեց Լուի:

— Աւելի գէշ, ես կ'ուզէի որ շտապելուդ պատճառը ատ ըլլար: Ի՞նչ ըսել է, գուն տաանըլից տարեկան ես, իշխանուէին համար ալ գեղանի է կ'ըսեն. ներքի է քեզ քու անամբերութիւնդ: Լաւ ուրեմն, հանդարտէ, իշխանուէին, կինդ պիտի գայ:

— Տէր արքայ, կարելի չէ՞ ճամբուն վրայ սարքուած հանգէսները համառօտել, շարայարեց արքայորդին:

— Անկարելի է : Արդէն երկու երեք քաղաքէ անցաւ
առանց կենալու, ուր քիչ մը առեն մնալ պէտք էր :

— Այդ պարագային ասոր վերջը չպիտի գայ : Կար-
ծիք մըն ալ ունիմ, տէր արքայ, համարձակեցաւ ըսել
արքայորդին :

— Ի՞նչ է կարծիքդ : Օ՛ն, ըսէ տեսնենք :

— Կարծեմ ծառայութիւնը աղէկ չկատարուիր, տէր
արքայ :

— Ի՞նչ, ո՞ր ծառայութիւնը :

— Ճամբու ծառայութիւնը :

— Ի՞նչ կ'ըսես : Ճամբուն վրայ երեսուն հազար ձի,
երեսուն կառք, վաթսուն սայլ և չեմ գիտեր ո՞րքան պա-
շարի սայլ կայ . եթէ բոլոր ասոնք մէկ դժի վրայ շար-
ուի՝ Բարեղէն մինչեւ Սթրազպուրկ կը հասնի : Ուրեմն
ի՞նչպէս կրնաս կարծել որ բոլոր այս միջոցներով ծա-
ռայութիւնը աղէկ չկատարուիր :

— Լաւ ուրեմն, տէր արքայ, հակառակ Ձեր վհա-
փառութեան բոլոր բարեացակամութեանը, ըսածիս վրայ
գրեթէ վստահ եմ . միայն թէ գուցէ ճիշդ բառը չգոր-
ծածեցի . փոխանակ ծառայութիւնը աղէկ չկատարուիր
ըսելու, հարկ էր ըսել թէ սպասարկութիւնը յոռի կեր-
պով կազմակերպուած է :

Այս խօսքերուն վրայ թագաւորը զլուխը վեր առաւ
և նայուածքը արքայորդիին աչքերուն մէջ կեդրոնա-
ցուց : Կը սկսէր հասկնալ թէ գահաժառանգին արտասա-
նած այս քանի մը բառերուն տակ մեծ բաներ ծածկուած
էին :

— Երեսուն հազար ձի, կրկնեց թագաւորը, երե-
սուն կա՞ռք, վաթսուն սա՞յլ և երկու գունդ զինուոր :
Քեզի՛ կը հարցնեմ, պարոն գիտուն, երբէք տեսած ես

գահաժառանգի մը կնոջը այսքան հանդիսաւորութեամբ
Գաղիա մտնելը :

— Կը խոստովանիմ որ ամէն բան արքայական վա-
յելչութեամբ կը կատարուի՝ զոր Ձեր վհահախառութիւնը
ընելուն կերպը լաւ գիտէ, տէր արքայ : Սակայն Ձեր
վհահախառութիւնը պատուիրած է որ այդ ձիերը, կառ-
քերը և մէկ խօսքով բոլոր իրերը մասնաւորապէս
տիկին իշխանուհիին և իր հետեւորդներուն ծառայու-
թեանը յատկացուին :

Երբորդ անգամ ըլլալով թագաւորը Լուիի նայեցան .
անորոջ կաակած մը մտաւ ներսիդին, հաղիւ ըմբռնելի
յիշատակ մը սկսաւ մտքին մէջ շողալ, արքայորդիին
ըսածին և քիչ մը առաջ իրեն պատահած անհաճոյ եղե-
լութեան մէջ աղօտ ու չիօթ նմանութիւն մը սկսաւ
տեսնել :

— Ատ ալ հարցնելու բա՞ն է, ըսաւ թագաւորը,
հարկաւ, ամէնքն ալ տիկին իշխանուհիինն է, և ահա այս
պատճառաւ քեզի ըսի որ քիչ օրէն կը ժամանէ . բայց
ինչո՞ւ այդպէս ինձ կը նայիս : Օ՛ն, աւելցուց հաստա-
տուն եղանակաւ մը որ սպառնական երեւցաւ արքայոր-
դիին, չըլլա՞յ որ մեքենաներուդ զսպանակին նման իմ
գլխաղիծերս ալ քննութենէ անցընես :

Արքայորդին՝ որ խօսելու համար բերանը բանալու
վրայ էր՝ այս շեշտը տեսնելով լռեց :

— Լա՛ւ ուրեմն, ըսաւ թագաւորը ետանդազին, կար-
ծեմ ա՛լ ըսելիք մը չունիս, հէ՞ . . . : Գո՞ն ես, այնպէս
չէ՞ . . . : Իշխանուհիդ կը ժամանէ, սքանչելի կերպով կը
կատարուի անոր ծառայութիւնը, կրեստին նման հա-
բուատ ես քու մասնաւոր գանձովդ . սակէ աղէկ բան
չկրնար ըլլալ : Հիմայ որ սիրող հանգարտ է՝ ժամա-

ցոյցս լարելու հաճոյքը ըրէ ինձ :

Արքայորդին տեղէն չշարժեցաւ :

— Գիտե՞ս որ դղեակիս առաջին ժամագործին պաշտօնը քեզի սալ կ'ուզեմ, անշուշտ թոշակով, ըսաւ Լուի ժե խնդալով :

Գահաժառանգը գլուխը խոնարհեցուց, և՛ թագաւորին նայուածքէն երկիւղ զգալով՝ թիկնաթոռին վրայէն քերիչն ու անխը առաւ :

Լուի ժե այս միջոցին գրան կը մօտենար ծանր քայլերով :

— Ի՞նչ ըսել կ'ուզէր ազէկ Վատարուած ծառայութիւն ըսելով, կը խորհէր թագաւորը անոր նայելով : Օ՛ն, օ՛ն, տեսարանէ մըն ալ ազատեցանք . դժգոհ է :

Արդարեւ արքայորդին՝ որ սովորաբար համբերող էր՝ ոտքը տախտակամածին դարկաւ :

— Երես կ'առնէ, մըմնջեց թագաւորը խնդալով, Ի՛րաւ որ փախչելէ ուրիշ ճար չիկայ :

Բայց յանկարծ՝ զուրը բանալու ատեն՝ սեմին վրայ Պ. տը Շուաղէօլին հանդիպեցաւ որ յարգանք կը խոնարհէր :



իջ

ՊԵՏՕ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՐՔՈՒՆԻՔԸ *

Լուի ժե քայլ մը նահանջեց, յանակնկալս այս նոր դերասանը տեսնելով՝ որ կուգար խաղին խառնուելով իր դուրս ելնելը արդիւիւ :

— Վա՛յ, իրաւ որ սա մարդը մտոցեր էի, ըսաւ մտովի : Բարի եկաւ, սա պիտի տուժէ միւսներուն տեղը : Վա՛յ, եկի՛ր էք, ձեզ կանչել տուեր էի, գիտէ՞ք, շարայարեց բարձրաձայն :

— Այո՛, տէր արքայ, պատասխանեց պաշտօնեան պող կերպով մը, ես ալ Ձեր վեհախառութեան գալու համար կը հազուէի երբ հրամանը ինձ հասաւ :

— Լաւ : Լուրջ գործերու վրայ ձեզի հետ խօսիլ կ'ուզեմ, սկսաւ Լուի ժե յօնքերը պատելով, որպէս զի՛ եթէ կարելի է՝ պաշտօնեան վախցնէ :

Բայց թագաւորին համար զժբաղդութիւն մըն էր Պ. տը Շուաղէօլի տէրութեան ամենէն նուազ վախկոտ անձերէն մին ըլլալը :

(*) Ֆրանսերէնի մեջ կը նշանակէ ազմկալից եւ անկանոն վայր մը : Ծ. 4.

— Եւ ես, եթէ Ձեր վեհափառութիւնը կը հաճի, ա-
մենալուրջ գործերու վրայ խօսելու համար կուզամ,
պատասխանեց նախարարը խոնարհելով և միեւնոյն ա-
տեն ակնարկ մը փոխանակելով արքայորդիին հետ՝ որ
կխօսէին ծածկուած էր իր ժամացոյցին ետեւը :

Թագաւորը ի՛նչ պատասխանելը չգիտցաւ :

— Լա՛ւ, ըսաւ իւրովի, այս կողմէ՛ն ալ, Երան-
կիւնի մէջ կը գտնուիմ, ալ չիմայ անկարելի է աշատիլ :

— Խեղճ ժան դերկոմսին սպաննուած ըլլալուն մազ
մնացած ըլլալը հարկաւ գիտէք, փութաց ըսել թագաւո-
րը՝ առաջին հարուածը ինքը տալու համար իր հակառա-
կորդին :

— Այսինքն սուրի հարուած մը ընդուներ է բազու-
կին վրայ : Ես ալ Ձեր վեհափառութեան այս եղելու-
թեան վրայ խօսելու համար կուզայի :

— Այո՛, կը հասկնամ, տարածայնութենէ առաջ հաս-
նիլ կ'ուզէիք :

— Յոռի մեկնութիւններէ առաջ հասնիլ կ'ուզէի,
տէր արքայ :

— Ուրեմն գործը գիտէ՞ք, պարոն, հարցուց թագա-
ւորը նշանակալից եղանակաւ մը :

Պ. տը Շուաղէօլ անտարբեր մնաց :

Արքայորդիին մէկ կողմէն կը շարունակէր պոռուտակը
գարձնել ծակին մէջ և միւս կողմէն գլուխը ծոած՝ ա-
մէն բան մտիկ կ'ընէր առանց խօսակցութենէն բառ մը
խակ կորսնցնելու :

— Հիմայ ձեզ պիտի ըսեմ թէ եղելութիւնը ի՛նչպէս
տեղի ունեցած է, ըսաւ թագաւորը :

— Ձեր վեհափառութիւնը կը կարծէ՞ որ ստոյգ ան-
գեկութիւն ստացած է, հարցուց Պ. տը Շուաղէօլ :

— Ո՛հ, այդ մասին . . .

— Մտիկ կ'ընենք, տէր արքայ :

— Մտիկ կ'ընէ՞ք, կրկնեց թագաւորը :

— Անչո՛ւշտ, բարձրապատիւ արքայորդին և ես :

— Բարձրապատիւ արքայորդի՛ն, կրկնեց թագաւորը՝
որուն աչքերը յարգանք խօտող Շուաղէօլէն ուշադիր
դիտող Լուի-Օլիւսթի դարձան : Բայց ի՛նչ առնչութիւն
կրնայ ունենալ բարձրապատիւ արքայորդին այս յան-
կարծաղէպ կռիւին հետ :

— Բարձրապատիւ արքայորդին առնչութիւն ունի
սա բացայայտ պատճառաւ թէ իշխանուէին խնդրոյն
մէջն է, շարայարեց Պ. տը Շուաղէօլ խոնարհելով դե-
ռաստի իշխանին առջեւ :

— Իշխանուէին խնդրոյն մէ՞ջն է, գոչեց թագաւորը
սարսուալով :

— Անտարակո՛յս, չէ՞ք գիտեր զայս, տէր արքայ :
Ուրեմն Ձեր վեհափառութիւնը լաւ տեղեկացած չէ
խնդրոյն :

— Իշխանուէին և ժան Տի՛ւպարի, ըսաւ թագաւորը
զարմացմամբ, հետաքրքրաշարժ բան մը պիտի ըլլայ
ատիկայ : Օ՛ն, օ՛ն, բացատրեցէք, Պ. տը Շուաղէօլ, և
մանաւանդ ինէ բան մը մի՛ պահէք, եթէ մինչև իսկ
իշխանուէին տուած ըլլայ սուրի հարուածը Տիւպարիի :

— Տէր արքայ, իշխանուէին չէ զայն վիրաւորողը,
այլ իր ուղեկից պաշտօնակալներէն մին, պատասխանեց
Շուաղէօլ հանդարտութեամբ :

— Վա՛յ, բացազանչեց թագաւորը լուրջ կ'երպա-
րանք մը ստանալով, պաշտօնակալ մը զոր կը ճանչնաք,
այնպէս չէ՞, պարոն տը Շուաղէօլ :

— Ո՛հ, տէր արքայ, այլ պաշտօնակալ մը զոր Ձեր
ժօզ. Պալս., քիւ 10—25, Բ.հր.Ն.Ք.

վեհափառութիւնը ճանչնալու է, եթէ Ձեր վեհափառութիւնը իր ծառաները կը յիշէ . տեղակալ մը որուն անունը՝ իր հօրը անձին վրայ՝ մեծ համբաւ շահած է փլուզիւրապարկի, Պոնթոսացի և Մահօնի մէջ, թալէրնէյ-Մէզօն-Ռուժ մըն է :

Արքայորդին այս անունը գողցես սրահին օդին հետ չնչեց՝ զայն իր յիշողութեան մէջ սպառօրելու համար :

— Մէզօն-Ռուժ մը, ըսաւ Լուի Ժե : Ստուգիւ, կը ճանչնամ զայն : Բայց ինչո՞ւ կուտեր է իմ սիրական ժամիս հետ : Զայն կը սիրեմ, որովհետեւ գուցէ . . . : Այլանդակ նախանձախնդրութիւններ, դժգոհութեան սկզբնաւորութիւններ, մասնակի սպտամբութիւններ :

— Տէր արքայ, Ձեր վեհափառութիւնը կը հաճի՞ զիս մտիկ քնել, ըսաւ Պ. տը Շուազէօլ :

Լուի Ժե հասկցաւ որ այս գործին մէջէն ուրիշ կերպ չէր կրնար ելնել՝ այլ միայն զայրանալով :

— Ձեզի կ'ըսեմ թէ ես՝ ասոր մէջ իմ հանգստութեանս դէմ նիւթուած դաւաճանութեան բողբոջ մը, իմ ընտանիքիս դէմ կազմակերպուած հալածանք մը կը տեսնեմ, պարոն :

— Ո՛հ, տէր արքայ, Ձեր վեհափառութեան հարսը պաշտպանելո՞ւն համար քաջ երիտասարդ մը այդ մեղադրանքին կ'արժանանայ, ըսաւ Պ. տը Շուազէօլ :

Արքայորդին ոտքի ելաւ և ձեռքերը կուրծքին վրայ խաչածեւելով ըսաւ .

— Ես կը խոտտովանիմ թէ երախտապարտ եմ այդ երիտասարդին՝ որ իր կեանքը վտանգի ենթարկած է իշխանուհիի մը համար որ տասնըփնչ օրէն կինս պիտի ըլլայ :

— Կեանքը վտանգի ենթարկեր է եղեր, ի՞նչ պատ-

ճառաւ կեանքը վտանգի ենթարկեր է, կակազեց թագաւորը : Ի՞նչ պատճառաւ, ասիկայ գիտնալ հարկ է :

— Պատճառը սա է որ՝ Պ. Ժան Տիւպարի դերկոմսը որ արագընթաց ուղեւորութիւն մը կը կատարէր՝ միտքը դրեր է իշխանուհիին ձիերը առնել այն կայարանէն ուր արքայադուստրը պիտի հասնէր քիչ մը ետքը, և այս սպորիին ընթացքը միայն և միմիայն անկէ աւելի արագ երթալու համար :

Թագաւորը շրթունքները խածաւ և գունատեցաւ . սպաննալից ուրուականի մը պէս կ'երեւէր այժմ պահ մը առաջուան զինքը յուզող իրերուն նմանութիւնը :

— Անկարելի է . ես գործը գիտեմ . գուք լաւ չէք տեղեկացեր, դուքս, մոմոաց Լուի Ժե ժամանակ շահելու համար :

— Ո՛հ, տէր արքայ, ես սխալ տեղեկութիւն առած չեմ, և ինչ որ Ձեր վեհափառութեան պատիւ ունիմ ըսելու՝ բուն ճշմարտութիւնն է : Այո՞, Պ. Ժան Տիւպարի դերկոմսը այդ նախաատիւքը ըրած է իշխանուհիին՝ անոր ծառայութեան յատկացուած ձիերը իրեն համար առնելով, և կայարանապետը յանդիմանելէ ու թշնամանելէ ետքը, զանոնք բռնի կերպով տանելու վրայ է եղեր, երբ Պ. Փիլիպ տը թալէրնէյ ստպետը վրայ հասեր և քաղաքալարի ու հաշտարար առաջարկներ ընելէ վերջ ստիպուեր է . . .

— Օ՛հ, օ՛հ, մոմոաց թագաւորը :

— Հստծս կը կրկնեմ, տէր արքայ, եւ քաղաքալարի ու հաշտարար առաջարկներ ընելէ վերջ, ստիպուեր է . . .

— Այո՞, ես ալ երաշխաւոր եմ ըսածին, ընթիլից զանձառանգը :

— Դո՞ւն ալ իմացեր ես ատոնք, ըսաւ թագաւորը՝
զարմանօք :

— Ամբողջութեամբ, տէր արքայ :

Պ. տը Շուազէօլ՝ որ ուրախութենէն կը խայտար՝
խոնարհեցաւ :

— Նորին բարձրութիւնը կը հաճի՞ շարունակել : Նո-
րին վեհախառութիւնը անշուշտ աւելի հաւատք պիտի
ընծայէ իր օգոստոսիաութեան ըսածին քան թէ իմի-
նիս, ըսաւ Շուազէօլ :

— Այո՛, տէր արքայ, շարայարեց արքայորդին ա-
ռանց երախտագիտութիւն յայտնելու Պ. տը Շուազէօլի՝
որուն սպասելու իրաւունք ունէր արտաքին գործերու
նախարարը այն եռանդին համար որով արհիւղքունէին
պաշտպանած էր . ես ատոնք գիտէի և եկած էի Ձեր վե-
հախառութեան իմացնելու թէ Պ. Տիւպարի ոչ միայն
իշխանութիւն նախատած է անոր ուղեւորութեան արդեւք
հանգիստանալով՝ այլևս բռնութեամբ դէմ գրած է իմ
գունդէս սեղակալի մը որ իր պարտականութիւնը կը
կատարէր չթողլով անոր որ այսպիսի անվայել ընթաց-
քի մը մէջ գտնուի :

Թագաւորը զլուխը օրելով ըսաւ .

— Ճշմարիտը այս ըլլալու է :

— Իմ ըսածս է ճշմարիտը, տէր արքայ, յարեց գա-
հաժառանգը մեղմօրէն, և կասկած չիկայ որ Պ. Տիւպարի
սուր քաշեր է :

— Նախադարձակը ո՞վ եղած է, ա՛յդ հասկնալ կ'ու-
զեմ, հարցուց Լուի Ժե երջանիկ համարելով զինքը որ
կուրը հաւատարեցնելու գուռ մը կը բացուէր իր առջև :

Գահաժառանգը կարմրելով Պ. տը Շուազէօլի նայե-
ցաւ . այս վերջինը անոր չիթիլը սեռնելով օգնու-

թեան հասաւ .

— Մէկ խօսքով, տէր արքայ, երկուքն ալ իրարու
սուր քաշած են, որոնցմէ մին կը նախատէր, իսկ միւրը
կը պաշտպանէր իշխանութիւն :

— Այո՛, բայց ո՞րն է նախադարձակը, հարցուց թա-
գաւորը : Ես ժանը կը ճանչնամ, գառնուկի պէս հեղ
բնաւորութիւն մը ունի :

— Ըստ իս, նախադարձակը այն է որ անիրաւ է,
տէր արքայ, ըսաւ գահաժառանգը իր սովորական չափա-
ւորութեամբը :

— Փափուկ ու կնճռոտ խնդիր մըն է ասիկայ, ըսաւ
Լուի Ժե . նախադարձակը այն է որ անիրաւ է
Բայց եթէ սեղակալը անպատկառ կերպով վարուած է :

— Անպատկա՛ռ, գոչեց Պ. տը Շուազէօլ, անպատ-
կառ այնպիսի մէկու մը դէմ որ կ'ուզէր իշխանութիւն
յատկացուած ձիրքը առնել տանի՞լ : Միթէ կարելի՞ է
այս, տէր արքայ :

Գահաժառանգը չպատասխանեց բայց տժգունեցաւ :

Լուի Ժե այս երկու սպանական կերպարանքն ալ
նշմարեց :

— Բուռն կերպով վարուած է, ըսել կ'ուզեմ, յարեց
խօսքը ուղղելու ձեռով փոխելով :

— Ասկէ զատ, Ձեր վեհախառութիւնը լաւ գիտէ թէ
եռանդուն ծառայ մը անիրաւ չկրնար ըլլալ, շարայարեց
Պ. տը Շուազէօլ այս ընկրկող քայլէն օգուտ քաղելով
քայլ մը առաջ երթալու համար :

— Բայց այս դէպքը ի՞նչպէս իմացար, պարոն, հար-
ցուց թագաւորը գահաժառանգին, առանց աչքէ կորսըն-
ցընելու Պ. տը Շուազէօլը, որ այս յանկարծական չե-
ղումէն այնչափ նեղուեցաւ որ՝ հակառակ չիթիլը ծած-

կելու համար ըրած բուռն ճիգին՝ այդ տաղնապը դէմ-
քին վրայ նկարուեցաւ :

— Նամակէ մը, տէր արքայ, պատասխանեց գահա-
ժառանգը :

— Որմէ՞ էր նամակը :

— Իշխանուհիին համակիրներուն մէկէն : Հաւանա-
կանաբար այդ անձին տարօրինակ երևցած է արհիւրք-
սուհիին եղած նախատինքը :

— Մ'ն, ըսաւ թագաւորը, դարձեալ գաղտնի թղթակ-
ցութիւններ, գաւեր : Ահաւասիկ զիս չարչարելու համար
իրենց մէջ կը միարանին, ինչպէս որ տիկին տը Բօն-
բասուրի ժամանակը կ'ընէին :

— Բայց ո՛չ, տէր արքայ, պատասխանեց Պ. տը
Շուաղէօլ : շատ պարզ բան մը կայ, տեղի ունեցածը
քրէական յանցանք մըն է : Լաւ պատիժ մը կը տրուի
յանցաւորին և ամէն բան կը վերջանայ :

Այս « պատիժ » բառին վրայ, Լուի Ժեի աչքին առ-
ջեւը կը պատկերանար կոմսուհիին՝ մոլեգին և Շօնը՝
մազերը ցցուած, ընտանեկան խաղաղութիւնը խոյս
կուտար՝ զոր իր բոլոր կեանքին մէջ փնտռած էր առանց
գտնել կարենալու և ներքին պատերազմը կը սկսէր կո-
րացած ճիրաններով և արցունքէն ուռած ու կարմրած
աչքերով :

— Պատիժ մը, գոչեց թագաւորը, երկու կողմերը
չլսած և ո՛ր կողմին իրաւունք ունենալը չստուգած :

— Բայց, տէր արքայ, այսուհետեւ ալ ո՞վ իշխա-
նուհիին կը յարգէ եթէ խիտ օրինակ մը չտրուի առա-
ջին նախատողին վրայ . . .

— Անչո՛ւշտ, ընդմիջեց արքայագուն իշխանը, եթէ
ոչ գայթակղութիւն կը ծագի, տէր արքայ :

— Օրինակ մը, գայթակղութիւն մը, գոչեց թա-
գաւորը : Ո՛հ, իրա՛ւ որ, մեր շուրջը կատարուած գայ-
թակղութեանց օրինակները սուէք և ես բոլոր կեանքս
ձերբակալութեան հրամանագրեր տորագրելով անցընելը
յանձն կ'աւննեմ : փա՛ռք Աստուծոյ, արդէն միշտեւ այ-
սօր քիչ չեմ տորագրած անոնցմէ :

— Հարկ է, տէր արքայ, ըսաւ Պ. տը Շուաղէօլ :

— Տէր արքայ, Ձեր վեհախառութիւնէն կ'սղիբսեմ,
մէջ բերաւ արքայտղին :

— Ի՞նչ, ստացած սուրի հարուածովը արդէն պատ-
ժուած չէ՞ք համարեր զայն :

— Ո՛չ, տէր արքայ, որովհետեւ կրնար Պ. տը թա-
վէրնէյը վերաւորել :

— Իսկ եթէ այդպիսի բան մը պատահէր ի՞նչ պիտի
խնդրէիք, պարոն :

— Անոր գլուխը պիտի խնդրէի ձեռնէ :

— Բայց Պ. տը Մօնկօմէրիին ալ ասկէ աւելի բան
մը չըրին Հանրի Բ. թագաւորը սպաննելուն համար,
զիտեւ տուաւ Լուի Ժե :

— Որովհետեւ առանց կանխամտածութեան սպաննած
էր զայն, տէր արքայ, իսկ Պ. Ժան Տիւպարի անարգե-
լու գիտաւորութեամբ նախատած է իշխանուհիին, որ
կանխամտածութեամբ գործուած ոճիրի մը համահաւա-
սար պատիժովը միայն կրնայ քառուիլ :

— Իսկ դո՛ւք, պարոն, ըսաւ Լուի Ժե թոռանը
դառնալով, դո՛ւք ալ Ժանի գլուխը պիտի պահանջէիք :

— Ո՛չ, տէր արքայ, ես մահուան պատիժը չեմ ըն-
դունիր : Ձեր վեհախառութիւնը զայս գիտէ, յարեց գա-
հաժառանգը մեղմիւ : Ուստի բաւական կը համարեմ ա-
նոր աքսորումը խնդրել ձեռնէ :

Թագաւորը սարտոաց :

— Աքսորո՛ւմ, պանդոկի կռիւի՞ մը համար : Լուի՛, հակառակ քու մարդասիրական զգացումներուդ, չտրազանց խտուրթեամբ կը վարուիս : Սակայն ճշմարիտ է նաեւ որ մարդասէր ըլլալէ առաջ հաշուազէտ մըն էիր, և հաշուազէտ մը . . .

— Ձեր վեհախառութիւնը կը հաճի՞ խօսքը չարուսակել :

— Եւ հաշուազէտ մը տիեզերքն անգամ կը զո՞նէ իր մէկ թուանշանին համար :

— Տէր արքայ, ևս անձնական ոխ մը չունիմ Պ. Տիւպարիի դէմ, ըստ արքայորդին :

— Ուրեմն որո՞ւ դէմ ունիս :

— Իշխանուհին նախատողին դէմ :

— Ի՛նչ տխրոր ամուսին մըն ես եղեր, գոչեց թագաւորը հեղնութեամբ : Բարեբաղդաբար դիւրաւ չեմ հաւատար : Կը գուշակեմ թէ որու վրայ կը յարձակին հոս և մանաւանդ կը հակնամ թէ ուրտեղուանքը կ'ուզեն տանիլ զիս այս չտրազանցութիւններով :

— Տէր արքայ, մի՛ կարծէք որ չտրազանցութեամբ կը խօսին ձեզի, մէջ բերաւ Պ. ար Շուազէօլ . հասարակութիւնը ստուգիւ զայրացած է այսչափ լքբութեան դէմ :

— Հասարակութիւնը : Ա՛հ, ա՛ն քեզի ճիւղ մըն ալ՝ զոր դուք կը տեսնէք, կամ աւելի ճիշդը՝ ինծի կը ցուցնէք : Հասարակութիւնը, ևս զայն մտիկ կ'ընեմ երբ ան իր թշնամանող հեղինակներուն, խմբադիրնորուն, երգադիրներուն, գրագէտներուն և դաւադիրնորուն հազարաւոր բերաններովը ինձ կ'ըսէ թէ ինձմէ գողցողներ, զիս ծաղրողներ և զիս մատնողներ կան :

Ես անոնց ականջ կը կախեմ : Ո՛հ, կը թողում որ ուզածին ըսեն և կը խնդամ : Դուք ալ ինծի պէս ըրէք, ականջնիդ գոցեցէք, և երբ աղաղակելով յոգնի ձեր հասարակութիւնը, ա՛լ կը դադրեցնէ իր վայնասունը Օ՛ն, լա՛ւ, ձեր դժգոհութիւնը յայտնի կ'ընէք : Ահա Լուի որ դէմքը կը թթուեցնէ : Արդարեւ, տարօրինակ բան մըն է որ ամենամուստ անհատի մը ըրածին ինձ ընել չուզեն, չթողուն զիս որ ուզած ձեռովս սպրիմ, անդազար ատեն իմ սիրածս և մշտնջենապէս սիրեն իմ աւտածս : Խեղքս զլո՞ւս է՝ թէ յիմար մըն եմ : Տէ՞ր եմ՝ թէ ծառայ :

Գահաժառանգը իր քերիչը առնելով ժամացոյցին մօտեցաւ :

— Լա՛ւ, բայց ինչո՞ւ չէք պատասխաներ : Պատասխան մը տուէք ինձ : Վշտով մեռցնե՞լ կ'ուզէք զիս ձեր խօսքերովն ու լուրթեամբը, ձեր մանր ատկութիւններովն ու վախերովը :

— Ես Պ. Տիւպարին չեմ ատեր տէր արքայ, ըստ արքայազուն իշխանը ժպտելով :

— Իսկ ես ալ անորմէ չեմ վախնար, տէր արքայ, աւելցուց Պ. ար Շուազէօլ հպարտութեամբ :

— Տե՛ս, ամէ՛նքդ ալ չարամիտ էք, գոչեց թագաւորը կեղծուած զայրոյթով մը, որովհետեւ միայն գրեկամակութիւն զգացած էր : Դուք կ'ուզէք որ ես Եւրոպայի առակը ըլլամ, եղբորորդւոյս՝ Բրուսիոյ թագաւորին ծաղր ու ծանակ ըլլամ և սա սրիկայ վօլթէրին ըսած « Պետո թագաւորին Արքունիքը » իրականացնեմ : Է՛հ ուրեմն, ո՛չ, զայս չպիտի ընեմ : Ո՛հ, այդ ուրախութիւնը չպիտի վայելէք : Ես իմ պատիւս ուզած ձեռովս կը հակնամ և զայն ուզած կերպովս կը պահեմ :

— Տէր արքայ, ըստ արքայորդին իր անսպասելի քողցրութեամբն ու մշտնջենական հաստատութեամբը, ներողութիւն կը խնդրեմ Ձեր վեհախառութենէն, խնդիրը իր պատուոյն վրայ չէ՝ այլ իշխանութիւն արժանապատուութեանը վրայ որ նախատինքի ենթարկուեցաւ :

— Բարձրագատիւ իշխանը իրաւունք ունի, տէր արքայ . Ձեր վեհախառութեան բերնէն բառ մը միայն, և ան այն ատեն ոչ ոք պիտի համարձակի բերանը բանալ :

— Եւ ո՞վ խօսք մը պիտի ընէր որ : Ո՞վ բան ըսած ունի : Ժան տմարդի է՝ բայց չար չէ :

— Այնպէս թող ըլլայ, ըստ Պ. տը Շուազէօլ, և տմարդութիւն համարենք զայս, տէր արքայ, ուրեմն գործած տմարդութեանը համար թող ներողութիւն խընդրէ Պ. տը Թալէրնէյէն :

— Արդէն ձեզի ըսի թէ ատոնք ինձ վերաբերող խնդիրներ չեն . թող ժան ներողութիւն խնդրէ՝ ազատ է խնդրելու, թող չխնդրէ՝ դա՛րձեալ ազատ է, գոչեց Լուի Ժե :

— Գործը այսպէս ինքնիր վիճակին թողով աղմուկ պիտի հանենք, տէր արքայ, կանխաւ ձեզ իմաց տալու պատիւը ունիմ, ըստ Պ. տը Շուազէօլ :

— Աւելի՛ աղէկ, գոչեց թագաւորը, թող ա՛յնչափ աղմուկ հանէ, ա՛յնչափ հանէ որ խուլնամ և ձեր յիմարութիւնները չչսեմ :

— Ուրեմն, շարայարեց Պ. տը Շուազէօլ իր անողոքելի պաղարխնութեամբը, Ձեր վեհախառութիւնը ինձ արտօնութիւն կուտայ՝ հրապարակելու թէ արդար կը դատէ Պ. Տիւպարին :

— Ե՞ս, գոչեց Լուի Ժե, ե՞ս իրաւունք տամ մէկու մը՝ մեկանի պէս սեւ գործի մը մէջ : Սառուգիւ, համբերութիւնս հատցնել կ'ուզեն : Ո՛հ, զգուշացէք, դուք... : Լուի՛, ձեզի՛ կ'ըսեմ, խնայեցէք ինձ... : Ձեզ կը թողում որ ըսածիս վրայ խորհիք, որովհետեւ ա՛յլ հասայ, սպասեցայ, ա՛յլ չեմ կրնար դիմանալ : Մնաք բարով, պարոններ, աղջիկներուս քով կ'երթամ : Մարլի խոյս պիտի տամ, ուր գուցէ քիչ մը հանգստութիւն գտնեմ՝ եթէ մանաւանդ դուք ետեւէս հոն չիդաք :

Այս միջոցին, երբ թագաւորը դրան կողմը կ'երթար, դուռը բացուելով բարապան մը երեւցաւ սեմին վրայ :

— Տէր արքայ, ըստ բարապանը, Նորին արքայական Բարձրութիւնը՝ աիկին Լուիզ, գաւիթին մէջ կը սպասէ իր հրամեշտի ողջոյնը մատուցանելու համար թագաւորին :

— Հրամեշտի ողջոյնը, գոչեց Լուի Ժե ահաբեկ, ո՛ւր կ'երթայ ուրեմն :

— Նորին Բարձրութիւնը ըստ թէ զղեակէն մեկնելու հրաման ստացած է Ձեր վեհախառութենէն :

— Օ՛հ, նոր դէպք մըն ալ : Ահա իմ բարեպաշտուհին ալ իր տղայական խնդրութիւններուն կը սկսի : Արդարեւ մարդոց ամենաթշուա՛նն եմ :

Եւ վազելով դուրս ելաւ :

— Նորին վեհախառութիւնը մեզ անպատասխանի կը թողու, ըստ դուքսը արքայորդիին ուղղելով խօսքը, այս մտաին ի՞նչ կ'որոշէ ձեր արքայական բարձրութիւնը :

— Ո՛հ, ահա՛ կը զարնէ, գոչեց զեռատի իշխանը կեղծ կամ իրական ուրախութեամբ մը՝ բանելու սկսող ժամացոյցին թնդիւնները մտիկ ընելով :

Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը յօնքերը

պատեց և ետ ետ երթալով ժամացոյցներու Սրահէն դուրս ելաւ, ուր զահաժառանգը առանձին մնաց :

իլ.

ՏԻԿԻՆ * ԼՈՒԻՉ ՏԱՆՆ ԳԱՂԻՈՅ

Թագաւորին անդրանիկ աղջիկը իր հօրը կը սպասէր այն մեծ դահլիճին մէջ՝ ուր Լուի ԺԴ, 1683ին, ընդունած էր հասարակապետութեան նախագահը և ժէնի ծերակուտականներէն չորսը՝ որոնք հասարակապետութեան վերհաստատումը խնդրելու եկած էին :

Այս դահլիճին ծայրը, թագաւորին մուտքի դրան դիմացը, թախծալի դէմքով քանի մը պատուոյ աիկիններ կեցեր էին :

Լուի ԺԵ այն ատեն հասաւ երբ բակին մէջ խումբեր կը սկսէին կազմուիլ : Իշխանուհիին դիտաւորութիւնը, զոր կ'երևի թէ այն առաւօտ իսկ յղացեր էր, կը սկսէր պալատին մէջ շշուկի մը պէս տարածուիլ :

(*) Գաղիոյ թագաւորներուն աղջիկները « տիկին » կը կոչուէին : Մ. 4.

Գաղիոյ տան աիկին Լուիզը վեհափառ հասակաւ և արքայական զեղեցկութեամբ իշխանուհի մըն էր : Անձանօթ տխրութիւն մը երբեմն անոր ձակատը կը խորշումեցնէր : Բամբիշը սմբողջ արքունիքին մէջ պատկառանք կ'ազդէր իր խտամբեր սուաքինութեամբը : Սակայն պետութեան աւագանիները այս պատկառանքը՝ յիսուն տարիէ ի վեր Գաղիոյ մէջ՝ միայն շահու կամ երկիւղի համար կը պատուէին :

Այն միջոցին երբ ժողովուրդը ընդհանրապէս չէր սիրեր իր տէրերը և երբ տակաւին բացորոշ կերպով չէին խօսեր իրենց բռնակալներուն վրայ, զայն կը սիրէին, որովհետեւ անոր սուաքինութիւնը վայրենի չէր : Արդարեւ, անոր վրայ ալ բացայայտօրէն խօսուած չէր երբէք, սակայն ամէն մարդ կը յիշէր որ սիրտ մը ունի ան : Եւ ամէն օր ասոր ապացոյցը կուտար բարեգործութիւններ ընելով, մինչդեռ միւսները միայն գայթակղութիւններ կը անդէմէին իրենց շուրջը :

Լուի ԺԵ կը վախնար իր աղջիկէն զայն յարգելուն համար միայն :

Երբեմն զայն պարծանք կը համարէր իրեն : Ուտի իր աղջկանց մէջէն միայն զայն կը խնայէր յիշել իր երգիծական խօսուըտութիւններուն կամ բառական կոշտ սողնաութիւններուն մէջ, և մինչդեռ միւս երեք աղջիկները՝ Ատէլայիտը՝ Ծուէն, Վիքթուարը՝ Գրզլիակ և Սօֆին՝ Որի կ'անուանէր, Գաղիոյ տան Լուիզը տիկին կը կոչէր :

Այն օրէն ի վեր որ Սաքսի մարաջախտը զերեզման տարաւ Թիւրէնի և Գօնթէի նման քաջարի հողիներ և Մարի Լէցինաքան՝ Մարի-Թէրէզը յատկանշող ոգին, աւմէնքը կը փոքրանային այս փոքր ու ազազուն աթոռին

շուրջը, մինչդեռ տիկին Լուիզ, թագաւորական վեհանձն-
նութեամբ օտուած, դիւցազնական բնաւորութեան
տէր, պարծանքը կը հանդիսանար Գաղիոյ թագին՝ որ
միայն այս մեծազին մարգարիսը ունէր իր շինծու
փայլուններուն և կեղծ աղամանդներուն մէջ :

Ասով ըսել չենք ուզեր որ Լուի ժն իր աղջիկը կը
սիրէր : Ամէն մարդ գիտէ թէ Լուի ժն իր անձը միայն
կը սիրէր :

Մեր հաստատել ուզածը սա է միայն թէ թագաւորը
միւս աղջիկներէն աւելի Լուիզի յարած էր :

Թագաւորը ներս մտնելով բամբիշը առանձին գտաւ
դահլիճին մէջտեղը, ուր բոտրագոյն յասպիաներով և
լազուարթներով զարդարուած սեղանի մը կոթնած էր :

Սեւ զգեստներ հագած էր . իր զեղեցիկ անխոշի մա-
զերը վէտվէտուն ժաննակին տակ կը պահուըտէին .
ճակատը սովորականէն նուազ խիստ բայց ախուր էր :
Իր շուրջը բանի մը վրայ կանգ չէր առներ նայուածքը,
միայն, երբեմն իր մեղամաղձոտ աչքերը Եւրոպայի թա-
գաւորներու պատկերներուն վրայ կը պտըտցնէր, որոնց
վերեւ կը փայլէին իր նախնիքը՝ Գաղիոյ թագաւորները :

Սեւ հանդերձը իշխանուհիներու սովորական զգեստն
էր . երկայն գրպանները՝ զոր տակաւին այն ատենները
տանտիկին թագուհիներու ժամանակին նման կը կրէին՝
ծածկուած էին, և տիկին Լուիզ՝ անոնց օրինակին հե-
տեւելով՝ իր գօտիին վրայ ոսկի օղակէ մը անցուցած կը
պահէր իր արկղերուն և պահարաններուն բազմաթիւ
բանալիները :

Թագաւորը, մտախոհ, ներս մտաւ :

Ամէն ոք լուսթեամբ և ուշադրութեամբ այս տեսա-
րանին արդիւնքը կը դիտէր :

Դահլիճը այնչափ ընդարձակ էր որ հանդիսականները
ո՛ւր որ ալ գտնուէին՝ երբէք չպիտի կարենային տեսա-
րանին զերակատարներուն զազանքը ուրիշի մը հա-
ղորդել : Կը տեսնէին, սա իրենց իրաւունքն էր, սա-
կայն չէին լսեր, սա ալ իրենց պարտքն էր :

Իշխանուհին քանի մը քայլ առաւ դէպի թագաւորը
և անոր ձեռքը բռնելով յարգանք համբուրեց :

— Կ'ըսեն թէ կը մեկնիք, տիկին, ըսաւ Լուի ժն :
Բիքարտիս՝ կ'երթաք արդեօք :

— Ո՛չ, տէր արքայ, ըսաւ իշխանուհին :

— Ուրեմն, կը գուշակեմ, Նուարմութիէ ուխտի
կ'երթաք, ըսաւ թագաւորը ձայնը բարձրացնելով :

— Ո՛չ, տէր արքայ, պատասխանեց տիկին Լուիզ .
Սէն-Տընիի կարմելեանց վանքը կը քաշուիմ, որուն
աբբատուհին պիտի կրնամ ըլլալ, ինչպէս որ գիտէք :

Թագաւորը սարտաց, բայց դէմքը հանդարտ մնաց,
թէպէտ ներքնապէս իրօք վրդոված էր :

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ, աղջիկս, ինէ չպիտի գատուիք,
այնպէս չէ՞ . անկարելի է որ զիս թողուք :

— Հայր իմ, ամէն բանէ վերջ նախապատուութիւն
տուի այն առանձնութեան՝ որուն արտօնութիւնը ինձ
տալ հաճեցաւ Ձեր վեհափառութիւնը, ուստի դէմ մի՛
դնէք, հայր իմ, կ'աղաչեմ :

— Այո՛, արդարեւ, այդ արտօնութիւնը տուի, բայց
բաւական դիմադրելէ վերջ, կը յիշէ՞ք : Տուի՛ որովհետեւ
կը կարծէի թէ մեկնելու ատեն ձեր սիրտը չպիտի դի-
մանար : Գուք չէք կրնար փակարանի մը մէջ թաղուիլ .
մոռցուած բարքերն են անոնք . վշտաբեկ կամ յուսա-
հատ անձինք միայն վանք կը մտնեն : Գաղիոյ թագա-
ւորին աղջիկը խեղճ մնացած չէ կարծեմ, և եթէ թըշ-

ուստ ալ ըլլայ, ոչ ոք պիտի տեսնէ անոր ինչ ըլլալը :
Թագաւորին ձայնն ու գաղտնարը կը բարձրանային՝
քանի կը յառաջանար Թագաւորի և հօր գերին մէջ, զոր
երբէք գերասան մը գէշ չներկայացնէր երբ հպարտու-
թիւնը կը խրատէ մին և ցաւը կը թևադրէ միւսը :

— Տէր արքայ, հոգիս մի՛ տկարացնէք ձեր գորովու-
վը, պատասխանեց Լուիզ նշմարելով հօրը սրտազնորումը,
որ շատ հազուադիւր էր անձնատէր Լուի ժեի վրայ :
Իմ վիշտս սովորական վիշտ մը չէ, անա այս պատճա-
ռաւ իմ մտադրութիւնս մեր դարուն սովորութիւններէն
գուրս է :

— Դուք վիշտե՞ր ունիք ուրեմն, գոչեց Թագաւորը
կարճատեւ կարեկցութիւն մը ցոյց տալով : Դո՛ւք, վիշ-
տե՛ր ունենաք, խեղճ աղջիկ :

— Սոսկալի ու անթիւ վիշտեր ունիմ, տէր արքայ,
պատասխանեց տիկին Լուիզ :

— Է՛հ, աղջիկս, ինչո՞ւ ինձի չէիր ըսեր :

— Որովհետեւ այնպիսի վիշտեր են որ մարդկային
ձեռքը չկրնար բուժել զանոնք :

— Մինչեւ իսկ Թագաւորի՞ մը ձեռքը :

— Ո՛չ ալ Թագաւորի մը ձեռքը :

— Հօր մը ձե՞քն ալ :

— Ո՛չ, տէր արքայ, ո՛չ :

— Բայց և այնպէս, դուք երկիրդած էք և գօրու-
թիւն պիտի ստանաք կրօնքով :

— Ոչ ըստ բաւականին, տէր արքայ, և անա փա-
կարան մը կը քաշուիմ աւելի զօրանալու համար : Լու-
թեան մէջ՝ Աստուած մարդուն սրտին կը խօսի և ա-
ւանձնութեան մէջ՝ մարդս Աստուծոյ սրտին :

— Բայց դուք Տիրոջ աճապին և անխիտարիներէ ռդ-

ջակէզ մը կը մատուցանէք : Գաղիոյ գահը օգոստափառ
շուք մը կը տնէ իր շուրջը մեծցող գաւակներուն վրայ,
միթէ այդ շուքը ձեզ չի՞ բաւեր :

— Մենաստանի խցիկներուն շուքը աւելի թանձր է,
հայր իմ : այն շուքը սիրտը կը զուարթացնէ, քաղցր է
ինչպէս հօրններուն՝ նոյնպէս ալ տկարներուն համար,
ինչպէս խոնարհներուն՝ նոյնպէս նաեւ հպարտներուն
համար, ինչպէս մեծներուն՝ նոյնպէս նաեւ փոքրներուն
համար :

— Արդիօք ինքզինքնիւ վտանգի մը մէջ կը կար-
ծէք : Եթէ այդպէս է՝ Թագաւորը ձեր քովն է ձեզ պաշտ-
պանելու համար :

— Տէր արքայ, Աստուած թող նախ Թագաւորը
պահպանէ :

— Կը կրկնեմ, Լուիզ, սխալ ըմբռնուած ջերմեան-
դութեամբ մը շփոթութեան մէջ կ'իյնաք : Ազօթեւ
լաւ է, բայց ոչ թէ միշտ ազօթեւ : Դուք որ այնչափ
բարեսիրտ ու բարեպաշտ էք, ի՞նչ պէտք ունիք այդչափ
ազօթելու :

— Երբէք պէտք եղածին չափ չեմ կրցած ազօթել,
հայր իմ, մեր զլխուն գալիք փորձանքներուն առաջը
կարենալ աննկու համար, երբէք չեմ կրցած ըստ բա-
ւականին ազօթել : Այն բարեսիրութիւնը զոր Աստուած
ինձ շնորհած է, այն մաքրութիւնը զոր քանս տարիէ
ի վեր անդադար գտել կը տքնիմ, կը վախնամ թէ տա-
կաւին այն աստիճան անկեղծութեան և անմեղութեան
հասած չէ որ քառութեան ողջակէզի մը հարկ չմնայ :

Թագաւորը քայլ մը ընկրկեցաւ և զարմանօք Լուիզի
նայելով ըսաւ .

— Երբէք այսպէս խօսած չէք ինձ : Ձեր միտքը կը
ժօզ. Պալս., քիւ 11—26, Բ.հր.Ն.Ք.

մարտի, սիրելի աղջիկս • մենասիրութիւնը ի կորուստ կը մատնէ ձեզ :

— Ո՛հ, տէր արքայ, աշխարհային անուամբ մի անուանէք այն ամենաճշմարիտ և մանաւանդ ամենաբարձր անձնութիւնը՝ զոր երբէք հպատակուէի մը իր թագաւորին և աղջիկ մը իր հօրը հանդէպ ունեցած չէ, բացի հարկեցուցիչ պարտզաներու ստիպմամբը : Տէր արքայ, ձեր գօնը, որուն պաշտպան չուքք - ինձ կ'ընծայէիք քիչ մը ստա՞ջ, կը անքայ ու կը գողգողէ այնպիսի հարուածներու ներքեւ զոր գուր չէք զգար տակաւին, բայց եւ կը նախազգամ : Խորունկ բան մը կը սկզբուի գաղանի անտր սակ, անդունդի նման խորվիբապ մը, ուր կրնայ միասկտութիւնը յանկարծ դաճավիթի : Երբէք ճշմարտութիւնը ըսի՞ն ձեզ, տէր արքայ :

Տիկին Լուիզ չուրժը նայեցաւ տեսնելու համար թէ մէկը կրնա՞ր այս խօսքերը իմանալ, և համոզուելով որ մարդ չկար՝ շարունակեց .

— Լաւ ուրեմն, եւ այդ ճշմարտութիւնը գիտեմ, ես՝ որ գիթութեան քրոջ մը զղիտներն հագած՝ քսան անգամ այցելած եմ միթին փողոցները, սովալլուի հիւղերը, հեծեծանօք լի քատուղիները : Ո՛հ, տէր արքայ, այդ փողոցներուն մէջ, այդ քատուղիներուն մէջ, այդ հիւղերուն մէջ անօթի ու ցուրտէն ստաճ կը մեռնին ձմեռը, և ծարաւի ու սօթմանար կը մեռնին ամառը • Արտերը, զոր գուր չէք տեսներ, տէր արքայ, որովհետեւ վէրասայլէն Մարլի և Մարլիէն վէրասայլ կ'երթաք միայն, արտերը ա՛լ ցորեն չունին, ա՛լ ցորեն չունին ոչ միայն ժողովուրդը սնուցանելու համար՝ այլեւ սերմնցուի համար : Արտերը, որոնք չեմ գիտեր որպիսի թշնամի գօրութենէ մը անխճուած, ցանուած ցորենը կուլ կուտան

և բերք չեն տար : Բոլոր հաց չունեցող մարդիկը ծածուկէն կը մռնչեն, որովհետեւ անորոշ և անծանօթ շըչուկներ կ'անցնին միմտըրաին մէջէն, վերջալոյսին և գիշեր տանն, որոնք գերութեան, շլթաներու և բռնակալութեան վրայ կը խօսին այն միւսներուն, և ասոնք՝ այս խօսքերուն վրայ կ'արթնան, կը սթափին, գանգատելէ կը դադրին և կը սկսին մռնչիլ ու գոռալ :

« Խակ Ժողովներն ալ յուշարարութեան իրաւունքը կը պահանջեն, այսինքն իրենց ցած ձայնով ըսածը բարձրաձայն ձեզի ըսելու իրաւունքը թէ « Արքայ, դուն զմեզ կորուստի կը մատնեա, ազատէ՛ զմեզ, ապա թէ ոչ մենք ինքզինքնիս կ'ազատենք . . . »

« Զինուորականները իրենց անգործ սուրերովը երկիր մը կը փորեն ուր ազատութիւնը կ'ընձխուէ, կը ծլի, և ուր կը սկսին բողբոջիլ այն ազատութեան սերմերը՝ զորս համալխտակները ցանած են : Ի՛նչ է ասոր պատճառը, եթէ ոչ սա թէ մարդոց աչքերը կը սկսին տեսնել այնպիսի բաներ զոր ստա՞ջ չէին տեսներ : Գրագէտները գիտեն ի՛նչ տեսակ չարիք գործելիս և զայն ժողովուրդին տկանը կը ձգեն : Ժողովուրդը յօնքերը կը պատէ ամէն անգամ որ իր տէրերուն անցնիլը կը տեսնէ : Ձեր վեհախառութիւնը իր թոսը կ'ամուսնացնէ : Ատենօք, երբ Աւստրիոյ տան Աննա թագուհին իր թոսը ամուսնացուց, Բարիդի քաղաքայինները ընծաներ սուրին Մարի-Թէրէզ իշխանուհիին : Այսօր, ընդհակառակը, քաղաքացիները ոչ միայն ընծայ չեն տար՝ այլեւ Ձեր վեհախառութիւնը պարտաւորուեցաւ հարկերը բռնի կերպով գանձել, վճարելու համար այն կառքերուն ծախքը որոնցմով կհասարի աղջիկներեն մին սուրբ Լուիի սոցոցմէն միայն ստենը կը բերին : Կղերը սորվեցաւ այլեւս

չազօթել, բայց կը զգայ թէ երկիրները ծախուած, առանձնաշնորհումները սպառած, զանձերը թափուր են, և կը սկսի ազօթել Աստուծոյ՝ ա՛յն բանին համար՝ զոր իբրենք ժողովուրդներուն երջանկութիւնը կը կոչեն : Մէկ խօսքով, տէր արքայ, հարկ է ձեզ ըսել ինչ որ դուք լաւ գիտէք, ինչ որ դուք այնքան դառնութեամբ տեսաք և մէկու մը չըսիք : Մեր թագաւոր եղբայրները որ երբեմն մեր վրայ կը նախանձէին, այժմ երեսնին կը զարձնեն մենէ : Ձեր չորս աղջիկները, տէր արքայ, Գաղիոյ թագաւորին աղջիկները տակաւին ամուսնացած չեն, մինչդեռ քսան ամուրի իշխան կայ Գերմանիոյ մէջ, երեք՝ Անգլիոյ մէջ, տասնըկէց՝ Նիւսթայիին պետութեանց մէջ, առանց թուելու մեր ազգականները՝ Սպանիոյ և Նաբօլիի Պուրպօսնեանները որ զմեզ կը մոռնան կամ օտարներու նման մենէ երես կը զարձնեն : Գուցէ թուրքը մեզ ուզէր՝ եթէ Ամենաբարիատնայ (*) թագաւորին աղջիկները չըլլայինք : Ո՛հ, իմ վրաս չեմ խօսիր, հայր իմ, ես իմ վիճակէս չեմ գանգատիր : ես երջանիկ վիճակ մը ունիմ, որովհետեւ ազատ եմ, որովհետեւ իմ ընտանիքիս անգամներէն և ոչ մէկուն պիտանի եմ, որովհետեւ պիտի կարենամ առանձնութեան, խորհրդածութեան և ազքատութեան մէջ Աստուծոյ ազակէ՛լ՝ որպէս զի ձեր և եղբորդուստրս զլսէն հեռացնէ այն անարք փոթորիկը զոր ես ապագայի երկնքին վրայ կը տեսնեմ և որուն գոռիւնը ականջիս կը համնի :

(*) Քիլքպերէն սկսեալ Գաղիոյ քաղաւորները այս սիսղոսը կը կրէին : Պօղոս Բ. պապին քահանայապետութեան օրէն սկսեալ, առաքելական բողոքեռու եւ կոնդակներու մեջ այս սիսղոսը կը տրուէր Գաղիոյ քաղաւորներուն :

— Աղջի՛կս, զաւա՛կս, ձեր երկիւղը իրականէն աւելի վատթարագոյն կը ցուցնէ ձեզ ապագան, ըսաւ թագաւորը :

— Տէր արքայ, տէր արքայ, գոչեց տիկին Լուիզ, յիշեցէք հին ատենուան իշխանուհին, արքայական մարգարէուհին . ան ալ ինծի պէս կանխաւ կ'իմացնէր իր հօրը և եղբայրներուն ապագային մէջ տեղի ունենալիք պատերազմը, կործանումը, աւերը, հրդեհը, խակ հայրը և եղբայրները անոր գուշակութիւններուն վրայ կը խնդային և անմխտ կ'անուանէին զայն : Անոր պէս մի՛ վարուիք հետս : Զգո՛յշ կեցէք, հայր իմ, մտածեցէք, թագաւոր իմ :

— Աղջիկս, խտտիւ կը խօսիք ինձ . այն աղէտները զոր երեսիս կուտաք, միթէ ի՞մ հեղինակութիւնս են :

— Աստուած չընէ որ այդպէս խորհիմ : Անոնք մեր բարքերուն հեղինակութիւնն են : Դուք ալ մեր ամենուն նման քաշուելով կը տարուիք : Մտի՛կ ըրէք, տէր արքայ, ինչպէս կը ծախահարէ թատրոնին գեանայարկը երբ ամենախոքը ակնարկութիւն մը ըլլայ խաղին մէջ թագաւորութեան դէմ . տեսէք, իրիկուան դէմ, զուարթութեան խումբեր ներքնայարկերէն վար կ'իջնեն մեծ աղմուկով, մինչդեռ մարմարեայ մեծ ասնդուխը տխուր է ու ամայի : Տէր արքայ, ժողովուրդն ու պալատականները մեր զուարճութիւններէն տարբեր զուարճութիւններ հնարած են իրենց համար . անոնք առանց մեզի կը զուարճանան, կամ աւելի ճիշդը՝ երբ անոնց զուարճութեան վայրը կ'երեսինք մենք՝ զանոնք կը տխրեցնենք : Աւա՛ղ, շարայարեց իշխանուհին պաշտելի մեղաւորածուտութեամբ մը, խնձ գեղեցիկ երիտասարդներ, խնձ գեղանի կիներ, սիրեցէ՛ք, երգեցէ՛ք, մոռցէ՛ք և երջա-

նի՛կ եղէք : Հոս, վերը, ձեզի նեղութիւն կը պատ-
 ճատէի, տէր արքայ, մինչդեռ նոն, վարը, ձեզի պիտի
 ծառայեմ : Հոս ձեր ուրախութեան խնդուքները կը խեղ-
 թէք ինձ անհաճոյ չերեւարու վախով : Հոն, վա՛րը,
 հոն պիտի ազօթեմ, ո՛ն, պիտի ազօթեմ բոլոր սրտովս,
 թագաւորին համար, քոյրերուս համար, եղբորդդին-
 բուս համար, Գաղիոյ ժողովրդեան համար, վերջապէս
 ամէնքնուդ համար զոր կը սիրեմ այնպիսի ջերմեան-
 դութեամբ մը որ և ոչ մէկ կիրքէ խոնջած է :

— Աղջիկա, բառ թագաւորը թախտալի լուսննէ
 մը վերջ, կ'աղաչեմ, գէթ այս վայրկեանիս մի՛ թողուք
 զիս սիրտս խորտակեցիք :

Գաղիոյ տան Լուիզը հօրը ձեռքը բռնեց և աչքերը
 գործանօք Լուի ժե՛նի գարձնելով ըսաւ .

— Ո՛չ, ո՛չ, հայր իմ, այլեւս ժամ մը խոկ չեմ
 կրնար կենալ այս պալատին մէջ : Ո՛չ, ա՛լ ազօթելու
 ժամանակն է : Իմ վրաս զօրութիւն կը անսնեմ արցուն-
 քովս վերագնելու այն ամէն գուարձութիւնները որոնց
 դուք կը ցանկաք, դուք որ տակաւին երիտասարդ էք,
 դուք որ բարի հայր մըն էք, դուք որ ներել գիտէք :

— Մեզ հետ մնացէք, Լուիզ, մեր քովը կեցէք, ը-
 սաւ թագաւորը բազուկներուն մէջ սեղմելով իր աղջիկը
 իշխանուհին գլուխը թօթվեց :

— Իմ թագաւորութիւնս այս աշխարհքին մէջ չէ,
 ըսաւ ախրագին՝ թագաւորին գրկէն բաժնուելով : Մնաք
 բարով, հայր իմ : Այսօր այնպիսի բաներ ըսի ձեզ որ՝
 սասը տարիէ ի վեր սրախ վրայ բնօ մը եղած էին :
 Եւ այդ ծանրութիւնը զիս կ'ընկճէր : Մնաք բարով,
 գոհ եմ : Տեսէք, կը ժպտիմ : Այսօր միայն երջանիկ եմ :
 Բանի մը վրայ չեմ ցաւիր :

— Ինէ բաժնուելուդ վրա՞յ ալ չեա ցաւիր, աղջի՛կս :

— Ո՛ն, պիտի ցաւէի եթէ այլեւս ձեզ տեսնելու յոյ-
 սը չտեսնայի . սակայն դուք երբեմն Սէն-Տընի պիտի
 գաք, զիս բոլորովին չպիտի մոռնաք հարկաւ :

— Ո՛ն, երբէք, երբէք :

— Մի՛ կարեկցիք իմ վրայ, տէր արքայ : Կարծել
 չխտանք որ այս բաժանումը տեսական պիտի ըլլայ :
 Քոյրերս տակաւին բան մը չեն գիտեր այս մասին, գէթ
 այնպէս կը կարծեմ որ սպասուհիներս միայն գիտակ են
 գործին : Ութը օրէ ի վեր բոլոր պատրաստութիւններս
 տեսած եմ, և այժմ միակ բազմանքս այն է որ մեկնե-
 լուս չուրիը Սէն-Տընի ծանր դոնորուն գոցուելու չու-
 կէն ետքը տարածուի : Այս վերջինը թոյլ չպիտի սայ
 որ առաջինը լսեմ :

Թագաւորը իր աղջկան աչքերուն մէջ անխորտակելի
 մտադրութիւն մը կարգաց : Ի՛նքն ալ կ'ուզէր որ իր
 աղջիկը անծայն մեկնի : Եթէ տիկին Լուիզ հեծկտալէ
 կը վախնար իր նպատակին իրագործման համար, թա-
 գաւորը ա՛լ աւելի կը վախնար իր ջղայնութեան համար
 Լուի ժե՛ Մարի երթալ կը փափաքէր, և եթէ Վէր-
 սայլի մէջ մեծ վիշտերով պաշարուածի երեւոյթ մը
 ստանար, պիտի ստիպուէր, անչա՛ւշտ, ճամբորդութիւնը
 յետաձգել :

Վերջապէս, աննշմար գոհունակութեամբ մը կը խոր-
 ճէր թէ ո՛չ թագաւորի մը և ո՛չ ալ հօր մը վայլող
 շուսյաութեանէ մը վերադարձած ատեն՝ այլեւս չպիտի
 տեսնէր այն զգօն ու ախուր դէմքը՝ որ նոյնինքն յան-
 գիմանութիւն մը ըլլալ կը թուէր իրեն՝ իր վարած
 անխոյթ, անտարբեր ու ծոյլ կենցաղին համար :

— Թող քու ուզածիդ պէս ըլլայ, աղջիկա, ըսաւ

Թագաւորը, միայն թէ ընդունէ քու հօրդ օրհնութիւնը
գոր միշտ երջանիկ ըրիր :

— Միայն ձեր ձեռքը սուէք որ համբուրեմ, տէր
արքայ, և այդ թանկագին օրհնութիւնը մտովի ըսէք :

Այս ազնիւ հոգիին զխաւորութեանը տեղեակ եղող-
ներուն համար՝ մեծաշուք և հանդիսաւոր տեսարան մըն
էր այս : Այդ վեհանձն հոգին, այսպէսով, իւրաքանչիւր
քայլափոխին, գէպի իր նախնիքը կը մօտենար, որոնք,
իրենց սակեղէն շրջանակներուն մէջէն, գոզցես շնորհա-
կալ կ'ըլլային անոր որ տակաւին ողջ՝ իրենց գերեզ-
մաններուն մէջ զիրենք զաննչ կ'երթար :

Դրան սեմին վրայ թագաւորը իր աղջիկը ողջունեց
և ևս դարձաւ առանց բառ մը արտասանելու :

Պալատականները անոր հետեւեցան : Այսպէս էր ար-
քունիքին սովորութիւնը :



ԻԸ

ԾՈՒԷՆ, ԳՐԳԼԵԱԿ ԵՒ ՈՐԻ

Թագաւորը գէպի կազմածոց սենեակը գնաց, ուր,
որսի կամ պտոյտի երթալէ առաջ, սովորութիւն ունէր
քանի մը վայրկեան անցընել մասնաւոր հրամաններ տա-
լով օրուան մնացորդ մասին պատրաստութիւնը կատա-
րել տալու համար՝ որուն պէտք կ'ունենար երբեմն :

Դահլիճին ծայրը, պալատականները ողջունեց և ձեռ-
քով նշան ըրաւ հակցնել ուղելով որ առանձին մնալ կը
փափաքի :

Լուի ԺԵ, առանձին մնալով, ձամբան շարունակեց
նրբանցքէ մը որուն վրայ կը գտնուէին տիկիներուն
սենեակները :

Օթոցով մը փակուած դրան մը առջեւը հասնելով
կանգ առաւ և զլուիը օրեց :

— Հատ մը միայն բարի կար, ան ալ մեկնեցաւ,
մոմոաց ակօաներուն մէջէն :

Բարձրագոյն ձայն մը պատտախանեց այս իրաւացի
խօսքերուն՝ որ՝ բաւական վիրաւորական հանգամանք մը
կը պարփակէր իր մէջ՝ մնացողներուն համար :

Օթոցը վերցուեցաւ և Լուի ԺԵ ողջունուեցաւ հե-
տեւեալ մոլեղին եռանուագով :

— Շնորհակալութիւնս, հայրիկ :

Թագաւորը իր միւս երեք տղջիւրանց մէջ կը գտնուէր :

— Վա՛յ, դո՛ւն ես, Ծաւէն, ըստ երեքին մէջէն անդրանիկին ուղղելով խօսքը՝ աշխնքն տիկին Ատէլայի : Ո՛հ, իրաւ որ փոյթու չէ, կ'ուզես սրբոյզ կ'ուզես մի սրբօղիւր, ես ճշմարտութիւնը ըսի :

— Ո՛հ, ձեր խնայուցածը նոր բան մը չէ, աէր արքայ, ըստ տիկին Վիքթուար, մենք գիտենք որ դուք միշտ նախամեծար համարած էք Լուիզը :

— Իրաւ որ ճշմարտութիւնը խոստովանեցար, Գրքը գրելով :

— Բայց ինչո՞ւ Լուիզը մենէ նախամեծար համարուի, միջամտեց տիկին Սօփի կծու եզանակաւ մը :

— Որովհետեւ Լուիզ չչարչարեր զիս, պատասխանեց Լուի ժե այն պարզամտութեամբ որուն ամենակատարեալ մէկ օրինակը կը հրամայէր իր անձնասիրական վայրկեաններուն մէջ :

— Ո՛հ, ան պիտի չարչարէ ձեզ, հոգ մի ընէք, հայրիկ, ըստ տիկին Սօփի այնպիսի կծու եզանակաւ մը որ թագաւորին ուշադրութիւնը մասնաւորապէս իր վրայ հրաւիրեց :

— Ի՞նչ գիտես, տեսնենք, Որի : Արդեօք Լուիզ մեկնելու ատեն իր խորհուրդները յայտնե՞ց քեզ : Եթէ այդպէս բան մը ըրած ըլլար՝ շատ պիտի զարմանայի, որովհետեւ քե՛զ ալ չէր սիրեր :

— Բա՛հ, իրաւ որ ամէն ատեն ես ալ լաւ փոխարինութիւն մը կ'ընէի անոր, պատասխանեց տիկին Սօփի :

— Շա՛տ աղէկ, ըստ Լուի ժե, ասեցէք զիրար, արձամարնեցէք զիրար, գիշատեցէք զիրար, ատիկայ ձեր գիտնալու բանն է՝ միայն թէ զիս անանգիտա մի ընէք :

միտասնեաց տէրութեան մէջ խաղաղութիւն հաստատելու համար : Բայց կ'ուզեմ գիտնալ թէ խնդճ Լուիզը ի՞նչպէս զիս պիտի չարչարէ :

— Խե՛ղճ Լուիզը, ըսին տիկին Վիքթուար և տիկին Ատէլայիս միտերան այլ տարբեր ձևերով իրենց չըրթունքները երկնցնելով :

— Ինչպէ՞ս ձեզ պիտի չարչարէ : Լաւ ուրեմն, հիմայ ձեզի պիտի ըսեմ, հայրիկ, ըստ Սօփի :

Լուի ժե դրան քաղ դրուած մեծ թիկնաթուղի մէջ տարածուեցաւ, սրբէն զի անմիջապէս կծիկը գնելու գործողութիւնը դժուարութեան մը չըստիս :

— Որովհետեւ տիկին Լուիզ՝ Շէլ ատանի սրբաուհին գրգռող աստանայէն կը ատնջուի քիչ մը, և մենաստան կը քաշուի փորձեր կատարելու համար, շարունակեց տիկին Սօփի :

— Օ՛ն, օ՛ն, պէտք չէ որ ձեր քրոջ ատաքինութեան վրայ կատարէք, ըստ Լուի ժե . երբէք բամբասուած չէ ան : Դուք մի՛ ըլլաք սկսողը, դո՛ւք :

— Ե՞ս :

— Այո՛, դո՛ւք :

— Ո՛հ, ես անոր ատաքինութեանը վրայ չեմ խօսիր, ըստ տիկին Սօփի դուք բառին հօրը գործածած մասնաւոր արտասանութենէն և կեզմ կրկնութենէն խորապէս խոցուելով, ես կ'ըսեմ թէ փորձեր պիտի կատարէ, ա՛ն իմ ըսածս այս է :

— Է՛հ, թող երթայ տարբարեւան փորձեր կատարէ, զէնք չինէ, թիկնաթուղի անիւններ չինէ, սրինդ ածէ, թմբուկ զարնէ, գաշնակներ ջախջախէ, քնարին աղիքներէն անախորժ ճանչոցներ հանէ, ի՞նչ վնաս կը տեսնէք բոլոր ատոնց մէջ :

— Կ'ըսեմ թէ քաղաքականութիւն պիտի բանեցնէ :
Լուի ժե սարսուռ :

— Փիլիսոփայութիւն և աստուածաբանութիւն պիտի ուսանի, Ունիւնեկիթոս (*) կոնդակին վրայ իր մեկնութիւնները պիտի շարունակէ, այնպէս որ մենք ալ անոր վարչական ուսմանց, բնագիտական գրութեանց և աստուածաբանական ուսումնասիրութեանց մէջ մնացած, ընտանիքին ամենէն անողուտ մասը պիտի երեւինք, մենք . . . :

— Եթէ այս ընթացքով ձեր քոյրը արքայութիւն կրնայ երթալ, ի՞նչ վնաս կը տեսնէք ասոր մէջ, կրկնեց Լուի ժե բաւական վրդովուելով այն յարաբերութենէն՝ որ գոյութիւն ունէր Որիի ամբաստանութեան և այն քաղաքական վիճարանութեան մէջ ուր սրտի դաւով արտայայտուած էր տիկին Լուիզ : Արդեօք անոր երանութեան վրայ կը նախանձիք : Ատիկայ ամենալատ քրիստոնեայի մը գործը պիտի ըլլար :

— Ո՛հ, իբաւ որ, ո՛չ, ըսաւ տիկին Վիքթուար, ուզած տեղը թող երթայ, միայն թէ ես անոր չեմ հետեւիր :

- Ո՛չ ալ ես, աւելցուց տիկին Ատէլայիտ :
- Եւ ո՛չ ալ ես, կրկնեց տիկին Սօֆի :
- Ասկէ դատ, մեզ կ'արհամարէր ալ, աւելցուց տիկին Վիքթուար :

(*) 1713ին Գլեման ժԱ պապը տուաւ այս կոնդակը հայր Քուեսնէին, « Բարոյական Խորհրդածոյքիւնք ի վերայ Նոր Կտարանի » անուն գրքի մը հրատարակութեան առթիւ : Այս կոնդակը մեծ իրարանցում յառաջ բերաւ Գաղիոյ մէջ :

- Չե՞զ, ըսաւ Լուի ժե :
- Այո՛, մե՛զ, մե՛զ, գոչեցին միւս երկու քոյրերը :
- Չըսէ՞ք որ իր ընտանիքին չհանդիպելու համար է որ արքայութիւնը ընտրեց է սա խեղճ Լուիզը, ըսաւ Լուի ժե :

Այս սրամտութիւնը բաւական խնդացուց երեք քոյրերը : Տիկին Ատէլայիտ, երեքին մէջ անդրանիկը, իր բոլոր արամբանութիւնը ի մի կը հաւաքէր աւելի ուժգին հարուած մը տալու համար թագաւորին, որուն զրահին վրայէն արդէն սահեր էին առաջուանները :

— Տիկի՛ններ, գոչեց անդրանիկ բամբիշը այնպիսի բռնազրօսիկ եղանակաւ մը որ իրեն միայն յատուկ էր երբ կ'ենէր այն անզգայութենէն՝ որուն համար Ծուէն ծաղրանունը ստացած էր հօրմէն, դուք չգտաք կամ չհամարձակեցաք տիկին Լուիզի մեկնելուն ճշմարիտ պատճառը ըսել թագաւորին :

— Օ՛հ, լաւ, ահա՛ շարութիւն մըն ալ, կրկնեց թագաւորը : Շարունակեցէք, Ծուէն, շարունակեցէք :

- Ո՛հ, տէր արքայ, վստահ եմ որ քիչ մը անհաճոյ պիտի երեւիմ ձեզի, ըսաւ տիկին Ատէլայիտ :
- Կը յուսամ՝ ըսէք, սա աւելի ճիշդ կ'ըլլայ :
- Տիկին Ատէլայիտ չթթունքը խածաւ :
- Բայց ես ճշմարտութիւնը պիտի ըսեմ, մէջ բերաւ անդրանիկ բամբիշը :

— Լաւ . յուսալի է : Ճշմարտութիւնը : Բայց մէկգի թողէք ասանկ անպիտար բառեր գործածելու մոլութիւնը : Ես երբէք ճշմարտութեան վրայ կը խօսի՞մ : Է՛հ, տեսէք, նորէն առողջութիւնս տեղն է, վա՛ռք Աստուծոյ :

Եւ Լուի ժե ուսերը թօթկեց :

— Օ՛ն, խօսեցէք, քոյրիկ, խօսեցէք, ըսին միւս երկու իշխանուհիները չափազանց անհամբեր՝ հասկնալու համար այն պատճառը որ այնչափ պիտի վշտացնէր թագաւորը :

— Փոքրիկ բարի սիրանք, մամոսց Լուի ժե, անսէք ս՛րքան կը սիրեն իրենց հայրը :

Եւ միխիթարուհեաւ մտածելով որ ինքն ալ լաւ փոխարինութիւն կ'ընէր անոնց :

Տիկին Ատէլայիտ խօսք առաւ .

— Արդ, մեր Լուիզ քոյրը, որ այնչափ խիտ էր աշքունտարան սովորութեանց մասին, աշխարհիս մէջ ամենէն աւելի կը վախնար . . .

— Կը վախնա՞ր . . . , և ի՞նչ բանէ : Օ՛ն, աւարտէ գոնէ քանի որ սկսար :

— Նոր անձերու սպօրիկնի կերպով արքունիք մուտքէն, ախինքն բռնամուծումէ :

— Բռնամուծում ըսիր, ըստ թագաւորը այս ըսկըրնտարութենէն զժգո՞ն մնալով, սրովհետեւ կը նախատեսէր որ համիլը : Արդեօք բռնամոյժնե՞ր կան տանս մէջ, արդեօք չուզած անձինքս իմ ներկայութեանս ընդունելու հարկին մէջ կը գանտիմ :

Խօսակցութեան խմտառը հիմնովին փոխելու համար բաւական ճարտար եղանակ մըն էր ասիկայ :

Բայց տիկին Ատէլայիտ բաւական նրբամիտ չարաձճի մըն էր ծայր յտալու մէջ՝ երբ չէնք շնորհք բամբասանքի ու չարաբանութեան մը շուղին վրայ կը գանտէր :

— Պէ՛շ ըսի : Ճիշդ բառը չգործածեցի : Բռնամուծում ըսելու տեղ՝ ներքառնում ըսելու էի :

— Ա՛ն, ա՛ն, ըստ թագաւորը, անա գործը կը մեկ-

մանայ, միւս բառը զիս կը նեղէր, չխտակը, ներքառնումը աւելի լաւ կ'երեւայ ինձ :

— Եւ սակայն, տէր արքայ, շարաչարեց տիկին Ատէլայիտ, կարծեմ թէ դարձեալ բուն բառը աս չէ :

— Եւ ս՛րն է, տեսնո՞ւք :

— Ներկայացուն է :

— Ա՛ն, այո՛, գոչեցին միւս երկու քոյրերը միաբերան, կարծեմ թէ ա՛լ այս անգամ գանուհեաւ :

Թագաւորը շրթունքը խածաւ :

— Վա՛յ, այդպէ՞ս կը կարծէք, մրմնջեց Լուի ժե :

— Այո՛, պատտախանեց տիկին Ատէլայիտ : Ուստի կ'ըսեմ թէ քոյրս շատ կը վախնար նոր ներկայացումներէ :

— Լաւ ուրմն, Ե՞տքը, ըստ թագաւորը որ ժամ առաջ վերջացնել կ'ուզէր խօսքը :

— Հետեւաբար, հայրիկ, Լուիզ, տիկին Տիւպորի կոմսուհին արքունիքին մէջ տեսնելէ վախցած ըլլալու է :

— Հա՛, ա՛յդպէս, գոչեց թագաւորը սրտմտութեան անխիջճատելի ետանդով մը, սապէս բուն բառը չբռնէ փոխանակ երկար բարակ անոր շուրջը գտնալու, բան, ի՛նչպէս ալ կը համարձակիք գրաբանութիւններով զիս յագնեցնել, տիկին ճշմարտութիւն :

— Տէր արքայ, պատտախանեց տիկին Ատէլայիտ, եթէ Ձեր վեհախառութեան բաժնու յաջողցի, պատճառը այն է որ յարգանքը զիս արդիւից, նաեւ միայն Ձեր վեհախառութեան հրամանաւ կընայի բերանս բանալ ապալիս նիւթի մը վրայ :

— Ո՛ն, այո՛, անոր համար ձեր բերանը գոց կը պահէք, չէք յորանջեր, չէք խօսիր, չէք խածնոր . . .

— Տէր արքայ, աս ալ ճշմարիտ է թէ քրոջս ա-

ոանձնանալուն բուն պոտճառը դտայ :

— Ո՛հ, կը սխալիք :

— Ո՛հ, աէր արքայ, զոչեցին մ'իարերան, տիկին Վիքթուար և տիկին Սօֆի զլուխնին երերցնելով, վտան ենք թէ ճիշդ է :

— Աւա՛ղ, ընդմիջեց լուր ժե Մօլիէրի նկարագրած հօր մը եզանակաւ : Ամէնքն ալ մ'իւնոյն կարծիքով իրարու կը կապուին : Դաւաճանութիւնը իմ ընտանիքիս մէջն է կարծեմ : Ուրեմն ասոր համա՛ր է որ այդ ներկայացումը տեղի չլրնար ունենալ, ասոր համա՛ր է որ երբ այցելութիւն մը տալ կ'ուզուի՝ տիկինները մարդ չեն ընդունիր, ասոր համա՛ր է որ բոլորովին անպատասխանի կը մնան ունկնդրութեան ազերասգիրներն ու խնդրագիրները :

— Ո՞ր ազերասգիրները, ո՞ր խնդրագիրները, հարցուց տիկին Ատէլայիտ :

— Է՛հ, չէ՞ք գիտեր, օրիորդ ժանն տը Վօպէրնիէի ազերասգիրները, մէջ բերաւ տիկին Սօֆի :

— Ո՛հ, օրիորդ Լանտի խնդրագիրները, աւելցուց տիկին Վիքթուար :

Թագաւորը՝ կատղած՝ ոտքի ելաւ . աչքերը՝ որոնք սովորաբար հանդարտ ու քաղցրահայտաց էին՝ երեք քոյրերուն համար հրաշէկ ու շանթահարիչ փայլակ մը արձակեցին :

Եւ որովհետեւ արքայական ետանուազ համաձայնութեան մէջ հայրական բարկութեան զիմադրելու կարող զիւցաղնուհի մը չկար՝ երեքն ալ իրենց ճակատը խոնարհեցուցին մըրիկին առջև՝ որ կը սպառնար :

— Ահա՛ ինձ հարկ եղած սպացոյցը համոզուելու համար թէ արդեօք կը սխալէի՞ կարծելով որ չորսին

մէջէն լաւադոյնը մեկնեցաւ :

— Տէր արքայ, ըստ տիկին Ատէլայիտ, Ձեր վեհափառութիւնը իր շուներէն աւելի գէշ կը վարուի մեզի հետ :

— Ես ալ գիտեմ այդպէս ըլլալը . շուներս, եկած աւտենս զիս կը փայփայեն, շուներս ճշմարիտ բարեկամներ են : Ուրեմն մնաք բարով, տիկիններ : Շարքթը, Պէլ-Յիլը և կըրթիւնէն տեսնել կ'երթամ : Խն՛դճ կենդանիներ, այս՛, զանոնք կը սիրեմ՝ մանուսնդ անոր համար որ ճշմարտութիւնը չպահանջելու աղէկութիւնը ունին :

Թագաւորը՝ կատղած՝ դուրս ելաւ, բայց նախասենեակին մէջ հազիւ թէ քանի մը քայլ առած, լսեց որ իր երեք աղջիկները մ'իարերան հետեւեալ երգը կ'երգէին .

Աղջիկներու, կանանց, տղոց
Տկար սրտերն խարիզի մէջ,
Ո՛հ, կ'արձակեն կրակ ու բոց
Այիտ սներու, անթիւ, անվերջ :
Հա՛հ, հա՛հ, հա՛հ, հա՛հ, հա՛հ :

Տիրուհին Պէլզի
Բնաւ քուն չունի,
Շատ անհանգիստ է,
է,
է,
է,

Խշտեակի մէջ է :
Հա՛հ, հա՛հ, հա՛հ, հա՛հ, հա՛հ :

Տիկին Տիւպարիի գէմ գրուած գուսաներգութեան մը առաջին տունն էր այս որ փողոցները ամէնուն ձեռքը ժօզ. Պալա., թիւ 11—27, հաս.Բ., Բ.հր.Ն.Ք.

կը գտնուէր Գեղանի Պուրպօնուհին անուամբ :

Թագաւորը քիչ մնաց ետ պիտի գտնար, և գուցէ տիկիրններուն համար ալ աղէկ բան մը չըլլար այս վերադարձը, բայց ինքզինքը զսպեց և ճամբան շարունակեց չլսելու համար գոչելով :

— Մատակ շուներու պարո՞ն պահապան :

Այս տարօրինակ տխուրոսը կրող պաշտօնեան վազեց եկաւ :

— Շուներուն սենեակը թող բանան, հրամայեց թագաւորը :

— Ո՛հ, տէր արքայ, գոչեց պաշտօնեան Լուի Ժեի առջըքը նետուելով, չըլլայ որ Ձեր վեհախառութիւնը քայլ մը եւս առնէ :

— Ի՞նչ կայ որ, հարցուց թագաւորը կանգ առնելով դրան սեմին վրայ, որուն ներքեւէն կ'անցնէր շուներուն շնչառութեան խորդիւնը : Կենդանիները իրենց տիրոջ մօտենալը կը զգային :

— Տէր արքայ, ներեցէք համարձակութեանս, սակայն չեմ կրնար հանդուրժել որ թագաւորը շուներուն քով մտնէ, ըսաւ պաշտօնեան :

— Լա՛ւ, լա՛ւ, հասկցայ, սենեակը կարդին ըլլալու չէ կարծեմ, ըսաւ թագաւորը : Ուրեմն դուրս հանեցէք կրթիւնէն :

— Տէր արքայ, մրմնջեց պաշտօնեան՝ որուն դէմքը թախծալի տրտմութիւն մը կը յայտնէր, երկու օրէ ի վեր կրթիւնէ ոչ կուտէ և ոչ ալ կը խմէ, կը վախցուի որ կատղած ըլլայ :

— Ո՛հ, իրա՛ւ, գոչեց Լուի Ժե, մարդոց ամենաթշուա՛նն եմ եղեր : Կրթիւնէն կատղե՛ր է, աճա ասով իմ վիշտս կը լրանայ :

Մատակ շուներու պաշտօնեան կարծեց թէ պէտք էր արցունքի կաթիլ մը թափել տեսարանը աւելի ազդու ընելու համար :

Թագաւորը կռնակը դարձուց և իր սենեակը մտաւ՝ ուր դրանիկը իրեն կը սպասէր :

Այս վերջինը, թագաւորին խռովայոյց դէմքը տեսնելով, պատուհանի մը որմածակին մէջ պահուրտեցաւ :

— Ո՛հ, կը հասկնամ, կը հասկնամ, մոռաց Լուի Ժե սենեակին մէջ մեծաքայլ շրջելով և առանց ուշադրութիւն ընելու հաւատարիմ ծառային որ մարդ մը չէր թագաւորին համար : Պ. տը Շուազէօլ զիս կը ծաղրէ, արքայօրդին կիսովին տէր կը նկատէ ինքզինքը և կը կարծէ թէ կատարելապէս տէր պիտի ըլլայ երբ իր փոքրիկ Աւստրուհին գահը բազմեցնէ : Լուիզ կը սիրէ զիս՝ բայց բացարձակ խառութեամբ կը վարուի նոսա, բարոյակամութեան դասեր կուտայ ինձ և կը մեկնի : Միւս երեք ազջիկներս իրենց երգերուն մէջ Պլէզ կ'անուանեն զիս : Պ. տը Բրօլանս կոմսը Լուքրէցիան կը թարգմանէ : Պ. տ'Արթուա կոմսը փողոցները կը թախառի, շուները կը կատղին և կ'ուզեն զիս խածնել : Ստուգիւ միայն կոմսուհին զիս կը սիրէ : Սատանին ճա՛նկը թող երթան ուրեմն ըտլոր անոնք որ անհանգստութիւն պատճառել կ'ուզեն անոր :

Եւ, նախապատրաստական յուսահատութեամբ մը, նստաւ այն սեղանին առջեւ որուն վրայ ստորագրութիւն կուտար :

Այն սեղանին առջեւ, կ'ըսենք, որ չախազանց ծանրաբեռնուած էր վերջին դաշնագիրներով և մեծ թագաւորին հպարտ նամակներով :

— Հի՛մայ կը հասկնամ թէ ինչո՛ւ համար տիկին

իշխանութիին զալուստը փութացնել կ'ուզեն շուրջս զըստնուողները, շարայարեց թագաւորը ցած ձայնով մենախօսելով : Կը կարծեն որ ան հոս հասնելուն պէս ես անոր գերին պիտի ըլլամ, կամ անոր ընտանիքը իմ վրաս պիտի իշխէ : Իրա՛ւ որ տակաւին ժամանակ կայ ատ բանը տեսնելու, իմ սիրելի հարսնցուս, մինչեւ անգամ եթէ քու գարտեամբք նոր անկարգութիւններ ալ պատահին : Ուրեմն հանգիստ ապրինք և կարելի եղածին չափ երկարենք այդ հանգստութիւնը : Եւ ասոր մէջ յաջողելու համար, ճամբան բռնենք զայն : Ռէյմսէն և Նոյօնէն պիտի անցնէր ատանց կանգ առնելու և Գօնբրիէնը պիտի երթար : Ասիկայ ուղեւորութեան հին յատակապիծն է . նոր մը շինենք և գործադրել տանք : Ռէյմսի մէջ երեք օր ընդունելութեան համար, և մէկ . . . իրա՛ւ որ չէ, երկու . . . բա՛հ, երե՛ք օր ալ հանդէս Նոյօնի մէջ, եղաւ վեց օր, վեց օր կը շահինք, վեց երկա՛յն օրեր :

Թագաւորը զրիչը ձեռքը առաւ և ինքնազիր համակ մը զրեց Պ. ար Սարթինի, որով երեք օր Ռէյմսի և երեք օր ալ Նոյօնի մէջ կարաւանը կեցնելու հրամանը կուտար ոստիկանութեան տեղակալին :

Յետոյ թղթատարը կանչել տալով ըսաւ .

— Սրարչաւ պէտք է երթնա՞ մինչեւ որ այս հրամանագիրը իր հասցէին յանձնես :

Ապա մ'իւննոյն գրելով հետևեալ երկտողը գրեց .

« Սիրելի կոմսուհի,

« Չամօրը իր վարչութեան մէջ կը հաստատենք այսօր : Ես Մարլի կ'երթամ : Այս երեկոյ Լիւսիէն պիտի գամ և քեզ ըսեմ ինչ որ այս պահուն կը խորհիմ :

Գ.Ա.Դ.Ա. » :

— Ա՛ւ այս համակը և կոմսուհիին ասոր, Լըպէլ, հետը ազէկ վարուէ, ասիկայ խրատ մըն է որ կուտամ քեզի :

Դրանիկը խոնարհութիւն մը ընելով դուրս ելաւ :

Ի՞նչ .

ՏԻՒՆ ՏԸ ՊԵՍՐՆ

Բոլոր այս երկպառակութեանց սկզբնապատճառը, արքունիքին մէջ ոմանց համար ցանկալի և այլոց ահարկու երևցող այս գայթակղութեան քարը, այսինքն արիկին ար Պէարն կոմսուհին՝ ինչպէս որ Շօն իր եզբօրը բամ էր՝ արագօրէն զէպի Բարիզ կ'ուղեւորէր :

Այս ուղեւորութիւնը ժան գերկոմսին վառ երևակալութեան արդիւնքն էր որ իր շփոթած վայրկեանին օգնութեան կը հասնէր :

Գերկոմսը՝ արքունիքին կիներուն մէջ չըմտելով կնքամայր մը, որ անհրաժեշտ և խիստ կարեւոր էր, որովհետև ատանց անոր արիկին Տիւպարիի ներկայացումը տեղի չէր կրնար ունենալ, աչքը գաւառին զարծու-

ցեր, զիրքերը քններ, քաղաքները պրպտեր և պէտք եղածը գտեր էր Մէօզ գետին եզերքին վրայ, բոլորովին գոթական բայց խիստ բարեկարգ տան մը մէջ :

Փնտռածը պառաւ դատախազուհի մը և հին դատ մըն էր :

Պառաւ դատախազուհին տը Պէարն կոմսուհին էր :

Իսկ հին դատը այնպիսի գործ մըն էր որմէ կախում ունէր կոմսուհիին ամբողջ հարստութիւնը : Այս դատը Պ. տը Մօբբուէի ձեռքն էր :

Պ. տը Մօբբուէ, տակաւին նոր յարաբերութեան մէջ մտած էր տիկին Տիւպարիի հետ, բայց ցաֆն վայր անծանօթ մնացած ազգականութիւն մը երեւան հանելով, յաջողած էր զայն իր մօրեղբօր ազջիկը անուանել :

Պ. տը Մօբբուէ, գիւանազխտական հեռատեսութեամբ, կոմսուհիին հետ սերտիւ կապուած էր անցեալ բարեկամութեամբ մը և ապագայ շահախնդրութեամբ մը . այս բարեկամութիւնն ու շահախնդրութիւնը փոխ-դիւանապետ անուանել տուաւ զայն թագաւորին, իսկ ժողովուրդը համառօտելով՝ ախս անուանեց զայն :

Տիկին տը Պէարն ստուգիւ պառաւ դատախազուհի մըն էր, յարեւմտանը տ'էսգարպանխաս կոմսուհիին և տիկին Բէնպէշի, որոնք այն ատենուան ամենատոյգ տիպարներն էին, և ասկէ գատ՝ ինչպէս որ կը տեսնուի ազուր անուներ կը կրէին :

Տիկին տը Պէարն, թեթեւեղամ, նիհար, անկլիւնաւոր, միշտ կասկածոտ էր և մէջը ճերմակ ինկած յոնքերուն տակէն, վախիտ կատուի մը նման, աչքերը

(*) Vice « փոխ » բառը գաղիերէնի մէջ կը նշանակէ նաեւ « ախս » կամ « մոլ ուրիւն » : Թ. Հ.

միշտ կը դարձնէր : Իր երիտասարդութեան ատենուան կանանց զգեստը հագած էր : Եւ որովհետեւ նորածնութիւնը հակառակ միշտ թարմ մնալու անհրաժեշտութեան ենթակայ ըլլալուն՝ երբեմն կը թոռմի, 1740ի դեռատի աղջկանց զգեստը 1770ին պառաւի զգեստ եղած էր :

Ընդարձակ առէչներ, ասեղնադործուած մեկնոցակ մը, մեծ գլխադիրներ, երկայն գրպաններ, լայն և տան վերարկու մը, ծաղկանկար մետաքսեայ փողկապ մը, ահա այս զգեստներով գտաւ տիկին տը Պէարնը երբ անոր տունը ներկայացաւ Շօն՝ տիկին Տիւպարիի ամենաթրեւիլ քոյրը և հաւատարիմ խորհրդակիցը՝ օրիորդ Ֆրսօ անուամբ, այսինքն իրբեւ փաստարանին աղջիկը :

Պառաւ դատախազուհին թէ՛ իր ճաշակին և թէ խնայողութեան համար կը հագնէր այդ զգեստները : Այն տեսակ կիներէ չէր որոնք իրենց աղքատութեանը վրայ կը կարմրին, որովհետեւ, աղքատութիւնը իր յանցանքէն չէր : Միայն կը ցաւէր որ հարուստ չէր, որպէս զի իր անուան արժանի հարստութիւն մը թողելու կարող ըլլար իր որդւոյն որ դեռատի աղջկան մը նման երկջոտ, կատարեալ գաւառացի երիտասարդ մըն էր, աւելի կեանքի նիւթական քաղցրութիւններուն յարած՝ քան համբաւի փառասիրական շնորհներուն :

Պառաւ կոմսուհին սա առաւելութիւնն ալ ունէր որ, « իմ երկիրներս » կը կոչէր այն հողերը՝ որոնց համար դատ կը վարէր իր փաստարանը Սալիւանաց հետ Բայց, և որովհետեւ խելացի կին մըն էր, կը զգար որ եթէ հարկ ըլլար փոխառութիւն մը ընել այդ հողերը գրաւի գնելով, ո՛չ մէկ վաշխառուէ և ո՛չ մէկ գործակալէ այս երաշխաւորութեամբ կարելի պիտի ըլլար փոխ դրամ կամ կանխավճար մը փրցնել, հակառակ որ այն ատեն

ները Գազխոյ մէջ՝ յանդուզն վաշխառուներ և անառակ գործակալներ չէին պահներ :

Այս պատճառաւ դատաւարութենէ զերժ հողերովն ու անոնց հասոյթովը բառականանալով, զրեթէ հազար սիրուտ եկամուտով, աիկին աը Պէարն կամուսինն խոյս կուտար արքունիքէն, ուր օրը տասներկու լիւր կը վառնուէր միայն կառք վարձելու և անով խնդրարկուհին Պ. դատաւորներուն և Պ. փաստաբաններուն տունը տանելու համար :

Հոնիկէ խոյս տալուն զլիսաւոր մէկ պատճառն ալ սա էր որ յոյս չունէր թէ իր դատին վերաբերեալ դրութիւնները չորս հինգ տարիէն առաջ կ'ընեն այն խաւարտէն՝ որուն վրայ իրենց կարգին կը սպասէին ի սկզբանէ անտի բոլոր դատաւարութիւնները :

Այժմ դատերը երկար կը տեւեն, բայց վերջապէս, դատ բացող մը առանց հաստատելի մը չափ ապրելու՝ կրնայ յուսալ որ օր մը չէ օր մը իր դատին վախճանը պիտի տեսնէ, մինչդեռ այն ատենները դատ մը երկու տերունդ կը տեւէր, և՛ Հազար ու Մեկ Գիւրեմերու առապիւլային տունկերուն համան՝ երկու երեք հարիւր տարիէն կը ծաղկէր :

Արդ, աիկին Պէարն չէր ուզեր մտնել իր ստացուածքին մնացորդը, վերտօին ձեռք ընելու համար տասներկու բաժնին տասը որ դատի տակ էր : Ինչպէս որ ըսինք և ինչպէս որ ամէն ատեն կ'ըսուի՝ աիկին Պէարն հին զլուխով կին մըն էր, այսինքն կորուստիւ, խոհեմ, հովիտ և ազտ :

Անշուշտ ինքը կրնար իր գործը վարել, կրնար նաև ու եւ է գործակալէ մը, փաստաբանէ մը կամ բարապանէ մը աւելի ազէկ դատի երթալ, դատ վարել, դատը շա-

հիլ, սակայն Պէարն անունը կը կրէր և այս անունը աւմենուրեք խոչընդոտի մը կը բաղկէր : Հետեւաբար վչտով և անձկութեամբ սոչորուելով, անմահ Աքիլէսին պէս՝ որ վրանին տակ քաշուած հազար մահու տանջանք կը կրէր և չսերու կը զարնէր փողին ձայնը, աիկին աը Պէարն ակնոցը քիթին՝ ամբողջ օրը կը զբաղէր հին մագաղաթներու վրայ գրուած դժուարին դիրերը կարգալով և զիչերները՝ պարտկական զիչերազգեստին փաթտուած, ալիխառն մագերը հովին, զլիսաբարձին առջև, Սալիւսանց զէմ բացած դատը պաշտպանելու փորձեր կ'ընէր, դատ մը որ միշտ ինքը կը շահէր այնպիսի պերճախօսութեամբ մը որմէ ինք անգամ գոհ կը մնար և նոյնօրինակ յաղթութիւն մը կը մաղթէր իր փաստաբանին :

Յայտնի է որ, այսպիսի տրամադրութեանց մէջ, Ծօնի գալուստը՝ որ օրիորդ Յլածօ անուամբ ներկայացած էր, քաղցր սպաւորութիւն մը պիտի ընէր աիկին Պէարնի վրայ :

Իր որդին՝ դեռատի կոմսը բանակին մէջ կը զբաւնուէր :

Մարդ կը հաւատայ այն բանին որուն կը ջանկայ : Ուստի բնականաբար աիկին աը Պէարն հաւատաց մանկամարդ կնոջ ըրած պատմութեանը :

Թէպէտ կատարակու ալ անգիւր կար, կամուսինն քան տարիէ ի վեր կը ճանչնար փաստաբան Յլածօն : Երկու հարիւր անգամ այցելութեան դացեր էր անոր Բըթի-Լիօն-Սէն-Սօլէօր փողոցի տունը, և երբէք չէր նշմարած քառածաւալ գորգին վրայ խաղացող սղու մը աչքերը՝ որ կուզայ զաղաազորի շաքարիկէն փնտռել յաճախորդներուն և յաճախորդուհիներուն սուրիներուն մէջ :

Բայց փաստաբանին գորգին վրայ մտածելու, հոն խաղացող աղան գտնելու ժամանակն էր, վերջապէս ժամանակն էր յիշողութիւնը քրքրելու : Օրիորդ Ֆլածօն օրիորդ Ֆլածօն էր, պէտք եղածն ալ աս էր :

Գուցէ տիկին Պէարն օրիորդ Ֆլածօնն պահանջէր զինքը ներկայացնող ինքնութեան զիր մը, սակայն եթէ հայր մը իր հարազատ աղջիկը չկարենայ առանց ներկայացման գրուածքի տեղ մը գրել, ուրեմն որո՞ւ յանձնելու է վստահութեամբ կատարուելիք գործ մը . աակէ գատ, ի՞նչ հարկ կար այդպիսի կասկածներու . ո՞ւր կը յանդին այդպիսի տարակոյտներ . ի՞նչ նախատեսմէ կը վաթսուսն փարսախ ճամբորդէ այսպիսի պատմութիւն մը ընելու համար :

Եթէ տիկին տը Պէարն հարուստ ըլլար, եթէ գրամատիրոջ մը, կալուածատիրոջ մը կամ արքունի վերակացուի կնոջ մը նման սպասաւորներ, սպասներ և ազամանդներ ունենար՝ կրնար կասկածիլ որ գողերու կողմէ լարուած սրողայթ մը ըլլար : Բայց շատ կը խնդար տիկին Պէարն, երբ երբեմն կը մտածէր իր վրայ մտածելու ելլող գողերուն վերջին պատրանքին և զգալիք տհաճութեան վրայ :

Ուստի, Շօն հազիւ մեկնած իր գեղջկական արդու զարդովն ու մխածի ուղեկառքովը՝ զոր վերջընթեր կայարանէն առած էր իր կառքը հոն թողուով, տիկին Պէարն համոզուելով որ զոհողութիւն մը ընելու ատենը հասած էր, հին կառք մը մտաւ և կառապանին գլուխը ասնալի ցուցուց որ՝ իշխանուհիէն ժամ մը առաջ Շօն աէէն անցաւ և Սէն-Տընիի պարխալը հասաւ օրիորդ Տիւ պարիէ հազիւ հինգ վեց ժամ ետքը :

Եւ որովհետեւ ուղեւորուէին ըստ չունէր և իրեն հա-

մար ամենէն կարեւորը երթալ տեղեկութիւն ստանալն էր, տիկին տը Պէարն կառքը կեցնել տուաւ Բըթի-Լիօն փողոցը, վարպետ Ֆլածօն դրան առջեւ :

Բաւական թուով հետաքրքիրներ հաւաքուեցան այս պատկանելի ուղեկառքին առջեւ, որ կարծես թէ Հանրի Դի ախոսներէն ելած էր և անոր սիրած սայլը կը յիշեցընէր իր տոկունութեամբը, յիշատակելի շինուածքովը, կաշիէ գալարուն վարագոյրներովը և կանաչորակ պղնձէ զիծի մը վրայ ստակալի ճօնիններով ընթանալովը :

Բըթի-Լիօն փողոցը լայն չէ :

Տիկին տը Պէարն զրեթէ ամբողջ փողոցը գոցեց վեհափառօրէն, և կառապաններուն վարձքը վճարելէ վերջ, հրամայեց որ կառքը Սէն-ժէրմէն աէ Բրէ փողոցին մէջ Խօսող Ահալաղ անունով պահովը տանին ուր ինքը սովորաբար կ'իջևանէր :

Ճարպոտ պարանէն լոնելով Պ. Ֆլածօն մութ սանգուխէն վեր ելաւ :

Տան մէջ տիրող զովութիւնը արագընթաց ուղեւորութենէ մը խոնջած պառաւին անհաճոյ չթուեցաւ :

Երբ Մարկըիթ՝ Պ. Ֆլածօն սպասուէին՝ տիկին Պէարն կոմսուհիին գալուստը ծանոյց, փաստաբանը տախտը վեր քաշեց՝ զոր տաքին պատճառաւ մինչև սրունքները իջեցուցեր էր, կեղծամ մը անցուց գլուխը՝ զոր միշտ ձեռքին տակ գնելու հողը կը տանէին և բազէնէ զիշեւողգեստ մը անցուց կոնակը :

Այսպէս զարդարուած գէպի գուռը յառաջացաւ ժպիտը շրթունքին : Բայց ժպիտին մէջ այնպիսի ակներեւ զարմանք մը կար որ՝ կոմսուհիին ստիպուեցաւ ըսել .

— Լաւ ուրեմն, ի՞նչ կայ, սիրելի պարոն Ֆլածօս, այո՛, ևս եմ :

— Ո՛հ, կը տեսնեմ որ դուք էք, տիկին կոմսուհի, պատասխանեց Պ. Ֆլածօ :

Եւ ամօթխածութեամբ գիշերազգեստին եղերքները իրարու վրայ բերելով, փաստարանը սննեակին լուսաւոր մէկ կողմը դրուած կաշիէ թիկնաթող մը ցուցուց կոմսուհիին, խոնամութեան համար զայն սեղանին վրայ գտնուող թուղթերէն հետու նստեցնելով, որովհետեւ պատաւին հետաքրքրութիւնը ծանօթ էր իրեն :

— Այժմ, տիկին, ըսաւ Ֆլածօ վայելուչ կերպով մը, կը հաճի՞ք ինձ ներել որ իմ ուրախութիւնս յայտնեմ ձեր անակնկալ և բերկրատիթ գալտեսանը համար :

Տիկին տը Պէարն իր թիկնաթողին կաթնած՝ ոսկեհուռ ջանջիլէ կօշիկը գետնէն վեր կը վերցնէր, որպէս զի Մարկրիթ կաշիէ բարձ մը դնէ սաքին տակ :

— Ի՞նչ, անակնկալ գալուց մի, ըսաւ կոմսուհին ակնոցը քիթը անցընելով՝ զոր այս միջոցին ամանէն կը հանէր Պ. Ֆլածօն լաւ մը տեսնելու համար :

— Անշուշտ, կը կարծէի որ ձեր երկիրներն էք, տիկին, պատասխանեց փաստարանը սիրուն շողօքորթութեամբ մը տիկին տը Պէարնի երեք արտավար բանջարանոցը ակնարկելով :

— Ինչպէս որ կը տեսնէք, հօն էի, բայց ձեր տուած առաջին նշանին վրայ մեկնեցայ :

— Իմ տուած առաջին նշանին վրայ, ըսաւ փաստարանը դարմանահար :

— Ձեր առաջին բառին, առաջին աղլարարութեան, առաջին հրահանգին, վերջապէս ինչպէս որ կ'ուզէք այնպէս համարեցէք :

Պ. Ֆլածօի աչքը տիկին տը Պէարնի ակնոցին չափ խոշորցաւ :

— կը յուսամ թէ շուտ հասայ, շարայարեց կոմսուհին, և դուք անշուշտ գոհ էք ինէ :

— Ինչպէս միշտ այժմ եւս գոհ եմ, տիկին, բայց ներեցէք ինձ հարցնել թէ ինչի՞ կը պարտիմ ձեր այցելութիւնը :

— Ի՞նչ, ինչի՞ կը պարտիք իմ այցելութիւնս, կապակեց կոմսուհին ապշահար : Բայց միթէ դուք կանչել չառելի՞ք զիս :

— Ե՞ս :

— Անշուշտ, դուք . . . : Է՛ն ուրեմն, նոր բան մը կայ :

— Ո՛հ, այո՛, տիկին, զբոյց կը շրջի թէ թագաւորը պետական հարուած մը կը խորհի ժողովոյ մասին : Բայց ի՞նչ կրնամ հրամայնել ձեզի :

— Թագաւորին կամ պետական հարուածին վրայ խորհելու ժամանակն է այժմ :

— Ուրեմն ի՞նչ բանի վրայ է խնդիրը, տիկին :
— Խնդիրը իմ դատիս վրայ է : Դատիս նկատմամբ էր որ ձեզի հարցուցի թէ նոր բան մը կա՞ր :

— Ո՛հ, ոչինչ, տիկին, այդ մասին բնաւ նոր բան մը չկայ, ըսաւ Պ. Ֆլածօ տխրութեամբ գլուխը չարժելով :

— Այսինքն, ոչինչ . . .

— Այո՛, ոչինչ :

— Ոչի՞նչ : Ձեր աղջիկը ինձ խօսելէն ի վեր ոչի՞նչ : Արդ, քանի որ երէկ չէ առջի օրն էր որ ինձ խօսեցաւ, անշուշտ այն տոնէն ի վեր կարեւոր նոր բան մը կայ :

— Իմ աղջիկա, տիկին :

— Այո՛ :

— Աղջիկա ըսիք :

— Անշո՛ւշտ, ձեր աղջիկը, այն գոր ինձ զրկեցիք ։
 — Երեցէք, տիկին, ըսաւ Պ. Ֆլաժօ, անկարելի է որ աղջիկս ձեզի զրկած ըլլամ ։

— Անկարելի՞ է ։

— Սա ամենապարզ պատճառաւ որ աղջիկ չունիմ ։

— Ապահո՞վ էք, ըսաւ կոմսուհին ։

— Տիկին, պատասխանեց Պ. Ֆլաժօ, ամուրի ըլլալու պատիւը ունիմ ։

— Ի՞նչ կ'ըսէք, բացազանչեց կոմսուհին զարմանօք ։

Պ. Ֆլաժօ սկսաւ անհանդիստ ըլլալ . Մարկրիթը կանչեց որպէս զի զովացուցիչ ըմպելիքներ բերէ կոմսուհիին և մանաւանդ անոր վրայ հսկէ ։

— Խեղճ կին, կ'երեւի թէ խելքին դպեր է, ըսաւ մտովի ։

— Ի՞նչ, աղջիկ չունի՞ք, բացազանչեց կոմսուհին ։

— Ո՛չ, տիկին ։

— Սթրազպուրկի մէջ ամուսնացած աղջիկ մը չունի՞ք ։

— Ո՛չ, տիկին, ո՛չ, հազար անգամ ո՛չ ։

— Եւ դուք չպատուիրեցի՞ք այն աղջկան որ ճամբորդած միջոցին ինձ իմացնէ թէ դատա քննուելիք դատարուն ցուցակը անցած է, շարայարեց կոմսուհին իր կարծիքը առաջ մղելով ։

— Ո՛չ ։

կոմսուհին ձեռքերը ծունկերուն զարնելով թիկնաթուին վրայէն ոտքի ցատկեց ։

— Եթէ քիչ մը զովացուցիչ ըմպելիք խմէք, աղէկ պիտի ընէք, տիկին կոմսուհի, ըսաւ Պ. Ֆլաժօ ։

Անմիջապէս նշան ըրաւ Մարկրիթին որպէս զի երկու գաւաթ զարեջուր բերէ ։ Ըմպելիքները բերուեցան ափ-

սէով մը, բայց պատաւը ծարաւի չէր . ափսէն և գաւաթները այնպիսի խիստ կերպով մը հրեց որ՝ օրիորդ Մարկրիթ վերաւորուեցաւ, որմէ կարելի է կարծել թէ առանձնաշնորհութիւններ ունէր տան մէջ ։

— Օ՛ն, ըսաւ կոմսուհին ակնոցին տակէն Պ. Ֆլաժօի նայելով, ըսածնիս քիչ մը լուսարաններ, կ'աղաչեմ ։

— Ես ալ նոյնը պիտի խնդրէի, պատասխանեց Պ. Ֆլաժօ ։ Հոս կեցէք, Մարկրիտ, դուքէ քիչ մը ետքը տիկինը խմելու հաւանի ըսածնիս լուսարաններ ուրեմն ։

— Այո՛, ըսածնիս լուսարաններ, քանի որ դուք ալ նոյնը կը փափաքիք, որովհետեւ այսօր անհասկնալի մէկը դարձեր էք, սիրելի Պ. Ֆլաժօս . իրաւ որ, կարծես թէ խելքերնիդ բան մըն է եղեր տաքերուն սկսելէն ի վեր ։

— Մի՛ դայրանաք, տիկին, ըսաւ փաստաբանը կոմսուհիէն հեռանալու համար թիկնաթուին ետեւի երկու ոտքերը ետ մղելով, մի՛ դայրանաք և խօսակցինք ։

— Այո՛, խօսինք ։ Կ'ըսէք թէ դուք աղջիկ չունի՞ք, պարոն Ֆլաժօ ։

— Այո՛, տիկին, և չունենալուս վրայ անկեղծօրէն կը ցաւիմ, որովհետեւ կ'երեւի թէ հաճելի պիտի թուէր ձեզ, թէպէտ . . .

— Թէպէ՞տ, կրկնեց կոմսուհին ։

— Թէպէտ, ըստ իս, կը նախընտրէի մանչ մը ունենալ ։

Տիկին տը Պէարն ձեռքերը իրար միացուց թախծալի անձկութեամբ մը ։

— Ի՞նչ, զիս Բարիզ կանչել չտուի՞ք քրոջ մը, քեռաղջկան մը կամ ազգականի մը միջոցաւ ։

— Գիտնալով որ Բարիզ բազմաձախ միջավայր մըն

է, մտքէս անգամ չանցուցի այլալիսի բան մը, տիկին :

— Բայց իմ գո՞րծն :

— Եղածը կէտ առ կէտ կ'իմացնեմ ձեզի երբ ձեր գործը ասեանս կ'ընէ :

— Ի՞նչ, տակաւին պիտի կ'ընէ՞ :

— Այո՞ :

— Ուրեմն տակաւին ելած չէ՞ :

— Իմ գիտցածիս նայելով ոչ :

— Գործս դատարանին յանձնուած չէ՞ :

— Ոչ :

— Եւ մօտերս յանձնուելու խօսք ալ չկայ :

— Ո՞չ, տիկին, ո՞չ :

— Ուրեմն, գոչեց պատաւը ոտքի կ'ընելով, ինձ խաղ խաղացեր են, զիս ծաղրեր են, զիս նախատել ուզեր են :

Պ. Ֆլածօ ճակատէն վեր քշեց կեղծամբ քրթմնջելով :

— Կը կասկածիմ, տիկին :

— Պարոն Ֆլածօ . . . , գոչեց կոմսուհին :

Փաստաբանը նստած տեղէն վեր ցատկեց և նշան ըրաւ Մարկիի թի . սպասուհին իր տիրոջը օգնելու պատրաստուեցաւ :

— Վարպետ Ֆլածօ, շարայարեց կոմսուհին, այս նախատինքին չեմ կրնար հանդուրժել, ոտտիկանութեան տեղակալին պիտի զիմեմ որպէս զի այս թշնամութիւնն ինձ ընող չաղակրատ կինը գտնուի :

— Բո՛ւհ, ըսաւ Պ. Ֆլածօ, ատիկայ շատ ջուր կը վերցնէ :

— Անգամ մը որ գտնուի, շարայարեց կոմսուհին բարկութենէն կրակ կարած, դատ պիտի բանամ անոր զէմ :

— Դա՛տ մըն ալ, ըսաւ փաստաբանը ախրագին :

Այս խօսքին վրայ դատախազուհին իր բարկութեան բարձունքէն յանկարծ վար ինկաւ :

— Աւա՛ղ, եկած ասեմս որչա՛փ երջանիկ էի :

— Բայց այդ կինը ի՞նչ ըսաւ ձեզի, տիկին :

— Նախ ըսաւ թէ ձեր կողմէն կուգայ :

— Որքա՛ն քսու ու ստախօս կին մըն է եզեր :

— Եւ ձեր կողմէն ինձ խացուց թէ գործս դատարանին յանձնուած է : Ի՞նչ ընելու էր ուրեմն, որչափ անապարէի քիչ էր, ապա թէ ոչ շատ ուչ հասած պիտի ըլլայի :

— Աւա՛ղ, կրկնեց Պ. Ֆլածօ, տակաւին շատ հեռու ենք այդ գործողութենէն, տիկին :

— Մոռցուած ենք, այնպէս չէ՞ :

— Մոռցուած, ծալլուած, թաղուած ու փոշոտած եթէ հրաշք մը չգործուի, տիկին, և դուք զխտէք թէ հրաշքի դարը անցած է . . . :

— Ո՛հ, այո՛, մոմնաց կոմսուհին հառաչանք մը արձակելով :

Փաստաբանը արձագանգ առաւ կոմսուհին հառաչանքին :

— Չեզի բան մը ըսե՞մ, պարոն Ֆլածօ :

— Ըսէ՛ք, տիկին :

— Ասոր չեմ կրնար զիմանալ, պիտի մեռնիմ :

— Ո՛հ, ատոր մէջ իրաւունք չունիք :

— Աստուած իմ, ա՛լ կարողութիւն չմնաց վրաս :

— Սի՛րտ առէք, տիկին, սի՛րտ առէք :

— Բայց ինձի խորհուրդ մը չէ՞ք կրնար տալ :

— Ո՛հ, այո՛, ձեր տեղը վերադարձէք և ա՛լ այտու-

հետեւ մի հաւատաք անոնց որ առանց նամակի իմ կողմէս ձեզ կը ներկայանան :

Ժօզ. Պալս., բլւ 12—28, հաս.Բ., Բ.հր.Ն.Բ.

— Ուրեմն պէտք է որ իմ երկիրնս՝ րա վերադառնամ :

— Խելացութիւն է :

— Բայց հաւատացէք որ ա՛լ միւս աշխարհքին մէջ միայն իրար պիտի տեսնենք, պարոն Ֆլածօ :

— Ի՛նչ ոճրագործ կին մըն է եղեր արւիկայ :

— Բայց անխիղճ թշնամի՛նս՝ ր ունիմ ուրեմն :

— Կ'երզնում որ Սալիւսեանց մէկ խաղն է աս :

— Ի՛նչ որ ալ ըլլայ՝ դձուճ խաղ մըն է :

— Այո՛, բայց սկար :

— Ո՛հ, արդարութիւնը, արդարութիւնը Գաղոսի(*) քարայրին մէջ է, սիրելի պարոն Ֆլածօս, գոչեց կոմսուհին :

— Գիտէ՞ք թէ ինչու : Որովհետեւ արդարութիւնը գոյութիւնն չունի այլեւս, որովհետեւ ժողովը կը բռնաբարեն, որովհետեւ Պ. ար Մօբբու գիւանապետ ըլլալ ուզեց փոխանակ նախագահի :

— Պ. Ֆլածօ, հի՛մայ գաւաթ մը ըմպելիք սուէք ինձ :

— Մարկրի՛թ, գոչեց փաստարանը :

Մարկրիթ ներս մտաւ տարած սփռէն և երկու գաւաթները բերելով :

Առանձնաշնորհեալ սպասուհին տեսնելով որ խօսակցութիւնը խաղաղ կերպարանք մը կը սասանար, դուրս ելած էր :

Տիկին ար Պէարն գաւաթ մը դարեջուր առաւ, փա-

(*) Հս գիցարանութեան, կեսը մարդ եւ կեսը այծ վիթխարի մեծութեամբ ճիւղալ մըն էր Գաղոս որ բերնէն բոց կ'արձակէր : Հռոմի Ավանթէն լեռան վրայ քարայրի մը մէջ կը բնակէր : Հեբիւլէս զայն խեղդեց : Ծ. Հ.

տարանին գաւաթին զարնելով պատուեց զայն և խմեց . ապա ախուր յարգանքնէրով ու տխրազին հրածեչտի ողջսյններով նախասնեակ ելաւ :

Պ. Ֆլածօ անոր կը հետեւէր կեղծամբ ձեռքը բռնած :

Տիկին ար Պէարն սանդուխին զլուխն հասեր էր և բազրիքի տեղ ծառայող իւղտ պարանը կը փնտռէր, երբ ձեռք մը գրուեցաւ իր ձեռքին վրայ և զլուխ մը կուրծքին զարնուեցաւ :

Գործակալութեան մը պաշտօնեային ձեռքն ու զլուխն էր այս որ սանդուխին տեղ աստիճանները չորս չորս ցատկելով վեր կը խոյանար :

Պատաւ կոմսուհին նեղանալով և նախատալից խօսքեր լսելով շրջադեհաւոր շակեց և սկսաւ վար իջնել, մինչդեռ պաշտօնեան սանդուխին զլուխը հասնելով գունդ հրեց և սովորականին պէս համարձակ ու կերկերուն ձայնով մը գոչեց .

— Առէք, պարոն Ֆլածօ, սուէք : Պէարն գաւաթն կը վերաբերի :

Եւ թուղթ մը երկնցուց :

Պատաւ կոմսուհին այս անունը լսելուն պէս վեր ելնելը, պաշտօնեան մէկդի հրելը, Պ. Ֆլածօի վրայ նետուելը, ձեռքէն թուղթը խելին ու փաստարանը իր սենեակին մէջ փայելը մէկ ըրաւ, մինչդեռ Մարկրիթ պաշտօնեային կորզելիք երկու համբոյրներուն փոխարէն երկու փոքրիկ ապտակներ պատրաստած էր :

— Լաւ ուրեմն, ի՛նչ գրուած է մէջը, պարոն Ֆլածօ, գոչեց կոմսուհին :

— Իբրաւ որ տակաւին ևս ալ չեմ գիտեր, տիկին կոմսուհի, բայց եթէ թուղթը ինձ տաք՝ ինչ ըլլաւ պիտի կրնամ ըսել :

— Իրա՛ւ, իրա՛ւ, իմ բարի Ֆլածօս, կարգացէք, շուտ կարգացէք :

Փատաւարանը տոմսակին ստորագրութեանը նայեցաւ :

— Պարոն Կիլտուէն, մեր գործակալէն է :

— Ո՛հ, Աստուած իմ :

— Ձիւ կը հրաւիրէ որ պատրաստ գտնուիմ երեք-չարթի օրուան դատաւարութեան, որովհետեւ գործը ատեանին յանձնուեր է, շարայարեց Ֆլածօ ապշահար :

— Ատեանին յանձնուե՛ր է, ատեանին յանձնուե՛ր է, գոչեց կոմսուէին ուրախութեամբ : Ո՛հ, զգուշացէք, պարոն Ֆլածօ, կատակ չընենք, այս անգամ ա՛լ ինքզինքս չեմ կրնար գտնել :

— Տիկին, ըսաւ Պ. Ֆլածօ առած լուրէն բոլորովին ապշած, եթէ ասոր մէջ կատակ ընող մը կայ՝ ան ալ Պ. Կիլտուն կրնայ ըլլալ, բան մը որ բնաւ չեմ սպասեր անկէ :

— Բայց այս նամակը ուղղակի անորմէ՞ է :

— Ստորագրութիւնը տեսէք, Կիլտուինն է :

— Ճշմարիտ է . . . : Այս առտու ատեանին յանձնուեր է և երեքչարթի օր դատաւարութիւնը տեղի պիտի ունենայ : Բայց, պարոն Ֆլածօ, ուրեմն զիս տեսնելու եկող կինը խաբեբայ մը չէ եղեր :

— Կ'երեւի թէ ոչ :

— Բայց ձեր կողմէն զրկուած չէր . . . : Ապահօ՞վ էք որ ձեր կողմէն զրկուած չէր :

— Է՛հ, ատ ալ խօսք է :

— Ուրեմն որո՞ւն կողմէն եկած էր :

— Այո՛, որո՞ւն կողմէն եկած էր :

— Վերջապէս մէկու մը կողմէ եկած ըլլալու է :

— Ես ասկէ բան մը չեմ հասկնար :

— Իսկ ես ի՛նչ ընելիքս չեմ գիտեր :

— Տարօրինակ բան :

— Ո՛հ, թողէք որ անգամ մըն ալ կարգամ : Դատարան յանձնուած, կոչնազիր զրկուած, Պ. Մօրըու գիււանապետին ներկայութեան կանչուած :

— Չա՛ր ատոմանայ, ա՞ն ալ հոն պիտի ըլլայ :

— Անչո՛ւշտ :

— Տաւալի է :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ Սալիստանց ամենամօտ բարեկամներէն մին է Պ. Մօրըու գիււանապետը :

— Ապահօ՞վ էք :

— Երբէք անոնցմէ չզատուիր :

— Է՛հ, ամէն ատենէ աւելի խառն կացութեան մը մէջ կը գտնուինք : Բաղդ չունիմ :

— Եւ ասկայն, ուրիշ ճար չկայ, երթալու զինքը տեսնելու է, ըսաւ Պ. Ֆլածօ :

— Բայց լաւ ընդունելութիւն մը չպիտի ընէ :

— Հաւանական է :

— Ո՛հ, ի՛նչ կ'ըսէք, պարոն Ֆլածօ :

— Իրականութիւնը, տիկին :

— Ի՛նչ, Այսպէսով ոչ միայն դուք ձեր քաջութիւնը կը կորսնցնէք՝ այլև իմս ալ ձեռքէս կը խլէք :

— Պ. տը Մօրուի առջեւ երբէք աղէկ բան մը չի կրնար պատահիլ ձեզի :

— Այդչափ կը տկարանա՞ք, դուք որ Կիլկերոն մըն էք :

— Կիլկերոն Լիկարիտի դատը պիտի կորսնցնէր եթէ փոխանակ Կեսարի առջեւ դատ վարելու՝ վէրէսի առջեւ վարէր, պատասխանեց Պ. Ֆլածօ :

— Ուրեմն խորհուրդ կուտաք ինձի դայն տնայնու-
չերթա՞լ :

— Աստուած՝ չընէ որ այդպիսի խորհուրդ մ'ը տամ՝
ձեզ, աիկին, միայն թէ այդպիսի ունկնդրութիւն մ'ը
ինդրելու ստիպուած ըլլալնուդ համար ձեր վրայ կը
ցաւիմ :

— Կ'երեւի թէ գործը ձեր վրայ տնայնու կը վախ-
նաք :

— Տիկի՛ն, կենացս մէջ այս գտաին նման շատ մ'ը
դատեր կորսնցուցած եմ :

Կոմսուէին հառաչեց, բայց իր բոլոր զօրութիւնը ի
մի հաւաքեց և լուրջ կերպարանք մ'ը ստանալով ըսաւ .

— Մինչև վախճանը պիտի աշխատիմ, թող չըսուի
թէ ես ինքս իրաւունք ունենալով հանդերձ խոչընդոտի
մ'ը առջև ընկրկեցայ : Թո՛ղ դատս կորսնցնեմ՝ բայց ես
ալ անպարտաճանաչներուն ցոյց պիտի տամ այնպիսի
ազնուական կնոջ մ'ը ձակատը՝ որմէ շատ չգտնուիր այ-
սօր արքունիքին մէջ : Թեւերնիդ ինձ կուտա՞ք միասին
փոխդիւանապետին երթալու համար, պարոն Ֆլածօ :

— Տիկին, ըսաւ Պ. Ֆլածօ ինքն ալ իր լրջութիւնը
ստանալով, մենք՝ Բարիդի ժողովին տուած վճիռին հա-
կառակ կարծիք ունեցող անդամներս՝ երդուընցած ենք,
բացի ունկնդրութիւններէ, ա՛լ յարարելութիւննիս խը-
զել անոնց հետ որ Պ. ա՛իկիյիսնի գործին մէջ ժողովէն
հեռացան : Միութիւնը զօրութիւն կ'արտադրէ . և որով-
հետև Պ. աը Մօրբու այս գործին մէջ ուղղամտու-
թեամբ չվարուեցաւ, մենք իրեն գէմ կը բողոքենք,
մենք մեր կուսի դաշտին մէջ պիտի սպասենք մինչև
որ ան դրօշակը պարզէ :

— Կ'երեւի թէ դատս գէշ ստեղծի կը հանդիպի, ըսաւ

Կոմսուէին հառաչելով . փաստաբանները իրենց դատա-
ւորներուն հետ աւրուած են, իսկ դատաւորներն ալ ի-
րենց յաճախորդներուն հետ . . . : Հոգ չէ, ես հաստատա-
կամութեամբ պիտի յարատեւեմ :

— Աստուած հետերնիդ ըլլայ, աիկին, ըսաւ փաս-
տաբանը զիչերպագետը ձախ թեւին վրայ նետելով,
ինչպէս պիտի ընէր այսպիսի պարագայի մ'ը մէջ Հոմի
ձերակցսին անդամներէն մին :

— Ի՛նչ վատասիրտ փաստաբան, մոմաց իւրովի
աիկին աը Պէարն : Վախնամ ես շատ աւելի կը յաջողիմ
իմ բարձիս առջև՝ որքան ան ժողովին առջև :

Յետոյ, այնպիսի ժպիտով մ'ը որուն ներքև իր
անձկութիւնը սքողել կը ջանար, բարձրաձայն աւելցուց .

— Մնաք բարով, պարոն Ֆլածօ, ինձով քննեցէք
դատը, կ'աղաչեմ, մարդ չգիտէ ի՛նչ պատանկիքը :

— Ո՛հ, աիկին, ըսաւ փաստաբան Ֆլածօ, դատը
պաշտպանելու համար խօսելիք ատենախօսութեանս մա-
սին բնաւ չփոթութեան մէջ չեմ իյնար : Գեղեցիկ բան
մ'ը պիտի ըլլայ, շատ գեղեցիկ, որովհետև մտադրած
եմ սոսկալի ակնարկութիւններով համեմել զայն :

— Ի՞նչ բանի մասին, պարոն, ի՞նչ բանի մասին :

— Երուսաղէմի ապականութեան մասին, գոր անիծ-
եալ քաղաքներուն հետ պիտի բաղդատեմ և որուն վրայ
երկնային բարկութեան հուրը պիտի հայցեմ : Կը հա-
կընա՞ք, աիկին : Ամէն մարդ պիտի հասկնայ թէ Երու-
սաղէմը վէրացալն է :

— Պարոն Ֆլածօ, պարոն Ֆլածօ, վտանգի մի՛-
նեթարկէք ինքզինքնիդ, կամ մանաւանդ դատս վտան-
գի մէջ մի՛ գնէք, գոչեց պատաւը :

— Է՛հ, աիկին, Պ. աը Մօրբուի ձեռքը գտնուող

դատ մը կիրառած է, ուստի գոնէ մեր ժամանակակից-
ներուն առջեւը չարինք դատերնիս, և քանի որ մեզի
հետ անիրաւութեամբ կը վարուին՝ մենք ալ վլլլուկ
հանենք :

— Պարո՛ն Ֆլաթօ . . .

— Տիկին, փիլիսոփայ՝ ըլլանք . . . , որոտա՛նք, գո-
ռա՛նք, քանդե՛նք . . . :

— Քանզուի՛ս, կորի՛ր, կեղտո՛տ փաստաբան, պո-
ռոտախօ՛ս, մոմոաց կոմսուհին : Հիմայ հակցայ որ
նպատակդ ուրիշ բան մը չէ եղեր՝ բայց միայն փնտռել
միջոց մը որով կարելի ըլլայ քու փիլիսոփայական ցա-
փըռտուքներուդ գերին գարձնել քեզ զխոզները : Ելնեմ
Պ. տը Մօբըուին երթամ : Ան փիլիսոփայ չէ, թերեւ
գործը աւելի զիւրին լինցնեմ անոր հետ՝ քան թէ քեզի
հետ :

Եւ պատաւ կոմսուհին պարոն Ֆլաթօէն բաժնուելով
Բըթի-Լիօն-Սէն-Սօլէօր փողոցէն հեռացաւ՝ երկու օրուան
մէջ դառն ու քաղցր ակնկալութեանց բոլոր բաժակները
ցմբուր քամելով :



1

ԹԱԳԱՒՈՐԻՆ “ՓՈՒՍ,Ը, ԺՈՂՈՎՈՒՐՈՒՄԻՆ “ԱՍՏ,Ը

Պատաւ կոմսուհին ամբողջ մարմնովը կը դողար Պ.
տը Մօբըուի տունը երթալու ատեն :

Ճամբան թէ՛ յուսադրական և թէ՛ մխիթարական
բան մը ինկաւ միտքը : Շատ հաւանական էր որ ժա-
մանակը ուշ ըլլալուն՝ Պ. տը Մօբըու չպիտի կրնար
զինքն ընդունիլ և կոմսուհին պիտի բաւականանար իր
մօտաբուտ գալուստը դռնապանին խմացնելով :

Արդարեւ, ժամը իրիկուան եօթն էր, բայց տակա-
ւին մուծը գետինը առած չէր :

Այն ատենները, ժամը չորսին ճաշելու սովորութիւ-
նը արեւմտականներու մէջ տարածուեր էր և ընդհանրա-
պէս ճաշէն մինչեւ յաջորդ օրը ամէն գործ կ'ընդմիջ-
ուէր :

Թէպէտեւ տիկին տը Պէարնի միակ բաղձանքը փոխ-
դիւանապետը տեսնելն էր, սակայն մխիթարուեցաւ
խորհելով որ զայն չպիտի գտնէր :

Ահա ասոր մէջն է մարդկային մտքին յաճախ ներ-
կայացող իրարու ներհակ ընդդիմամարտութիւններէն
մին՝ զոր միշտ կը զգանք առանց երբէք բացատրել
կարենալու :

Ուստի կոմսուհին ներկայացաւ միշտ գոնապանէն ճամբուելու վախին մէջ :

Երեք լիւրնոց սկուռ մը պատրաստեց գոնապանը կաշառելով իր անունը ունկնդրութեան ցուցակին մէջ արձանագրել տալու համար :

Ապարանքին դիմացը հասած ատենը տեսաւ որ գրոնապանը բարապանի մը նետ կը խօսէր և անորմէ հրաման մը կ'առնէր : Կոմսուհին խոնմութեան համար սպասեց, վախնալով որ իր ներկայութեամբը անհանգրատութիւն չպատճառէ երկու խօսակիցներուն, բայց բարապանը վարձու կառքին մէջ կոմսուհին տեսնելով մեկնեցաւ :

Այս միջոցին գոնապանը կառքին մօտեցաւ և խընդբարկուհիին անունը հարցուց :

— Ո՛հ, գիտեմ, հաւանականաբար Նորին վսեմութիւնը տեսնելու պատիւը չպիտի ունենամ, կակազեց կոմսուհին :

— Հոյ չէ, տիկին, դուք ձեր անունը ըսելու պատիւը ըրէք ինձ :

— Տը Պէարն կոմսուհի :

— Նորին վսեմութիւնը ապարանքն է :

— Հրամանեցէ՞ք, բացազանչեց տիկին տը Պէարն վերջին ստոխճան զարմացմամբ :

— Կ'ըսեմ թէ Նորին վսեմութիւնը ապարանքն է, կրկնեց գոնապանը :

— Բայց կտակած չունիմ որ Նորին վսեմութիւնը մարդ չընդունիր, այնպէս չէ :

— Տիկին կոմսուհին պիտի ընդունի, պատասխանեց գոնապանը :

Տիկին տը Պէարն կառքէն իջաւ սուանց գիտնալու

թէ քունդէր թէ արթուն :

Գոնապանը լար մը քաշեց : Զանգակ մը երկու անգամ ճնչեց : Սանդուխին գլուխը բարապան մը երեւցաւ : Գոնապանը նշան ըրաւ կոմսուհիին ըսել ուզելով որ կրնար մտնել :

— Նորին վսեմութեան նետ խօսիլ կ'ուզէք, տիկին, հարցոց բարապանը :

— Այսինքն, պարոն, այդ շնորհին արժանանալ կը փախաքիմ :

— Հաճեցէք ինձ նետելի, տիկին կոմսուհի :

— Որչա՛փ զէջ կը խօսէին այս գատուորին ետեւէն, կ'ըսէր մտովի կոմսուհին բարապանին նետելով . սակայն մեծ բարեմասնութիւն մը ունի եղբր . զինքը տեսնել ուզողին ամէն ժամու կ'երեւի . զխանապետ մը . . . տարօրինակ բան . . . :

Եւ քալելու ատենը կը սարսափ մտածելով թէ ան որչա՛փ գաթան ու կախերես զէմքով մը պիտի ելնէր զիմացը քանի որ իր պարտականութիւնը անթերի կատարելու համար այսպիսի բացառութիւն մը կ'ընէր :

Պ. տը Մօբբու, գլուխը լայնկեկ կեղծամ մը գրած և սեւ թաւիչէ զոկտորը հազած, գունբը բաց, իր սենեակին մէջ կ'աշխատէր :

Կոմսուհին ներս մտած ատենը արագ ակնարկ մը նետեց իր շուրջը, և զարմանօք տեսաւ որ սուանճին մնացած էր բազմազբազ գիւանապետին նետ, որուն նիւնար ու դեղնած գէմքը հայելիներուն վայրենի ցլքը աղօտ կերպով կը պզտորէր :

Բարապանը տիկին տը Պէարն կոմսուհին ծանոյց :

Պ. տը Մօբբու ոտքի ելնելով կրակարանին կոթնեցաւ :

Տիկին տը Պէարն սովորութեան պահանջած երեք

ձեւերն ըրաւ :

Յարգանքէն ետքը եկող բարեւերուն մէջ քիչ մը շփոթեցաւ : Իրեն եղած այս պատուոյն չէր սպասեր, չէր կարծեր որ այդչափ բազմազբազ պաշտօնեայ մը իր հանգըստեան ժամերէն զոնելու արիութիւնն ունենայ . . . :

Պ. տը Մօքըրու պատասխանեց թէ ժամանակը ինչպէս նորին վեհաօրհանութեան պաշտօնեաներուն՝ նոյնպէս հպատակներուն համար թանկագին էր, — թէ բացատու թիւններ ալ կ'ըլլային ժամանակնին չնորոզ անձանց համար, թէ իր ժամանակին տեւորող մտաբ աջը բացառութեանց արժանացող անձանց կը զոնէր :

Տիկին տը Պէարն կրկին յարգանքներ մատուց, սպա շուարեւորվ լռեց, որովհետեւ հոս ա՛լ բարեւերը պիտի գաղբէին և աղաչանքը պիտի սկսէր :

Պ. տը Մօքըրու կզակը կը քերէր :

— Վսեմափայլ տէր, խօսք առաւ դատախազուհին, ուզեցի Ձեր վսեմութեան ներկայանալ խոնարհաբար իրեն բանալու համար ծանր գործ մը՝ որմէ կախում ունի իմ բոլոր բաղբա :

Պ. տը Մօքըրու գլխովը թեթեւ նշան մը ըրաւ որով ըսել կ'ուզէր .

— Շարունակեցէք :

— Արդարեւ, վսեմափայլ տէր, շարաշարեց կոմսուհին, պիտի տեսնէք որ բոլոր իմ բաղբա կամ որդույս բաղբը կախում ունի այն դատէն զոր այս միջոցիս բացած եմ Սալիսեանց դէմ :

Փոխ-դիւանապետը կը շարունակէր կզակը քերել :

— Բայց ձեր արդարապիտութիւնը ինձ այնչափ քաջածանօթ է որ, գիտնալով հանդերձ այն համակրութիւնը, այն բարեկամութիւնը պիտի ըսէի, զոր կը տածէք

հակառակորդ կողմիս, վայրկեան մը իսկ չվարանեցայ գալ աղբսել Ձեր վսեմութեան որ ինձ ունկնդրութիւն մը չնորհէ :

Պ. տը Մօքըրու չկրցաւ ինքզինքը դապել ու ժպտեցաւ իր արդարապիտութեան մասին շտաշուած գովեստները լսելով : Այս պարագան շատ կը նմանէր Տիւպուռայի առաքելական դասակարգութիւններուն՝ որուն համար զինքը կը չնորհաւորէին յիսուն տարի առաջ :

— Տիկին կոմսուհի, իրաւունք ունիք ըսելու թէ Սալիսեանց հետ բարեկամ եմ, սակայն հաւատալու էք նաեւ թէ տէրութեան կնիքը ընդունած ատենս բարեկամութիւնը մէկ կողմ գրած եմ : Ուստի, առանց երբէք մասնաւորներով զբաղելու, ձեզի պիտի պատասխանեմ այնպէս ինչպէս որ վայել է արդարութեան գերագոյն պետի մը :

— Ո՛հ, օրհնեա՛լ ըլլաք, վսեմափայլ տէր, զոչեց պատաւ կոմսուհին :

— Հետեւաբար պարզ իրաւագէտի մը աչքովը պիտի նայիմ ձեր դատին, շարաշարեց դիւանապետը :

— Շնորհակալ եմ Ձեր վսեմութենէն որ այնչափ ներհուն է այսպիսի նիւթերու մէջ :

— Ձեր դատը անմիջապէս դատարան պիտի ելնէ, եթէ չեմ սխալիր :

— Գալ շարթու, վսեմափայլ տէր :

— Ուրեմն ի՞նչ կը բաղձաք :

— Կը բաղձամ որ Ձեր վսեմութիւնը քննութենէ անցընէ դատիս վերաբերեալ գրութիւնները :

— Անցուցած եմ :

— Լաւ ուրեմն, ի՞նչ կարծիք ունիք անոր վրայ, հարցուց պատաւ կոմսուհին զողղալով :

- Ձեր դատի՞ն վրայ :
- Այո՞ :
- Պիտի ընեմ թէ ամենեւին կատկոծելու հարկ չկայ :
- Ինչպէ՞ս, շահելու մասին :
- Ո՛չ, կորսնցնելու մասին :
- Ձեր վսեմութիւնը կ'ըսէ թէ դատս պիտի կորսնցնեմ :
- Անտարակոյս : Հետեւաբար ձեզի խրատ մը տամ :
- Ո՞րը, հարցուց կոմսուհին յետին յոյսով մը :
- Այսինքն, եթէ դատը տեսնուելէն և վճիռը տրուուելէն ետքը դատական ծախքերը վճարելու արամաղիր էք . . .
- Է՛ . . . :
- Այդ դրամը առաջուց պատրաստեցէք :
- Բայց, վսեմախայլ տէր, չըսէ՞ք որ կործանեցայ :
- Է՛ն, չէ՞ք գիտեր, տիկին կոմսուհի, արգարութիւնը այդպիսի նկատողութիւններու մէկ չկրնար մըտնել :
- Բայց և այնպէս, վսեմախայլ տէր, արգարութեան քով գթութիւն մըն ալ կայ :
- Անա ճիշդ այդ պատճառաւ արգարութիւնը կոյր չիւնած են, տիկին կոմսուհի :
- Այլ տակայն Ձեր վսեմութիւնը անշուշտ չզլանար ինձ խրատ մը տալ :
- Ինչո՞ւ չէ, հարցուցէք : Ի՞նչ խրատ կ'ուզէք :
- Արդեօք իրաւախոհ ըլլալուն կամ աւելի մեղմ վճիռ մը ստանալուն միջոցը չկա՞յ :
- Ձեր դատաւորներուն մէջէն մէկը չէ՞ք ճանչնար, հարցուց փոխ-գլխաւնապետը :
- Եւ ոչ մին, վսեմախայլ տէր :

— Յտալի՛ է : Պ. Սալիսեանք ժողովին երեք քաւորքին հետ կապուած են :

Կոմսուհին ասքռաց :

— Սա ալ գիտցէք թէ ասով իրին հիմը չփոխուիր, որովհետեւ դատաւոր մը մասնաւոր ազդեցութիւններու ականջ չկախեր, շարայարեց փոխ-գլխաւնապետը :

Այս խօսքն ալ ա՛յնչտի ճշմարիտ էր՝ որչափ գլխաւնապետին արգարաւորութիւնը և Տիւրուայի հաշակաւոր առաջնական դատակարգութիւնները :

Կոմսուհին նուազելուն մազ մնաց :

— Բայց վերջապէս անաչառութեան մասը կատարուելէն վերջը, դատաւորը աւելի իր բարեկամին վրայ կը մտածէ՝ քան իրեն անմանթ մէկու մը վրայ, շարունակեց գլխաւնապետը : Արգարը ամենարգար կ'ըլլայ : Եւ որովհետեւ արդար է որ դուք ձեր դատը կորսնցնէք, կրնան անոր հետեւութիւնը կարելի եղածին չափ անուճոյ ընել, տիկին :

— Բայց, ինչ որ Ձեր վսեմութիւնը ինձ ըսելու պատիւը կ'ընէ, տակալի բան է :

— Իսկ գարսվ ինձ, տիկին, շարայարեց Պ. ար Մօբրու, լաւ գիտէք որ ես հետուն պիտի կենամ . ես դատաւորներուն ընելիք յանձնարարութիւն մը չունիմ, և քանի որ ես ինքս չեմ դատեր՝ կրնամ տրեմն խօսիլ :

— Աւա՛ղ, վսեմախայլ տէր, բանէ մը միտայն կը կատկածէի :

Փոխ-գլխաւնապետը իր փոքր աչքերը դատախազուհիին վրայ սեւեռեց :

— Այսինքն թէ Պ. Սալիսեանք Բարիդ բնակչուուն համար իմ բոլոր դատաւորներու հետ կապուած են և թէ, մէկ խօսքով, ամենակարող են :

— Նախ իրաւունք ունենալնուն համար :

— Որքա՛ն տխուր է Ձեր վսեմութեան նման անսխալելի մարդու մը բերնէն այսպիսի խօսքեր լսելը, վսեմափայլ տէր :

— Արդարեւ, բոլոր ասոնք ձեզի ջսկէ վերջ, պատուոյս վրայ կ'երդնում որ ձեզի օգտակար ըլլալ կը բաղձամ, շարայարեց Պ. տը Մօբբու շինծու պարզամտութեամբ մը :

Կոմսուհին սարսուց : Մութ բան մը կը նշմարէր փոխ-գիւանապետին եթէ ոչ խօսքերուն՝ գոնէ մտքին մէջ, և եթէ այս ենթադրական մ'թուփիւնը փարատէր, կը կարծէր թէ պիտի կարենար նպաստաւոր բան մը տեսնել :

— Ասկէ դատ, շարայարեց Պ. տը Մօբբու, ձեր կրած անուէնը՝ որ Գաղիոյ ամենէն ընտիր անուէններէն մին է՝ ինձ համար ազդու յանձնարարական մըն է :

— Յանձնարարական մը որ դարձնալ իմ դատիս կորսուելուն առաջքը չպիտի կրնայ առնել, վսեմափայլ տէր :

— Բայց ի՛նչ կրնամ ընել, ձեռքես ի՛նչ կուզայ որ :

— Ո՛հ, վսեմափայլ տէր, գոչեց կոմսուհին գլուխը շարժելով, որքա՛ն աննախընթաց վիճակի մէջ են գործերը այսօր :

— Կարծեմ ըսել կ'ուզէք թէ մեր ատենին աւելի լաւ վիճակի մէջ էին, տիկին կոմսուհի, մէջ բերաւ Պ. տը Մօբբու ժպտելով :

— Աւա՛ղ, այո՛, գէթ ես այնպէս կը կարծեմ, վսեմափայլ տէր : Հրճուանօք կը յիշեմ այն ժամանակը, երբ դուք՝ թագաւորին պարզ մէկ փաստաբանը՝ հրաշալի ատենախօսութիւններ կ'արտասանէիք զորս ես՝ սակաւին

զեռատի՛ կը ծափահարէի յսիշտակութեամբ : Ի՛նչ եռանդ էր ան, որքա՛ն պերճախօսութիւն, որքա՛ն առաքինութիւն : Ո՛հ, պարոն գիւանապետ, այն ատեն ո՛չ դաւադրութիւն կար և ո՛չ ալ շնորհ : Այն ատեն ես դատու կրնայի շահիլ :

— Այն ատեն տիկին տը փալարիսն ունէինք որ խնամակալին աչքերը գոցուած ատենը կը թագաւորէր և Լա Սուրին որ ամէն բանի մէջ կը մտնէր կրծելու բան մը գտնելու համար :

— Ո՛հ, վսեմափայլ տէր, տիկին տը փալարիս որքա՛ն մեծ կին մըն էր և Լա Սուրին որքա՛ն բարեսիրտ աղջիկ մը :

— Եւ որոնց բան մը մերժել կարելի չէր :

— Կամ թէ անոնք բան մը չէին մերժեր :

— Որովհետեւ շատ համարձակ և բնական բան մը ունէին իրենց վրայ, տիկին կոմսուհի, ըսաւ գիւանապետը խնդրելով : Մի ստիպէք զիս գէշ խօսիլ ներկայ վարչութեան վրայ և անցեալին ունեցած սէրս շարաշար մի գործածէք :

— Այլ սակայն Ձեր վսեմութիւնը թող զիս շարժիլէ կորսնցուցած հարստութեանս և յաւիտենապէս կործանուած տանս վրայ լայլ :

— Ա՛հ սա բանը իր սպրած ժամանակին պահանջները չզիտնալ կը նշանակէ, կոմսուհի : Ձո՛հ մատուցէք օրուան կուռքերուն, զո՛հ մատուցէք :

— Աւա՛ղ, վսեմափայլ տէր, կուռքերը զիրենք պատեւելու գացող ունայնաձեռն հաւատացեալները չեն ընդունիր :

— Ինչէ՞ն զիտէք :

— Ե՛ս :

Ճօգ. Պալս., թիւ 12—29, հաս.Բ., Բ.հր.Ն.Բ.

- Այս՛, փորձած չէք կարծեմ :
- Ո՛հ, վսեմախոյլ տէր, այնչտի բարեխիտ էք որ բարեկամի մը պէս կը խօսիք հետս :
- Է՛հ, հասակակից ենք, կոմսուհի :
- Երանի թէ այժմ քսան տարեկան ըլլայի, վսեմախոյլ տէր, և դուք ալ պարզ փաստաբան մը : Դուք իմ կողմէս դատս կը վարէիք և ձեզի դէմ գնող Սալիւսեաններ ալ չէին գտնուեր :
- Դժբաղդաբար ա՛լ քսան տարեկան չենք, տիկին կոմսուհի, ըսաւ փոխդիւանագետը քծինքով մը, հետեւ տեւաբար պէտք է քսան տարեկան եղողներէն օգնութիւն խնդրենք, որովհետեւ դուք ալ կը վկայէք թէ ազդեցութիւն ունեցող տարիքը սոս Է . . . : Ի՛նչպէս, արքունիքին մէջ մէկը չէ՞ք ճանչնար, տեաննք :
- Առանձնացած նախկին աւագանիներ միայն կը ճանչնամ որոնք իրենց վաղեմի բարեկամուհիներն տեսնելով պիտի կարմրին այժմ ազքատացած ըլլալուն համար : Տեսէք, վսեմախոյլ տէր, վէրասյլ կը գտնուիմ, և եթէ ուզէի կրնայի անոնց ներկայանալ, բայց ի՞նչ ընելու համար : Ո՛հ, իմ երկու հարիւր հազար ֆրանքս ձեռքս անցնելուն պէս՝ անո՛նք զիս փնտռելու պիտի գան : Դո՛ւք պիտի գործէք այս հրաշքը, վսեմախոյլ տէր :
- Դիւանագետը այս վերջին պարբերութիւնը չըսել կեղծեց :
- Ես եթէ ձեր տեղն ըլլայի, հիները կը մոռնայի, ինչպէս որ անոնք ձեզ կը մոռնան, և կը զիմէի նորուն որոնք կողմնակիցներ շատցնել կը ջանան : Տիկինները կը ճանչնա՞ք քիչ մը :
- Զիս մոռցած են :
- Ատկէ զատ, անոնք բան մը չեն կրնար ընել :

- Ուրե՞մն :
- Արքայորդին կը ճանչնա՞ք :
- Ո՛հ :
- Ա՛ն ալ տեղը թող մնայ, շարայարեց Պ. Մօբբու, այնչտի զբաղած է իր իշխանուհիովը որ ուրիշ բանի վրայ մտածելու ժամանակ չունի : Տեսնենք, թաղաւորին սիրելիներուն մէջ մէկը չունի՞ք :
- Ա՛նունին անգամ չեմ գիտեր :
- Լաւ ուրեմն, Պ. տիկիյիօնը կը ճանչնա՞ք :
- Տա ծանծաղամիտը որուն վրայ վատ բանն՞ք կ'ըսուին . իրբեւ թէ ջաղացքի մը մէջ պահուած է եղեր՝ երբ ուրիշներ կը պատերազմէին : Ի՛նչ վատութիւն :
- Բա՛հ, ըսաւ գիւանագետը, միշտ չըջող զբոյցներուն կէսին հաւատալու է : Ուրիշը փնտռենք ուրեմն :
- Փնտռեցէք, վսեմախոյլ տէր, փնտռեցէք :
- Բայց ինչո՞ւ չէ : Այս՛ . . . , ո՛չ . . . , հապա՛ . . . :
- Ըսէք, վսեմախոյլ տէր, ըսէք :
- Ինչո՞ւ համար նոյնինքն կոմսուհիին չզիմէք :
- Տիկին Տիւպարիի՞, ըսաւ գատախաղուհին հողմահարը բանալով :
- Այո՛, շատ բարեխիտ է :
- Իրա՞ն :
- Մանուանդ որ շատ մարդասէր ընաւորութիւն մը ունի :
- Շատ հին ընտանիքէ մը ըլլալուն՝ չեմ յուսար որ անոր հաճելի ըլլամ, վսեմախոյլ տէր :
- Կարծեմ թէ կը սխալիք, տիկին կոմսուհի : Տիկին Տիւպարի կը ջանայ աղմուական ընտանեաց հետ բարեկամութիւն հաստատել :
- Կը կարծէ՞ք, ըսաւ պատաւ կոմսուհին որ այլեւ

դէմ դնելու միտք չունէր :

— Զինքը չէ՞ք ճանչնար :

— Աստուած իմ, ո՛չ :

— Գէշը հող է :

— Վա՛յ . . . :

— Կարծեմ ան վարկ ունի :

— Ո՛հ, այո՛, վարկ ունի, բայց զինքը բնաւ տեսած չեմ :

— Ոչ ալ իր Ծօն քո՞յրը :

— Ո՛չ ալ զայն :

— Եւ ոչ ալ իր Պիշի քո՞յրը :

— Ո՛չ :

— Հապա իր Ժանն եղբա՞յրը :

— Ո՛չ :

— Բայց վերջապէս իր Զամօր խափշիկը կը ճանչնաք, այնպէս չէ՞, ախիկն կոմսուհի :

— Ինչպէ՞ս, խափշիկը մի :

— Այո՛, խափշիկը մեծ ազդեցութիւն ունի :

— Այն փոքրիկ ազեղ կենդանի՞ն որ հազուած սեւ շունի մը կը նմանի և որուն կեդանազիրը Բօն-Նէօֆի կամուրջին վրայ կը ծախեն :

— Ծի՛շտ ալ ան :

— Ե՞ս ճանչնամ այդ սեւ շունը, վսեմափայլ տէր, գոչեց կոմսուհին իր արժանապատուութիւնը վերաւորուած զգալով : Բայց ես ի՞նչպէս կրնամ ճանչնալ զայն :

— Օ՛ն, կոմսուհի՛, կը տեսնեմ որ ձեր հողերը ձեռք անցընել չէք ուզեր :

— Ի՞նչպէս :

— Որովհետեւ Զամօրը կ'ատէք :

— Բայց Զամօր ի՛նչ կրնայ ընել այս գործին մէջ :

— Դատը ձեզի շահեցնել կուտայ, ա՛հա՛ անոր ընելիքը :

— Ա՞ն . . . , ան Մօզամպիկցի՞ն դատս ինձ շահեցնել պիտի տայ : Բայց ի՞նչպէս, կ'աղաչեմ, ըսէք :

— Իր տիրուհիին ըսելով որ հաճոյք մը կը զգայ եթէ դուք ձեր դատը շահիք : Գիտէ՞ք ազդեցութիւնները . . . : Զամօր ի՛նչ որ ուզէ ընել կուտայ իր տիրուհիին և տիրուհին ալ ի՛նչ որ ուզէ ընել կուտայ թագաւորին :

— Սըւոր չըսէ՞ք որ Զամօրն է Գաղիան կառավարողը :

— Հը՛մ, Զամօր մեծ ազդեցութիւն ունի, և ես՝ օրինակի համար՝ կը նախընտրեմ իշխանուհիին հետ արուել . . . քան թէ Զամօրի հետ :

— Յիսուս Քրիստոս, գոչեց տիկին տը Պէարն, եթէ ինձ այդպիսի խօսքեր ընողը Ձեր վսեմութեան նման լըջամիտ մէկը չըլլար . . . :

— Է՛հ, տիկին, ասոնք խօսողը միայն ես չեմ՝ այլ ամէն մարդ : Դուքսերուն և ժողովականներուն հարցուցէք թէ Մարլի կամ Լիւսիէն գացած աստեղնին Զամօրի բերնին համար շաքարեղէն և ականջներուն համար մարգարիտներ տանելու կը մոռնա՞ն : Ան որ ձեզի հետ կը խօսի այս պահուն՝ միթէ Գաղիոյ դիւանապետը կամ կը խօսի այս պահուն՝ միթէ Պաղիոյ դիւանապետը կամ անոր մօտ բան մը չէ՞ . լա՛ւ ուրեմն, ի՞նչ գործով կը կարծէք որ զբաղած էի ձեր եկած աստեղը : Կատալարչական հրովարտակներ կը պատրաստէի Զամօրի համար :

— Կառավարչական հրովարտակնե՞ր :

— Այո՛, Պ. տը Զամօր Լիւսիէնի կառավարիչ անուանուեցաւ :

— Այն տիտղո՞սը որով վարձատրուեցաւ Պ. տը

Պէտարն կոմսը քսան տարի ծառայելէ վերջ մ'իայն :

— Որ Պրուայի գլխակին կատարարիչ անուանուեցաւ այո՛, ճիշդ է :

— Ի՞նչ խայտառակութիւն, գոչեց պատաւ կոմսուհին . բայց ինքնակալութիւնը կորսուեցա՞ւ ուրեմն :

— Եթէ ոչ կորուած՝ գոնէ ծանր հիւանդ է, կոմսուհի, և յայտնի է որ մահամերձ հիւանդէ մը մարդ կրցածը կը քաշէ :

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, բայց գոնէ հիւանդին մօտենալուն մէկ ճարը գտնելու է :

— Գիտե՞ք ձեզի ի՞նչ պէտք է արկին Տիւպարիէն լաւ ընդունելութիւն գտնելու համար :

— Ի՞նչ պէտք է :

— Պէտք է որ այս հրովարտակը իր խափշիկին տանելու համար ընդունուիք Գործը իրեն բանալու համար որքա՛ն սքանչելի միջոց մըն է անիկայ :

— Այնպէ՞ս կը կարծէք, վսեմափայլ տէր, կմկմաց կոմսուհին սրտաբեկ :

— Ապահով եմ, բայց . . .

— Խնդրեմ, շարունակեցէք, վսեմափայլ տէր :

— Կոմսուհին մարդոցմէն մէկը չէ՞ք ճանչնար :

— Ո՛չ, բայց Ձեր վսեմութիւնը ճանչնալու պատիւը ունիմ :

— Է՛հ, ե՞ս . . .

— Այո՛ :

— Ես չեմ համարձակիր :

— Օ՛ն, ստուգիւ բազմը ինձ համար բան մը ընել չուզեր, ըսաւ խեղճ պատաւ կոմսուհին բոլոր այս ընտրութիւններէն ա՛լ համբերութիւնը հատած : Ձեր վսեմութիւնը նմանը չտեսնուած ընդունելութիւն մը կ'ընէ ինձ : Շնորհակալութիւն առ այդ : Իայց այժմ ես՝ Պէտարն

մը՝ ոչ միայն ստիպուած եմ երթալ պէտք եղած յարգանքը մատուցանել արկին Տիւպարիի՝ անորմէ ընդունուելու համար, այլև յանձնակատարն ըլլալու ստիպուականութեան մէջ կը գտնուիմ տա ստակալի խափշիկին՝ որուն կոնակին կից մը տալով չարտի պատուէի՝ եթէ փողոցին մէջ անոր հանդիպէի . ա՛ս էր պակաս : Տգեղ կապիկի մը առջև իսկ չեմ կարող ելնել առանց անոր յանձնակատարն ըլլալու :

Պ. տը Մօրբու կը սխալը կգալը շոյել և գոզցես բան մը կը փնտուէր, երբ յանկարծ բարապանը ծանոյց :

— Պ. դերկոմս Ժան Տիւպարի :

Գիւանապետը այս լսելուն պէս՝ ձեռքերը իրար վարկաւ ի նշան ցնծութեան, իսկ կոմսուհին թիկնաթոռին վրայ ինկաւ խնկարոյց :

— Հիմա՛յ ալ ըսէք որ բազմը ձեզի չօղնեմ, արկին, գոչեց գիւանապետը : Ո՛հ, կոմսուհի, ընդհակառակը, երկինք ձեր տեղը կը սրայքարի :

Ապա, առանց սպասելու որ խեղճ պատաւին ապշութիւնն անցնի, բարապանին գտնալով ըսաւ .

— Են՛քս մտցուր :

Բարապանը մեկնեցաւ և վայրկեան մը վերջը վերադարձաւ առաջնորդելով մեր ծանօթներէն Ժան Տիւպարին՝ որ թիւը կապուած ներս մտաւ :

Սովորական բարեւներէն ետքը, երբ կոմսուհին ինչ ընելիքը առանց գիտնալու ստքի կ'ելնէր մեկնելու համար և երբ գիւանապետն ալ գլխովը շարժում մը ընելով կը բարեւէր կոմսուհին՝ հասկցնելու համար թէ ունկընդրութիւնն աւարտած էր, դերկոմսը ըսաւ .

— Ներեցէք, վսեմափայլ տէր, ներեցէք, արկին, ձեզ անհանգիստ ըրի, ներեցէք ինձ : Մի՛ մեկնիք, արկին

կին, կ'ազաչեմ . . . : Նորին վսեմութեան հաճութեամբը միայն երկու խօսք ունիմ իրեն :

Կոմսուհին նստաւ առանց ազաչանքի սպասելու . սիրտը ուրախութեան մէջ կը լողար ու կը արօփէր :

— Բայց թերեւս ձեզ կը նեղեմ, պարոն, կակազեց կոմսուհին :

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ : Միայն երկու խօսք ունիմ Նորին վսեմութեան, իր թանկագին ժամերէն տասը վայրկեան, այսինքն բողոք մը ընելու համար պէտք եղած ժամաւ նակը պիտի գողնամ :

— Բողոք մը ըսիք, հարցուց դիւանապետը Պ. Տիւ պարիի :

— Մարդասպանութիւն մը, վսեմախայլ տէր, մարդասպանութիւն մը : Կը հասկնաք հարկաւ, այսպիսի գործեր չեմ կրնար թողուլ որ կատարուին առանց բողոք բանալու : Թող մեզ անարգեն, երգեն և դրպարտեն, պա՛հ, ասոնցմով մարդ չմեռնիր, բայց թող մեզ չխողխողեն, չմորթին . նզովի՛ց արմատ, մարդ ասո՛վ կը մեռնի :

— Բացատրեցէք, պարոն, ըսաւ դիւանապետը կեղծ սոսկումով մը :

— Հի՛մայ . բայց տիկինին ունկնդրութի՞ւնը կ'ընդմիջեմ արդեօք :

— Տիկին տը Պէտրն կոմսուհին, ըսաւ դիւանապետը ժանի ներկայացնելով զայն :

Տիւպարի շնորհալի կերպով մը ետ քաշուեցաւ յարգանք մատուցանելու համար, կոմսուհին ալ նոյն շարժումը ըրաւ : Երկուքն ալ իրար բարեւեցին արքունական սովորութեանց համեմատ :

— Ձեր գործին նայեցէք, պարոն : Իմս դրամական

խնդիր մըն է, բայց քանի որ ձերը պատուոյ կը վերաբերի, առաջնութիւնը պէտք է ձեզի տալ :

— Տիկին, ըսաւ դերկոմսը, ձեր շնորհալի թոյլտուութենէն օգուտ պիտի քաղեմ :

Եւ իր գործը պատմեց դիւանապետին՝ որ ուշի ուշով զայն մտիկ ըրաւ :

— Վկաներու պէտք ունիք, ըսաւ Պ. տը Մօբբու պահ մը լուռ կենալէ վերջը :

— Ո՛հ, գոչեց Տիւպարի, գիտեմ որ գուք արդարակորով դատաւոր մըն էք և միայն անժխտելի ճշմարտութիւնը ձեր վրայ ազդեցութիւն կ'ընէ : Լա՛ւ ուրեմն, վկաներ պիտի գտնուին . . .

— Վսեմախայլ տէր, արդէն մէկը գտնուած է, ըսաւ կոմսուհին :

— Ո՞վ է ան, հարցուցին միաբերան դերկոմսն ու Պ. Մօբբու :

— Ես, ըսաւ կոմսուհին :

— Դո՞ւք, տիկին, ըսաւ դիւանապետը :

— Մտիկ ըրէք, պարոն, դէպքը Շօտէի գիւղին մէջ տեղի ունեցած չէ՞ :

— Այո՛, տիկին :

— Կայարանին առջեւ :

— Այո՛ :

— Լա՛ւ ուրեմն, ես ձեր վկան կ'ըլլամ : Ոճիրին գործուէն երկու ժամ ետքը հոնկէ անցայ :

— Իրա՞ւ, տիկին, ըսաւ դիւանապետը :

— Ո՛հ, մեծ բարիք մը կ'ընէք ինձ, ըսաւ ժան :

— Ապացոյցն ալ սա է որ բոլոր աւանին մէջ այս դէպքը կը պատմուէր, շարայարեց կոմսուհին :

— Զգուշացէ՛ք, զգուշացէ՛ք, բացազանչեց դերկոմ-

սը, եթէ այս գործին մէջ ինձ ծառայելու հուանիրք, գիացած եղէք որ Շուազէօլները ձեզ զըջացնելուն միջոցը պիտի գտնեն :

— Պահ, աւելցուց զիւանապետը, ստիկոս չստ գիրին բան մըն է անոնց համար, քանի որ տիկին կոմսուհին գատ մը ունի այժմ որուն շահուելը չստ երկբայիկի կը թուի ինձ :

— Վսեմախ'յլ աէր, վսեմախ'յլ աէր, բացազանչեց պատաւը ձեռքերը ձակախն տանելով, անդունդէ անդունդ կը գլորորիմ :

— Քիչ մը պարոնին կոթնեցէք, ըստ զիւանապետը կէս ձայնով մը, կորովի բազուկ մը պիտի երկարէ ձեզի :

— Միայն մէկ բազուկ, ըստ Տիւպարի ժպտելով : Բայց ես կը ճանչնամ մէկը որ երկու հաստատու երկայն բազուկներ ունի և պատրաստ է զանոնք ձեզ ընծայել :

— Ո՛հ, պարոն զերկումս, լրջօրէ՞ն կը խօսիք, գոչեց պատաւը :

— Է՛հ, ծառայութեան փոխարէն ծառայութիւն, տիկին : Ես ձերը կ'ընդունիմ, դուք ալ իմս ընդունեցէք, ընցաւ դնաց :

— Ընդունի՛մ մի, պարոն . . . , ի՛նչ կ'ըսէք, չափազանց երջանկութիւն մըն է ատիկայ ինձ համար :

— Լա՛ւ ուրեմն, տիկին, ես հիմայ շտտակ քրոջս պիտի երթամ, հաճեցէք իմ կառքս նստիլ . . . :

— Առա՞նց ո եւ է պատրուակի, ատա՞նց պատրաստութեան : Ո՛հ, պարոն, անտկնկալ այցելութիւն մը տալու չպիտի համարձակիմ :

— Պատրուակ մը ունիք, տիկին, մէջ բերաւ զիւանապետը Զամօրի հրովարտակը կոմսուհին ձեռքերուն

մէջ տանցնելով :

— Պարոն զիւանապետ, դուք իմ բարերար Ատուածս էք, իմ դուք, պարոն զերկումս, Գազիոյ աղնուականներուն ծաղիկն էք, գոչեց կոմսուհին :

— Չեղի ծառայելու պատրաստ եմ, կրկնեց զերկումսը ճամբան ցուցնելով կոմսուհին՝ որ թոչունի թեւեր աւած կը թռչէր :

— Քրոջս կողմէն չնորձակալ եմ, սիրելի մօրեղբոր որդի, ըստ ժան ցած ձայնով Պ. աը Մօրբուի : Բայց դերս գէշ չկատարեցի, հէ՛ :

— Անթերի, պատասխանեց Մօրբու : Բայց անդին իմ կատարած դերս պատմելու չմտնաս : Զգուշացէք, պատաւը չստ նրբամիտ է :

Այս միջոցին կոմսուհին ետին կը դառնար : Երկուքն ալ խոնարհեցան յարգական ողջոյն մը տալու համար իրարու :

Արքայական կազմածներով շքեղ կառք մը կը սպասէր ասնդուխին ստորտը :

Կոմսուհին կառքին մէջ տեղաորուեցաւ հպարտութեամբ փքացեալ :

Ժանի մէկ նշանին վրայ կառքը մեկնեցաւ :

Թագաւորին տիկին Տիւպարիի սենեակէն դուրս ելնելէն ետքը՝ ինչպէս որ Լուի Ժե իմացուցեր էր դուրսը սպասող պալատականներուն՝ կոմսուհին առանձին մնացեր էր Շօնի և իր եղբօրը հետ, կարճատեւ և ցուրտ ընդունելութիւն մը ընելէ վերջ :

Ժան, նախ երեւան չէր ելած՝ որպէս զի իր վէրքին ինչ վիճակի մէջ ըլլալը որոշապէս չվստոյւի, որ իրա-

կանութեան մէջ թեթեւ բան մըն էր :

Ընտանեկան խորհուրդը նիստ գումարած և արդիւնքը սա եղած էր որ՝ կոմսուէին փոխանակ Լիւսիէն երթալու՝ Բարիզ երթալու համար ճամբայ ելեր էր :

Տիկին Տիւպարի, հոն, վալուա փողոցին մէջ, փոքրիկ ապարանք մը ունէր որ այս ընտանիքին բոլոր անդամներուն համար իջեւանի տեղ կը ծառայէր, որովհետեւ անոնց ամէնքն ալ առանց դռել ու դադարի կը ճամբորդէին լեռնէ լեռ ձորէ ձոր՝ երբ գործը այնպէս բերէր կամ երբ զուարճանալ ուզէին :

Կոմսուէին իր տանը մէջ տեղաւորուեցաւ, զիրք մը առաւ և սպասեց :

Սակայն կոմսուէին Բարիզէն անցած ատենը ինքզինքը չէր կրցած զսպիւ և մերթ ընդ մերթ գլուխը կառքին պատուհանէն դուրս հանած էր :

Գեղանի կանանց բնազդումներէն մին է ինքզինքնին ցոյց տալը, որովհետեւ կը զգան թէ տեսնուելու արժանի են :

Կոմսուէին իր գլուխը կառքին պատուհանէն քանի մը անգամ դուրս հանած ըլլալուն համար՝ քսանի չափ այցելուներ իրենց գլուխներն վալուա փողոցի տան դռնէն ներս խօթեցին, ժամը երկուքէն մինչև վեց :

Նախախնամութեան կողմէ բարիք մը եղաւ սա այն հէզ կոմսուէին համար՝ որ առանձին մնացած ատենը տաղաւկէն կը մեռնէր, որ սակայն այս այցելութեանց միջոցին ժամանակը անցուց բամբասելով, տիրելով և պչրելով :

Սէնթ-Էօսթաշ եկեղեցիին մեծ ժամացոյցը ժամը եօթմ ու կէսը կը ցուցնէր երբ գերկոմսը եկեղեցիին առջեւէն կ'անցնէր՝ տը Պէարն կոմսուէին իր քրոջը տանելու

ատեն :

Կառքին մէջ տեղի ունեցած խօսակցութենէն յայտնի եղաւ թէ կոմսուէին կը վարանէր այսպիսի բարեպատեն բաղդէ մը օգուտ քաղելու :

Գերկոմսը պաշտպանի մը արժանաւորութիւնը կը կեղծէր և անդադար կը զարմանար այն տարօրինակ դիպուածին վրայ՝ որով տիկին տը Պէարն տիկին Տիւպարիի հետ պիտի ծանօթանար :

Իսկ տիկին տը Պէարն անդադար փոխ-դիւանապետին քաղաքավարութիւնն ու մարդասիրութիւնը կը գովէր :

Ձիերը՝ երկու կողմէն շոյուած այս կեղծաւորութեանց առանց ականջ կախելու՝ քառամբակ կ'արշաւէին :

Ժամը ութին քանի մը վայրկեան մնացած կառքը կոմսուէին դրանը առջեւը կանգ առաւ :

— Ներեցէք որ տիկին Տիւպարիի իմաց ամ իրեն վերապահուած պատիւը, ըստ գերկոմսը պատուը սպասման սրահին մէջ թողլով :

— Ո՛հ, պարոն, իրաւունք ունիք, չեմ կրնար հանդուրժել որ անհանգիտ ըլլայ տիկին կոմսուէին, ըստ տիկին տը Պէարն :

Ժան՝ գաւթիին պատուհանէն իր գալուտը գիտող Չամօրի մօտենալով՝ ցած ձայնով հրաման մը տուաւ անոր :

— Ո՛հ, որքան գեղեցիկ է սա խալչիկը, գոչեց կոմսուէին : Ձեր տիկին քրո՞ջն է :

— Այո՛, տիկին, իր սիրելիներէն մին է, պատասխանեց գերկոմսը :

— Կը շնորհաւորեմ զինքը :

Գրեթէ նոյն վայրկեանին սպասման սրահին երկու

դռները բացուեցան և դրանիկ մը ար Պէարն կոմսուհին
տիկին Տիւպարի ունկնդրութեան մեծ գահլէճը մտցուց :

Մինչդեռ կոմսուհին հասաչելով այս հանգստաւէտ ու
պերճաշուք բնակարանին զարդերը աչքէ կ'անցընէր,
ժան Տիւպարի իր քոյրը զանելու գացեր էր :

— Ա՞ն է, հարցուց կոմսուհին :

— Միտայն ու սակորովը :

— Բանէ մը կը կտակածի՞ :

— Եւ ոչ մէկ բանէ :

— Իսկ Փո՞խը . . . :

— Անթերի կերպով կատարեց իր ատարելութիւնը :
Ամէն բան մեր կողմէն կը գաւազրէ, սիրելի բարեկա-
մուհիս :

— Շատ ջնանք իրարու քով՝ որպէս զի-ջեւայ կատ-
կածի :

— Իբաւունք ունիք, որովհետեւ շատ խորամանկ
կ'երեւի ինձ : Ո՞ւր է Շօնը :

— Ինչպէս որ գիտէք, վէրասյլ մնաց :

— Չըլլա՞յ որ անոր երեսայ :

— Կատիւ պատուիրեցի իրեն :

— Օ՞ն ուրեմն, ալ չիմաց եկէք, տիկին իշխանուհի :
Տիկին Տիւպարի իր ներքնասնակին գուռը հրեց և
նորս մտաւ :

Այս երկու գերատանուհիները, որոնց միակ փախաքը
իրարու հաճելի երեսնալն էր, աքալլաի պարագայի մը
մէջ արքունական սովորութեանց համեմատ ինչ ձեւեր
որ հարկ էր ընել, ամէնքն ալ կատարեցին :

Նոյն տիկին Տիւպարի խօսք ատնելով ըստ .

— Արդէն շնորհակալ եղայ եզրօրս, տիկին, ձեր այ-
ցելութիւնը ինձ հայթայթելուն համար, այժմ ձեզ շնոր-

հակալ կ'ըլլամ՝ ինձ այցելութիւն տարու ձանձրութիւնը
ազնուարար յանձն առած ըլլալնուդ համար :

— Եւ ես, տիկին, պատասխանեց գատախաղուհին
հմայուած, չեմ գիտեր թէ ի՞նչ բառ գործածեմ իմ բոլոր
եքախտաղխութիւնս յայտնելու համար ձեր ինձ ըրած
բազմաշնորհ ընդունելութեան մասին :

— Տիկին, ըստ կոմսուհին յարցական ձեւով մը,
ինձ պարտականութիւն կը համարեմ ձեզ նման ազ-
նուական տիկնոջ մը արամաղրութեան ներքեւ գնն
ինքզինքս՝ եթէ բանի մը մէջ օգտակար կրնամ ըլլալ
իրեն :

Եւ սովորական եզած երեք յարգանքը երկու կողմէն
կատարուելէ վերջ, Տիւպարի կոմսուհին թիկնաթոս մը
ցոյց տուաւ տիկին ար Պէարնի և ինքն ալ նստաւ :



Ա.

ԶԱՄՕՐԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

— Խօսեցէք, տիկին, ականջն ձեզի է, ըսաւ տիկին՝ Տիւպարի աը Պէարն կոմսուհին :

— Ներեցէք, քոյր իմ, ըսաւ ժան որ ոտքի կեցեր էր, ներեցէք ձեզ յայտնել թէ տիկինը խնդիրք մը ունենալուն համար եկած չէ . տիկնոջ մխոքէն անգամ չէր անցներ այդպիսի բան մը : Պ. զիւանապետը յանձնարարութիւն մը ըրած է տիկնոջ, ահա ամէնքը ասկէ կը բողկանայ :

Տիկին աը Պէարն երախտագիտական ակնարկ մը ուղղեց ժանի, և կոմսուհին սուսաւ փոխ-զիւանապետին ստորագրած հրովարտակը որով Լիւսիէն՝ արքունի դղեակ կը հռչակուէր և Զամօր՝ անոր կառավարիչը :

— Ուրեմն ե՛ս ձեզի շնորհապարտ եմ, տիկին, ըսաւ տիկին Տիւպարի ակնարկ մը նետելով հրովարտակին վրայ, և եթէ ես ալ ձեզի հաճելի ըլլալու առիթը գտնելու երջանկութիւնն ունենայի . . .

— Ո՛հ, շատ զիւրին բան մըն է ատկեայ, տիկին, գոչեց գատախազուհին աշխուժիւ, որուն ի տես աարապայման կերպով ուրախացան երկու շահակիցները :

— Ի՞նչպէս, տիկին : Ըսէք, խնդրեմ :

— Կը յուսամ որ իմ անունա բոլորովին անձանթ չէ ձեզ . . . :

— Ի՛նչ ըսել է, Պէարն մը ինձ անձանթ ըլլա՛յ . . . :

— Լաւ ուրեմն, գուցէ լսած էք դատի մը վրայ խօսուիլը որով ընտանիքիս ստացուածքը անորոջ վիճակի մը մէջ կը մնայ :

— Զոր կարծեմ Պ. Սալիւսեանք գրաւել կ'ուզեն, այնպէս չէ՞ :

— Աւա՛ղ, այո՛, տիկին :

— Այո՛, այո՛, այդ գործը գիտեմ, ըսաւ կոմսուհին Անցեալ գիշեր Նորին վեհափառութիւնը այդ գործին վրայ կը խօսէր մօրեղբորորդւոյս՝ Պ. աը Մօրըուի հետ :

— Նորին վեհափառութիւնը, գոչեց գատախազուհին, Նորին վեհափառութիւնը իմ գատիս վրայ խօսեցաւ :

— Այո՛, տիկին :

— Եւ ի՞նչ կարծիք յայտնեց :

— Աւա՛ղ, հէ՛զ կոմսուհի, բացազանչեց իր կարգին Տիւպարի գլուխը օրելով :

— Ո՛հ, կորսուած դատ մը, այնպէս չէ՞, կակաղեց պառաւ գատախազուհին տաղնապի մատնուած :

— Ծշմարտութիւնը ըսելով այդպէս է, տիկին :

— Նորին վեհափառութիւնը այդպէ՞ս ըսաւ :

— Նորին վեհափառութիւնը առանց վճիռ տալու կը կարծէր թէ այդ ստացուածքը Սալիւսեան ընտանիքը արդէն շահած էր :

— Ո՛հ, Աստուած իմ : Տիկին, եթէ Նորին վեհափառութիւնը գործին տեղեակ ըլլար, եթէ գիտնար թէ ընտանիքիս ստացուածքը անոնց թողուած է փոխարժէքը վճարուած պարտամուրակի մը փոխարէն . . . այո՛, ժօզ. Պալա., քիւ 13—30, հաս.Բ., Բ.հր.Ն.Բ.

տիկին, վճարուած, երկու հարիւր հազար ֆրանքը հատուցուած է ։ Իրաւ, ընկալազիր մը չունիմ, բայց բարոյական փաստեր ունիմ, և եթէ կարելի ըլլար դատական փողովին առջեւ դատը անձնապէս վարել, մանրամասն տեղեկութիւններով պիտի կարենայի ապացուցանել թէ . . .

— Մանրամասն տեղեկութիւններով, ընդմիջեց կոմսուէին որ տիկին աը Պէարնի ըսածներէն բան մը չհասկնալով հանդերձ՝ ամենալուրջ ուշադրութեամբ զայն մտիկ ընել կը կեղծէր ։

— Այո՛, տիկին, մանրամասն տեղեկութիւններով ։

— Մանրամասն տեղեկութիւններով տրուած ապացոյցներն ընդունելի են, մէջ բերաւ ժան ։

— Ո՛հ, կը կարծէ՞ք, պարոն զերկոմս, գոչեց պատուը ։

— Այնպէս կը կարծեմ, պատասխանեց զերկոմսը լրջօրէն ։

— Լաւ ուրեմն, մանրամասն տեղեկութիւններով պիտի ապացուցանէի թէ այդ երկու հարիւր հազար ֆրանքի պարտամուրհակը, որ մինչեւ այսօր բաղադրեալ տուկոսով մէկ միլիոնէ աւելի դրամազուլուխ մը պիտի ներկայացնէր, 1406 թուականը կը կրէ և վճարուած է կաթթօն Դ կոմս աը Պէարնի կողմէ, մահուան անկողնին մէջ, 1416ին, որովհետեւ իր ձեռքովը զրած է իր կտակին մէջ՝ « Մահուան անկողնիս մէջ ոչինչ կը պարտիմ մարդկան և պատրաստ եմ Աստուծոյ առջեւ ելնելու... »

— Ուրեմն ։

— Բացորոշ է ։ Քանի որ մարդու պարտք չունէր, ըսել է թէ Սալիստանց ունեցած պարտքը վճարած էր, ապա թէ ոչ պիտի ըսէր՝ « Երկու հարիւր հազար ֆրանք

կը պարտիմ » փոխանակ ըսելու՝ « Ոչինչ կը պարտիմ »

— Ասոր վրայ տարակոյս չիկայ, ընդմիջեց ժան ։

— Բայց ուրիշ ապացոյց չունի՞ք ։

— Կաթթօն Դ-ի խօսքէն ուրիշ ոչինչ, տիկին ։

— Մինչդեռ ձերին ոտխնեքը պարտամուրհակ մը ունին ձեռքերնին ։

— Այո՛, և ահա առ է որ ապուրին մէջ ջուր կը խառնէ ։

Կասկած չիկայ որ տիկին աը Պէարն իր տեսակէտովը կը նկատէր իրերը ։

— Հետեւաբար համոզուած էք թէ Սալիստանց պահանջը վճարուած է, այնպէս չէ՞, տիկին, ըսաւ ժան ։

— Այո՛, պարոն զերկոմս, համոզուած եմ ։

— Է՛հ, զիտէ՞ք, ժան, տիկին Պէարնի այս մանրամասն տեղեկութիւնը իրերուն վիճակը հիմնովին կը փոխէ, մէջ բերաւ կոմսուէին խորամանկութեամբ և նշանակալից շարժումով մը հղբօրը գառնալով ։

— Այո՛, տիկին, հիմնովին, կրկնեց ժան ։

— Անչո՛ւշտ ի նպատ ինձ, այնպէս չէ՞, տիկին, շարայարեց կոմսուէին ։ Կաթթօն Դ-ի կտակին բառերը բացորոշ են՝ « Ոչինչ կը պարտիմ մարդկան ։ »

— Ոչ միայն բացորոշ՝ այլ նաեւ մտքի մօտ են, ըսաւ ժան ։ Մարդու պարտք չունի հղբը, ըսել է պարտքը վճարած էր ։

— Այո՛, ըսել է պարտքը վճարած էր, արձագանգեց տիկին Տիւպարի ։

— Ո՛հ, տիկին, երանի թէ խմ դատաւորս դո՛ւք ըլլայիք, գոչեց պատու կոմսուէին ։

— Ատենօք այսպիսի խնդրի մը համար դատարան չէին դիմեր, այլ Աստուծոյ դատաստանը վերջ կուտար

գործին, ըսաւ ժան դերկոմսը : Գալով ինձ, դատին զե-
զեցկութեանը վրայ այնքան վատահութիւն ունիմ որ
եթէ այդպիսի միջոց մը ի գործ դրուէր՝ կ'երդնում որ
տիկինը իր դատը պիտի շահէր :

— Ի՞նչ կ'ընէք, պարոն :

— Իրականութիւնը, տիկին :

— Բայց ո՞րն է այդ միջոցը :

— Սուրին միջնորդութիւնը, տիկին :

— Ո՛հ, պարոն դերկոմս :

— Դժբաղդարար, շարայարեց դերկոմսը արհամար-
հական հառաչանք մը արձակելով, այդ երանելի դարուն
մէջ չենք ապրիր, և ազնուական մարդիկ այժմ ի-
րենց իրաւունքները պաշտպանելու համար, պարտաւոր
են իրենց դատը խել մը անպիտաններու դատաստանին
ենթարկել, որոնք բան մը չեն հասկնար այսպիսի բա-
ցորոշ խօսքէ մը « Ոչինչ կը պարտիմ մարդկան : »

— Մտիկ ըրէք, սիրելի եղբայր, այդ խօսքը գրուե-
լէն ի վեր երեք հարիւր տարի անցած է, պէտք չէ մտ-
նալ թէ ասով կտակը կրնայ իր արժէքը կորսնցուցած
ըլլալ :

— Փոյթ չէ, փոյթ չէ, ըսաւ ժան, ևս համոզուած
եմ որ եթէ տիկինը իր գործը անձամբ պարզէ Նորին
վեհափառութեան, ինչպէս որ այժմ մեզի ըրաւ . . .

— Պիտի կարենայի համոզել զայն, անպէս չէ՞, պա-
րոն :

— Վստահարար :

— Այո՛, բայց ի՞նչպէս կրնամ խօսիլ Նորին վեհա-
փառութեան հետ :

— Ատոր համար պէտք է որ օր մը Լիւսիէնի դըդ-
հակա գալու պատիւը ընէք ինձ . Նորին վեհափառու-

թիւնը յաճախ հոն կ'այցելէ . . .

— Այո՛, սիրելիս, բայց բոլոր ասոնք դիպուածէն
կախում ունին, ընդմիջեց դերկոմսը :

— Դերկոմս, լաւ զիտէք որ շատ անգամ դիպուա-
ծին կը յանձնեմ ինքզինքս, պատասխանեց կոմսուհին
յանկուցիչ ժպիտով մը :

— Սակայն դիպուածը կրնայ բերիլ որ տիկինը ութը
կամ տասներեքնոց օր և կամ երեք շաբաթ վերջը միայն
հանդիպի Նորին վեհափառութեան :

— Աս ալ ճիշդ է :

— Արդ, իր դատը երկուշաբթի կամ երեքշաբթի
պիտի տեսնուի :

— Երեքշաբթի, պարոն :

— Եւ այսօր ուրբաթ է :

— Է՛հ, ուրեմն ա՛լ պէտք չէ յոյս դնել անոր վրայ :

ըսաւ տիկին Տիւպարի յուսահատութիւն կեղծելով :

— Չա՛ր աստանայ : Ի՞նչ ընելու է ուրեմն, զոչեց
դերկոմսը մտահոգութիւն կեղծելով :

— Վէրսայլի մէջ ունկնդրութիւն մը ի՞նչպէս կ'ըլ-
լայ, հարցուց երկչոտութեամբ տիկին տը Պէարն :

— Ո՛հ, չպիտի կրնաք ընդունուիլ :

— Ձեր միջնորդութեամբն իսկ, տիկին :

— Իմ միջնորդութիւնս օգուտ չպիտի ընէ : Նորին
վեհափառութիւնը պաշտօնական գործերէ կը զզուի, և
այս միջոցին միայն մէկ բանով զբաղած է :

— Ժողովներո՞ւն գործովը, հարցուց տիկին Պէարն :

— Ո՛հ, ներկայացմանս խնդրովը :

— Վա՞յ . . . :

— Որովհետեւ, տիկին, հակառակ Պ. տը Շուազէօլի
ընդդիմութեան, հակառակ Պ. տը Բրասլէնի նիւթած

դաւերուն և հակառակ տիկինն տը կրտսեանի ճարա-
հատ զիմուններուն, թագաւորը սրտչեց սը ներկայա-
ցումս կատարուի :

— Ատիկայ չէի գիտեր, ըսաւ դատախազունին :

— Այո՛, որոշուած է, աւելցուց ժանն :

— Ե՛րբ տեղի պիտի ունենայ ձեր ներկայացումը,
տիկինն :

— Մտտերս :

— Թագաւորը կ'ուզէ որ իշխանուէրին ժամանումէն
առաջ տեղի ունենայ ներկայացումը, որպէս զի քոյրս
Գօնրիէնի հանդէսներուն ներկայ գտնուելու համար
Նորին Վեհախառութեան կարենայ ընկերանալ :

— Կը հասկնամ : Ըսել է տիկինը ներկայացուելու
վրայ է, ըսաւ կոմսունին երկչոտութեամբ :

— Այո՛ : Տիկինն սեպուէն ա' Ալօնի . . . : Կը ձանչ-
նա՞ք տիկինն սեպուէն ա' Ալօնիին :

— Ո՛չ, պարոնն : Աւա՛ղ, ա՛լ մարդ չեմ ձանչնար .
քան տարի է որ արքունիքէն հեռացած եմ :

— Լաւ ուրեմն, տիկինն սեպուէն ա' Ալօնի իրեն կըն-
քամայր պիտի ըլլայ : Թագաւորը բարեօք կը ընու այդ
սիրելի տիկինը . ամուսինը արքունի սենեկապան է,
աղան պիտի մտնէ պահապան զինուորներու ջոկատը՝
որուն առաջին տեղակալութիւնը իրեն խոտացուած է .
սեպուէնութեան կոմսութեան ատոյճանին բարձրացաւ .
արքունի գանձատան վրայ արուած մուրհակները քաղա-
քին բաժնետմսերուն հետ փոխանակուեցան, և ներկա-
յացման իրիկունն ալ կանխիկ պիտի ստանայ քսան հա-
զար սկուտ : Հետեւաբար անհամբերութեամբ ներկայաց-
ման օրին կը սպասէ :

— Հասկցայ, ըսաւ տը Պէարն կոմսունին չնորհալի-

ժպխտով մը :

— Բայց միտքս բան մը ինկաւ . . . , գոչեց յան-
կարծ ժանն :

— Ի՞նչ, հարցուց տիկինն Տիւպարի :

— Ի՛նչ դժբաղդութիւն, աւելցուց ժանն թիկնաթո-
ռէն ցատկելով, ի՛նչ դժբաղդութիւն որ ութը օր առաջ
չհանդիպեցայ տիկինին :

— Ի՞նչ կայ որ :

— Չէ՞ք հասկնար, եթէ անոր հանդիպէի, տիկինն սե-
պուէն ա' Ալօնիի հետ չէինք կապուեր :

— Սիրելիս, ըսածէդ բան մը չեմ հասկնար, ըսաւ
տիկինն Տիւպարի :

— Չհասկցա՞ք :

— Ո՛չ :

— Գրաւ կը դնեմ որ տիկինը հասկցաւ :

— Ներեցէք, պարոնն, պարսպ տեղը գլուխս կը ձա-
թեցնեմ . . . , ըսաւ տիկինն տը Պէարն :

— Ութը օր առաջ կնքամայր չունէիք, այնպէս չէ՞ :

— Այո՛ :

— Լաւ ուրեմն, տիկինը . . .

— Շարունակեցէք, պարոնն :

— Արդեօք չա՞տ առաջ կ'երթամ :

— Ո՛չ, պարոնն, շարունակեցէք :

— Տիկինը կրնար ձեզի կնքամայր ըլլալ, և կասկած
չիկայ որ թագաւորը տիկինն ա' Ալօնիի ըրածը տիկնոջ
ալ կ'ընէր :

Գատախազունին աչքերը տարապայման կերպով բա-
նալով գոչեց .

— Աւա՛ղ :

— Ո՛չ, եթէ դիտնայիք թէ թագաւորը որքան վե-

հանձնութեամբ շնորհեց անոր բոլոր այդ բարիքները :
 Իրմէ խնդրել հարկ չեղաւ : Իրեն ըստելուն պէս թէ
 տիկին տ'Ալօնեի ժաննի կնքամայր պիտի ըլլար՝ « Լաւ
 է, ըսաւ, ա՛լ ձանձրացայ տա խարերայ կիներէն որոնք
 ինձմէ աւելի հպարտ կ'երեւին . . . : Կոմսուհի, այդ կի-
 նը ինձի պիտի ներկայացնես, այնպէս չէ՞ : Դժուարին
 դատ մը, անվճար թողած պարտք մը, սնանկութիւն
 մը չունի՞ . . . : »

Կոմսուհիին աչքերը հետզհետէ առտարոց կերպով կը
 խոշորնային :

— « Միայն բանի մը վրայ կը ցաւիմ, աւելցուց
 թագաւորը », շարայարեց դերկոմսը :

— Ո՛հ, Նորին վեհափառութիւնը ի՞նչ բանի վրայ
 կը ցաւէր արդեօք, հարցուց պառաւ կոմսուհին :

— « Միայն բանի մը վրայ կը ցաւիմ, սա թէ տի-
 կին Տիւպարին ներկայացնելու համար պատմական ա-
 նուն մը կ'ուզէի, ըսաւ թագաւորը : » Այս խօսքերը
 ըսած միջոցին Շարլ Ա.ի պատկերին կը նայէր :

— Այո՛, կը հասկնամ, ըսաւ պառաւ դատախազու-
 հին, Նորին վեհափառութիւնը Տիւպարի-Մօր և Սթիւար-
 թեանց միջև եղած դաշնակցութեան ակնարկած է :

— Ճիշդ է :

— Սակայն երբէք լսած չեմ տ'Ալօնեի անունը, ըսաւ
 տիկին տը Պէարն անխմանալի դիտաւորութեամբ մը :

— Ազնուատոմ ընտանիք մը որ կը ցաւ ինքնու-
 թիւնը պաշտօնական փաստաթուղթերով ապացուցանել,
 ըսաւ կոմսուհին :

— Աստուած իմ, գոչեց յանկարծ ժան դատաւիին
 օգնութեամբը թիկնաթուղթ վրայ կանգնելով :

— Ի՞նչ եղաք, բացազանչեց տիկին Տիւպարի եղբօ-

րը առտարոց շարժուածներուն վրայ չխնդալու համար
 վերջին աստիճան ճիգ թափելով :

— Արդեօք պարոնը մէկ կո՞ղմը ցաւցուց, հարցուց
 պառաւ դատախազուհին հողածութիւն ցոյց տալով :

— Ո՛չ, բան մը ինկաւ միտքս, ըսաւ ժան մեղմիկ
 մը նստելով :

— Ի՞նչ, քիչ մնաց կոնակիդ վրայ պիտի իյնայիր,
 ըսաւ կոմսուհին խնդալով :

— Լաւ խորհուրդ մը ըլլալու է, մէջ բերաւ տիկին
 տը Պէարն :

— Սքանչելի՛ :

— Ըսէք ուրեմն :

— Միայն թէ պակասութիւն մը ունի :

— Ո՞րն է :

— Ձայն գործադրելը անկարելի է :

— Հոգ չէ, ըսէք :

— Բայց կը վախնամ որ վիշտ պիտի պատճառեմ
 մէկու մը :

— Փոյթ չէ, շարունակեցէք, դերկոմս, շարունա-
 կեցէք :

— Մտածեցի որ եթէ տիկին տ'Ալօնեի հազորդուէր
 այն դիտողութիւնը զոր թագաւորը Շարլ Ա.ի պատկե-
 րին նայելով կ'ընէր . . .

— Ո՛հ, անվայել բան մը կ'ըլլայ ատիկայ, դերկոմս :

— Ճշմարիտ է :

— Ուրեմն ալ ատոր վրայ չմտածենք :

Դատախազուհին հառաչանք մը արձակեց :

— Ցաւալի բան, շարայարեց դերկոմսը կեղծ մենա-
 խօսութեամբ մը, գործը ինքնին կը կատարուէր . տի-
 կինը որ մեծ անուն մը ունի և հանձարեղ կին մըն է,

տիկին սեպուհ տ'Ալօնի տնը կ'անցնէր : Դատը կը չափէր, Պ. աը Պէտարնի - որդին տեղակալութիւն մը կը առանար, և, որովհետեւ տիկինը մեծ ծախքեր ըրած է այս դատին պատճառաւ Բարիզ ճամբորդութիւններ ընելով, իրեն հասուցում մը կը տրուէր : Ո՛հ, մարդ իր կենացը մէջ երկու անգամ չպատահիր այսպիսի բազմի մը :

— Աւա՛ղ, իրաւ չպատահիր, բացազանչեց տիկին աը Պէտարն ինքզինքը չկարենալով գտակ :

Ճշմարիտը ըսելով, հէզ գատախազուհիին կացութեան մէջ գտնուողը ո՛վ որ ալ ըլլար՝ անոր պէս պիտի ըսէ՞ր և անոր նման թիկնաթուռին մէջ տրամաբեկ պիտի մնար :

— Է՛հ, կը տեսնէ՞ք, եզբայր իմ, կը տեսնէ՞ք որ տիկինը տխրեցուցիք, ըսաւ տիկին Տիւպարի վշտաբեկ : Ձէր բաւեր իրեն յայտնելս թէ թագաւորէն բան մը չէի կրնար խնդրել ներկայացուելէս առաջ, բաներ մըն ալ դուք աւելցուցիք :

— Ո՛հ, եթէ կարելի ըլլար դատս քանի մը օր յետաձգել :

— Միայն ութը օրը կը բաւէ :

— Այո՛, ութը օրը կը բաւէ, կրկնեց տիկին Պէտարն, ութը օրէն տիկինը ներկայացուած պիտի ըլլայ :

— Այո՛, բայց թագաւորը ութը օրէն Գօնբիէնի Կանդէսներուն ներկայ պիտի գտնուի և իշխանուհին պիտի հասնի :

— Ճիշտ է, ճիշտ է, ըսաւ ժան, բայց . . .

— Ի՞նչ :

— Կեցէք, խորհուրդ մըն ալ . . .

— Ո՞րն է ան, ո՞րը, ընդմիջեց գատախազուհին :

— Ինձ կը թուի թէ . . . այո՛, ո՛չ, այո՛, այո՛ :

Տիկին աը Պէտարն ժանի միալանկները կը կրկնէր անձկութեամբ :

— Այո՛ ըսիք, պարոն դերկոմս :

— Կարծեմ թէ լաւագոյն միջոցը գտայ :

— Ըսէք :

— Մտիկ ըրէք : Ձեր ներկայացուելը տակաւին գաղտնիք մըն է, այնպէս չէ՞ :

— Անշո՛ւշտ, միայն տիկինը . . .

— Ո՛հ, հանգիստ եղէք, գոչեց գատախազուհին :

— Ոչ ոք գիտէ թէ կնքամայր մը գտած էք, շարա-յարեց ժան :

— Անշո՛ւշտ, թագաւորը կ'ուզէ որ լուրը ուսմբի մը պէս պայթի :

— Ուրեմն ա՛լ այս անգամուն ըսելիք չկայ :

— Վատա՞ն էք, պարոն դերկոմս, հարցուց տիկին աը Պէտարն :

— Ա՛լ ըսելիք չկայ, կրկնեց ժան :

Ականջները տնկուեցան և աչքերը բացուեցան :

Ժան իր թիկնաթուռը միւս երկու թիկնաթուռներուն մօտեցուց :

— Հետեւաբար, տիկինն ալ ուրիշներուն նման չզիտէ թէ կնքամայր մը գտած էք և պիտի ներկայացուիք :

— Անշո՛ւշտ, եթէ ինձ չըսէիք՝ չպիտի գիտնայի :

— Դուք, տիկին, մեզ չտեսածէն կ'ըլլաք, հետեւաբար ամէն բանի ալ անտեղեակ : Թագաւորէն ունկընդրութիւն մը կը խնդրէք :

— Բայց տիկին կոմսուհին կը պնդէ թէ թագաւորը պիտի մերժէ :

— Կոմսուհին կնքամայր ըլլալու համար ներկայա-նալով՝ թագաւորէն ունկնդրութիւն մը կը խնդրէք : Կը հասկնաք անշուշտ, կոմսուհին ուրիշ կնքամայր մը

ուշնենալը չզիտնալ պիտի ձեւացնէք : Այսպէսով ձեր աստիճանն ունեցող կնոջ մը կողմանէ բռնուած այս ընթացքը Նորին Վեհափառութեան սիրտը պիտի շարժէ : Նորին Վեհափառութիւնը ձեզ կ'ընդունի, ձեռնէ շնորհակալ կ'ըլլայ, ձեզի կը հարցնէ թէ ի՞նչ կրնայ ընել ձեզ հաճելի ըլլալու համար : Դուք ալ այն աստիճանը գործը կը բանաք և ձեր մանրամասն տեղեկութիւնները յարմար ատենին կը գործածէք : Նորին Վեհափառութիւնը կը հասկնայ, պէտք եղած պատուէրները կուտայ, և ձեր դատը՝ զոր կորսուած կը կարծէք՝ կը շահիք :

Տիկին Տիւպարի հրաբորբոք աչքերով կոմսուհիին կը նայէր : Այս վերջինը հաւանաբար թակարդը նշմարեց :

— Ո՛հ, ես՝ չնչին արարած մը՝ ի՞նչպէս կրնայ ըլլալ որ Նորին Վեհափառութեան . . .

— Կարծեմ այսպիսի պարագայի մը մէջ միայն քիչ մը կամք ունենալը կը բաւէ, ընդմիջեց ժան :

— Եթէ միայն կամքով ըլլար . . ., առարկեց կոմսուհին վարանումով :

— Խորհուրդը զէչ չէ, դիտել տուաւ տիկին Տիւպարի ժպտելով : Բայց գուցէ տիկին կոմսուհին կը խորշի այսպիսի ստախօսութենէ մը՝ մինչև անգամ եթէ վստահ ալ ըլլայ որ իր դատը պիտի շահի :

— Ստախօսութիւն, գոչեց ժան : Ո՛հ, ինչե՛ր ալ կ'ըտէք, ձեզի կը հարցնեմ, ո՞վ պիտի իմանայ այդ ստախօսութիւնը :

— Տիկինը իրաւունք ունի, ըսաւ կոմսուհին՝ յուսալով որ այս հնարքով պիտի կրնայ օձիքը ազատել, և Նախընտրեմ իրական ծառայութիւն մը մատուցանել անկեղծ բարեկամութիւն մը շահելու համար :

— Ո՛հ, արդարեւ, շատ ազնիւ էք, ըսաւ տիկին

Տիւպարի աննշմարելի հեղնութեամբ մը որ տիկին աը Պէարնի աչքէն չվրիպեցաւ :

— Լա՛ւ ուրեմն, միջոց մըն ալ ունիմ, ըսաւ ժան :

— Միջոց մըն ա՛լ ունիք :

— Այո՛ :

Պատաւ կոմսուհին այս միջոցին յայտնուելուն կը սպասէր անձկութեամբ :

— Տեսնե՛ք, քոյրիկ, տիկին տ'Ալօնիի հետ շատ մտերիմ էք, այնպէս չէ՞ :

— Մտերիմն ալ խօ՛սք է . . . : Արդէն զիտէք :

— Չեզ չնեղակայացնելով կը նեղանա՞յ արդեօք :

— Է՛հ, կարելի է :

— Թագաւորին ըսածը բառ առ բառ չէք ըսեր անոր, այսինքն այսպիսի պաշտօն մը կատարելու համար հարկ եղած ազնուականութիւնը չունենալը : Բայց գուք հանձարեղ կին մըն էք, ուրիշ բան մը կը յարմարցնէք :

— Ի՞նչ, հարցուց տիկին Տիւպարի :

— Տիկինին թող ձգէ ձեզ ծառայութիւն մատուցանելու և բաղդ շինելու այս առիթը :

Պատաւը սարսուաց :

Այս անգամ յարձակումը ուղղակի գործուած էր՝ Փախուտի դուռ չկար, բայց պատուհան մը գտաւ :

— Չեմ ուզիր տնաձուլութիւն պատճառել յիշատակիսին : Ազնուականները պարտին զիրար մեծարել :

Տիկին Տիւպարի զայրոյթի շարժում մը ըրաւ :

Ժան նշանով մը զայն հանդարտեցուց :

— Նկատի ունեցէ՛ք որ առաջարկութիւն մը չէ որ կ'ընեմ ձեզ, տիկին : Դուք դատ մը ունիք, այս բանը ամէն մարդու կրնայ պատահիլ : շահիլ կ'ուզէք զայն, ասիկայ ալ խիստ բնական է : Դատերնիդ կորսուած նկա-

տելով յուսահատութեան մէջ կ'իյնաք, ես ալ այս յուսահատութեան վրայ կը հասնիմ, ձեզի կը ներկայացուիմ, կը համոզուիմ, կը սկսիմ նախանձախնդրութիւն մը ունենալ ան դատին մասին որ ամենեւին ինձ վերաբերութիւն չունի. զայն բարեկաւելու միջոց մը կը փնտռեմ՝ մինչդեռ երեք քառորդ մասամբ վատթարացած է : Սխալեցայ, ա՛լ ասոր վրայ չխօսինք :

Եւ ժան ոտքի ելաւ :

— Ո՛հ, պարոն, գոչեց պառաւը նոր ու ազդեցիկ հակառակորդներ ունենալու սոսկումովը, ընդհակառակը ձեր բարեսիրութիւնը անուրանալի է :

— Վատն եղէք որ, կ'ուզէ տիկին տ'Ալօնիին, կ'ուզէ տիկին Բօլասթրօն կամ տիկին Պէարնը ներկայացնէք յոյս, հոգս անգամ չէ :

— Անշո՛ւշտ, պարոն :

— Միայն կը խոստովանիմ թէ չէի ուզեր որ թագաւորին բարեսիրութիւնը վիճակի շահագէտ կնոջ մը, որ հաւանականաբար ինքզինքը անուշէն ծախելով անկլանելի առաջարկներ պիտի ներկայացնէ մեզ :

— Հարիւրին հարիւր վատն եմ որ ատանկով պիտի կնքուի դաշնագրութիւննիս, մէջ բերաւ տիկին Տիւպարի :

— Բայց քանի որ տիկինը ազնիւ գործով մը ներկայացաւ մեզ, հակառակ տակաւին մեզ նոր ծանօթացած ըլլալուն, կարծեմ արժանի է պարտադային ընծայած օգուտներէն շահ մը հանելու : Սա ալ խոստովանիմ թէ մեր ըրածը ո՛չ առաջարկ մըն է և ո՛չ ալ խնդիրք մը, այլ պարզապէս իր կատարելիք ծառայութեան փոխարէն երախտագիտական հատուցում մը :

Դատախազուհին զուցէ պիտի ընդդիմանար այս բարիացակամութեան դէմ զոր իրեն կը վերապահէր դեր-

կումար, բայց տիկին Տիւպարի ժամանակ չթողուց :

— Ճշմարիտը ըսելով, այսպիսի արարք մը թագաւորը պիտի հմայէ, և արքան զայն ի գործ դնող անձին բան մը չպիտի մերժէ, ըսաւ տիկին Տիւպարի :

— Ի՞նչ, թագաւորը բան մը չպիտի մերժէ, ըսիք :

— Այսինքն ձեր ականջովը պիտի լսէք թէ թագաւորը փոխդիւանապետին կ'ըսէ. «Պ. աը Մօրքու, կ'ուզեմ որ տիկին տը Պէարնի խնդիրքը կատարուի, պէտք է ամէնքդ ալ հաճելի ըլլաք անոր, կը լսէ՞ք » : Բայց կ'երեւի թէ տիկին կոմսուհին ինձ հաւատալ չուզեր : Լաւ : Սակայն կը յուսամ որ տիկինը ինձ շնորհակալ պիտի ըլլայ իրեն բարիք կամենալու համար, յարեց դերկոմսը խոնարհելով :

— Չափազանց երախտապարտ եմ, պարոն, գոչեց պառաւը :

— Ո՛հ, չարժեր :

— Բայց . . . , կակազեց կոմսուհին :

— Ի՞նչ է, տիկին :

— Բայց տիկին տ'Ալօնիի իր իրաւունքը ուրիշին չպիտի թողու :

— Այն ատեն վերստին կը դառնանք առաջուան ըսածնուս : Տիկինը իբրեւ կնքամայր կը ներկայանայ և թագաւորն ալ շնորհակալ կ'ըլլայ :

— Բայց ենթադրելով որ տիկին տ'Ալօնի ընդունի մեր առաջարկը, միթէ թագաւորին բարիքներէն զըրկուած չի՞ պիտի ըլլայ, հարցաքննեց խորամանկ պառաւը միշտ գործին վատ կողմը փորելով իրերուն յատակը յտակօրէն տեսնելու դիտաւորութեամբ :

— Թագաւորը միշտ անսպառելի բարութեամբ մը կը ընու դիւ, տիկին, ըսաւ տիկին Տիւպարի :

— Ո՛հ, բացազանչեց ժան, այն ատեն ապառաժուտ լեռ մը պիտի փչի Սալիւսեանց զլիւտն ։

— Աշխարհք արարատ զիտէ թէ դատս կորսուած դատ մըն է և թէ մեծ դժուարութեամբ կարելի է զայն շահիլ, հետեւաբար, եթէ կարենամ իմ ծառայութիւնս ընծայել տիկնոջ, չպիտի փախաքիմ անշուշտ կորսուած դատի մը ինձ նպատաւոր վախճան մը ունենալովը զոհացում ստանալ, զիտել տուաւ պատաւ դատախազունին հետզհետէ որոշումի մը յանգելով ։

— Այո՛, տիկինը իրաւունք ունի, զերկոմս, ես ալ իր կարծիքէն եմ, ըսաւ տիկին Տիւպարի ։

— Ի՞նչ ըսիք, հարցուց զերկոմսը աչքերը խոշոր խոշոր բանալով ։

— Կ'ըսեմ թէ տիկինին անունը կրող կնոջ մը համար աւելի պատուաւոր պիտի ըլլայ եթէ դատը իր որոշ ընթացքը շարունակէ ։ Միայն թէ ոչ ոք կրնայ թաղաւորին կամ քին խոչընդոտ ըլլալ և ոչ ալ անոր առատաձեռնութիւնը արգիլել ։ Ուտտի, եթէ թագաւորը չուզէ արդարութեան ընթացքը փոխել, տարակոյս չիկայ որ հատուցում մը կ'ընէ ։

— Աւա՛ղ, բացազանչեց դատախազունին, ի՞նչպէս կրնայ հատուցում ըլլալ այնպիսի դատի մը կորստեանը փոխարէն որ երկու հարիւր հազար ֆրանքի գումար մը կը ներկայացնէ ։

— Չոր օրինակ, նախ հարիւր հազար ֆրանքի արքայական նուէրով մը, ի՞նչ կ'ըսէք ասոր, հարցուց տիկին Տիւպարի ։

Երկու շահակիցները աչքերնին խոշոր խոշոր բացած իրենց զոհին նայեցան ։

— Որքի մը ունիմ, ըսաւ պատաւ դատախազունին ։

— Աւելի աղէկ, պետական պաշտօնեայ մըն ալ կ'աւելնայ, թագաւորը նոր անձնուէր մըն ալ կ'ուսնեայ ։

— Կը կարծէ՞ք որ տղուս համար բան մը ընեն, տիկին ։

— Խօսք կուտամ, ըսաւ ժան ։ զոնէ թիկնապահ զօրաց մէջ տեղակալութիւն մը կրնայ յուսալ ։

— Ուրիշ ազգական ունի՞ք, հարցուց տիկին Տիւպարի ։

— Քեռորդի մը ։

— Լա՛ւ ուրեմն, քեռորդիի մը համար ալ բան մը կը գտնուի ։

— Այս հոգը ձեզի կը յանձնենք, զերկոմս, ձեզ որ քիչ մը առաջ ապացուցիք անհամար զիւտեր ունենալնիդ, ըսաւ տիկին Տիւպարի խնդալով ։

— Ատիկայ իմ զխոնալու բանս է, ըսաւ ժան ։

— Ուրեմն, տիկին, մեր խօսակցութիւնը լուրջ կերպով կ'առնէք, այնպէս չէ՞, հարցուց տիկին Տիւպարի ։

— Այո՛, տիկին, ամենալուրջ կերպով, պատասխանեց կոմսունին առած խոստումին վրայ տժգունելով ։

— Եւ կը հաւանիք որ ձեր մասին խօսիմ Նորին Վեհափառութեան ։

— Այդ պատիւը ըրէք ինձ, պատասխանեց դատախազունին հառաչանք մը արձակելով ։

— Տիկին, այս գործը այս երեկոյ պիտի ըմնայ, ըսաւ տիկին Տիւպարի ոտքի ելնելով ։ Կը յուսամ թէ ձեր բարեկամութիւնը ստացած եմ այլևս ։

— Իսկ ձեր բարեկամութիւնը ինձ համար անգին է, պատասխանելով պատաւը սկսաւ յարգանքներ ընել ։

— Օ՛հ, համառօտ կերպով անգամ մըն ալ վրայէն անցնինք, ըսաւ ժան՝ սեղելով կոմսունին մտքին տալ ժօգ. Պալս., քիւ 13—31, հաս.Բ., Բ.հր.Ն.Ք.

այն հաստատութիւնը՝ որուն պէտք ունի միտքը նիւթական իրերը իրենց վախճանին հասցնելու համար, Նախ՝ հարիւր հազար ֆրանք իրրեւ հատուցում գատական և ճամբորդութեան ծախքերուն և փաստաբանին վճարուած վարձքին համար :

— Այո՛, պարոն :

— Դեռատի կոմսին համար տեղակալութիւն մը :

— Ո՛հ, ասով փառաւոր ասպարէզ մը կը բացուի անոր առջեւ :

— Եւ բան մըն ալ քեռորդի ի մը համար, այնպէս չէ՞, տիկին :

— Այո՛, բան մըն ալ քեռորդի ի մը համար :

— Այդ բանը կը գտնուի, ինչպէս որ ըսի, ատիկայ իմ զիտնալու բանս է :

— Իսկ ձեզ վերստին տեսնելու պատիւը ե՞րբ պիտի ունենամ, տիկին կոմսուհի, հարցուց դատախազուհին :

— Վաղը առաւօտ կառքս ձեր դրան առջեւը պիտի ըլլայ ձեզ լիւսիէն տանելու համար, տիկին : Թագաւորը հոն պիտի գտնուի : Վաղը, ժամը տասնին, խոստումս կատարած պիտի ըլլամ : առաջուց Նորին վեհափառութեան պիտի իմացնեմ, որով բնաւ չպիտի սպասէք :

Տը Պէարն կոմսուհին մեկնելու պատրաստուեցաւ :

— Ներեցէք որ ձեզի ընկերանամ, տիկին, ըսաւ ժան թեւը կոմսուհին ներկայացնելով :

— Ո՛հ, պարոն, հոս մնացէք, կ'ազատեմ, պատասխանեց կոմսուհին :

— Գոնէ մինչեւ սանդուխին զլուխը, պնդեց ժան :

— Լա՛ւ, քանի որ կը պնդէք . . . :

Տիկին տը Պէարն ժանի թեւը մտաւ :

— Զամօ՛ր, գոչեց կոմսուհին :

Զամօր վազեց :

— Թող մինչեւ դուռը տիկինը լուսաւորեն և եղբորս կառքը բերեն :

Զամօր նետի մը պէս սլացաւ :

— Արդարեւ զիս բարեօք կը ընուք, տիկին, ըսաւ տիկին տը Պէարն :

Եւ երկու կիները վերջին յարգանք մըն ալ փոխանակեցին :

Սանդուխին զլուխը հասած ատենին ժան զերկոմսը տիկին տը Պէարնի թեւը թողուց և քրոջը քով վերադարձաւ, մինչդեռ դատախազուհին վեհափառորէն մեծ սանդուխէն վար կ'իջնէր :

Զամօր առջեւէն կ'երթար :

Լիւսիէնի դղեակին վազուան խառչիկ կատալարիչին կը հետեւէին երկու դրանիկներ ջահեր բռնած, անոնց հետեւէն կուգար տիկին տը Պէարն որուն չըջաղեատին քղանցքէն՝ որ քիչ մը կարճ էր՝ դրանիկ մը բռնած էր :

Եղբայր ու քոյր կառք նստիլը կը զիտէին այս հազուագիւտ կնքամայրին՝ որ քրտնաթոր ջանքով փնտրուած ու ահազին դժուարութեամբ գտնուած էր :

Տիկին տը Պէարն սանդուխին ստորստը հասած ատեն՝ գաւիթին մէջ ուղեկառք մը կը մտնէր և մանկամարդ կին մը դուրս կը խոյանար կառքին գոնէն :

— Ո՛հ, ախրուհի՛ Շօն, գոչեց Զամօր այլանդակ կերպով չրթունքները բանալով : Բարի իրիկուն, տիրուհի՛ Շօն :

Տիկին տը Պէարնի մէկ ոտքը օդին մէջ մնաց :

Նորեկ կնոջ նայելով փաստաբան Ֆրաժօի կեղծ աղջիկը ճանչցաւ :

Ժան Տիւպարի յախուուն կերպով պատուհանը բացեր

ձեռքով ու զլիսով նշաններ կ'ընէր կրտսեր քրոջը, որ սակայն զայն չէր տեսներ :

— Տա ժիլպէր անուհով խենթուկը հո՞ս է, հարցուց Շօն սպասաւորներուն, առանց կոմսուհին նշմարելու :

— Ո՛չ, տիկին, բնաւ չտեսանք զայն, պատասխանեց սպասաւորներէն մին :

Եւ ահա յանկարծ աչքերը վեր բարձրացնելով ժանի նշանները նշմարեց :

Անոր ձեռքին ուղղութեանը նայեցաւ՝ որ անյողզող կերպով տիկին տը Պէարնի կողմը երկնցած էր :

Շօն ճանչցաւ զայն : Ճիշ մը արձակեց, զլիսազարդը վար քաշեց և զաւիթին անկիւններէն միոյն մէջ աներեւութացաւ :

Պառաւը՝ առանց զայն նշմարած ըլլալը յայտնի ընելու՝ կառքը մտաւ և հասցէն կառապանին տուաւ :



ԼԲ.

ԱՐՔԱՆ ԿԸ ԶԱՆԶՐԱՆԱՅ

Թագաւորը, որ Մարլի երթալու համար մեկնած էր, կէսօրէն ետքը ժամը երեքին հրաման տուաւ որ Լիւսիէն տանին զինքը :

Լուի ԺԵ իրաւունք ունէր ենթադրելու թէ տիկին Տիւպարի իր երկտողը առնելուն պէս պիտի փութար վէքսայէն մեկնիլ և երթալ թագաւորին սպասել իրեն համար շինել տուած այն հիւանալի բնակարանին մէջ ուր թագաւորը քանի մը անգամ այցելած էր առանց երբէք գիշերը հոն անցընելու, սա միակ պատճառաւ որ Լիւսիէն արքայական դղեակ չէր, ինչպէս որ ինքն ալ կ'ըսէր :

Ուստի, թագաւորը Լիւսիէն հասնելով շատ զարմացաւ տեսնելով որ Զամօր ո՛չ հպարտ կ'երեւէր և ո՛չ ալ կառավարչի մը կերպարանքն ունէր :

Դեռատի և սևամորթ կառավարիչը իր մատները կտցել ջանացող թութակի մը հետ կը զբօսնուր :

Տիկին Տիւպարիի երկու սիրելիները՝ Զամօրն ու թութակը՝ իրարու ոտիս էին, ինչպէս Լուի ԺԵ-ի Պ. տը Շուաղէօլն ու տիկին Տիւպարին :

Թագաւորը փոքր դահլիճը տեղաւորուեցաւ և իրեն

ուղեկցող անձինքը ճամբեց :

Լուի ժե, որ իր տէրութեան ամենէն աւելի հետաքրքիր ազնուականն էր, ո՛չ մարդոց և ո՛չ ալ զբանիկներուն բան մը հարցնելու սովորութիւնը չունէր : Բայց Չամօր ո՛չ մարդ էր և ո՛չ ալ զբանիկ, կապիկին և պապկային մէջտեղը բան մըն էր :

Հետեւաբար թագաւորը Չամօրի հարցուց .

— Տիկին կոմսուհին պարտէ՞զն է :

— Ո՛չ, տէր, պատասխանեց Չամօր :

Այս բառը վհնափառութիւն բառին տեղը կը բռնէր, որմէ քմահաճաբար մերկացուցեր էր աիկին Տիւպարի թագաւորը :

— Ուրեմն ծածաններուն քովը ըլլալու է :

Լերան վրայ լիճ մը փորուած էր բազում ծախքով և ջրուղով ջուր բերուած էր հոն, ուր վէրաայլի ամենաւսիրուն ու խատուաիկ ծածանները փոխադրուած էին :

— Ո՛չ, տէր, պատասխանեց դարձեալ Չամօր :

— Ո՞ւր է ուրեմն :

— Բարի՞զ, տէր :

— Ի՞նչ, Բարիզ է . . . կոմսուհին Լիւսիէն չեկա՞ւ :

— Ո՛չ, տէր, բայց Չամօրը զրկեց :

— Ի՞նչ բանի համար :

— Թագաւորին սպասելու համար :

— Ա՛հ, ա՛հ, զիս ընդունելու հոգը քե՞զ կը յանձնեն, ըսաւ թագաւորը : Ի՞նչ գեղեցիկ բան է Չամօրի ընկերութիւնը : Շնորհակա՛լ եմ, կոմսուհի, շնորհակա՛լ եմ :

Եւ թագաւորը ոտքի ելաւ քիչ մը զայրացած :

— Ո՛հ, ո՛չ, թագաւորը Չամօրի ընկերութիւնը չի պիտի ունենայ :

— Ինչո՞ւ համար :

— Որովհետեւ Չամօր պիտի մեկնի :

— Եւ ո՞ւր երթալու համար :

— Բարիզ :

— Ուրեմն առանձի՞ն պիտի մնամ : Հետզհետէ աղուոր բաներ երեւան կ'ելլան : Բայց ի՞նչ պիտի ընես Բարիզ :

— Երթամ Պարբի տիրուհին պիտի գտնեմ և անոր ըսեմ թէ թագաւորը Լիւսիէն եկած է :

— Ա՛հ, ա՛հ, կոմսուհի՞ն պատուիրեց որ այսպէս ըսես ինձ :

— Այո՞, տէր :

— Եւ չըսա՞ւ թէ սպասած ատենս ի՞նչ ընեմ :

— Ըսաւ որ քնանաք :

— Արդարեւ, կ'երեւի թէ չպիտի ուշանայ և նոր անակնկալ մը պիտի ընէ ինձ, ըսաւ թագաւորը մտովի :

Ապա բարձրաձայն աւելցուց .

— Ուրեմն շուտ մեկնէ և կոմսուհին բեր . . . Բայց աղէկ մ'իտքս ինկաւ, ինչո՞վ պիտի երթաս :

— Մեծ ճերմակ ձիով, կարմիր ծածկոցը մ'իասին :

— Մեծ ճերմակ ձին ո՞րչափ ատենէն Բարիզ կ'երթայ :

— Չեմ գիտեր, սակայն շուտ, շուտ, շուտ կ'երթայ, պատասխանեց խափշիկը : Չամօր շուտ երթալը կը սիրէ :

— Օ՛հ, Չամօրին շուտ երթալու սէրը երջանկութիւն մըն է գոնէ :

Եւ պատուանին մօտեցաւ Չամօրին մեկնիլը դիտելու համար :

Դրանիկ մը ձիուն վրայ հանեց խափշիկը և վտանգին այն երջանիկ սովորութեամբը՝ զոր մասնաւորաբար մասնուկները կ'ունենան՝ Չամօր սրարչաւ մեկնեցաւ իր

վիթխարի գրաստին վրայ :

Թագաւորը առանձին մնալով դրանիկին հարցուց թէ
Լիւսիէնի մէջ տեսնուելու արժանի նոր բան մը կա՞ր :

— Պ. Պուշէն կայ, որ տիկին կոմսուհիին մեծ սեն-
եակը կը նկարէ, պատասխանեց դրանիկը :

— Վա՛յ, Պուշէն : Տա խեղճ բարի Պուշէն հո՞ս է,
ըսաւ թագաւորը գոհունակութեամբ : Ո՞ւր է :

— Տաղաւարին սենեակն է, Նորին վեհափառութիւ-
նը Պ. Պուշէի քով երթալ կը փախաքի արդեօք :

— Ո՛չ, կը նախընտրեմ երթալ ծածանները տեսնել,
ըսաւ թագաւորը : Դանա՛կ մը տուր ինձ :

— Դանա՞կ մը, տէր արքայ :

— Այո՛, և մեծ հաց մը :

Դրանիկը վերադարձաւ՝ ճարտնական յախճապակիէ
պնակի մը վրայ դրած կլոր մեծ հաց մը որուն մէջ
երկայն և սուր դանակ մը մխուած էր :

Թագաւորը նշան ըրաւ դրանիկին որ իրեն հետեւի
և գոհունակութեամբ լիճին կողմը գնաց :

Ծածաններուն ուսելիք տալը ընտանեկան աւանդու-
թիւն մըն էր : Մեծ թագաւորը այս աւանդութիւնը
բնաւ չէր մոռնար :

Լուի Ժե մամուպատ նստարանի մը վրայ նստաւ,
ուրկէ տեսարանը գեղեցկօրէն կ'երեւէր :

Հոս, լճակը կը տեսուէր իր մարգագարդ եղերքնե-
րովը, աւելի անդին՝ գիւղը՝ երկու բլուրներու մէջ կա-
ռուցուած՝ որոնցմէ մին՝ արեւմտեանը՝ Վիդիլիոսի
մամուպատ ժայռին նման ուղղածից կը բարձրանայ,
այնպէս մը որ՝ վրան գտնուող խոզանապատ տուները
ասշեղով լի տուփերու մէջ զետեղուած տղու խաղալիկ-
ներու կը նմանին :

Աւելի հեռուն, Սէն-ժէրմէնի քիւերը, վիթխարի
սանդուխը և իր տանիքներուն անհատնում խոտերը,
քիչ մըն ալ հեռուն Սանուայի և Պորմէյլի բլուրները,
վերջապէս պղնձէ գեղաշէն դմբթի մը նման վարդա-
գոյն և գորշ երկինք մը այս ամենուն վրայ կը տա-
րածուէր ու կը տիրէր :

Օդը մրրկալից էր, տերեւները սեւ գոյն մը կը ստա-
նային կանաչ մարգագետնին վրայ : Զուրը՝ որ ձէթի
ընդարձակ մակերեւոյթի մը նման հարթ ու անշարժ էր՝
երբմն յանկարծ կը ծակծկուէր երբ լճակին խորերէն
ձուկ մը արծաթի ցլումի մը նման կը սրանար ջրին
վրայ երկայն թաթերովը թովոացող ճահճաճանճը որսա-
լու խօլ սլացքովը :

Այն ատեն, երեսին դողդոջուն մեծ ծիրերը կը լայն-
նային և սեւ ու ճերմակ շրջանակներ կազմելով ամբողջ
ջուրին երեսը կը դողացնէին :

Եղբրքին մօտ համր ձկանց մեծ դունչեր կը տես-
նուէին, որոնք ո՛չ կարթի և ո՛չ ալ ուռկանի հանդի-
պելու վախ ունենալով՝ կախուած առուոյաները ծծելու
կուզային և ակնապիշ ու հիասթափ, եղէգներուն մէջ
սողացող փոքրիկ մողէսներն ու սապլախող գորտերը կը
գլխէին դողցես :

Թագաւորը, ժամանակին յարզը գիտցող մէկու մը
պէս, այս տեսարանին ամէն կողմը դիտուէ, գիւղին
տուները և հեռուն գտնուող գիւղերը մէկիկ մէկիկ համ-
րելէ վերջ, քովի պնակէն հացը առաւ և մեծ պատառ-
ներով սկսաւ զայն ջարդել :

Ծածանները դանակին ձայնը լսեցին, և, վարժուած
ըլլալով ճաշին պատրաստ ըլլալը իմացնող ձայնին, կա-
րելի եղածին չափ մօտեցան Նորին վեհափառութեան և

րենալու համար, որպէս զի մեծ թագաւորը հաճի փոքր ծածաններուն հանապազօրեայ ճաշը պարգևել :

Ու եւ է գրանիկի մը համար ալ նոյնը կ'ընէին ծածանները, բայց թագաւորը բնականաբար կարծեց թէ իրեն համար միայն կ'ընեն կամ թէ իրեն աւելի ակնածանօք ու շտապաւ կը մօտենան :

Հացին պատառները իրարու հտեւէ նետեց, որոնք նախ ընկզմեցան, և ապա երբ ջուրին երեսը ելան, ծածանները իրարու բերնէ խլեցին զանոնք և յանկարծ փշրելով վայրկեանի մը մէջ կուլ տուին :

Արդարեւ, հետաքրքրաշարժ և զուարճալի տեսարան մըն էր այս անտեսանելի գունչերէն մղուող հացի կեղեներուն պարզած տեսարանը, որոնք պահ մը ջրին վրայ լողալէ ու դողալէ վերջ՝ ընդմիշտ կ'ընկղմէին :

Կէս ժամ անցեր էր : Նորին վեհափառութիւնը՝ որ մօտաւորապէս հարիւր պատաս հաց ջարդելու համբերութիւնը ունեցեր էր՝ գոհունակութեամբ կը տեսնէր որ պատաս մը անգամ չէր մնար ջուրին վրայ :

Այլ սակայն թագաւորը ձանձրացաւ, և յիշեց թէ Պուշէ կրնար երկրորդական զբօսանք մը հայթայթել իրեն : Այս զբօսանքը ծածաններուն զբօսանքէն նուազ զուարճալի պիտի ըլլար թէպէտ, սակայն գիւղին մէջ մարդ ի՛նչ որ զանէ անով կը բաւականանայ :

Լուի Ժե տաղաւարին քովը գնաց : Պուշէ առաջուց տեսեր էր գայն : Նկարած ատենը դադապողի անոր կը նայէր երբմն : Թագաւորին իր կողմը գալը տեսնելով՝ ուրախութեամբ շապիկին ծոպերը շտկեց, թեւոցները հանեց և ելնարանին վրայ ելաւ, որովհետեւ խափու պատուիրած էին իրեն որ թագաւորին կիւսիէն ըլլալը չգիտնալ ձեւացնէ :

Պ. Պուշէ՝ վեհափառ քայլերու տակ տախտակամածին ձայնելը լսեց և սկսաւ Գիւրթտօն մը նկարել՝ որ կապոյտ ջանջիլէ սեղմիրան մը հագած և յարդէ գլխարկ մը դրած՝ դեռատի հովուուհիի մը ձեռքէն վարդ մը կը խլէր : Ձեռքը կը դողար, սիրտը կը բաբախէր :

Լուի Ժե սեմին վրայ կեցաւ :

— Ո՛հ, պարոն Պուշէ, դուք ալ բեւեկն կը հօտիք, ըսաւ և անցաւ գնաց :

Ինչո՞ք Պուշէն ուրիշ շնորհաւորութեան մը սպասելուն՝ քիչ մնաց ելնարանէն պիտի իյնար, թէպէտեւ գիտեր ալ թէ թագաւորը արուեստագէտ մը չէր :

Նկարիչը վար իջաւ և արտասուալից աչքերով մեկնեցաւ, առանց իր պնակը քերելու և վրձինները մաքրելու, ինչպէս որ կ'ընէր սովորաբար :

Նորին վեհափառութիւնը զրպանէն ժամացոյցը հանեց :

Ժամը եօթն էր :

Լուի Ժե գղեակ վերադարձաւ, կապիկը տանջեց, պապկան խօսեցնել տուաւ և բոլոր յախճապակիէ անօթները իրարու հտեւէ դուրս հանեց դարաններէն :

Գիշերը վրայ հասաւ :

Նորին վեհափառութիւնը մութ սենեակներէ չէր ախորժեր, հետեւաբար լուսաւորեցին զանոնք :

Բայց առանձնութիւնն ալ չէր սիրեր :

— Գառորդ ժամէ մը ձիբս պատրաստեցէ՛ք, հրամայեց թագաւորը, իրաւ որ քառորդ ժամէ մը վայրկեան մը աւելի չեմ կրնար սպասել :

Եւ Լուի Ժե կրակարանին դիմացի բազմոցին վրայ պառկեցաւ, տանընէն վայրկեաններուն՝ այսինքն ինը հարիւր րոպէներուն անցնելուն սպասելը իրեն համար

գործ մը համարելով :

ժամացոյցին ճօճանակը չորս հարիւրերորդ անգամ բաղխելուն Նորին վեհափառութիւնը կը քննանար :

Կառքին պատրաստ ըլլալը իմացնելու եկող դրանիկը զայն քննացած գտնելով՝ արթնցնելէ ետ կեցեր էր : Օգոստափառ քունին համար կատարուած այս նահանջէն սա հետեւեցաւ որ, թագաւորը ինքնիրենը արթննալով տիկին Տիւպարին իր սուջեւը գտաւ, որ, ըստ երեւոյթին, քիչ մը քննանալէ վերջ աչքերը բացեր անոր կը նայէր : Զամօր դրանը մէկ անկիւնը կծկտած՝ տրուելիք առաջին հրամանին կը սպասէր :

— Վա՛յ, հո՞ն էք, կոմսուհի, ըսաւ թագաւորը ու զիդ դիրքով մը նստելով :

— Այո՛, տէր արքայ, շատոնց ի վեր է որ հոս եմ, պատասխանեց կոմսուհին :

— Ո՛հ, այսինքն երբէ՞ն ի վեր :

— Է՛հ, վերիվերոյ ժամէ մը ի վեր : Ո՛հ, ի՛նչպէս կը քննանայ Ձեր վեհափառութիւնը :

— Իրաւ որ, կոմսուհի, հոս չըլլալնուդ համար շատ ձանձրացայ, զիչերն ալ շատ գէշ կը քննանամ : Գիտէ՞ք, քիչ մնաց պիտի մեկնէի :

— Այո՛, Ձեր վեհափառութեան ձիւրը լծուած տեսայ :

Թագաւորը ժամացոյցը նայեցաւ :

— Ո՛հ, ժամը տասնուկէսն է, ըսել է երեք ժամու մօտ քնացեր եմ :

— Մօտաւորապէս, տէր արքայ. բայց ըսէ՛ք, Լիւսիէնի մէջ աղէկ չի՞ քնացուիր :

— Իրաւ որ այո՛, բայց ի՛նչ է տըրկայ, զոչեց թագաւորը Զամօրը տեսնելով :

— Լիւսիէնի կառավարիչը, տէր արքայ :

— Տակաւին ո՛չ, տակաւին ո՛չ, ըսաւ թագաւորը իննգալով : Ի՞նչ, տա ստանակը տակաւին պաշտօնը չտուցած համազօրէ՞ստ կը կրէ : Ա՛յդչափ կը վստահի՞ ուրեմն իմ խօսքիս :

— Տէր արքայ, ձեր խօսքը նուիրական է և մենք կատարեալ իրաւունք ունինք անոր վրայ վստահելու : Բայց Զամօր ձեր խօսքէն աւելի, կամ աւելի ճիշդը, ձեր խօսքէն նուազ բան մը ունի, տէր արքայ, այն ալ իր հրովարտակն է :

— Ինչպէ՞ս . . . :

— Փոխ-զիւանապետը զայն ինձ ուղարկեց. անաւասիկ, Այժմ անոր հաստատութեան համար պակտող արարողութիւնը միայն երգումն է : շուտ մը երգումի արարողութիւնն ալ կատարեցէք և թող մեզ պահպանէ :

— Մօտեցէ՛ք, պարոն կառավարիչ, ըսաւ թագաւորը Զամօր մօտեցաւ : Նկարակլտեալ օծիքով համազօրեաց մը, կարճ տափատ մը և մետաքսէ գուլպաներ հագած էր, ուսնոցներ դրած և շամփուրի նման սուր մը անցուցած էր մէջքը : Թեւին տակ եռեղջերաւոր խոշոր զլխարկ մը բռնած, զինուորական օրինաւոր քայլերով կը յառաջանար :

— Գոնէ երգումը պիտի կրնա՞յ ընել, հարցուց թագաւորը :

— Ո՛հ, այո՛, փորձեցէք, տէր արքայ :

— Առա՛ջ եկէք, ըսաւ թագաւորը հետաքրքրութեամբ այս սեւ պաճուճապատանքին նայելով :

— Ծո՛ւնը դիր, ըսաւ կոմսուհին :

— Երգում ըրէք, յարեց Լուի ժե :

Պատանին մէկ ձեռքը սրտին վրայ ինկ միւսը թա-

գաւորին ձեռքին մէջ դնելով ըսաւ .

— Կ'երգնում հաւատարիմ մնալ և յարգել ատէրս ու արուեստս, կ'երգնում պաշտպանել ցմահ այն դրեակը որուն պաշտպանութիւնը ինձ կը յանձնուի և անուշիզէններուն մինչև վերջին ամանը ուսել անձնատուր չնդած՝ եթէ իմ վրայ յարձակում գործուի :

Թագաւորը սկսաւ խնդալ թէ՛ երգման ձեւին թէ՛ Զամօրի այն լուրջ կերպարանքին վրայ որով երգումը կ'արտասանէր :

— Ի փոխարէն այս երգման, պարոն կառավարիչ, ձեզ կուտամ այս պալատին օդին, հողին, հուրին և ջուրին վրայ հսկելու վերին իրաւունքը, իրաւունք բարձր և ստորին արդարութեան, պատասխանեց թագաւորը պատշաճ ծանրութիւն մը ստանալով :

— Շնորհակալ եմ, տէր, ըսաւ Զամօր ոտքի ելնելով :

— Եւ հիմայ գնա՛ քու գեղեցիկ հագուստդ խոհանոցներուն մէջ պտըտցուր և մեզ հանգիտ թող, ըսաւ թագաւորը : Գնա՛ . . . :

Զամօր դուրս ելաւ :

Մինչ Զամօր մէկ դռնէն դուրս կ'ելնէր՝ Շօն միւսէն ներս կը մտնէր :

— Ո՛հ, դո՛ւք էք, փոքրիկ Շօն : Բարի երեկոյ :

Թագաւորը զայն իր ծունկերուն վրայ քաշեց և զըրկեց :

— Տեսնե՞ք, իմ փոքրիկ Շօն, ճշմարտութիւնը պիտի ըսես ինձ, շարայարեց թագաւորը :

— Ո՛հ, զգուշացէ՛ք, տէր արքայ, վաստակի մէկը չընարեցիք, պատասխանեց Շօն : Ճշմարտութիւնը, կարծեմ թէ առաջին անգամն է կենացս մէջ որ ճշմարտութիւնը պիտի ըսեմ : Եթէ ճշմարտութիւնը գիտնալ

կ'ուզէք՝ ժաննի դիմեցէք, ան ստելը ի՛նչ է չգիտեր :

— Ճշմարի՞տ է, կոմսուհի :

— Տէր արքայ, Շօն կը չտիպանցէ : Օրինակը գէշ տպաւորութիւն ըրաւ վրաս, և, մանաւանդ այս իրիկուընէ սկսեալ, որոշեցի ճշմարիտ կոմսուհիի մը պէս սըտել հոն ուր որ ճշմարտութիւնը խօսիլը լաւ բան մը չէ :

— Վա՛յ, կ'երեւի թէ Շօն ինձմէ բաներ մը կը պատէ, ըսաւ թագաւորը :

— Իրաւ որ չէ :

— Փոքր դուքս մը, փոքր մարքիզ մը կամ փոքր գերկոմս մը տեսնելու գացած չըլլա՞յ :

— Ձեմ կարծեր, պատասխանեց կոմսուհին :

— Շօնը ի՞նչ կ'ըսէ ասոր :

— Չենք կարծեր, տէր արքայ :

— Այդ մասին տոյգ տեղեկութիւն մը ձեռք բերելու համար ոտտիկանութեան տեղեկագիր մը չի՛նել տալ պէտք պիտի ըլլայ կարծեմ :

— Պ. Սարթինի՞ ոտտիկանութեան թէ իմ :

— Պ. աը Սարթինի ոտտիկանութեան :

— Ո՞րքան պիտի վճարէք անոր :

— Եթէ հետաքրքրաշարժ բաներ ըսէ՝ սակարկութիւն չեմ ընիր :

— Ուրեմն նախապատուութիւնը իմ ոտտիկանութեանս տալով իմ տեղեկագիրս գնեցէք : Թագաւորի մը վայելուէ կերպով . . . կը ծառայեմ ձեզի :

— Ինքզինքնի՞դ պիտի ծախէք :

— Ինչո՞ւ չէ, եթէ դու՛մարը գաղտնիքին արժէքին համապատասխանէ :

— Լա՛ւ ուրեմն, թո՛ղ այնպէս ըլլայ : Տեղեկագիրը տեսնե՞ք : Բայց չըլլա՛յ որ ստէք :

- Գա՛ղիա, զիս կ'անպատուէք :
- Ըսել կ'ուզեմ թէ դարձուածք չգործածէք :
- Բայց դուք ալ դրամը պատրաստեցէք, տէր արքայ, ա՛նա՛ տեղեկագիրը :
- Պատրաստ է, ըսաւ թագաւորը քանի մը ոսկի հնչեցնելով գրպանին մէջ :
- Նախ, կոմսուհին, տիկին Տիւպարի, կէսօրէն երկու ժամ ետքը Բարիզի մէջ տեսնուած է :
- Ատկէ ուրիշ բան մը գիտե՞ս, ան նայինք :
- Վալուա փողոցը :
- Աս ալ անկարելի բան մը չէ :
- Ժամը վեցին աստիճանը Զամօր դացած ու զինքը գտած է :
- Աս ալ կրնայ ըլլալ : Բայց տիկին Տիւպարի ի՞նչ ընելու համար վալուա փողոցը գացեր է :
- Իր տունը երթալու համար :
- Կը հասկնամ, սակայն ինչո՞ւ իր տունը կ'երթար, խնդիրը հո՛ս է :
- Իր կնքամայրին սպասելու համար :
- Իր կնքամայրի՞ն սպասելու համար, արդեօք կոմսուհին պիտի մկրտուի՞, ըսաւ թագաւորը գէմքը խօժոռեցնելով :
- Այո՛, տէր արքայ, վէրսայլի մկրտութեան մեծ աւագաններուն մէջ :
- Իբաւ որ կը սխալի, որովհետեւ կոսպաշտութիւնը շատ աղէկ կը յարմարէր անոր :
- Ի՞նչ ընելու է, տէր արքայ, դուք ալ զիտէք որ առակը կ'ըսէ՝ « Մարդ չունեցածը ունենալ կ'ուզէ : »
- Հետեւաբար մենք ալ կնքամայր մը կ'ուզենք, ըսել կ'ուզէք :

- Եւ ունինք ալ, տէր արքայ :
- Թագաւորը սարսափաց և ուսերը թօթիկաց :
- Շատ կը սիրեմ այդ շարժումը, տէր արքայ, ատկէ կ'ապացուցուի որ Զեր վեհախառութիւնը շատ կը արամի կրամօնեանց, կէմեկեանց և բոլոր արքունի նենդաւոր կանանց յալթուիլը տեսնելով :
- Ի՞նչ կ'ըսէք :
- Անչո՛ւշտ, ձեր գաշնակիցներն են անոնք :
- Իմ գաշնակիցնե՞րս . . . : կոմսուհի, չէ՞ք գիտեր որ թագաւոր մը թագաւորներու հետ մ'իայն կը գաշնակցի :
- Ճիշդ է, բայց բոլոր այդ թագաւորները Պ. ար Շուաղէօլի բարեկամներն են :
- Զեր կնքամայրին գառնանք, կոմսուհի :
- Ատիկայ աւելի հաճելի է ինձ, տէր արքայ :
- Ուրեմն հատ մը ճարեցի՞ք վերջապէս :
- Պատրաստ գտայ, գէշ ձեւուած ալ չէ, ար Պէարն կոմսուհի մը, թագաւորած իշխաններու ընտանիքէն : Կը յուսամ թէ աս չպիտի անպատուէ Սթիւարթեանց գաշնակիցներուն գաշնակիցը :
- Տը Պէարն կոմսուհի՞ն, ըսաւ թագաւորը զարմաւնալով : Ես ար Պէարն կոմսուհի մը կը ճանչնամ որ վէրսեօնի կողմերը կը բնակի կարծեմ :
- Նոյնի՛նքն է որ յատկապէս այս գործին համար Բարիզ եկած է :
- Զեռքը գլուխդ պիտի դնէ՞ :
- Երկո՛ւ ձեռքն ալ :
- Եւ ե՞րբ :
- Վաղը, առտուան ժամը տասնըմէկին, պատիւ պիտի ունենայ գաղտնի ունկնդրութեամբ ընդունուիլ ժօգ. Պալս., քիւ 14—32, հսս.Բ., Բ.հր.Ն.Ք.

ինէ, և եթէ խնդիրը անպատեհ չէ՝ պիտի խնդրէ թագաւորէն որ իր օրը որոշէ, և դուք ալ կարելի եղածին չափ մօտ օր մը պիտի որոշէք, այնպէս չէ՞, պարոն Գաղիա :

Թագաւորը խնդալ սկսաւ : Բայց այս խնդուքին մէջ կեղծ բան մը կար :

— Անշո՛ւշա, անշո՛ւշա, ըսաւ կոմսուհին ձեռքը համբուրելով :

Բայց յանկարծ դռնէն .

— Վաղը տասնըմէկի՞ն :

— Անշո՛ւշա, նախաճաշի ժամուն :

— Անկարելի է, սիրելի բարեկամուհիս :

— Ի՞նչ, անկարելի՞ է մի :

— Հոս չպիտի նախաճաշեմ, այս երեկոյ պիտի մեկնիմ :

— Ա՛ս ի՞նչ է, բացազանչեց տիկին Տիւպարի փայտ կտրելով : Պիտի մեկնի՞ք, աէր արքայ :

— Պէտք է որ մեկնիմ, սիրելի կոմսուհիս, Սարթինի ժամադրութիւն տուած եմ կարեւոր գործի մը համար :

— Ի՛նչպէս որ կը փախաքիք, աէր արքայ, բայց կը յուսամ որ գոնէ հոս կ'ընթրէք :

— Ո՛հ, այո՛, կ'ընթրեմ թերեւ . . . այո՛, բաւական անօթի եմ, կ'ընթրեմ :

— Կերակուրը պատրաստե՛լ տուր, Շօն, ըսաւ կոմսուհին մասնաւոր նշան մը ուղղելով քրոջը, նշան մը որ, անշո՛ւշա, կանխաւ եղած որոշման մը հետ ստընչութիւն ունէր :

Թագաւորը հայելիի մը մէջէն տեսաւ այս նշանը և անոր նշանակութիւնը թէպէտ չկրցաւ հասկնալ, բայց

գուշակեց որ բաներ մը կը նիւթէին :

— Ո՛հ, ո՛հ, ընթրելն իսկ անկարելի է . . . : Պէտք է որ անմիջապէս մեկնիմ : Ստորագրութիւնները կան, այսօր շարաթ է :

— Օ՛ն, այդպէս թող ըլլայ, ըսեմ որ ձիերը բերեն :

— Այո՛, սիրուհիս :

— Շօ՛ն :

Շօն երեւցաւ :

— Թագաւորին ձիերը, ըսաւ կոմսուհին :

— Լաւ, ըսաւ Շօն ժպտելով :

Եւ վերադին մեկնեցաւ :

Վայրկեան մը վերջը նախասենեակին մէջ անոր ձայնը կը լսուէր՝ որ կը պոռար .

— Թագաւորին ձիերը :



ԼԳ

ԱՐՔԱՆ ԿԸ ԶԲՕՄՆՈՒ

Թագաւորը շատ ուրախ եղաւ իր իշխանութեան յազ-
թանակը տեսնելով, որով թէ՛ զինքը սպասցնող կամ-
սուէին կը պատժէր, թէ՛ օձիքը կ'ազատէր ներկայաց-
ման ձանձրոյթէն :

Շօն ներս մտաւ :

— Լա՛ւ, ծառաներս չտեսա՞ք :

— Ո՛չ, տէր արքայ, Ձեր վեհախառութեան ծառա-
ներէն մարդ չիկայ նախասննակներուն մէջ :

Թագաւորը մինչև զուտը յառաջանալով գոչեց :

— Ո՞ւր են ծառաներս :

Ոչ ոք պատասխանեց : Կարծես թէ դղեակը համր էր
և պատասխան չէր տար :

— Ո՞վ կը կաակածի որ ես անոր թոռն եմ որ ըսած է՝
« Քիչ մնաց որ պիտի սպասէի », ըսաւ թագաւորը սնն-
եակ վերադառնալով :

Եւ դէպի պատուհանը գնաց ու ըացաւ զայն : Բայց
դուրսն ալ նախասննակներուն նման ամայի էր . ոչ ձի
կար, ոչ հեծելազօրք և ոչ ալ պահակ : Միայն գիշերը
իր կատարեալ հանդարտութեամբն ու վեհութեամբը կը
մերկանար աչքերու և հոգիներու առջև, որ հիանալի

լուսնով մը լուսազարդուած, ցոյց կուտար Շաթօնի
անտառին ծառերուն ալեկոծ գազաթները : Գիշերը՝ որ
բիւրաւոր լուսաճաճանչ ցոյքեր կը խլէր Սէն գետէն,
տա վիթխարի դանդաղատող օձէն՝ որուն գայարունները
Պուժիվալէն մինչև Մէզօն կը տեսնուէին, այսինքն չորս
հինգ փարաախի օձապտոյտ դարձուածքներ :

Ապա, ըտլոր ասոնց մէջ, սոխակ մը այն հիանալի
երգերէն մին կ'երգէր՝ զոր բնութիւնը միայն մայիսի
առտուններուն սանձանած է :

Բոլոր այն ներդաշնակութիւնները նշանակութիւն
չունէին Լուի Ժեի համար, որ ո՛չ մտածող էր, ո՛չ բա-
նաստեղծ և ո՛չ ալ արուեստագէտ, այլ թանձրամիտ
թագաւոր մը :

— Կոմսուէի, հրաման տուէք, կաղաչեմ, ըսաւ թա-
գաւորը զարմացմամբ : Ի՞նչ ըսել է այս, պէտք է որ
այս կատակը վերջ գտնէ :

— Տէր արքայ, պատասխանեց կոմսուէին հմայքոտ
այլ խոփոռ դէմքով մը, հոս հրամայողը ես չեմ :

— Սակայն ե՛ս ալ չեմ, ըսաւ Լուի Ժե, կը տեսնէք
թէ ի՛նչպէս ինձ կը հնազանդին :

— Ես ալ ձեռնէ աւելի չեմ, տէր արքայ :

— Ո՞վ է ուրեմն : Դո՞ւն ես, Շօն :

— Հնազանդելու համար քաջածա ե՛ս գիտեմ, ո՛ւր
մնաց որ հրամայել ուզեմ, պատասխանեց Շօն :

— Բայց ո՞վ է ուրեմն տէրը :

— Է՛հ, տէր արքայ, Պ. կառավարիչը :

— Պ. Զամօ՞րը :

— Այո՛ :

— Իրաւունք ունիք, ուրեմն զանգալը զարկէք որ
մէկը գայ :

կոմսուէին պաշտելի անիութեամբնամբ մը թեւ մե-
տաքանայ թելի մը երկնցուց, որուն ծայրը մարգար-
տազարդ ծոպ մը կար, և զանգակը զարկաւ :

Հաւանաբար կանխաւ հրահանդուած գրոնիկ մը, որ
նախասնեակը կը գտնուէր, ներս մտաւ :

— Կառավարիչը ո՞ւր է, հարցուց թագաւորը :

— Կառավարիչը Ձեր վեհափառութեան թանկագին
կենացը վրայ կը հակէ, պատասխանեց գրանիկը խոնար-
հելով :

— Ո՞ւր է, կրկնեց թագաւորը :

— Դղեակին բոլորտիքը կը շրջի :

— Կը շրջի :

— Չորս պաշտօնակալներու հետ, պատասխանեց գրա-
նիկը :

— Ճիշդ Պ. Մառլպօրուխի նման, գոչեց կոմսուէին,
թագաւորը ժպտեցաւ :

— Այո՛, ծիծաղաշարժ բան մըն է սա, բայց ձիե-
րուն լծուելուն արգելք մը չկրնար ըլլալ :

— Տէր արքայ, Պ. կառավարիչը ակտոնները գոցել
աուաւ, վախնալով որ մի գուցէ չարագործ մը պահ-
ուելտի անոնց մէջ :

— Ո՞ւր են հեծելազօրքերը :

— Իրենց բնակարանը :

— Ի՞նչ կ'ընեն :

— Կը քնանան :

— Ի՞նչ, կը քնանա՞ն :

— Այնպէս հրամայուած է իրենց :

— Որո՞ւ կողմէ :

— Կառավարչին :

— Իսկ դո՞ն՞րը, ըսաւ թագաւորը :

— Ո՞ր դո՞ն՞երը, տէր արքայ :

— Դղեակին դո՞ն՞երը :

— Գոց են :

— Շատ լաւ : Բայց բանալիները պիտի գտնուին
հարկաւ :

— Տէր արքայ, բանալիները կառավարչին գօտիէն
կախուած են :

— Ահա լաւ կառավարուող դղեակ մը : Բա՛հ, ի՞նչ
կարգ ու կանոն :

Դրանիկը տեսնելով որ թագաւորը նոր հարցում մը
չէր ուղղեր իրեն՝ մեկնեցաւ :

Կոմսուէին թիկնաթոռի մը մէջ ընկողմանած՝ զեղե-
ցիկ վարդ մը կը խածատէր, որուն քով իր շրթունք-
ները բուտտի կը նմանէին :

— Տէր արքայ, կ'արգահատիմ Ձեր վեհափառու-
թեան վրայ, թեւերնիդ տուէք և Պ. կառավարիչը փըն-
տըռենք : Շօն ճամբան կը լուսաւորէ, ըսաւ կոմսուէին
այնպիսի նուազուն ժպիտով մը որ միայն իրեն կը
վայլէր :

Նախ Շօն դուրս ելաւ իբրև յառաջապահ միշտ պատ-
րաստ ըլլալով վտանգը կանխել :

Նրբանցքէն անցնելու ատեննին կերակուրի անուշ
հոտ մը սկսաւ թագաւորին քիթը խողտել :

— Ա՛հ, ա՛հ, ի՞նչ է այս հոտը, կոմսուէի, ըսաւ
թագաւորը կանց առնելով :

— Ընթրիքին հոտն է, տէր արքայ : Ես կը կարծէի
թէ թագաւորը Լիւսիէն ընթրելու պատիւը կ'ընէր ինձ,
և անոր համեմատ պատրաստութիւն տեսայ :

Լուի Ժն երկու երեք անգամ կերակուրներուն ա-
նուշ հոտը շնչեց, ինքնիրեն խորհելով թէ ստամոքսը
արդէն բաւական ատենէ ի վեր ճայն կուտար, թէ հե-

ծելագորքերը արթնցնելու համար, մեծ ազմուկ հանելով, կէս ժամ հարկ պիտի ըլլար մինչեւ Մարտի արքայական դղեակը երթալու համար, և թէ Մարտի մէջ, յուր իրեն չէր սպասուեր անշուշտ, դռածովը պիտի գոհանար : Անգամ մըն ալ այդ հրատարիչ շոգին չնչեց և կոմսուհին առաջքը անցնելով սեղանատան դրան առջեւ կեցաւ :

Փաստաւորագէս լուսաւորուած և շքեղօրէն զարդարուած սեղանի մը վրայ երկու սպաս գրուած էր :

— Է՛ն, վարպետ խոհարար մը ունիք եղեր, կոմսուհի :

— Տէր արքայ, այսօր առաջին փորձն է որ կ'ընէ հոս, խեղճ մարդը հրաշալիքներ երեւան բերած է : Ձեր վեհախառութեան գնահատմանը արժանանալու համար :

— Իրա՞ւ, այնպէ՞ս կը կարծէք :

— Մանուածնդ փասեանի հաւկիթով ձուազեղ մը և փեր է որ իրեն մեծ յոյս կը ներշնչէ, տէր արքայ :

— Փասեանի հաւկիթով ձուազեղ մը : Շիտակը փասեանի հաւկիթով ձուազեղները շատ կը սիրեմ ես :

— Տեսէք ի՞նչ բարեբաղդ զուգադիպութիւն :

— Լաւ ուրեմն, կոմսուհի, դուցէ մեր ընթրած միջոցին տխար Զամօր կը վերադառնայ իր շրջադայութեանէն :

— Ո՛հ, տէր արքայ, ստիկայ յաղթական զաղափար մըն է, ըստ կոմսուհին, այս առաջին խաղը շահելուն համար զգացած գոհունակութիւնը չկարենալով ծածկել : Եկէք, տէր արքայ, եկէք :

— Բայց ո՞վ պիտի սպասուորէ մեզ, հարցուց թաւաւորը ի զուր դրանիկ մը փնտսելով :

— Ո՛հ, տէր արքայ, ձեր սուրճը աւելի՞ գէշ համ մը կ'ուսենայ երբ իմ ձեռքովս տամ զայն ձեզ :

— Ո՛չ, եթէ նոյն խակ ձեր եփածն ալ ըլլայ :

— Լաւ ուրեմն, եկէք, տէր արքայ :

— Միայն երկու՞ սպաս, ըստ թաւաւորը : Հասցա՞ծօնը, ընթրած է :

— Տէր արքայ, առանց Ձեր վեհախառութեան մասնաւոր հրամանին, չեն համարձակած . . .

— Ինչն՛ր ալ կ'ընէք, ըստ թաւաւորը ինքնիք ձեռքովը դարակէ մը սկաւառակ մը և սպաս մը սանելով : Եկո՛ւր, փոքրիկ Շօնա, հոս, մեր դիմացը :

— Ո՛հ, տէր արքայ . . . կակազեց Շօն :

— Այո՛, ամենախոնարհ և ամենահնազանդ հպատակուհի մը ձեւացուր ինքզինքդ, կեղծա՛ւոր : Հո՛ս, կոմսուհի, քո՛վս նստէ, սանկ կողմնակի : Որքա՛ն հիանալի է ձեր կողմնակի տեսքը :

— Տակաւին ա՛յսօր կը նշմարէք այդ բանը, պարոն Գաղիա :

— Ի՞նչ ընեմ, սովորութիւն ըրած էի ձեզ դիմացէն դիտել, կոմսուհի : Ստուգիւ ձեր խոհարարը պատուոյ լեզէոնի արժանի է եղեր : Ի՞նչ համեղ թան :

— Ուրեմն իրաւունք ունէ՞ի՞ միւսը ձամբելու :

— Կատարելապէս :

— Հետեւարար, տէր արքայ, դուք ալ իմ օրինակիս հետեւեցէք, կը տեսնէք որ ասոր մէջ շահ կայ :

— Ձեմ համկտար ձեր ըսածը :

— Ես իմ Շուազօլս ձամբեցի, դուք ալ ձերինը ձամբեցէք :

— Քաղաքականութիւնը մէկզի՛, կոմսուհի, Մատէրի գինի տուէք ինձ :

Թաւաւորը գաւաթը երկնցուց : Կոմսուհին նրբափող յուրան մը առաւ և թաւաւորին գաւաթը լեցուց :

Յուրանը սեղմելովը գեղանի մատուակին մասնները

ձերմկեցան և եղունգները կարմրեցան :

— Ծանր ծանր և մեղմիկ լեցուցէք, կոմսուհի, ըսաւ թագաւորը :

— Ըմպելին չյուզելո՞ւ համար, տէր արքայ :

— Ո՛չ, Որպէս զի ժամանակ ունենամ ձեր ձեռքը գիտելու :

— Ստուգիւ, տէր արքայ, Ձեր վեհախառութիւնը նոր գիւտեր ընելու վրայ է, ըսաւ կոմսուհին խնդալով :

— Իրա՛ւ որ այո՛, և կարծեմ թէ գտնելու վրայ եմ, ըսաւ թագաւորը հետզհետէ խանդավառուելով :

— Աշխա՞րհ մը, հարցուց կոմսուհին :

— Ո՛չ, ո՛չ, սրտասխանեց թագաւորը, աշխարհ մը գտնելը չախազանց փառախրութիւն է, արդէն մէկ տէրութիւնը բաւականէն աւելի է ինձ համար, այլ կղզի մը, մաս մը հող, կախարդուած լիւ մը, պալատ մը՝ որուն Արմիտը պիտի ըլլայ բարեկամութիւններէս ախկին մը, և որուն մուտքը ամէն տեսակ ճիւղներու կողմէ պիտի խախտուի երբ մտնալ ուզեմ . . .

— Տէր արքայ, լէթէ գետէն հանուած ջուրն ալ ճիշդ ժամանակին կը հասնի ձեր այդ դժոխային կամ մոզական պալատին ծաղիկները ոռոգելու համար, ըսաւ կոմսուհին Շամբանխայի սառած գինիով լեցուն յուրան մը երկնցնելով թագաւորին :

Հոս փակագիծի մէջ յիշենք թէ Շամբանխայի գինին տակաւին նոր գտնուած էր այն տեսնները :

— Լէթէ գետէ՞ն, ըսիք, կոմսուհի, վստա՞հ էք :

— Այո՛, տէր արքայ, խեղճ ժանը դժոխքին երեք քառորդ մասը իջնելով հոնկէ բերաւ զայն :

— Կոմսուհի, ըսաւ թագաւորը գաւաթը վերցնելով, ժանի ուրախառիթ յարութեանը համար կը խմեմ, բայց

կ'աղաչեմ, քաղաքականութիւնը մէկզի :

— Ա՛լ չեմ գիտեր թէ ի՞նչ բանի վրայ կը խօսեմ, տէր արքայ, բայց եթէ Ձեր վեհախառութիւնը հաճի պատմութիւն մը ընել . . .

— Ո՛չ, բայց ձեզի ոտանաւորներ պիտի ըսեմ :

— Ոտանաւորնե՞ր, գոչեց ախկին Տիւպարի :

— Այո՛, ոտանաւորներ . . . : Չարմանալու ի՞նչ կայ ասոր մէջ :

— Բայց Ձեր վեհախառութիւնը բնաւ չախորժիր ոտանաւորներէ :

— Է՛հ, յորինուած հարիւր հազար ոտանաւորներէն իննսուն հազարը ինծի դէմ ուղղուած է :

— Եւ Ձեր վեհախառութեան ինձ ըսելիքը տասը հազարին մէջէ՞ն է :

— Ո՛չ, կոմսուհի, ձեզի ըսելիք ոտանաւորս ձեզի ուղղուած է :

— Ինձի՞ :

— Այո՛, ձեզի :

— Որմէ՞ն :

— Պ. Վօլթէրէն :

— Չոր Ձեր վեհախառութեան կը յանձնէ . . . :

— Ո՛չ, ամենեւին, ուղղակի Ձեր Բարձրութեան կը շրկէ :

— Ի՞նչպէս կ'ըլլայ աս . . . , ստա՞նց պահարանի :

— Ընդհակառակը, գեղեցիկ պահարանի մը մէջ :

— Ո՛հ, կը հասկնամ, Ձեր վեհախառութիւնը այս առտու թղթատարական տեսուչին հետ տեսակցած է, եթէ չեմ սխալիր :

— Ճիշդ է :

— Կարդացէք, տէր արքայ, կարդացէք Պ. Վօլթէրի ոտանաւորը :

Լուի ժե փոքրիկ թուղթ մը բացաւ և հետեւալը կարդաց .

Գիցունի մ'ես դուարձութեան,
Մայր փափկափրտ կարիխայթեան,
Բայց փափոսի տոներուն հետ,
Ըսէ՛, ինչո՞ւ խառնես ևւեթ
Տհաճութիւն մ'ամօթալի,
Տխուր կտակած մ'ուր կը փայլի
Գիւցազնի մը կորուստն ու դաւ
Կը պտորաստես, արիւնթաթաւ :

Ողբուեսը չատ սիրուն է,
Հայրենիքինն, ամենունն է,
Ակամեմեակ ալ նեցուկն է :

Գործունեայ է և հանճարեղ
Որ կը յաղթէ իրօնն անկ :

Աստղիկ, տիրէ, չատուածներուն
Յատկատելով մօտն ու հեռուն,
Գեղեցկութեամբդ ընկճէ՛ սրտեր,
Աւանց փուշի քաղէ վարդեր :
Հաճէ ժպտիլ մեղի սակայն,
Յուշիկ քալէ ու լոնլեայն,
Եւ շնորհէ խաղաղութիւն
Պօսիթօնի խռովելոյն :

Մանկանացու է Ողբուես,
Բայց վախ կ'ազդէ Տրոյացուոց,
Երբ ծնրաչոք հառաչէ ևւս,
Գեղեցիկ է, զլուխ գործոց :

— Իրաւ որ, տէր արքայ, Պ. վօլթէր ձեզի հետ
հաշտուիլ կ'ուզէ, ըսաւ կոմսուհին աւելի զայրամարտով
այս բանաստեղծութիւնէն քան երախտաղիտութիւն զգալով :

— Ո՛հ, զուր աշխատանք, խռովարարարին մէկն է
որ եթէ Բարիզ մօտնէ՛ ամենուր ալ բերանը պիտի գոցէ
թող բարեկամիս՝ Ֆրէտէրիք Բ.ի երթայ, Պ. Ռուսօն կը
բաւէ մեզ : Բայց առէք սա ոտանաւորները և անոնց
վրայ մտածեցէք քիչ մը, կոմսուհի :

Կոմսուհին թուղթը առաւ, լուցկիի ձեւով պլորեց և
սկաւառակին քով դրաւ :

Թագաւորը անոր կը նայէր :

— Տէր արքայ, քիչ մը սա թօքէյէն չէ՞ք առներ,
ըսաւ Շօն :

— Վատն եղէք, տէր արքայ, Նորին վեհափառու
թիւն Աւստրիոյ կայսեր մտանէն բերուած է, աւելցուց
կոմսուհին :

— Ո՛հ, կայսերական մտաններէն . . . բայց միայն
ես ունիմ այդ ըմպելիքէն, բացազանչեց թագաւորը :

— Ըսել է ձեր մտանապետէն եկած է, տէր արքայ :

— Ի՞նչ, արգեօք մտանապետս կաշտացիք . . . :

— Ո՛չ, հրամայեցի :

— Գէշ պտտասխան չէ, կոմսուհի, թագաւորը
խենթ է :

— Ո՛հ, այո՛, բայց Պ. Գաղիան . . .

— Պ. Գաղիան գէթ ի բոլոր սրտէ ձեզ սիրելու յօւ
ժարակամութիւնն ունի :

— Ա՛հ, տէր արքայ, ինչո՞ւ արգեօք բոլորովին հաւ
մառօս կերպով Պ. Գաղիա չէք :

— Կոմսուհի, քաղաքականութիւնը մէկդի՛ :

- Թագաւորը սուրճ պիտի առնէ՞, հարցուց Շօն :
- Այո՛ :
- Նորին վեհախառութիւնը ըստ սովորականին խարկած պիտի լամէ զայն, հարցուց կոմսուհին :
- Եթէ տիկինը հակառակը չպնդէ :
- Կոմսուհին ոտքի ելաւ :
- Ի՞նչ կ'ընէք :
- Ձեր սուրճը պիտի եփեմ, տէր իմ :
- Օ՛ն, կը տեսնեմ որ ամենէն լաւը ձեզ ազատ թողուին է, որպէս զի ուղածնիդ ընէք, կոմսուհի, ըսաւ թագաւորը բազմոցին վրայ տարածուելով աշնոյիսի մարդու մը պէս որ անթերի կերպով ընթրած և որուն հիւթերը հաւասարակուշութիւն մը ստացած են լաւ ճաշ մը ըրած ըլլալովը :
- Կոմսուհին արծաթէ կրակարանի մը վրայ փոքրիկ սրճաման մը դրաւ որուն մէջ դրուած էր Մօքայի խարկած խահուէ, ապա թագաւորին առջեւ սկաւառակ մը դրաւ, անոր վրայ ալ ոսկեզօծ արծաթէ սկաւառակ մը և Պօնեմիոյ փոքրիկ յուրան մը, յետոյ սկաւառակին քով թուղթէ լուցկի մը :
- Թագաւորը, խորին ուշադրութեամբ մը՝ որ սովորաբար այս գործողութեան կատարուած միջոցին կ'ունենար, շաքարը համրեց, սուրճը չափեց և մեղմիկ մը օդին լեցնելով որպէս զի ոգին վրան ելնէ, պլորուած թղթիկը առաւ, ճրագէն վառեց և անով կիզողական ըմպելիքը բրնկցուց :
- Ապա լուցկին կրակարանին մէջ նետեց, ուր այրելով բոլորովին սպառեցաւ :
- Հինգ վայրկեան վերջը, Լուի ԺԵ, իր սուրճը կը խմէր անզուգական որկրամոլի մը կատարեալ հեշտասի-

- բութեամբը :
- Կոմսուհին թողուց որ թագաւորը ուզածն ընէ. բայց վերջին կաթիլին գոչեց :
- Ա՛հ, տէր արքայ, Պ. վօլթէրի ոտանաւորներովը տաքցուցիք ձեր սուրճը, այս բանը փորձանք պիտի բերէ Շուաղէօլեանց զլխուն :
- Ձեզ պարիկ մը կարծելով սխալեցայ, սատանայ մըն էք եղբր, կոմսուհի, ըսաւ թագաւորը խնդալով :
- Կոմսուհին ոտքի ելաւ :
- Տէր արքայ, Ձեր վեհախառութիւնը արդեօք կատարելիչին վերադարձած ըլլալը հասկնալ կ'ուզէ՞ :
- Չամօ՞րը, Բա՛հ, ինչո՞ւ համար :
- Մարլի երթալու համար, տէր արքայ :
- Աղէկ ըսիք, ըսաւ թագաւորը վայելած հեշտանքէն զատուելու ճիգ մը ընելով : Երթանք տեսնենք, կոմսուհի, երթանք տեսնենք :
- Տիկին Տիւպարի նշան մը ըրաւ քրոջը : Շօն անեւրեւութացաւ :
- Թագաւորը խուզարկութեան սկսաւ, բայց հարկ է ըսել որ այս խուզարկութիւնը առաջինէն բոլորովին տարբեր ուշադրութեամբ կատարուած բան մըն էր . . . :
- Փիլիսոփաները ըսած են թէ իրի մը տեղոյն կամ վարդագոյն երեւնալը գրեթէ միշտ մարդուս ստամոքսին վիճակէն կախեալ է :
- Արդ, քանի որ թագաւորնե՛րն ալ մարդու ստամոքս ունին, որ ընդհանրապէս իրենց հպատակներուն ստամոքսէն նուազ լաւ դրութեան մէջ է, անո՛նց ալ բարի կամ վատթար կենցաղակարթեան բնական արդիւնքը ճիշդ հասարակ մարդոց նման իրենց մարմինին մնացորդ մասին կը հաղորդուի : Ասիկայ պատճառ մըն է, որմէ

հետեւեցաւ թագաւորին խանդաւառ զուարթութիւնը, զուարթութիւն մը որով թագաւորները շատ քիչ անգամ կ'ոգեւորուին :

Նրբանցքին մէջ տասը քայլ առնելէ վերջ, ուրիշ անուշահոտութիւն մը եկաւ թագաւորին զլուխը բոլորովին դարձնել :

Բնական ծաղիկներով նկարակիտեալ կապոյտ բնեղով կահաւորուած ակնախախլ ննջատնեակի մը զուռը բացուեցաւ, որ՝ խորհրդաւոր լուսով շողախայլ՝ ցոյց կուտար անկողնի մը խորշը, նրբագոյն մուսլինէ թափանցիկ վարագոյրներու ետեւէն, ուր երկու ժամէ ի վեր կը ցանկային ուղղուիլ կախարդուհիին քայլերը :

— Տէր արքայ, կ'երևի թէ Զամօր տակաւին երեւան ելած չէ, հետեւաբար մենք ալ փակուած ենք : Պիտի խնդրէի ձեռնէ որ պատուհաններէն իջնելով զղեակէս չփակչիք . . .

— Անկողինին սաւաննե՞րը գործածելով, ամբողջացուց թագաւորը հարցնական :

— Տէր արքայ, գործածենք զանոնք, բայց չզղեմանենք . . . , ըսաւ կոմսուհին համայոզ ժպիտով մը :

Թագաւորը խնդալով բազուկները բացաւ, և կոմսուհին թողուց որ իյնայ այն վարդը զոր շրթունքներուն մէջ պրկած էր :

Սիրոյ խորհրդանիշն եղող այդ ծաղիկը գորդին վրայ իյնալով տերեւաթափ եղաւ . . . :

ԼԳ

ՎՈՒԹԷՐ ԵՒ ՌՈՒՍՈ

Ինչպէս որ ըսինք, Լիւսիէնի գղեակին ննջատնեակը չէնքի և ձեւի կողմէ հրաշալիք մըն էր :

Դղեակին արեւելեան կողմը շինուած ըլլալով, ոսկեզօծ փեղկերով և բնեզէ վարագոյրներով այնպէս լազոցուած էր որ, լոյսը, սլալատականի մը պէս, հոնկէ ներս չէր կրնար մտնել առանց կանխաւ իր նուազուն ու ազօտ մուտքերն ընելու :

Ամառը, աներեւոյթ օգտիոխ գործիքներ, բիւրաւոր հողմահարներու նման, մաղուած թարմ օդով կ'ոռոգէին դայն :

Ժամը առտուան տասն էր երբ թագաւորը կապոյտ սենեակէն դուրս ելաւ :

Այս անգամ թագաւորին սպասաւորները, ձիերն ու կառքերը ժամը իննէն ի վեր զաւիթին մէջ կը սպասէին: Զամօր, ձեռքերը խաչածու, հրամաններ կուտար կամ տալ կը ձեւացնէր :

Թագաւորը պատուհանէն նայեցաւ և բոլոր այս պատրաստութիւնները տեսաւ :

— Ի՞նչ կը նշանակին ասոնք, կոմսուհի, չի՞ պիտի նախաճաշենք : Կարծես թէ զիս անօթի փորանց ճամբել կ'ուզէք :

Փօգ. Պալս., քիւ 14—33, հաս.Բ., Բ.հր.Ն.Ք.

— Աստուած չընէ, տէր արքայ, պատասխանեց կոմսուհին . բայց ես կը կարծէի որ Ձեր վեհախառութիւնը Մարլի ժամադրութիւն տուած է Պ. Սարթինի :

— Է՛հ, կարծեմ թէ կարելի էր Սարթինի ըսել որ հոս զայ զխ տեսնելու համար, հեռու տեղ մը չէ :

— Ձեր վեհախառութիւնը ինձ հաւատալու պատիւը պիտի ընէ անշուշտ երբ ըսեմ թէ իմ միտքէս ալ ատ կ'անցնէր :

— Ատկէ զատ, այնքան զեղեցիկ առաւօտ մը ու նինք այսօր որ՝ մարդ չուզեր աշխատիլ, նախաճաշիկնիս ընենք :

— Տէր արքայ, պէտք է որ ինձ քանի մը ստորագրութիւն տաք :

— Տիկին տը Պէարնի խնդրո՞յն համար :

— Այո՛, և ապա օրը որոշէք :

— Ո՞ր օրը :

— Եւ ժամը :

— Ո՞ր ժամը :

— Ներկայացմանս օրն ու ժամը :

— Իրաւ որ ձեր ներկայացումը աղէկ շահեցաք, կոմսուհի, ըսաւ թագաւորը : Օրը դուք որոշեցէք :

— Տէր արքայ, կարելի եղածին չափ մօտ օր մը :

— Ամէն բան պատրաստ է ուրեմն :

— Այո՛ :

— Սորվեցա՞ք երեք յարգանքը ընել :

— Կարծեմ թէ այո՛, տարի մըն է որ վարժութիւն կ'ընեմ :

— Զգեստնիդ պատրաստ է :

— Քսանըչորս ժամուան մէջ կը չի՛նուի :

— Կնքամայրնիդ պատրաստ է :

— Ժամէ մը հոս պիտի ըլլայ :

— Լաւ ուրեմն, կոմսուհի, դաշնագրութիւն մը կընքենք :

— Ի՞նչ դաշնագրութիւն :

— Ժան դերկոմսին թաղէրնէյ սեպուհին հետ ունեցած գործին վրայ երբէք չպիտի խօսիք ինձ :

— Ուրեմն դերկոմսը պիտի զոհենք :

— Իրա՛ւ որ այո :

— Լա՛ւ ուրեմն, տէր արքայ, ա՛լ ատոր վրայ չենք խօսիր Օրը՞

— Վաղը չէ միւս օր :

— Ժա՞մը :

— Իրիկուան ժամը տասնին, սովորականին պէս :

— Խօսք կուտա՞ք, տէր արքայ :

— Խօսք կուտամ :

— Թագաւորի՞ խօսք :

— Ազնուականի խօսք :

— Ձեռքերնիդ տուէք, Գա՛ղիա :

Եւ տիկին Տիւպարի իր զիրզ ու փոքրիկ ձեռքը երկընցուց, որուն մէջ Լուի Ժե իր ձեռքը թողուց որ իյնայ :

Աստուան այս դաշնագրութենէն վերջ, Լիւսիէն ամբողջութեամբ իր տիրուհին ուրախութեանը մասնակից եղաւ :

Տիրուհին չէր ընդդիմացած կէտի մը մէջ՝ որուն համար արդէն չատոնց չընդդիմանալ որոշած էր, սակայն ատոր փոխարէն, ուրիշ կէտի մը մէջ շահած էր :

Հարիւր հազար ֆրանք պիտի արուէր ժանի, պայմանաւ որ Բիբէնի և Օվէրնիի ջուրերը երթայ և ուտէ, և այս եղելութիւնը աքսոր մը ըլլալ պիտի թուէր

Շուռագէօրեանց աչքին :

Լուրի ոսկիներ բաշխուեցան աղքատներուն, կարկանդակ՝ ծածաններուն և շնորհաւորութիւններ եղան Պուշէի նկարներուն և ասոնց մէջ չմոռցուեցաւ Զամօրը՝ որուն առջեւ մեծկակ ամանով մը խնձորանուղ դրուեցաւ, անշուշտ դրեակը լաւ պաշտպանած ըլլալուն համար նախօրդ գիշեր . . . :

Թէպէտ Նորին վեհափառութիւնը անթերի կերպով ընթրած էր նախընթաց օրը, բայց ակտրժակով նախահաշեց :

Ժամը տասնըմէկը կը զարնէր :

Կոմսուհին, թագաւորին բան մը հրամցուցած աստեղնը, միշտ, դանդաղ ճօճումներով յառաջացող ժամացոյցին սլաքին կը նայէր :

Թագաւորն անգամ ըսելու նեղութիւն յանձն առած էր թէ եթէ տիկին տը Պէարն ժամանէր, կրնային սեղանատուն մտցնել զայն :

Սուրճը հրամցուեցաւ, ճաշակուեցաւ, խմուեցաւ, բայց տիկին տը Պէարն չերեցաւ :

Տասնըմէկը քառօրդ անցած՝ սրարչաւ ձիու մը ոտքերուն ձայնը լսուեցաւ գաւիթին մէջ :

Տիկին Տիւպարի ոտքի ելաւ արագօրէն և պատուհանէն նայեցաւ :

Ժան Տիւպարիի կողմէն եկող սուրհանդակ մը քըրտնաթոր ձիէ մը վար ցատկեց :

Կոմսուհին սարսռաց, բայց, և որովհետեւ յուզմունքը երեւան չհանելու պէտքն ունէր որպէս զի թագաւորին լաւ արամադրութիւնները չխոխուին, եկաւ անոր քով նստաւ :

Վայրկեան մը վերջը Շօն ձեռքը տոմսակ մը բռնած

ներս մտաւ :

Ետ կենալ չէր ըլլար, պէտք էր կարդալ :

— Սիրագիր մըն է ան, ի՞նչ է, Շօն, ըսաւ թագաւորը :

— Ո՛հ, այո՛, տէր արքայ :

— Որմէ՞ է :

— Խեղճ գերկոմսէն :

— Վստա՞ն էք :

— Ահաւասիկ :

Թագաւորը ժանի գիրը ճանչցաւ և մտածելով որ մի գուցէ տոմսակին մէջ Շօնի դէպքը նշանակուած ըլլայ, ձեռքովը մէկգի ընելով զայն՝ ըսաւ .

— Լաւ, լաւ, այդչափը կը բաւէ :

Կոմսուհին փուշերու վրայ էր :

— Տոմսակը ի՞նչ համար է, հարցուց կոմսուհին :

— Այո՛, կոմսուհի :

— Թագաւորը կը ներէ՞ . . .

— Է՛հ, ինչո՞ւ չէ : Այս միջոցին Շօն ինձ Պարոն Ազուաւը պիտի երգէ :

Եւ Շօնը սրունքներուն մէջ առաւ, ամենատղեղ ձայնով մը երգելով ժան-ժագ Ռուսօի ըսածը .

Սպասաւորս կորուսի,

Երջանկութիւնս կորուսի :

Կոմսուհին պատուհանի մը որմածակին մէջ քաշուեցաւ և հետեւեալը կարդաց .

« Պառաւ ոճրագործին մի՛ սպասէք : Կը պնդէ թէ երէկ իրիկուն ոտքը այրեր է, հետեւաբար սենեակէն դուրս չկրնար ելնել : Շնորհակալ ըլլանք Շօնին իր և-

բէկուան գալստեանը համար, որովհետեւ այս բոլորին պատճառը ան եղաւ. անիծեալ խոհածը գայն ճանչցած է, որով մեր կատակերգութիւնը ջուրը կ'իջնայ :

« Երջանիկ դիպուածով մը տա գատարկագորտ ժիւպէրը, որ այս ձախողութեան բուն պատճառն է, մէջտեղէն հալածեցաւ : Անոր վիզը պիտի ոլորէի եթէ ձեռքանցնէր : Բայց, թող հանգիստ ըլլայ, եթէ իրեն հանդիպիմ՝ դարձեալ գիտցածէս չպիտի շեղիմ :

« Մէկ խօսքով, շո՛ւտ Բարիզ եկէք, ուր՝ ինչ որ էինք առաջ՝ բոլորովին նոյնը կը մնանք :

ԺԱՆ : »

— Ի՞նչ է ան, ըսաւ թագաւորը, որուն աչքին զարկեր էր կոմսուէրին յանկարծական տժգունութիւնը :

— Ոչինչ, տէր արքայ, եղբորս առողջութեան մասին տեղեկագիր մը ստացայ :

— Սիրելի դերկոմսը օրէ օր կ'աղէկնայ, այնպէս չէ՞ :

— Այո՛, օրէ օր կ'աղէկնայ, պատասխանեց կոմսուէրին : Ենորհակալ եմ, տէր արքայ : Բայց անա կառք մը կը մտնէ գաւիթը :

— Մեր կոմսուէրն է արդեօք :

— Ո՛չ, տէր արքայ, Պ. աը Սարթինն է :

— Ուրեմն, յարեց թագաւորը տեսնելով որ տիկին Տիւպարի կը մեկնէր :

— Ուրեմն, տէր արքայ, ձեզ անոր հետ առանձին կը թողում եւ ես զարդարուելու կ'երթամ, պատասխանեց կոմսուէրին :

— Իսկ տիկին աը Պէա՞րնը :

— Երբոր գայ, տէր արքայ, պատիւը պիտի ունենամ Նորին վեհախառութեան կանխաւ խմացնելու, ը-

սաւ կոմսուէրն ցայգազգետին զրպանին մէջ տոմսակը ձմրթկելով :

— Զիս կը թողո՞ւք, կոմսուէր, ըսաւ թագաւորը մեղամաղձոտ հառաչանք մը արձակելով :

— Տէր արքայ, այսօր կիրակի է, ստորագրութիւնները, ստորագրութիւնները . . . :

Եւ իր թարմ այտերը թագաւորին ներկայացուց թագաւորը անոնց իւրաքանչիւրին վրայ մէյ մէկ ջերմ համբոյր գրողմեկէ վերջ, կոմսուէրն սենեակէն մեկնեցաւ :

— Ստոանա՛ն տանի, ստորագրութիւններն ալ, զանոնք ուզելու եկողներն ալ, գոչեց թագաւորը : Ո՞վ հնարած է արդեօք սա պաշտօնեաները, պաշտօնական թղթակալներն ու աղերսագրի թուղթերը :

Թագաւորը հազիւ աւարտած էր այս անէծքը, անա պաշտօնեան իր թղթակալին ընկերակցութեամբը ներս մտաւ, կոմսուէրին գուրս ելած զրան գիմացի դռնէն :

Թագաւորը առաջինէն աւելի մեղամաղձոտ երկրորդ հառաչանք մը արձակեց :

— Ո՛հ, եկա՞ք, Սարթին, որքա՛ն ալ ճշդագած էք :

Այնպիսի շեշտով մը արտասանուած էր այս խօսքը որ՝ անհնարին էր հասկնալ գովե՞տ թէ յանդիմանութիւն ըլլաւ :

Պ. աը Սարթին թղթակալը բացաւ եւ թուղթերը գուրս հանելու պատրաստուեցաւ :

Յանկարծ ծառուղիին աւազներուն վրայ կառքի մը անիւներուն ձայնը լսուեցաւ :

— Կեցէ՛ք, Սարթին, ըսաւ թագաւորը :

Եւ պատուհանին քով վազեց :

— Ի՞նչ, կոմսուէրն է մեկնողը :

— Նոյնինքն է, տէր արքայ, պատասխանեց պաշ-

տօնեանս :

— Հապա տիկին տը Պէարն կոմսուհին պիտի սպա-
սէր . . . :

— Տէր արքայ, կ'երեւի թէ զուր տեղը անոր սպա-
սելէ ձանձրացած՝ զայն փնտռելու կ'երթայ :

— Սակայն, քանի որ տիկինը այս առաու պիտի
գար . . .

— Տէր արքայ, գրեթէ վստահ եմ որ չպիտի գայ :

— Բայց ի՞նչպէս կրնաք գիտնալ աստիկայ, Սարթին :

— Տէր արքայ, պէտք է որ ամէն բանէ քիչ մը
գիտնամ՝ որպէս զի Ձեր վեհախառութիւնը ինձմէ գո՞
ւլլայ :

— Ուրեմն ի՞նչ որ պատահեցաւ ըսէք, Սարթին :

— Պատաւ կոմսուհիին, տէր արքայ :

— Այո՛ :

— Ինչ որ ամէն բանի մէջ կը պատահի, տէր ար-
քայ, խոչընդոտներ :

— Բայց վերջապէս չի՞ պիտի գայ տա տը Պէարն
կոմսուհին :

— Հը՛մ, հը՛մ, երէկ իրիկուն գործը աւելի սպա-
հովութեան մէջ էր, տէր արքայ :

— Հէ՛գ կոմսուհի, ըսաւ թագաւորը և ինքզինքը
չկարենալ զսպելուն արդիւնքը ուրախութեան նշոյլ մը
չողացուց իր աչքերուն մէջ :

— Ո՛հ, տէր արքայ, քսոռակ գաշնակցութիւնն ու
ընտանեկան սիրալիր համաձայնութիւնը չնչին բաներ
էին բազմամամբ ներկայացման փափուկ խնդրին :

— Հէ՛գ կոմսուհի, երբէք իր նպատակին չպիտի
հասնի, կրկնեց թագաւորը գլուխը երեւցնելով :

— Ես ալ ասկէ կը վախնամ, տէր արքայ, բայց

Ձեր վեհախառութիւնը չվստանար անշուշտ կարծիքս
անկեղծօրէն յայտնելու համար :

— Որքա՛ն վստահ էր իր գործին յաջողութեանը
վրայ :

— Գէշը այն է որ, եթէ իշխանուհիին զաւուստէն
առաջ չներկայացուի, հաւանական է որ ա՛լ ներկայաց-
ուելիք չունի, ըսաւ Պ. տը Սարթին :

— Հաւանականէն աւելի, Սարթին, իրաւունք ու-
նիք : Հարսնցուիս համար կ'ըսեն թէ խիտ անաչառ,
բարեպաշտ և համեստ է : Հէ՛գ կոմսուհի :

— Ստուգիւ, կրկնեց Պ. տը Սարթին, տիկին Տիւ-
պարի մեծ ցաւ պիտի զգայ չներկայացուելովը, սակայն
Ձեր վեհախառութիւնն ալ գերծ պիտի մնայ բազում
հոգերէ :

— Այնպէ՞ս կը կարծէք, Սարթին :

— Անշո՛ւշտ, գոնէ նախանձոտները, չարախօսները,
երգագիրները, չողոքորթները և լրագիրները պակաս
պիտի ըլլան : Եթէ տիկին Տիւպարիի ներկայացումը
տեղի ունենայ, տէր արքայ, ոտիկանութիւնը հարիւր
հազար ֆրանքի արտաքոյ կարգի ծախքի մը պիտի կա-
րօտի :

— Իրա՛ւ է : Հէ՛գ կոմսուհի, Սակայն ո՞րչափ կը
բաղձար ներկայացուիլ :

— Եթէ կ'ուզէ, թող Ձեր վեհախառութիւնը հրամա-
յէ, և կոմսուհիին բաղձանքը պիտի կատարուի :

— Ի՞նչ կ'ըսէք, Սարթին, գոչեց թագաւորը : Ես
այդպիսի բաներու մէջ կրնամ մտնել, տիկին Տիւպա-
րիի կամքը կատարելու հրամանագիր մը կրնամ տող-
րագրել : Դո՞ւք էք ըսողը, Սարթին : Դուք որ հանձա-
րեղ մէկն էք, ինձ խրատ կուտաք պետական հարուստ

մը տալ, կոմսուէիին մէկ քմածին հաճոյքը կատարելու համար :

— Ո՛հ, ո՛չ, տէր արքայ, բաւական կը համարեմ Ձեր վեհախառութեան նման ըսել՝ հէ՛ղ կոմսուէի :

— Ասկէ զատ, կոմսուէին այնչափ յուսանատական վիճակի մը մէջ չգտնուիր, ըսաւ թագաւորը : Դուք ամէն բան ձեր զգեստին զոյնովը կը տեսնէք, Սարթին : Ո՞վ կրնայ ըսել թէ տիկին ար Պէարն միտքը չփոխեր, ո՞վ կրնայ սպասելութիւն տալ որ իշխանուէին այնչափ շուտ կը հասնի : Տակաւին չորս օր պէտք է որ Գօնքիէներ հասնի, և չորս օրուան մէջ շատ բաներ կրնան ըլլալ : Տեսնե՛ք, պիտի աշխատի՞նք այս սուսուտ, Սարթին :

— Վեհախառ տէր, միայն երեք ստորագրութիւն կայ : Եւ սատիկանսպետը թուղթ մը հանեց թղթակալէն :

— Ո՛հ, ո՛հ, գոչեց թագաւորը, զատապարտութեան գի՛ր մըն է :

— Այո՛, տէր արքայ :

— Եւ որո՞ւ գէմ :

— Ձեր վեհախառութիւնը կրնայ տեսնել :

— Պարոն Ռուսօին գէմ : Ո՞վ է և ի՞նչ ըրած է այս Ռուսօն, Սարթին :

— Է՛հ, Բնկերային Դաւիթը գրած է, տէր արքայ :

— Ա՛հ, ա՛հ, Ժան-Ժաքին գէ՞մ է : Ուրեմն Պասթի՛յը նստել կ'ուզէք զայն :

— Տէր արքայ, գայթակղութիւն կը պատճառէ :

— Ի՞նչ կ'ուզէք որ ընէ :

— Ասկէ զատ, ես չեմ ստաջարկեր որ Պասթի՛յը գրուի :

— Ուրեմն այս բանտարկութեան գիրը ի՞նչ բանի

պիտի ծառայէ :

— Զէ՛նքը պատրաստ ունենալու, տէր արքայ :

— Գոնէ ասոր պատճառը ձեր բոլոր փիլիսոփաներուն հակառակ ըլլալս չէ եղեր, ըսաւ թագաւորը :

— Բայց Ձեր վեհախառութիւնը իրաւունք ունի անոնց հակառակ ըլլալու, ըսաւ Սարթին :

— Բայց կը տեսնէք որ կը տրտնջան. ասկէ զատ, կարծեմ թէ Բարիզ գալու արտօնութիւն արուած էր անոր :

— Թոյլ արուած էր, տէր արքայ, բայց պայմանաւ որ մարդու չերեւայ :

— Եւ հիմայ կ'երեւա՞յ :

— Ասկէ ուրիշ բան չընէր :

— Իր թափթփած զգեստներովը ու ցնցոտիներովը :

— Ո՛չ, տէր արքայ, իրեն իմաց տուինք որ զանոնք հանէ :

— Եւ հնազանդեցա՞ւ :

— Այո՛, բայց կը տրտնջայ թէ զինքը կը հալածեն :

— Եւ ի՞նչ կը հագնի հիմայ :

— Ամէն մարդոց հագածը, տէր արքայ :

— Ուրեմն գայթակղութիւնը մեծ չէ :

— Ինչպէ՞ս մեծ չէ, տէր արքայ, մարդ մը՝ որուն արգիլուած է մէկու մը երեւիլ՝ երեւակայեցէք թէ ո՛ւր կ'երթայ ամէն օր :

— Լիւքսէնպուրկի մարաջախտի՞ն տունը, Պ. տ'Ալամպէրի՞ տունը թէ տիկին տ'Էրիսէյի տունը :

— Ռէժանսի սրճարանը, տէր արքայ, և ամէն իրիկուն ճատրակ կը խողայ յամառութեամբ և միշտ կը կորսնցնէ : Որով ես ալ ամէն երեկոյ ջոկատ մը գինուտրի պէտք կ'ունենամ՝ տանը շուրջը գիզուող բազ-

մութեան վրայ հսկելու համար :

— Օ՛ն, Բարիզցիները կարծածէս աւելի ապուշ են եղեր, ըսաւ թագաւորը : Թողէ՛ք որ անով զբօսնուն, Սարթին, գոնէ այդ միջոցին չեն տրտնջար իրենց թըռուառութենէն :

— Այո՛, տէր արքայ, սակայն եթէ օր մըն ալ այդ մարդուն խելքին փչէ ատենախօսութիւններ ընել՝ ինչպէս որ Լոնտրայի մէջ կ'ընէր . . . :

— Ո՛հ, այն ատեն բանտարկութեան գրի պէտք չէք ունենար, Սարթին, որովհետեւ հրապարակային յանցանք մը գործած կ'ըլլայ :

Ոստիկանութեան տեղակալը տեսաւ որ Ռուսոյի ձերբակալութիւնը այնպիսի գործ մըն էր՝ որուն պատասխանատուութենէն զերծ մնալ կ'ուզէր թագաւորը, ուստի այլևս չգլխանալով ըսաւ .

— Տէր արքայ, ուրիշ փիլիսոփայ մըն ալ կայ :

— Դա՛րձեալ, պատասխանեց թագաւորը . բայց ատոնց վերջը չի՞ պիտի գայ :

— Աւա՛ղ, տէր արքայ, անոնց վերջը չգար :

— Եւ ո՞րն է այդ փիլիսոփան :

— Պ. Վօլթերը :

— Ա՞ն ալ Ֆրանսա մտեր է :

— Ո՛չ, տէր արքայ, բայց աւելի աղէկ կ'ընէր եթէ մտնէր, գոնէ կը հսկէինք անոր վրայ :

— Ա՛ն ի՞նչ ըրած է որ :

— Ինքը բան մը ըրած չունի, բայց իր կուսակիցները շատ բան կ'ընեն : Անոր արձանը պիտի կանգնեն :

— Ձիու վրա՞յ հեծած :

— Ո՛չ, տէր արքայ, սակայն նշանաւոր յեղափոխական մըն է, գիտցած ըլլաք :

Լուի Ժե ուսերը թօթվեց :

— Տէր արքայ, Բօլթորսէթէն ի վեր անոր նման մէկը չտեսայ, շարայարեց Պ. աը Սարթին : Ամէն կողմ բարեկամ թղթակիցներ ունի : Ձեր տէրութեան առաջնակարգ անձինքը մաքսաննդութիւն կ'ընեն անոր հրատարակած գիրքերը ներս մտցնելու համար : Անոնցմով լեցուն ութը արկղ բռնեցի անցեալ օր, որոնցմէ երկուքը Պ. աը Շուազէօլի հասցէին ուղղուած էին :

— Շատ զուարճալի են անոր գրածները :

— Տէր արքայ, այժմ նկատի ունեցէք որ թագաւորի մը համար ընելիքնին անոր կ'ընեն, անոր արձանը կանգնելու համար հաւանութիւն կուտան, համամտութիւն կը յայտնեն :

— Թագաւորներուն արձանը կանգնելու համար ո՛չ հաւանութիւն կը տրուի և ո՛չ ալ համամտութիւն կը յայտնուի, Սարթին, այլ իրենք հաւանութիւն կուտան որ իրենց արձանը կանգնուի : Բայց ո՞վ վրան ատեր է այդ գեղեցիկ գործը :

— Բէկալ քանդակագործը : Յէրնէյ երթալու համար ճամբայ ելեր է՝ որպէս զի օրինակը չինէ : Առայժմ ստորագրութիւնները անձրեւի պէս կը տեղան : Արդէն վեց հազար սկուտ կայ, և սա եւս նկատի ունեցէք որ միայն զբաղէաները իրաւունք ունին հանդանակութեան մասնակցելու, տէր արքայ : Կատարեալ թափօրով մը ամէնքն ալ իրենց նուէրներովը կուզան : Պ. Ռուսօն իսկ երկու լուի սուտա :

— Լա՛ւ ուրեմն, ի՞նչ կ'ուզէք որ ընեմ, ըսաւ Լուի Ժե : Ես գրագէտ չեմ, ստիկայ ինձի չվերաբերիր :

— Տէր արքայ, ես կը յուսայի որ պատիւը պիտի ունենամ Ձեր վեհափառութեան առաջարկելու թէ վերջ

մը տրուելի այս ցոյցին :

— Զգուշացէ՛ք, Սարթին : Այդ պարագային պղինձէ արձան մը կանգնելու տեղ՝ թերեւս ոսկիէ արձան մը կը կանգնեն : Է՛հ, պղինձէ արձանի մը տեսքը աւելի տղեղ պիտի ըլլայ քան թէ իր մարմնին վերերեւումը :

— Ուրեմն Զեր վեհախառութիւնը կը բաղձայ որ իրերը իրենց բնական ընթացքը շարունակե՞ն :

— Կը բաղձայ մի . իրարու խօ՛սք հասկեանք, Սարթին, կը բաղձան խօսք չէ : Իրաւ ես կ'ուզէի որ այս ամենուն առաջին անուշի, բայց ի՞նչ ընելու է, անկարելի բան է ստիկայ : Ա՛լ այն ժամանակը անցած է ուր կառավարութիւնը փիլիսոփայական հանճարին պիտի կրնար ըսել ինչ որ Աստուած ամենի ովկէանտօին ըսաւ՝ « Հողիէ անդին չպիտի անցնիս » : Առանց արդիւնք մը ձեռք բերելու յոյսն ունենալու արտնջալը և առանց նպատակին հասնելու զարնելը մեր տկարութիւնը երեւան պիտի բերէ : Աչքերնիս անդին դարձնենք և չտեսնել ձեւացնենք, Սարթին :

Պ. տը Սարթին հատաչանք մը արձակեց :

— Տէր արքայ, եթէ մարդիկը չենք կրնար պատժել՝ զոնէ անոնց գործերը ջնջենք : Ահաւասիկ զանազան հեղինակութեանց յուցակ մը՝ որոնց դատաստանին տեսնուելը անհրաժեշտ է, որովհետեւ անոնցմէ ոմանք գահին վրայ կը յարձակին և ոմանք ալ եկեղեցիին վրայ : Առաջինները ապրտամբ են, իսկ երկրորդները սրբապիղծ : Լուի Ժե ցուցակը առաւ և նուաղուն ձայնով մը սկսաւ կարդալ հետեւեալը .

— Նուիրական Ժանցախիս կամ Բնական Պատմութիւն Սնայպատմութեան, Բնական Դրութիւն կամ Օրէնք Ֆիզիկական եւ Բարոյական Աշխարհի, Ասուած եւ Մարդիկ,

ձառ ի վերայ Նեանաց Յիսուսի Քրիստոսի, Ֆրանչիսկեան Ռակուզի սուած սեղեկութիւնները Սուրբ Երկիր գացող Եղբայր Բերխեկղօղի մասին :

Թագաւորը ցուցակին քառորդին չհասած՝ թուղթը ձեռքէն ինկաւ : Իր դիմագիծերը՝ որոնք սովորաբար հանդարտ էին՝ ախրութեան և յուսահատութեան տարօրինակ արտայայտութիւն մը ստացան :

Քանի մը վայրկեան մտախոհ, զգայազիրկ և չքացեալ մնաց :

— Աշխարհք ոտքի պիտի հանենք, Սարթին, մըրմընջեց, թող ուրիշները փորձեն այդ բանը :

Սարթին անոր կը նայէր այն սրտմտութեամբ՝ զոր Լուի Ժե իր նախարարներուն վրայ տեսած ատեն շատ գոհ կ'ըլլար, որովհետեւ անով գերծ կը մնար մտածելու կամ գործելու աշխատութենէն :

— Անդորրութիւնը, տէր արքայ, թագաւորին ուզածը անդորրութիւնն է, այնպէս չէ՞, ըսաւ Սարթին :

— Է՛հ, Աստուած իմ, այո՞, անոնցմէ ուրիշ բան չեմ պահանջեր, ձեր փիլիսոփաներէն, համադիտական մատենագիրներէն, հրաշագործներէն, մեկնիչներէն, բանաստեղծներէն և զձուձ խմբագիրներէն որոնք չեմ գիտեր ուրիշ կ'եղնեն և կը գեռան, կը զրեն, կը ճոնջեն, կը դրպարտեն, կը հաշուեն, կը քարոզեն և կը պոռչտան : Թող զանոնք դափնեպատկներով զարդարեն, թող անոնց արձաններ կանգնեն, թող անոնց տաճարներ կառուցանեն՝ բայց զիս անհանգիստ չընեն :

Սարթին ոտքի ելաւ, թագաւորը ողջունեց և դուրս ելաւ քիթին տակէն մոմալով :

— Բարեբաղդաբար մեր դրամներուն վրայ դրուած է՝ « Աստուած պահէ թագաւորը » :

Լուի ԺԵ ստանձին մնալով զրիչ մը առաւ և արքա-
յազուն իշխանին հետեւեալ սողերը զրեց .

— « Գուք ինչ խնդրեցիք որ աիկին իշխանուհիին գա-
լուստը փութացնեմ . այդ հասոյքը ձեզ ընել կ'ուզեմ :

« Կը հրամայեմ Նոյսնի մէջ կանգ չառնել, որով ե-
րեքշաբթի առտու Գօնրիէնը հասած պիտի ըլլայ չքա-
խումբը :

« Ժամը ճիշդ տանին, այսինքն իշխանուհիին ժա-
մանումէն քատորդ մը առաջ, հոն պիտի գտնուիմ :

— Այս կերպով, ըսաւ յետոյ մենախօսելով, տա ներ-
կայացման յիմար գործէն կ'ազատիմ . փորձանք մը որ
Պ. Վօլթէրէն, Պ. Ռուսօէն և բոլոր երեւելի և աներե-
ւոյթ փելիտոփաներէն աւելի կը տանջէ զիս : Չէզ կոմ-
սուհիին, արքայօրդիին և իշխանուհիին համար գործ
պիտի բացուի : Իրա՛ւ որ, վիշտերը, ստեղծութիւնները
և վրէժինդութիւնները՝ մրցելու զօրութիւն ունեցող
նորաիթիթ միտքերու վրայ դարձնենք քիչ մը : Թող
երիտասարդները վիշտ կրել սորվին, ստով կը կըթուին :

Ու այսպէսով զժուարութիւնը բարձած ըլլալուն վրայ
չախաղանց ուրախ, նաեւ սպասով ըլլալով որ ոչ ոք
զինքը պիտի մեղադրէր նպատած կամ արգիլած ըլլա-
լուն համար այն ներկայացումը որ համայն Բարիզի
մտածման նիւթն եղած էր, թաղաւորը կառք նստաւ և
Լիւսիէնէն մեկնեցաւ Մարլի երթալու համար ուր ար-
քունիքը իրեն կը սպասէր :

-4480-

ՀՀ Ազգային գրադարան



NL0792318

11

7824